



**ԵԱՀԿ** Եվրոպայում անվտանգության և  
համագործակցության կազմակերպություն  
երեսեան գոառենիցական

# ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՍԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ

Մաս I



Երևան 2011

**ԱԶԳԱՅԻՆ ՓՈՋՐԱՍԱՄՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ  
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆՏՐԱԿԻ**

**ՍԱՍ I**

**2011**

Ազգային փոքրամասնությունների իրավունքներին վերաբերող փաստաթղթերի սույն ընտրանին լույս է տեսել Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) երևանյան գրասենյակի աջակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչության և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային կազմակերպությունների վարչության հետ սերտ համագործակցությամբ:

Սույն իրապարակման մեջ տեղ են գտնել ազգային փոքրամասնությունների իրավունքներին վերաբերող դրույթներ՝ ՀՀ օրենսդրությունից և միջազգային փաստաթղթերից:

Ընտրանին ընդգրկում է փաստաթղթերի՝ ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից տրամադրած պաշտոնական թարգմանություններ, ինչպես նաև ԵԱՀԿ երևանյան գրասենյակի և այլ կազմակերպությունների կողմից իրականացված ոչ պաշտոնական թարգմանություններ։ Այս առնչությամբ յուրաքանչյուր փաստաթուղթ համապատասխան նշում է պարունակում։

Խմբագիր՝ Աղավնի Հարությունյան

ISBN: 978-92-9235-877-8

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....5

## ՍԱՍ I

ԳԼՈՒԽ 1. ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ.....9

1.	ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՆՔԱՆՈՒ ՀՈՉԱԿԱԳԻՐ (քաղվածքներ).....	9
2.	Կոնվենցիա ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին.....	9
3.	Միջազգային կոնվենցիա ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին.....	14
4.	Միջազգային դաշնագիր քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին.....	30
5.	Կամընտիր արձանագրություն քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին կից.....	53
6.	Միջազգային դաշնագիր տնտեսական, տոցիալական և մշակութային իրավունքների մասին.....	58
7.	Կոնվենցիա երեխայի իրավունքների մասին (քաղվածքներ).....	70
8.	Հոչակագիր ռասայի և ռասայական նախապաշարմունքների մասին.....	73
9.	Հոչակագիր կրոնի կամ համոզմունքների հիման վրա անհանդուրժողականության և խտրականության բոլոր ձևերի վերացման մասին.....	81
10.	Հոչակագիր ազգային կամ էթնիկ, կրոնական և լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների մասին.....	86
11.	Համընդիանուր հոչակագիր մշակութային քաղմազանության մասին.....	90
12.	Մարդու իրավունքների մասին 2005/79 բանաձև ազգային կամ էթնիկ, կրոնական և լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքները.....	96

ԳԼՈՒԽ 2. ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ.....101

1.	Կոնվենցիա մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին.....	101
2.	Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների ելքուական խարտիա և բացատրական գեկույց.....	109
3.	Շրջանակային կոնվենցիա ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին և բացատրական գեկույց.....	166

4. Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիա (քաղվածքներ).....	201
5. ԵԽԽՎ 1201 հանձնարարական, Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի ազգային փոքրամասնությունների իրավունքների լրացուցիչ արձանագրության վերաբերյալ.....	202
6. ԵԽԽՎ 1353 հանձնարարական, Բարձրագույն կրթության մատչելիությունը փոքրամասնությունների համար.....	210
7. ԵԽԽՎ 1383 հանձնարարական, Լեզվական բազմազանեցումը.....	213
8. ԵԽԽՎ 1492 հանձնարարական, Ազգային փոքրամասնությունների իրավունքները.....	216
9. ԵԽԽՎ 1623 հանձնարարական, Ազգային փոքրամասնությունների իրավունքները.....	221
10. ԵԽԽՎ 1735 հանձնարարական, «Ազգ» հասկացությունը.....	226

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ազգային փոքրամասնությունների իրավունքներն անփոփ ներկայացնող սույն ընտրանին պարունակում է ազգային փոքրամասնությունների իրավունքներին վերաբերող Հայաստանի Հանրապետության օրենսդրության դրույթներ և միջազգային փաստարդեր (կամ քաղաքածներ): Ժողովածուն ներառում է նաև Միավորված ազգերի կազմակերպության<sup>1</sup> (այսուհետև՝ ՍԱԿ), Եվրոպայի խորհրդի<sup>2</sup> (այսուհետև՝ ԵԽ), ինչպես նաև Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության<sup>3</sup> (այսուհետև՝ ԵԱՀԿ) կողմից ընդունված դաշնագրերը, կոնվենցիաները, հոչակագրերը, հանձնարարականները և այլ փաստարդեր:

Սույն ժողովածուի մեջ ներառվել են այն միջազգային պայմանագրերը, որոնք անկախությունից ի վեր վավերացվել են Հայաստանի Հանրապետության կողմից: Մյուս փաստարդերը՝ հոչակագրերը, քանաձներն ու հանձնարարականները, չլինելով պարտադիր կիրարելիության իրավունքի նորմեր, այդուհանդեմ, որպես չափորոշչներ են ծառայում վերոհիշյալ միջազգային կազմակերպություններին անդամակցող բոլոր երկների համար:

Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերը կազմում են ՀՀ օրենսդրության անբաժանելի մասը, քանի որ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի չորրորդ մասի համաձայն՝ «միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի քաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմեր»:

Սույն ընտրանու մեջ ներառված են ՍԱԿ-ի, Եվրոպայի խորհրդի և ԵԱՀԿ-ի հետևյալ միջազգային փաստարդերը՝

ՍԱԿ	<ul style="list-style-type: none"><li>Մարդու իրավունքների համընդիանուր հոչակագիր, 1948թ.,</li><li>Կոնվենցիա ցեղասպանության հանցագործությունը կանխարգելու և պատճելու մասին, 1948թ., Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993թ.-ի հունիսի 23-ից,</li><li>Միջազգային կոնվենցիա ռասայական խորականության բոլոր ձևերի վերացման մասին, 1965թ., Հայաստանի Հանրապետության համար ուժի</li></ul>
-----	--

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետությունը Միավորված ազգերի կազմակերպության անդամ է 1992 թվականի մարտի 2-ից:

<sup>2</sup> Հայաստանի Հանրապետությունը Եվրոպայի խորհրդի անդամ է 2001 թվականի հունվարի 25-ից:

<sup>3</sup> Մինչև 1995թ. կազմակերպությունը կոչվում էր Եվրոպայում անվտանգության և հանգործակցության խորհրդաժողով, ուստի սույն հրատարակության մեջ մինչև 1995թ. վերաբերող հորմներում օգտագործվում է ԵԱՀԿ հապավումը, դրանից հետո՝ ԵԱՀԿ: Հայաստանի Հանրապետությունը ԵԱՀԿ մասնակից պետություն է 1992 թվականի հունվարի 30-ից:

	<p>մեջ է մտել 1993 թ.-ի հուլիսի 23-ից,</p> <ul style="list-style-type: none"> <li>Սիօզագային դաշնագիր քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին, 1966թ., և դաշնագրին կից կամընտիր արձանագրություն, 1966թ., Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ են մտել 1993 թ.-ի սեպտեմբերի 23-ից,</li> <li>Սիօզագային դաշնագիր տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին, 1966թ., Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993 թ.-ի դեկտեմբերի 13-ից,</li> <li>Կոնվենցիա երեխայի իրավունքների մասին, 1989թ., Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993 թ.-ի հուլիսի 22-ից,</li> <li>Հռչակագիր ռասայի և ռասայական նախապաշտությունների մասին, 1978թ.,</li> <li>Հռչակագիր կրոնի կամ համոզմունքների իիման վրա անհանդուրժողականության և խորականության բոլոր ձևերի վերացման մասին, 1981թ.,</li> <li>Հռչակագիր ազգային կամ երնիկ, կրոնական և լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների մասին, 1992թ.,</li> <li>Համընդիանուր հռչակագիր մշակութային բազմազանության մասին, 2001թ.,</li> <li>Ազգային կամ երնիկ, կրոնական և լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքները, Մարդու իրավունքների մասին 2005/79 բանաձև, 2005թ.: </li> </ul>
Եվրոպայի խորհրդ	<ul style="list-style-type: none"> <li>Մարդու իրավունքների և իիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա, 1950թ., Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2002թ.-ի ապրիլի 26-ին,</li> <li>Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիա և բացատրական գեկույց, 1992թ., Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2002 թ.-ի նայիսի 1-ին,</li> <li>Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիա, 1995թ., Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1998թ. նոյեմբերի 1-ին,</li> <li>Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա, 1996թ., Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2004թ. հունվարի 21-ին,</li> <li>ԵԽԽՎ 1201 հաճանարարական Մարդու</li> </ul>

	<p>իրավունքների եվրոպական կոնվենցիայի ազգային փոքրամասնությունների իրավունքների լրացուցիչ արձանագրության վերաբերյալ, 1993թ.,</p> <ul style="list-style-type: none"> <li>ԵԽԽՎ 1353 հանձնարարական, 1998թ., Բարձրագույն կրթության մատչելիությունը փոքրամասնությունների համար,</li> <li>ԵԽԽՎ 1383 հանձնարարական, 1998թ., Լեզվական բազմազանեցումը,</li> <li>ԵԽԽՎ 1492 հանձնարարական, 2001թ., Ազգային փոքրամասնությունների իրավունքները,</li> <li>ԵԽԽՎ 1623 հանձնարարական, 2003թ., Ազգային փոքրամասնությունների իրավունքները,</li> <li>ԵԽԽՎ 1735 հանձնարարական, 2006թ., «Ազգ» հասկացությունը:</li> </ul>
ԵԱՀԿ	<ul style="list-style-type: none"> <li>Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդաժողովի եզրափակիչ ակտ, Հելսինկի, 1975թ., Հայաստանը ստորագրել է փաստաթուղթը 1992 թվականի հունվարի 30-ին,</li> <li>Մադրիդի եզրափակիչ փաստաթուղթ, 1983թ.,</li> <li>Վիեննայի եզրափակիչ փաստաթուղթ, 1989թ.,</li> <li>ԵԱՀԽ մարդկային ուղղությանը նվիրված համաժողովի՝ Կոպենհագենի հանդիպման փաստաթուղթը, 1990թ.,</li> <li>Փարիզի խարտիան նոր Եվրոպայի համար, 1990թ.,</li> <li>ԵԱՀԽ ազգային փոքրամասնությունների հարցերով փորձագետների հանդիպման գեկույց, Ժնև, 1991թ.,</li> <li>ԵԱՀԽ մարդկային ուղղությանը նվիրված համաժողովի՝ Մոսկվայի հանդիպման փաստաթուղթ, 1991թ.,</li> <li>ԵԱՀԽ Հելսինկյան փաստաթուղթ. փոփոխությունների մարտահրավերները, 1992թ.,</li> <li>Բուդապեշտի եզրափակիչ փաստաթուղթ. դեպի իրական գործընկերություն նոր դարաշրջանում, 1994թ.,</li> <li>Լիսաբոնի փոստաթուղթ, 1996թ.,</li> <li>Ստամբուլի փաստաթուղթ, 1999թ.,</li> <li>Նախարարների խորհրդի՝ Մասատրիխստի փաստաթուղթ, 2003թ.,</li> <li>Հազարյանի հանձնարարականներ փոքրամասնությունների կրթական իրավունքների վերաբերյալ և բացատրական փաստաթուղթ, 1996թ.,</li> <li>Օսլոյի հանձնարարականներ</li> </ul>

	<p>փոքրամասնությունների լեզվական իրավունքների վերաբերյալ և բացատրական փաստաթուղթ, 1998թ.,</p> <ul style="list-style-type: none"> <li>• Լունդի հանձնարարականներ հասարակական կյանքում ազգային փոքրամասնությունների արդյունավետ մասնակցության վերաբերյալ և բացատրական փաստաթուղթ, 1999թ.,</li> <li>• Ուղենիշներ ընտրական գործընթացներում ազգային փոքրամասնությունների մասնակցությունը խթանելու վերաբերյալ, 2001թ.,</li> <li>• Հեռարձակվող լրատվամիջոցներում փոքրամասնությունների լեզուների օգտագործման ուղենիշներ և բացատրագիր, 2003թ.,</li> <li>• Հանձնարարականներ բազմեթնիկ հասարակությունում ոստիկանական գործունեության վերաբերյալ և բացատրական փաստաթուղթ, 2006թ.:</li> </ul>
--	--

## ԳԼՈՒԽ 1. ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

### 1. ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԲՆԴԱՆՈՒՐ ՀՌՋԱԿԱԳԻՐ<sup>4</sup> (քաղվածքներ)

**Ընդունված և հռչակված Գլխավոր ասամբլեայի 1948թ. դեկտեմբերի 10-ի 217  
A (III) բանաձևով**

#### **Հոդված 7**

Բոլորը հավասար են օրենքի առջև և, առանց որևէ խտրականության, ունեն օրենքով հավասար պաշտպանվածության իրավունք: Բոլորն ունեն սույն Հռչակագիրը խախտող ցանկացած խտրականությունից և ննան խտրականության ցանկացած իրակրումից հավասար պաշտպանության իրավունք:

#### **Հոդված 23**

1. Ցուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ազատ ընտրության, արդար ու նպաստավոր աշխատանքային պայմանների ու գործազրկությունից պաշտպանվածության իրավունք:
2. Ցուրաքանչյուր ոք ունի հավասար աշխատանքի դիմաց հավասար վարձատրության իրավունք առանց որևէ խտրականության:
3. Ցուրաքանչյուր աշխատող ունի իր և իր ընտանիքի համար մարդկային արժանապատվությանը հարիր գոյություն ապահովող արդար ու նպաստավոր վարձատրության և, անհրաժեշտության դեպքում, այն սոցիալական ապահովության այլ միջոցներով լրացնելու իրավունք:
4. Ցուրաքանչյուր ոք ունի արիետակցական միություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունք՝ հանուն իր շահերի պաշտպանության:

#### **2. ԿՈՆՎԵՆՑԻԱ**

**Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին<sup>5</sup>**

**Պայմանավորվող կողմերը,**

հաշվի առնելով, ոք Սիավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեան իր 1946թ. դեկտեմբերի 11-ի 96 (1) բանաձևում հայտարարել է, ոք միջազգային իրավունքի համաձայն ցեղասպանությունը հանց-

<sup>4</sup> Պաշտոնական քարգմանություն

<sup>5</sup> Պաշտոնական քարգմանություն

գործություն է և հակասում է Սիավորված ազգերի կազմակերպության ոգուն ու նպատակներին, և որ քաղաքակիրք աշխարհը դատապարտում է այն,

ընդունելով, որ պատմության բոլոր ժամանակաշրջաններուն ցեղասպանությունը մեծ կորուստներ է պատճառել մարդկությանը, և

համոզված լինելով, որ մարդկությունն այդ նողկալի արհավիրքից ազատելու համար անհրաժեշտ է միջազգային համագործակցություն.

սույնով համաձայնում են ներքոհիշյալի շուրջ.

## Հոդված 1

Պայմանավորվող կողմերը հաստատում են, որ ցեղասպանությունը, անկախ նրանից՝ կատարվում է խաղաղ, թե պատերազմական պայմաններում, ըստ միջազգային իրավունքի հանցագործություն է, որը նրանք պարտավորվում են կանխարգելել և պատժել այն կատարելու համար:

## Հոդված 2

Սույն Կոնվենցիայում ցեղասպանություն նշանակում է հետևյալ գործողություններից ցանկացածը՝ կատարված ազգային, էթնիկական, ցեղական կամ կրոնական որևէ խմբի, որպես այդպիսին, լիկ կամ մասնակի ոչնչացման մտադրությամբ.

- (ա) այդ խմբի անդամների սպանությունը,
- (բ) այդ խմբի անդամներին մարմնական լուրջ վնասվածքներ կամ մտավոր վնաս պատճառելը,
- (գ) որևէ խմբի համար կյանքի այնպիսի պայմանների միտումնավոր ստեղծումը, որոնք ուղղված են նրա լիկ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը,
- (դ) այդ խմբի միջավայրում մանկածնությունը կանխելուն միտված միջոցների իրականացումը,
- (ե) երեխաների բռնի փոխանցումը մարդկային մի խմբից մյուսին:

## Հոդված 3

Պատժելի են հետևյալ արարքները՝

- (ա) ցեղասպանությունը,
- (բ) ցեղասպանություն կատարելու նպատակով դավադրությունը,
- (գ) ցեղասպանության ուղղակի և իրապարակային իրակրումը,
- (դ) ցեղասպանություն կատարելու փորձը,
- (ե) հանցակցությունը ցեղասպանության կատարման մեջ:

## **Հոդված 4**

Յեղասպանություն կամ 3-րդ հոդվածում թվարկված որևէ արարք կատարած անձինք ենթակա են պատմի՝ անկախ այն բանից, նրանք սահմանադրությամբ պատասխանատու դեկավարներ են, թե պաշտոնատար կամ մասնավոր անձինք:

## **Հոդված 5**

Պայմանավորվող կողմերը պարտավորվում են սույն Կոնվենցիայի դրույթները գործողության մեջ դնելու համար ընդունել իրենց սահմանադրություններին համապատասխան անհրաժեշտ օրենսդրություն և, մասնավորապես, սահմանել արդյունավետ պատժամիջոցներ ցեղասպանության մեջ կամ 3-րդ հոդվածում նշված մյուս արարքներից որևէ մեկում մեղավոր անձանց համար:

## **Հոդված 6**

Այն անձինք, որոնք մեղադրվում են ցեղասպանություն կամ 3-րդ հոդվածում թվարկված որևէ արարք կատարելու մեջ, դատվում են այն երկրի իրավասու դատարանի կողմից, որի տարածքում կատարվել է այդ հանցագործությունը, կամ այնպիսի միջազգային քրեական դատարանի կողմից, որը կարող է իրավազորություն ունենալ սույն Կոնվենցիայի՝ այդ իրավագործությունը ճանաչած կողմերի նկատմամբ:

## **Հոդված 7**

Յեղասպանությունը և 3-րդ հոդվածում թվարկված մյուս արարքները հանձնման նպատակների համար չեն դիտվում որպես քաղաքական հանցագործություններ:

Նման դեպքերում Պայմանավորվող կողմերը պարտավորվում են հանձնումն իրականացնել իրենց օրենսդրության և գործող պայմանագրերի համաձայն:

## **Հոդված 8**

Յուրաքանչյուր պայմանավորվող կողմ կարող է դիմել Սլավորված ազգերի կազմակերպության իրավասու մարմիններին՝ Սլավորված ազգերի կազմակերպության կանոնադրությանը համապատասխան ձեռնարկելու այնպիսի գործողություններ, որոնք նրանք անհրաժեշտ են համարում ցեղասպանությունը և 3-րդ հոդվածում թվարկված որևէ այլ արարք կանխարգելելու և ճնշելու համար:

## **Հոդված 9**

Պայմանավորվող կողմերի միջև վեճերը՝ կապված սույն Կոնվենցիայի մեջնաբանման, կիրառման և կատարման հետ, ներառյալ նաև ցեղասպանություն կամ 3-րդ հոդվածում բվարկված որևէ արարք կատարելու համար այս կամ այն պետության պատասխանատվության վերաբերյալ վեճերը, հանձնվում են Միջազգային դատարանի քննարկմանը՝ վեճի կողմերից յուրաքանչյուրի պահանջով:

## **Հոդված 10**

Սույն Կոնվենցիան, որի անգլերեն, իսպաներեն, չինարեն, ռուսերեն և ֆրանսերեն տեքստերը հավասարազոր են. թվագրված է 1948թ. դեկտեմբերի 9-ին:

## **Հոդված 11**

Սույն Կոնվենցիան բաց է ստորագրման մինչև 1949թ. դեկտեմբերի 31-ը Միավորված ազգերի կազմակերպության ցանկացած անդամի և Կազմակերպության անդամ չհանդիսացող ցանկացած պետության համար, որն ստացել է Գլխավոր ասամբլեայի հրավերը՝ ստորագրելու Կոնվենցիան:

Սույն Կոնվենցիան ենթակա է վավերացման, և վավերագրերն ի պահ են հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

1950թ. հունվարի 1-ից սկսած սույն Կոնվենցիային կարող է միանալ Միավորված ազգերի կազմակերպության ցանկացած անդամ և այդ Կազմակերպության անդամ չհանդիսացող ցանկացած պետություն, որն ստացել է վերոհիշյալ հրավերը: Միանալու մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

## **Հոդված 12**

Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը կարող է ցանկացած ժամանակ. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ծանուցելու միջոցով, սույն Կոնվենցիայի կիրառումը տարածել այն բոլոր տարածքների կամ ցանկացած տարածքի նկատմամբ, որոնց արտաքին հարաբերությունների համար ինքը պատասխանատու է:

## **Հոդված 13**

Այն օրը, երբ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ի պահ են հանձնվում վավերացման և միանալու մասին առաջին քանի փաստաթղթերը, Գլխավոր քարտուղարը պատրաստում է արձանագրություն, որի պատճեններն ուղարկում են Միավորված ազգերի կազմա-

կերպության բոլոր անդամ պետություններին և անդամ շիանդիսացող բոլոր այն պետություններին, որոնք նախատեսված են 11-րդ հոդվածում:

Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում իննառերորդ օրը՝ հաշված վավերացման կամ միանալու քաներորդ փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվանից:

Դրանից հետո կատարված ցանկացած վավերացում կամ միանալ ուժի մեջ է մտնում վավերացման և միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո իննառերորդ օրը:

## Հոդված 14

Սույն Կոնվենցիան ուժի մեջ է 10 տարի՝ սկսած նրա ուժի մեջ մտնելու օրվանից:

Հաջորդ հնգամյակներում Կոնվենցիան ուժի մեջ է մնում այն Պայմանավորվող կողմերի համար, որոնք այն չեղյալ չեն հայտարարում նրա ուժի մեջ լինելու ընթացիկ ժամկետը լրանալուց առնվազն վեց ամիս առաջ: Չեղյալ հայտարարելը կատարվում է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ուղղված գրավոր ծանուցման միջոցով:

## Հոդված 15

Եթե չեղյալ հայտարարելու հետևանքով սույն Կոնվենցիայի մասնակիցների թիվը տասնվեցից նվազի, Կոնվենցիան դադարեցնում է իր գործողությունը վերջին չեղյալ հայտարարման ուժի մեջ մտնելու օրը:

## Հոդված 16

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է ցանկացած ժամանակ ներկայացնել սույն Կոնվենցիան վերանայելու պահանձ՝ Գլխավոր քարտուղարին գրավոր ծանուցելու միջոցով:

Գլխավոր ասամբլեան որոշում է, թե ինչ միջոցներ պետք է ձեռնարկել նման պահանջի առնչությամբ, եթե դրանց կիրառումն անհրաժեշտ է համարում:

## Հոդված 17

Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը Միավորված ազգերի կազմակերպության բոլոր անդամներին և Կազմակերպության անդամ շիանդիսացող այն պետություններին, որոնք նախատեսված են 11-րդ հոդվածում, ծանուցում է.

(ա) 11-րդ հոդվածին համապատասխան ստացված ստորագրման, վավերացման և միանալու մասին փաստաթղթերի վերաբերյալ,

(բ) 12-րդ հոդվածին համապատասխան ստացված բոլոր ծանուցումների մասին,

- (գ) սույն Կոնվենցիայի՝ 13-րդ հոդվածին համապատասխան ուժի մեջ մտնելու մասին,
- (դ) 14-րդ հոդվածին համապատասխան ստացված չեղյալ հայտարարումների մասին,
- (ե) Կոնվենցիան 15-րդ հոդվածին համապատասխան չեղյալ հայտարարելու մասին,
- (զ) 16-րդ հոդվածին համապատասխան ստացված ծանուցումների մասին:

## **Հոդված 18**

Սույն Կոնվենցիայի բնօրինակը ի պահ է հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության արխիվ: Կոնվենցիայի վավերացված պատճեններն ուղարկվում են Միավորված ազգերի կազմակերպության բոլոր անդամներին և Կազմակերպության անդամ շիանդիացող այն պետություններին, որոնք նախատեսված են 11-րդ հոդվածով:

## **Հոդված 19**

Սույն Կոնվենցիան գրանցում է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը՝ նրա ուժի մեջ մտնելու օրը:

### **3. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ**

**Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին<sup>6</sup>**

**(21 դեկտեմբերի 1965թ.)**

Սույն Կոնվենցիայի մասնակից պետությունները,

համարելով, որ Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրությունը իիմնված է բոլոր մարդկանց ներիատուկ արժանապատվության և հավասարության սկզբունքների վրա և որ Կազմակերպության անդամ բոլոր պետությունները պարտավորվել են, համագործակցելով Միավորված ազգերի կազմակերպության հետ, ձեռնարկել համատեղ և առանձին գործողություններ՝ իրականացնելու Միավորված ազգերի կազմակերպության նպատակներից մեկը, այն է՝ բոլորի համար, առանց ուսայի, սեռի, լեզվի ու կրոնի հիմքով տարբերակման խրախուսելու և զարգացնելու մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ համընդիանուր հարգանքն ու դրանց պահպանումը,

համարելով, որ Մարդու իրավունքների համընդիանուր հոչակագիրն ազդարարում է, որ բոլոր մարդիկ ծնվում են ազատ և իրենց արժանապատվությամբ ու իրավունքներով հավասար և որ յուրաքանչյուր

---

<sup>6</sup> Պաշտոնական քարգմանություն

մարդ օժտված է այդ Հռչակագրում ամրագրված իրավունքներով ու ազատություններով՝ առանց որևէ տարրերակման, մասնավորապես, ռասայի, մաշկի գույնի կամ ազգային ծագման հիմքով,

համարելով, որ բոլորը հավասար են օրենքի առջև և ունեն ամեն խտրականությունից ու խտրականության իրահրումից օրենքով հավասարապես պաշտպանվելու իրավունք,

համարելով, որ Սիավորված ազգերի կազմակերպությունը դատապարտել է զաղութատիրությունը և դրա հետ կապված սեղրեզացիայի ու խտրականության պրակտիկան, ինչ ձևով և որտեղ էլ այն դրսևորվելիս լինի, և որ Գաղութային երկրներին ու ժողովորդերին անկախություն շնորհելու մասին 1960թ. դեկտեմբերի 14-ի հռչակագիրը (Գլխավոր ասամբլեայի 1514 (15) բանաձև) հաստատել և հանդիսավոր կերպով ազդարարել է այդ պրակտիկային անհապաղ ու անվերապահորներ վերջ տալու անհրաժեշտությունը,

համարելով, որ Ռասայական խտրականության բոլոր ձևերը վերացնելու մասին Սիավորված ազգերի կազմակերպության 1963թ. նոյեմբերի 20-ի հռչակագիրը (Գլխավոր ասամբլեայի 1904 (18) բանաձև) հաստատում է ողջ աշխարհում ռասայական խտրականությունն իր բոլոր ձևերով ու դրսևորվումներով շուտափույթ վերացնելու և մարդու անձի արժանապատվության գիտակցումն ու հարգանքն ապահովելու անհրաժեշտությունը,

համոզված լինելով, որ ռասայական տարրերության վրա հիմնված գերազանցության ցանկացած տեսություն գիտական առումով կեղծ է, քարոյականության տեսանկյունից՝ դատապարտելի, իսկ սոցիալական առումով՝ անարդարացի ու վտանգավոր, և որ ռասայական խտրականության համար արդարացում լինել չի կարող քե՛ տեսության մեջ, քե՛ պրակտիկայում,

հաստատելով, որ ռասայի, մաշկի գույնի կամ էթնիկական ծագման հատկանիշով մարդկանց միջև խտրականությունը խոչընդոտում է ազգերի միջև բարեկամական ու խաղաղ հարաբերություններին և կարող է հանգեցնել ժողովորդերի միջև խաղաղության ու անվտանգության, ինչպես նաև անզամ նույն պետության ներսում անձանց ներդաշնակ համագործակցության խախտմանը,

համոզված լինելով, որ ռասայական անջրպետների գոյությունը հակառակ է մարդկային ցանկացած հասարակության իդեալներին,

անհանգստացած լինելով աշխարհի որոշ շրջաններում դեռևս առկա ռասայական խտրականության դրսևորումներից և ռասայական գերազանցության կամ ատելության վրա հիմնված պետական այնպիսի քաղաքականությունից, ինչպիսին են ապարտեհիթը, սեղրեզացիան կամ անջատողականությունը,

լի վճռականությամբ՝ ձեռնարկելու բոլոր անհրաժեշտ միջոցները շուտափույթ վերացնելու համար ռասայական խտրականությունն իր բոլոր ձևերով ու դրսևորումներով և կանխարգելելու ու վերացնելու ռասիստական տեսություններն ու պրակտիկան՝ ռասաների միջև փոխըմբռնմանը նպաստելու և ռասայական սեղրեզացիայի ու ռասայական խտրականության բոլոր ձևերից ազատ միջազգային հանրություն ստեղծելու նպատակով,

ուշադրության առնելով Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից 1958թ. ընդունված Զբաղվածության և աշխատանքի բնագավառում խտրականության մասին կոնվենցիան և Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության կողմից 1960թ. ընդունված Կրթության բնագավառում խտրականությունը վերացնելու մասին կոնվենցիան.

ցանկանալով իրականացնել Միավորված ազգերի կազմակերպության՝ Ռասայական խտրականության բոլոր ձևերը վերացնելու մասին հիշակագրում ամրագրված սկզբունքները և այդ նպատակով ապահովել գործնական միջոցառումների շուտափույթ իրազործումը,

համաձայնեցին ներքոհիշյալի շուրջ.

## Սաս 1

### Հոդված 1

- Սույն Կոնվենցիայում «ռասայական խտրականություն» հասկացությունը նշանակում է ռասայի, մաշկի գույնի, ցեղային, ազգային կամ էթնիկական ծագման հատկանիշների հիմքով ցանկացած տարրերակում, քացառում, սահմանափակում կամ նախապատվություն, որոնք ունեն քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային կամ հասարակական կյանքի ցանկացած այլ բնագավառում մարդու իրավունքներն ու իրմանարար ազատությունները չեղյալ հայտարարելու կամ դրանց ճանաչումը, օգտագործումը կամ իրականացումը նվազեցնելու նպատակ կամ հանգեցնում են նման հետևանքների:
- Սույն Կոնվենցիան չի կիրառվում այն տարրերակումների, քացառությունների կամ նախապատվությունների նկատմամբ, որոնք սույն Կոնվենցիայի մասնակից պետությունները սահմանում են քաղաքացիների և քաղաքացի չհանդիսացող անձանց միջև:
- Սույն Կոնվենցիայում ոչինչ չի կարող մեկնարանվել որպես մասնակից պետությունների ազգային պատկանելությանը, քաղաքացիությանը կամ հպատակագրմանը վերաբերող օրենսդրության դրույթների վրա որևէ կերպ ազդեցություն ունեցող, պայմանով, որ նման դրույթները խտրական չեն որևէ որոշակի ազգության նկատմամբ:
- Հատուկ միջոցառումները, որոնք կիրառվում են, քացառապես, ռասայական կամ էթնիկական այնպիսի որոշակի խմբերի կամ անհատների համապատասխան առաջընթացն ապահովելու նպատակով, որոնք կարիք ունեն նման խմբերի կամ անհատների կողմից մարդու իրավունքների և իրմանարար ազատությունների հավասար օգտագործումն ու իրականացումն ապահովելու համար անհրաժեշտ պաշտպանության, չեն դիտվում որպես ռասայական խտրականություն, պայմանով, այնուամենայնիվ, որ այդ միջոցառումները չեն հանգեց-

նում ռասայական տարրեր խմբերի համար առանձին իրավունքների պահպանմանը և չեն շարունակվի այն նպատակներին հասնելուց հետո, հանուն որոնց դրանք կիրառվել էին:

## Հոդված 2

1. Մասնակից պետությունները դատապարտում են ռասայական խտրականությունն ու պարտավորվում են անհապաղ, բոլոր հնարավոր եղանակներով վարել ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման քաղաքականություն և նպաստել բոլոր ռասաների միջև փոխըմբռնմանը. այդ նպատակով
  - (ա) յուրաքանչյուր մասնակից պետություն պարտավորվում է չներգրավվել ռասայական խտրականության որևէ զործողության կամ պրակտիկայի մեջ՝ ընդլեմ անձանց, անձանց խմբերի կամ հաստատությունների, և երաշխավորել, որ պետական բոլոր մարմիններն ու հաստատությունները, ինչպես ազգային, այնպես էլ տեղական, կողոքեն այդ պարտավորությանը համապատասխան, լինելու համապատասխան կամ կողմից իրականացվող ռասայականության,
  - (բ) յուրաքանչյուր մասնակից պետություն պարտավորվում է չխրախուսել, չպաշտպանել և չաջակցել որևէ անձի կամ կազմակերպության կողմից իրականացվող ռասայական խտրականության,
  - (գ) յուրաքանչյուր մասնակից պետություն ազգային ու տեղական մասշտարով ձեռնարկում է արդյունավետ միջոցներ՝ կառավարության քաղաքականության վերանայման, ինչպես նաև խտրականության առաջացմանը կամ հավերժացմանը հանգեցնող ցանկացած օրենք և ենթաօրենսդրական ակտ փոփոխելու, վերացնելու կամ չեղյալ հայտարարելու համար,
  - (դ) յուրաքանչյուր մասնակից պետություն, օգտագործելով բոլոր համապատասխան, այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում, օրենսդրական, միջոցները, արգելում կամ վերացնում է ցանկացած անձի, խմբի կամ կազմակերպության կողմից իրականացվող ռասայական խտրականությունը,
  - (ե) յուրաքանչյուր մասնակից պետություն պարտավորվում է, համապատասխան դեպքերում, խրախուսել ինտեգրացիոն քազմառասայական կազմակերպություններն ու շարժումները և ռասաների միջև անջրպետների վերացմանն ուղղված այլ միջոցները, և չպաշտպանել ոչինչ, ինչը նպաստում է ռասայական քաժանման խորացմանը:
2. Մասնակից պետությունները սոցիալական, տնտեսական, մշակութային և այլ բնագավառներում ձեռնարկում են, երբ հանգամանքները պահանջում են, հատուկ ու կոնկրետ միջոցներ՝ ապահովելու համար ռասայական որոշ խմբերի կամ այդ խմբերին պատկանող անձանց պատշաճ զարգացումն ու պաշտպանությունը՝ նրանց կողմից մարդու իրավունքների և իշմնարար ազատությունների լիարժեք ու հավասար

օգտագործումը երաշխավորելու նպատակով: Այդպիսի միջոցները ոչ մի դեպքում չպետք է հանգեցնեն ռասայական տարրեր խմբերի համար անհավասար կամ հատուկ իրավունքների պահպանմանը այն նպատակների իրագործումից հետո, հանուն որոնց դրանք ձեռնարկված են եղել:

### Հոդված 3

Մասնակից պետությունները, մասնավորապես, դատապարտում են ռասայական սեղմեզացիան ու ապարտեմենտը և պարտավորվում են իրենց իրավագործության ներքո գտնվող տարածքներում կանխարգելել, արգելել ու վերացնել նման բնույթի ցանկացած պրակտիկա:

### Հոդված 4

Մասնակից պետությունները դատապարտում են ցանկացած քարոզչություն և բոլոր այն կազմակերպություններին, որոնք հիմնված են մի ռասայի կամ մաշկի որոշակի գույն կամ էթնիկական ծագում ունեցող անձանց խմբի գերազանցության գաղափարների կամ տեսությունների վրա կամ որոնք փորձում են արդարացնել կամ խրախուսել ռասայական ատելությունն ու խտրականությունը, ինչ ձևով էլ որ դրանք դրսերդվելիս լինեն. նրանք պարտավորվում են ձեռնարկել անհապաղ ու դրական միջոցներ՝ ուղղված նման խտրականության ցանկացած հրահրում կամ իրականացում վերացնելուն և, այդ նպատակով Մարդու իրավունքների համընդիհանուր հոչակագրում ամրագրված սկզբունքների ու սույն Կոնվենցիայի 5-րդ հոդվածում շարադրված իրավունքներին համապատասխան, այլ միջոցների թվում՝

- (ա) օրենքով պատժելի հանցանք են համարում ռասայական գերազանցության կամ ռասայական ատելության վրա հիմնված գաղափարների տարածումը, ռասայական խտրականության հրահրումը, ինչպես նաև ցանկացած ռասայի կամ մաշկի այլ գույն կամ էթնիկական այլ ծագում ունեցող անձանց խմբի դեմ ուղղված բռնության գործողությունները կամ դրանց հրահրումը, ինչպես նաև ռասխուկան գործունեությանն օգնություն տրամադրելը, ներառյալ՝ նման գործունեության ֆինանսավորումը,
- (բ) հակաօրինական են հայտարարում և արգելում են այն կազմակերպությունները, ինչպես նաև կազմակերպված ու ցանկացած այլ քարոզչական գործունեություն, որոնք խրախուսում ու հրահրում են ռասայական խտրականություն, և մասնակցությունը նման կազմակերպություններին կամ գործունեությանը համարում են օրենքով պատժելի հանցագործություն,
- (գ) պետական իշխանության ազգային կամ տեղական մարմիններին կամ պետական հաստատություններին չեն թույլատրում խրախուսել կամ հրահրել ռասայական խտրականություն:

## **Հոդված 5**

Սույն Կոնվենցիայի 2-րդ հոդվածում շարադրված պարտավորություններին համապատասխան, մասնակից պետությունները պարտավորվում են արգելել ու վերացնել ռասայական խորականությունն իր բոլոր ձևերով և ապահովել յուրաքանչյուրի իրավահավասարությունն օրենքի առջև՝ առանց ռասայի, մաշկի գույնի, ազգային կամ էթնիկական ծագման տարրերակման, հատկապես, հետևյալ իրավունքների իրականացման կապակցությամբ.

- (ա) դատարանի և արդարադատություն իրականացնող մյուս բոլոր մարմինների առջև հավասարության իրավունքի,
- (բ) անձնական անվտանգության և բռնությունից կամ մարմնական վնասվածքներից պետության կողմից պաշտպանության իրավունքի՝ անկախ այն բանից, դրանք դրսուրվել են պետական պաշտոնյանների, թե առանձին անձանց կամ հաստատությունների կողմից,
- (շ) քաղաքական իրավունքների կապակցությամբ, մասնավորապես, ընտրությունների մասնակցելու, ընդհանուր և հավասար ընտրական իրավունքի հիման վրա ընտրելու և ընտրվելու իրավունքի, երկրի կառավարմանը, ինչպես նաև հանրային գործերին ցանկացած մակարդակով մասնակցելու իրավունքի և պետական ծառայության անցնելու հավասար հնարավորության իրավունքի,
- (ը) քաղաքացիական այլ իրավունքների կապակցությամբ, մասնավորապես՝
- (i) պետության սահմանների ներսում տեղաշարժի և բնակության ազատության իրավունքի,
  - (ii) ցանկացած, ներառյալ իր սեփական, երկրից հեռանալու և իր սեփական երկիրը վերադառնալու իրավունքի,
  - (iii) քաղաքացիության իրավունքի,
  - (iv) ամուսնանալու և ամուսին ընտրելու իրավունքի,
  - (v) ինչպես միանձնյա, այնպես էլ որիշների հետ համատեղ սեփականության իրավունքի,
  - (vi) ժառանգման իրավունքի,
  - (vii) մտքի, խոճի և կրոնի ազատության իրավունքի,
  - (viii) հանողմունքների ազատության և ազատ արտահայտվելու իրավունքի,
  - (ix) խաղաղ հավաքների և միավորումներ կազմելու ազատության իրավունքի,
- (ե) տնտեսական, տցիալական և մշակութային իրավունքների կապակցությամբ, մասնավորապես՝
- (i) աշխատանքի, աշխատանքի ազատ ընտրության, աշխատանքի արդար և նպաստավոր պայմանների, գործազրկությունից պաշտպանվածության, հավասար աշխատանքի դիմաց հավասար վարձադրության, արդար և բավարար վարձատրության իրավունքի,

- (ii) արիեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքի,
  - (iii) բնակարանի իրավունքի,
  - (iv) առողջության, բժշկական օգնության, սոցիալական ապահովության և սոցիալական սպասարկման իրավունքի,
  - (v) կրթության և մասնագիտական նախապատրաստման իրավունքի,
  - (vi) մշակութային կյանքին հավասար մասնակցության իրավունքի,
- (q) ցանկացած վայր կամ հասարակական սպասարկման համար նախատեսված ցանկացած օրյեկտ, ինչպես, օրինակ, տրանսպորտ, հյուրանոցներ, ռեստորաններ, սրճարաններ, բատրուներ ու զբույրայիններ, մուտք գործելու իրավունքի:

## **Հոդված 6**

Մասնակից պետություններն իրավասու ներպետական դատարանների և պետական այլ հաստատությունների միջոցով իրենց իրավագորության ներքո գտնվող յուրաքանչյուր անձի համար երաշխավորում են արդյունավետ պաշտպանություն և խախտված իրավունքների վերականգնում ընդդեմ ռասայական խորականության ցանկացած գործողության, որը սույն Կոնվենցիային հակառակ խախտում է տվյալ անձի իրավունքներն ու հիմնարար ազատությունները, ինչպես նաև՝ այդ ատյաններում նման խորականության հետևանքով պատճառված ցանկացած վճարի արդար և համարժեք հատուցում կամ բավարարում ստանալու իրավունքը:

## **Հոդված 7**

Մասնակից պետությունները պարտավորվում են անհապաղ ու արդյունավետ միջոցներ ծեռնարկել, մասնավորապես, դասավանդման, կրթության, մշակույթի և տեղեկատվության բնագավառներում ռասայական խորականության հանգեցնող նախապաշարնունքների դեմ պայքարի, ազգերի և ռասայական կամ էթնիկական խմբերի միջև փոխվարժունման, հանդուրժողականության ու բարեկամության խրախուսման, ինչպես նաև Սլավորված ազգերի կազմակերպության կանոնադրության, Մարդու իրավունքների համընդհանուր հոչակագրի, Ռասայական խորականության բոլոր ծերի վերացման մասին Միավորված ազգերի կազմակերպության հոչակագրի և սույն Կոնվենիայի նպատակներն ու սկզբունքները հանրամատչելի դարձնելու նպատակով:

Uwu 2

Հոդված 8

1. Ստեղծվում է Ռասայական խտրականության վերացման կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե)՝ կազմված բարոյական բարձր նկարագիր ունեցող և ճանաչված անաշառությամբ օժտված փորձագետներից, որոնց ընտրում են մասնակից պետություններն իրենց քաղաքացիներից և որոնք իրենց պարտականություններն իրականացնում են անձնապես, ընդ որում հաշվի է առնվում արդարացի աշխարհագրական բաշխումն ու բաղադրականության տարրեր ձևերի, ինչպես նաև իրավական գլխավոր համակարգերի ներկայացուցչությունը:
  2. Կոմիտեի անդամներն ընտրվում են զայտնի քվեարկությամբ, մասնակից պետությունների առաջադրած անձանց ցուցակից: Յուրաքանչյուր մասնակից իր քաղաքացիներից կարող է առաջադրել մեկ թեկնածու:
  3. Սկզբնական ընտրություններն անցկացվում են սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու օրվանից վեց ամիս անց: Յուրաքանչյուր ընտրության օրվանից առնվազն երեք ամիս առաջ Գլխավոր քարտուղարն անդամ պետություններին հասցեագրած նամակով նրանց իրավիրում է երկու ամսվա ընթացքում առաջադրելու իրենց թեկնածուներին: Գլխավոր քարտուղարը պատրաստում է այդ կարգով առաջադրված բոլոր անձանց այրենական ցուցակը՝ նշելով նրանց առաջադրած մասնակից պետությունները, և այն ներկայացնում Կոնվենցիայի մասնակից պետություններին:
  4. Կոմիտեի անդամների ընտրություններն անցկացվում են Կոնվենցիայի մասնակից պետությունների նիստում, որ իրավիրում է Գլխավոր քարտուղարը Միավորված ազգերի կազմակերպության կենտրոնակայանում: Այդ նիստում, որում քվորում ձևավորում է մասնակից պետությունների երկու երրորդը, Կոմիտեի ընտրված անդամներ են հանդիպում այն թեկնածուները, որոնք ստանում են ձայների առավելագույն քանակը և Կոնվենցիայի մասնակից պետությունների՝ ներկա ու քվեարկությանը մասնակցող ներկայացուցիչների ձայների բացարձակ մեծամասնությունը:
  5. (ա) Կոմիտեի անդամներն ընտրվում են չորս տարով, սակայն առաջին ընտրություններում ընտրված ինն անդամների լիազորություններն ավարտվում են երկամյա ժամկետի ավարտին: Առաջին ընտրություններից անմիջապես հետո այդ ինն անդամների անունները որոշում է Կոմիտեի նախագահի՝ վիճակահանությամբ,  
(բ) չնախատեսված բափուր տեղերը լրացնելու համար Կոնվենցիայի անդամ պետությունը, որի փորձագետն այլևս Կոմիտեի անդամ չէ, իր քաղաքացիներից նշանակում է այլ փորձագետի՝ Կոմիտեի հավանությունն ստանալու պարմանով:

6. Մասնակից պետությունները պատասխանատու են Կոմիտեի անդամների ծախսերը ծածկելու համար՝ Կոմիտեում նրանց պարտականությունների կատարման ժամանակահատվածում:

## Հոդված 9

1. Մասնակից պետությունները պարտավորվում են Կոմիտեի կողմից քննարկման համար Սիավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ներկայացնել գեկույց իրենց ընդունած օրենսդրական, դատական, վարչական կամ այլ միջոցների մասին, որոնց օգնությամբ կենսագործվում են սույն Կոնվենցիայի դրույթները՝

(ա) տվյալ պետության համար սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում, և

(բ) հետագայում յուրաքանչյուր երկու տարին մեկ և ամեն անգամ, երբ դա պահանջում է Կոմիտեն: Կոմիտեն կարող է Կոնվենցիայի մասնակից պետություններից պահանջել լրացուցիչ տեղեկատվություն:

2. Ամեն տարի Կոմիտեն Գլխավոր քարտուղարի միջոցով Սիավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեային գեկույց է ներկայացնում իր գործունեության մասին և կարող է ներկայացնել առաջարկություններ ու ընդհանուր հաճանարարականներ՝ հիմնված մասնակից պետություններից ստացված գեկույցների ու տեղեկատվության ուսումնասիրման վրա: Նման առաջարկություններն ու ընդհանուր հաճանարարականները հաղորդվում են Գլխավոր ասամբլեային Կոնվենցիայի մասնակից պետությունների դիտողությունների հետ մեկտեղ, եթե այդպիսիները կան:

## Հոդված 10

1. Կոմիտեն ընդունում է իր կանոնակարգը:
2. Կոմիտեն ընտրում է իր պաշտոնատար անձանց երկու տարի ժամկետով:
3. Կոմիտեի քարտուղարությունն ապահովվում է Սիավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարի կողմից:
4. Կոմիտեի նիստերը, սովորաբար, անցկացվում են Սիավորված ազգերի կազմակերպության կենտրոնակայանում:

## Հոդված 11

1. Եթե որևէ մասնակից պետություն գտնում է, որ մյուս մասնակից պետությունը չի կատարում սույն Կոնվենցիայի դրույթները, ապա այն կարող է այդ մասին տեղյակ պահել Կոմիտեին: Կոմիտեն այնուհետև այդ մասին հաղորդումը հաճանում է շահագործ մասնակից պետությանը: Ծանուցում ստացած պետությունը երեք ամսվա ընթացքում Կոմիտեին է ներկայացնում տվյալ հարցը լուսաբանող գրավոր բացա-

տրություններ կամ հայտարարություն և իր կողմից ձեռնարկվելիք միջոցները:

2. Եթե հարցը երկու կողմերին բավարարող կարգավորում չի ստանում ոչ երկկողմ բանակցությունների, ոչ նրանց համար մատչելի այլ ճանապարհով, ապա ծանուցումն ստացած պետության կողմից սկզբնական ծանուցումն ստանալուց հետո վեց ամսվա լնրացրուն այդ երկու պետություններից ցանկացածն իրավունք ունի վերատին այդ հարցը հանձնել Կոմիտեի քննությանը՝ Կոմիտեին, ինչպես նաև մյուս պետությանը համապատասխան ծանուցում ներկայացնելու միջոցով:
3. Կոմիտեն սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան իրեն հանձնված հարցը քննարկում է այն բանից հետո, եթե հավաստիանում է, որ, միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքներին համապատասխան, օգտագործվել և սպառվել են իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցները: Այս դրույթը չի կարող կիրառվել. եթե իրավական պաշտպանության տրամադրումն անհիմն կերպով ձգձգվում է:
4. Իր քննարկմանը հանձնված ցանկացած հարցի առթիվ Կոմիտեն կարող է շահագրգիռ մասնակից պետություններից պահանջել գործին առնչվող ցանկացած տեղեկատվություն:
5. Եթե Կոմիտեում քննարկվում է սույն հոդվածի դրույթներից բխող որևէ հարց, ապա շահագրգիռ մասնակից պետություններն իրավունք ունեն հարցի քննարկմանը մասնակցելու համար ուղարկել իրենց ներկայացուցիչներին՝ առանց տվյալ հարցի քննարկման լնրացրուն քվեարկելու իրավունք ունենալու:

## Հոդված 12

1. (ա) Այն բանից հետո, եթե Կոմիտեն ստանում և մանրամասնորեն ստուգում է իր կողմից անհրաժեշտ համարվող ողջ տեղեկատվությունը, նախազարդ նշանակում է Հատուկ հաշտարար հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողովը՝ կազմված 5 անդամից, որոնք կարող են լինել կամ չլինել Կոմիտեի անդամներ): Կոմիտեի անդամները նշանակվում են վեճին մասնակից կողմերի միաձայն համաձայնությամբ, և Հանձնաժողովը սույն Կոնվենցիայի դրույթների պահպանման հիման վրա տվյալ հարցի սիրահոժար կարգավորման նպատակով շահագրգիռ պետություններին է տրամադրում իր բարի ծառայությունները:  
(բ) Եթե Կոմիտեի ողջ կազմի կամ նրա մի մասի կապակցությամբ վեճի կողմեր հանդիսացող մասնակից պետությունների միջև երեք ամսվա լնրացրում համաձայնություն ձեռք չի բերվում, ապա Հանձնաժողովի այն անդամները, որոնց նշանակման վերաբերյալ համաձայնություն ձեռք չի բերվել վեճի մասնակից պետությունների միջև, ընտր-

վում են Կոմիտեի կողմից՝ նրա անդամներից, փակ քվեարկությամբ, ձայների երկու երրորդի մեծամասնությամբ:

2. Հանձնաժողովի անդամներն իրենց պարտականությունները կատարում են անձնապես: Նրանք չպետք է լինեն վեճի կողմ հանդիսացող մասնակից պետության կամ Կոնվենցիային շմասնակցող պետության քաղաքացիներ:
3. Հանձնաժողովն ընտրում է իր նախագահին և ընդունում է իր կանոնակարգը:
4. Հանձնաժողովի նիստերը սովորաբար անցկացվում են Սլավորված ազգերի կազմակերպության կենտրոնակայանում և, Հանձնաժողովի որոշմամբ, ցանկացած այլ վայրում:
5. Քարտուղարությունը, որն ապահովում է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան, սպասարկում է նաև Հանձնաժողովին, եթե պետությունների միջև ծագած վեճը հանգեցնում է Հանձնաժողովի ստեղծման:
6. Վեճի կողմեր հանդիսացող մասնակից պետությունները հավասարապես կրում են Հանձնաժողովի անդամների ծախսերը՝ Սլավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարի կողմից ներկայացվող նախահաշվին համապատասխան:
7. Գլխավոր քարտուղարն իրավունք ունի վճարել Հանձնաժողովի անդամների ծախսերը, եթե դա անհրաժեշտ է, մինչև վեճի կողմեր հանդիսացող մասնակից պետությունների կողմից այդ ծախսերի փոխհատուցումը սույն հոդվածի 6-րդ կետին համապատասխան:
8. Կոմիտեի ստացած և ուսումնասիրած տեղեկատվությունները տրամադրվում են Հանձնաժողովին, և Հանձնաժողովը կարող է շահագրգիռ պետություններին առաջարկել ներկայացնելու գործին առնչվող ցանկացած տեղեկատվություն:

## Հոդված 13

1. Եթե Հանձնաժողովն ամբողջությամբ քննության է առել հարցը, այն նախապատրաստում և Կոմիտեի նախագահին է ներկայացնում կողմերի միջև վեճի փաստին վերաբերող բոլոր հարցերին առնչվող իր եզրակացությունները բովանդակող գեկույց և այնպիսի հանձնարարականներ, որոնք ինքն անհրաժեշտ է համարում վեճի լուծման համար:
2. Կոմիտեի նախագահը Հանձնաժողովի գեկույցն ուղարկում է վեճին մասնակից յուրաքանչյուր պետության: Եթեք ամսվա ընթացքում այդ պետությունները Կոմիտեի նախագահին հայտնում են՝ համաձայն են արդյոք իրենք Հանձնաժողովի գեկույցում բովանդակված առաջարկություններին:
3. Սույն հոդվածի 2-րդ կետում նախատեսված ժամանակահատվածից հետո Հանձնաժողովի նախագահը Հանձնաժողովի գեկույցը և շահա-

գրգիռ մասնակից պետությունների հայտարարություններն ուղարկում է Կոնվենցիային մասնակից մյուս պետություններին:

## Հոդված 14

1. Մասնակից պետությունը ցանկացած ժամանակ կարող է հայտարարել, որ ինքը ճանաչում է Կոմիտեի իրավասությունը՝ իր իրավագործության սահմաններում ընդունելու և քննության առնելու հաղորդումներ առանձին անձանցից կամ անձանց խմբերից, որոնք պետություն են, թե իրենք տվյալ մասնակից պետության կողմից սույն Կոնվենցիայում ամրագրված որևէ իրավունքի խախտման զոհ են: Կոմիտեն չի ընդունում որևէ հաղորդում, եթե այն վերաբերում է Կոնվենցիայի՝ այդպիսի հայտարարություն չարած մասնակից պետությունը:
2. Սույն հոդվածի 1-ին կետում նշանաւեսված հայտարարություն արած ցանկացած մասնակից պետություն կարող է իհմնել կամ նշել իր ներպետական իրավական համակարգի շրջանակներում գործող մարմին, որն իրավասու կլինի ընդունելու և իր իրավագործության սահմաններում քննության առնելու այն առանձին անձանց կամ անձանց խմբերի զանգատները, որոնք հայտարարում են, թե իրենք սույն Կոնվենցիայում ամրագրված իրավունքներից որևէ մեկի խախտման զոհ են, և որոնք սպառել են իրավական պաշտպանության տեղական մյուս մատչելի միջոցները:
3. Սույն հոդվածի առաջին կետին համապատասխան արգած հայտարարությունը, ինչպես նաև սույն հոդվածի երկրորդ կետին համապատասխան իհմնված կամ նշված ցանկացած մարմնի անվանումը համապատասխան մասնակից պետության կողմից ի պահ են հանձնվում Սիլավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին, որը դրանց պատճեններն առաքում է մյուս մասնակից պետություններին: Հայտարարությունը կարող է ցանկացած ժամանակ չեղյալ հայտարարվել այդ մասին Գլխավոր քարտուղարին ծանուցելու միջոցով, սակայն այդ չեղյալ հայտարարությունը չի անդրադառնում այն հաղորդումների վրա, որոնք քննության են առնվում Կոմիտեի կողմից:
4. Գանգատների ցուցակը կազմում է սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան իհմնված կամ նշված մարմնը, իսկ այդ ցուցակի հաստատված պատճեններն ամեն տարի համապատասխան ուղիներով հանձնվում են Գլխավոր քարտուղարին, ընդունված դրանց բովանդակությունը ենթակա չէ իրավարարկման:
5. Այն դեպքում, եթե գանգատարկուն բավարարված չէ սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան իհմնված կամ նշված մարմնի գործողություններով, այն իրավունք ունի վեց ամսվա լնիքացքում տվյալ հարցը հանձնել Կոմիտեին:
6. (ա) Կոմիտեն իրեն հանձնված ցանկացած հաղորդում խորհրդապահական կարգով ներկայացնում է Կոնվենցիայի որևէ դրույթի խախտման մեջ մեղադրվող մասնակից պետության ուշադրությանը, սակայն

համապատասխան անձի կամ անձանց խմբի ինքնությունը չի բացահայտվում առանց նրա կամ նրանց համաձայնության: Կոմիտեն չի ընդունում անանուն հաղորդումներ:

(ը) Ստացած պետությունը երեք ամսվա ընթացքում Կոմիտեն է ներկայացնում այդ հարցը լուսաբանող գրավոր բացատրություններ կամ հայտարարություններ և այն միջոցները, որոնք կարող էին կիրառվել այդ պետության կողմից:

7. (ա) Կոմիտեն հաղորդումները քննության է առնում՝ հաշվի առնելով շահագրգիռ մասնակից պետության և զանգատարկուի կողմից իրեն տրամադրված ողջ տեղեկատվությունը: Կոմիտեն քննության չի առնում որևէ զանգատարկուի հաղորդում, քանի դեռ չի հավաստիանում, որ զանգատարկուն սպառել է իրավական պաշտպանության բոլոր ներպետական մատչելի միջոցները: Այդ կանոնը, սակայն, չի գործում այն դեպքում, եթե այդ միջոցների կիրառումն անհիմն կերպով ձգձգվում է:
- (ը) Կոմիտեն իր առաջարկություններն ու հանձնարարականները, եթե այդպիսիք կան, ուղարկում է շահագրգիռ մասնակից պետության ու զանգատարկուին:
8. Կոմիտեն իր ամենամյա գեկույցում ընդգրկում է այդ հաղորդումների ամփոփագիրը և, անհրաժեշտության դեպքում, շահագրգիռ մասնակից պետությունների բացատրությունների ու հայտարարությունների համառոտ շարադրանքը, ինչպես նաև իր իսկ առաջարկություններն ու հանձնարարականները:
9. Կոմիտեն իրավասու է սույն հոդվածով նախատեսված գործառույթներն իրականացնելու միայն այն դեպքում, եթե Կոնվենցիայի առնվազն տասը մասնակից պետություններ սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան հայտարարություններ են արել:

## Հոդված 15

1. Մինչև Գլխավոր ասամբլեայի 1960թ. դեկտեմբերի 14-ի 1514 (15) բանաձնում բովանդակվող Գաղութային երկրներին և ժողովուրդներին անկախության շնորհելու մասին հոչակագրի նպատակների իրագործումը, սույն Կոնվենցիայի դրույթները ոչ մի կերպ չեն սահմանափակում զանգատներ ներկայացնելու՝ միջազգային այլ փաստաթղթերով կամ Միավորված ազգերի կազմակերպության և նրա մասնագիտացված հաստատությունների կողմից այդ ժողովուրդներին տրամադրված իրավունքը:
2. (ա) Սույն Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան իմնված Կոմիտեն զանգատների պատճեններն ստանում է Միավորված ազգերի կազմակերպության այն մարմիններից, որոնք գրադիւն են սույն Կոնվենցիայի սկզբունքներին ու նպատակներին անմիջականորեն առնչվող հարցերով, և նրանց է ներկայացնում այդ զանգատների վերաբերյալ իր կարծիքներն ու հանձնարարականները

խնամարկյալ և ինքնակառավարում չունեցող տարածքների և բոլոր այն տարածքների բնակիչներից ստացված զանգատները քննության առնելիս, որոնց վերաբերյալ, սույն Կոնվենցիայով նախատեսված հարցերի առնչությամբ, կիրառվում է 1514 (15) բանաձնը և որոնք քննության են առնչվում այդ մարմինների կողմից:

(ը) Կոմիտեն Միավորված ազգերի կազմակերպության իրավասու մարմիններից ստանում է կառավարող տերությունների կողմից սույն կետի (ա) ենթակետում հիշատակված տարածքներում իրազործվող օրենսդրական, դատական, վարչական և սույն Կոնվենցիայի սկզբունքներին ու նպատակներին անմիջականորեն առնչվող այլ միջոցառումների վերաբերող գեկույցների օրինակները, ինչպես նաև այդ առթիվ արտահայտում է իր կարծիքն ու հաճախարարականներ առաջարկում այդ մարմիններին:

3. Կոմիտեն Գլխավոր ասամբլեային ներկայացվող իր գեկույցում ընդգրկում է զանգատների ու Միավորված ազգերի կազմակերպության մարմիններից ստացված գեկույցների ամփոփումները, ինչպես նաև Կոմիտեի՝ նշված զանգատներին և գեկույցներին վերաբերող կարծիքն ու հաճախարարականները:
4. Կոմիտեն Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարից պահանջում է սույն Կոնվենցիայի 2-րդ կետի (ա) ենթակետում հիշատակված տարածքների վերաբերյալ Կոնվենցիայի նպատակներին առնչվող և նրա տրամադրության ներքո գտնվող ողջ տեղեկատվությունը:

## Հոդված 16

Սույն Կոնվենցիայի՝ վեճերի կարգավորմանը կամ բողոքների քննարկմանը վերաբերող լրույցները կիրառվում են՝ առանց խոչընդոտելու խտրականության բնագավառում վեճերի կարգավորման կամ բողոքների քննարկման այլ լներացակարգերի. որոնք սահմանված են Միավորված ազգերի կազմակերպության և նրա մասնագիտացված հաստատությունների հիմնարար փաստարդերում կամ նրանց կողմից ընդունված կոնվենցիաներում, և մասնակից պետություններին չեն խանգարում օգտագործելու վեճերի կարգավորման այլ լներացակարգեր՝ ընդհանուր կամ նրանց միջև գործող հատուկ միջազգային համաձայնագրերին համապատասխան:

## Մաս 3

## Հոդված 17

1. Սույն Կոնվենցիան բաց է ստորագրման Միավորված ազգերի կազմակերպության ցանկացած անդամ պետության կամ կազմակերպության մասնագիտացված հաստատությունների ցանկացած անդամի. Միջազգային դատարանի ստատուտի ցանկացած

մասնակից պետության և ցանկացած այլ պետության համար, որը Սի-  
ավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից  
հրավիրվել է մասնակցելու սույն Կոնվենցիային:

2. Սույն Կոնվենցիան ենթակա է վավերացման: Վավերագրերն ի պահ  
են հանձնվում Սիավորված ազգերի կազմակերպության Գլխավոր  
քարտուղարին:

## Հոդված 18

1. Սույն Կոնվենցիան բաց է միանալու սույն Կոնվենցիայի  
17-րդ հոդվածի 1-ին կետում նշված ցանկացած պետության համար:
2. Սիանալը կատարվում է միանալու մասին փաստաբուղը Սիավոր-  
ված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ի պահ  
հանձնելու միջոցով:

## Հոդված 19

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում քսանյոթերորդ վավերագիրը  
կամ միանալու մասին փաստաբուղը Սիավորված ազգերի կազմա-  
կերպության Գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելուց հետո երե-  
սուներորդ օրը:
2. Քսանյոթերորդ վավերագիրը կամ միանալու մասին փաստաբուղը ի  
պահ հանձնելուց հետո սույն Կոնվենցիան վավերացրած կամ դրան  
միացած յուրաքանչյուր պետության համար սույն Կոնվենցիան ուժի  
մեջ է մտնում այդ պետության վավերագիրը կամ միանալու մասին  
փաստաբուղը ի պահ հանձնելուց հետո երեսուներորդ օրը:

## Հոդված 20

1. Սիավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարն  
ստանում և հանձնում է այն բոլոր պետություններին, որոնք են կամ  
կարող են դառնալ սույն Կոնվենցիայի մասնակիցներ, վավերացման  
կամ միանալու պահին արված վերապահումները: Վերապահման դեմ  
առարկող ցանկացած պետություն վերը նշված ծանուցման օրվանից  
սկսած իննառև օրվա ընթացքում Գլխավոր քարտուղարին տեղեկաց-  
նում է այն մասին, որ ինքը չի ընդունում տվյալ վերապահումը:
2. Սույն Կոնվենցիայի նպատակների և խնդիրների հետ անհամատեղե-  
լի վերապահումներն անբույլատրելի են, անբույլատրելի են նաև այն  
վերապահումները, որոնք կարող են խոչընդոտել սույն Կոնվենցիայի  
հիման վրա ստեղծված որևէ մարմնի գործունեությանը: Վերապահու-  
մն անհամատեղելի կամ գործունեությանը խոչընդոտող է համարվում,  
եթե Կոնվենցիայի մասնակից պետությունների առնվազն երկու եր-  
րորդն առարկում է դրա դեմ:

3. Վերապահումները կարող են չելյալ հայտարարվել ցանկացած ժամանակ, Գլխավոր քարտուղարին հղված համապատասխան ծանուցման միջոցով: Այդպիսի ծանուցումն ուժի մեջ է մտնում այն ստանալու օրը:

## Հոդված 21

Յուրաքանչյուր մասնակից պետություն սույն Կոնվենցիան կարող է չելյալ հայտարարել այդ մասին Սիավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ուղղված գրավոր ծանուցման միջոցով: Չելյալ հայտարարելն ուժի մեջ է մտնում այդ մասին Գլխավոր քարտուղարի կողմից ծանուցումն ստանալու օրվանից մեկ տարի անց:

## Հոդված 22

Սույն Կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման վերաբերյալ երկու կամ մի քանի մասնակիցների միջև ծագած ցանկացած վեճ, որը չի կարգավորվում բանակցությունների կամ սույն Կոնվենցիայում հասուն նախատեսված լրացածակարգերի միջոցով, վեճի կողմերից յուրաքանչյուրի պահանջով հանձնվում է Սիցազգային դատարանի լուծմանը, եթե վիճող կողմերը չեն պայմանավորվել կարգավորման այլ եղանակների շուրջ:

## Հոդված 23

1. Սույն Կոնվենցիայի վերանայման մասին պահանջը կարող է ներկայացվել ցանկացած ժամանակ ցանկացած մասնակից պետության կողմից, Սիավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին հղված գրավոր ծանուցման միջոցով:
2. Սիավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը որոշում է, թե ինչ միջոցներ ակտոր է ձեռնարկել նման պահանջի կապակցությամբ, եթե այդպիսիներն անհրաժեշտ են:

## Հոդված 24

Սիավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը սույն Կոնվենցիայի 17-րդ հոդվածի 1-ին կետում հիշատակված բոլոր պետություններին հաղորդում է հետևյալ տեղեկությունները.

- (ա) 17-րդ և 18-րդ հոդվածներին համապատասխան ստորագրման, վավերացման և միանալու մասին,
- (բ) սույն Կոնվենցիայի՝ 19-րդ հոդվածին համապատասխան ուժի մեջ մտնելու մասին,
- (գ) 14, 20 և 23-րդ հոդվածներին համապատասխան ստացված հաղորդումների ու հայտարարությունների մասին,
- (դ) 21-րդ հոդվածին համապատասխան չելյալ հայտարարելու մասին:

## Հոդված 25

1. Սույն Կոնվենցիան, որի անգլերեն, իսպաներեն, չինարեն, ռուսերեն և ֆրանսերեն տեքստերը հավասարազոր են, պահպում են Սիավորված ազգերի կազմակերպության արխիվում:
2. Սիավորված ազգերի կազմակերպության Գլուխուր քարտուղարը սույն Կոնվենցիայի հաստատված պատճեններն ուղարկում է Կոնվենցիայի 17-րդ հոդվածի 1-ին կետում հիշատակված կատեգորիաներից ցանկացածին պատկանող բոլոր պետություններին:

### 4. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱԾՆԱԳԻՐ

**Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին<sup>7</sup>  
(16 դեկտեմբերի 1966թ.)**

#### Նախարան

Սույն Դաշնագրի մասնակից պետությունները,

հաշվի առնելով, որ, Սիավորված ազգերի կազմակերպության Կանոնադրությամբ հոչակված սկզբունքներին համապատասխան, մարդկային ընտանիքի բոլոր անդամներին ներհատուկ արժանապատվության և նրանց հավասար ու անկապտելի իրավունքների ճանաչումն աշխարհում ազատության, արդարության և համընդհանուր խաղաղության հիմքն է,

ընդունելով, որ այդ իրավունքները բխում են մարդկային անհատին ներհատուկ արժանապատվություննից,

ընդունելով, որ, Մարդու իրավունքների համընդհանուր հոչակագրին համապատասխան, քաղաքացիական և քաղաքական ազատությունից օգտվող և վախից ու կարիքից ձերքագատված մարդկային ազատ անհատի իդեալը կարող է միայն իրականանալ, եթե ստեղծվեն այնպիսի պայմաններ, երբ յուրաքանչյուրը կարող է օգտվել իր քաղաքացիական ու քաղաքական իրավունքներից, ինչպես նաև՝ տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքներից,

հաշվի առնելով Սիավորված ազգերի կազմակերպության Կանոնադրությամբ պետությունների ստանձնած պարտավորությունը՝ խրախուսելու մարդու իրավունքների և ազատությունների նկատմամբ համընդհանուր հարգանքն ու դրանց պահպանումը,

գիտակցելով, որ անհատը, պարտավորություններ ունենալով այլ անձանց և այն հանրության հանդեպ, որին ինքը պատկանում է, պետք է հետամուտ լինի սույն Դաշնագրում ճանաչվող իրավունքների խրախուսմանն ու պահպանմանը,

<sup>7</sup> Պաշտոնական քարգմանություն

համաձայնում են ներքոհիշյալ հոդվածների շուրջ.

## Մաս 1

### Հոդված 1

1. Բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք: Այդ իրավունքի ուժով նրանք ազատորեն սահմանում են իրենց քաղաքական կարգավիճակը և ազատորեն ապահովում իրենց տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացումը:
2. Բոլոր ժողովուրդներն իրենց նպատակներին հասնելու համար կարող են ազատորեն տնօրինել իրենց բնական հարստություններն ու ռեսուրսները՝ առանց խոշնդրութելու փոխահավետության սկզբունքի վրա հիմնված միջազգային տնտեսական համագործակցությունից բխող որևէ պարտավորության և միջազգային իրավունքին: Ոչ մի ժողովուրդ ոչ մի դեպքում չի կարող գրկվել գոյության՝ սեփական միջոցներից:
3. Սույն Դաշնագրի մասնակից բոլոր պետությունները, այդ թվում և նրանք, ովքեր պատասխանատու են ինքնակառավարում չունեցող և խնամարկյալ տարածքների կառավարման համար, Սիավորված ազգերի կազմակերպության կանոնադրության դրույթներին համապատասխան, խրախուսում են ինքնորոշման իրավունքի իրականացումը և հարգում այդ իրավունքը:

## Մաս 2

### Հոդված 2

1. Սույն Դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է հարգել իր տարածքի սահմաններում և իր իրավագործության ներքո գտնվող բոլոր անձանց՝ սույն Դաշնագրով ճանաչված իրավունքները և ապահովել դրանք առանց որևէ խտրականության, այն է՝ անկախ ռասայից, մաշկի գույնից, սեռից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքներից, ազգային կամ սոցիալական ծագումից, ծննդից, գույքային կամ այլ դրությունից:
2. Եթե դա դեռևս նախատեսված չէ գոյություն ունեցող օրենսդրական կամ այլ միջոցներով, սույն Դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է իր սահմանադրական ընթացակարգերին և սույն Դաշնագրի դրույթներին համապատասխան անհրաժեշտ քայլեր ձեռնարկել այնպիսի օրենքներ կամ այլ միջոցառումներ ընդունելու համար, որոնք կարող են անհրաժեշտ լինել սույն Դաշնագրով ճանաչվող իրավունքների իրականացման համար:
3. Սույն Դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է.

- ա) ցանկացած անձի համար, որի՝ սույն Դաշնագրով ճանաչվող իրավունքները կամ ազատությունները խախտված են, ապահովել արդյունավետ իրավական պաշտպանություն, անզամ եք այդ խախտումը կատարած լինեն պաշտոնապես գործող անձինք,
- բ) ապահովել, որպեսզի իրավական պաշտպանություն հայցող ցանկացած անձի համար այդպիսի պաշտպանության իրավունք սահմանվի դատական, վարչական կամ օրենսդրական իրավասու իշխանությունների կամ պետության իրավական համակարգով նախատեսված այլ իրավասու մարմնի կողմից, և զարգացնել դատական պաշտպանության հնարավորությունները,
- գ) ապահովել իրավասու իշխանությունների կողմից իրավական պաշտպանության միջոցների կիրառումը՝ դրանք տրամադրելու դեպքում:

### **Հոդված 3**

Սույն Դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են տղամարդկանց ու կանանց համար ապահովել սույն Դաշնագրով նախատեսված քաղաքացիական ու քաղաքական բոլոր իրավունքներից օգտվելու հավասար իրավունք:

### **Հոդված 4**

- Արտակարգ դրության ժամանակ, որի դեպքում վտանգված է ժողովրդի կյանքը, և որը հայտարարված է պաշտոնապես, սույն Դաշնագրի մասնակից պետությունները կարող են միջոցներ ձեռնարկել ի շեղումն սույն Դաշնագրով ստանձնած իրենց պարտավորությունների՝ միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակի լրջությունը, պայմանով, որ այդ միջոցներն անհամատեղելի չեն միջազգային իրավունքի համաձայն իրենց մյուս պարտավորությունների հետ և չեն հանդիսանում խորականություն բացառապես ռասային, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի կամ սոցիալական ծագման հիմքով:
- Այս դրույթը չի կարող իիմք ընդունվել 6, 7, 8 (1-ին և 2-րդ կետեր), 11, 15, 16 և 18-րդ հոդվածներից որևէ շեղում կատարելու համար:
- Սույն Դաշնագրի մասնակից ցանկացած պետություն, որն օգտվում է շեղվելու իրավունքից, Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարության միջնորդությամբ սույն Դաշնագրի մասնակից մյուս պետություններին անհապաղ տեղեկացնում է այն դրույթների մասին, որոնցից ինքը շեղվել է, և այդպիսի որոշում կայացնելու դրույթատճառների մասին: Նոյն միջնորդի միջոցով հետագայում հաղորդում է նաև այդ շեղումը դադարեցնելու ամսաթվի մասին:

## **Հոդված 5**

1. Սույն Դաշնագրում ոչինչ չի կարող մեկնաբանվել այն նշանակությամբ, թե որևէ պետություն, խումբ կամ անձ իրավունք ունի զրադարձությունը այնպիսի գործողությունը կամ կատարելու այնպիսի գործողություն, որն ուղղված լինի սույն Դաշնագրով ճանաչված ցանկացած իրավունքի կամ ազատության վերացմանը կամ սահմանափակմանն ավելի մեծ չափով, քան նախատեսված է սույն Դաշնագրով:
2. Սույն Դաշնագրի մասնակից որևէ պետությունում չի թույլատրվում մարդու՝ օրենքի, կոնվենցիաների, ենթաօրենսդրական ակտերի կամ սովորույթների համաձայն ճանաչվող կամ գոյություն ունեցող որևէ հիմնարար իրավունքի ոչ մի սահմանափակում կամ նվազեցում այն հիմնափորմանը, թե սույն Դաշնագրում նման իրավունք չի ճանաչվում կամ ճանաչվում է նվազ ծավալով:

## **Մաս 3**

## **Հոդված 6**

1. Յուրաքանչյուր ոք ունի կյանքի անօտարելի իրավունք: Այդ իրավունքը պաշտպանվում է օրենքով: Ոչ ոքի չի կարելի կամայականորեն գրկել կյանքից:
2. Այն երկրներում, որոնք չեն վերացրել մահապատիժը, մահվան դատավճիռները կարող են կայացվել միայն ամենածանր հանցագործությունների համար, հանցագործության կատարման պահին գործող օրենքին համապատասխան, որը չի հակասում սույն Դաշնագրի և Յեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատմելու մասին կոնվենցիայի դրույթներին: Այդ պատիժը կարող է իրականացվել միայն ի կատարումն իրավասու դատարանի կայացրած վերջնական դատավճռի:
3. Այն դեպքում, եթե կյանքից գրկելը ցեղասպանության հանցագործություն է, պետք է նկատի ունենալ, որ սույն Դաշնագրի մասնակից պետություններին սույն հոդվածում ոչինչ իրավունք չի տալիս որևէ կերպ շեղվել Յեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատմելու մասին կոնվենցիայի դրույթների համաձայն ստանձնած ցանկացած պարտավորությունից:
4. Մահապատիժի դատապարտված յուրաքանչյուր ոք իրավունք ունի հայցելու ներում կամ դատավճողի մեղմացում: Համաներումը, ներումը կամ դատավճողի մեղմացումը կարող են շնորհվել բոլոր դեպքերում:
5. Մահապատիժ չի նշանակվում տասնուր տարեկանից ցածր անձանց՝ կատարած հանցագործությունների համար և ի կատար չի ածվում հյու կանանց նկատմամբ:

6. Սույն հոդվածում ոչինչ չի կարող հիմք ծառայել սույն Դաշնագրի մասնակից որևէ պետության կողմից մահապատժի վերացումը հետաձգելու կամ բույլ շտալու համար:

## Հոդված 7

Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Մասնավորապես, ոչ ոք չի կարող առանց իր ազատ արտահայտված համաձայնության ենթարկվել բժշկական կամ գիտական փորձերի:

## Հոդված 8

1. Ոչ ոք չպետք է պահվի ստրկության մեջ. ստրկությունը և ստրկավաճառությունն արգելվում են բոլոր դրսերումներով:
2. Ոչ ոք չպետք է պահվի անազատ վիճակում:
3. ա) Մարդուն չի կարենի պարտադրել կատարելու ստիպողական կամ հարկադիր աշխատանք.  
բ) այն երկրներում, որտ հանցագործության համար որպես պատիժ կարող է նշանակվել ազատազրկում՝ զուգակցված տաժանակիր աշխատանքի հետ, 3-րդ կետի (ա) ենթակեար խոչընդոտ չի հանդիսանում իրավասու դատարանի կողմից նման պատիժ սահմանող դատավճի հիման վրա տաժանակիր աշխատանքի իրականացմանը,  
գ) սույն կետի նպատակի համար «ստիպողական կամ հարկադիր աշխատանք» հասկացությունը չի ներառում.  
(i) (ք) Ենթակետում շիխատակված ցանկացած աշխատանք կամ ծառայություն, որը, որպես կանոն, պետք է կատարի դատարանի օրինական կարգադրության հիման վրա կալանքի տակ գտնվող անձը կամ այդպիսի կալանքից պայմանական ազատված անձը,  
(ii) ուղարկման բնույթի ցանկացած ծառայություն և այն երկրներում, որտեղ ճանաչվում է զինվորական ծառայությունից քաղաքական ու կրօնական շարժադրությունով իրաժարումը, զինվորական ծառայությունից իրաժարվող անձանց համար օրենքով նախատեսված ցանկացած ծառայություն,  
(iii) ցանկացած ծառայություն, որը պարտադիր է բնակչության կյանքին կամ բարեկեցությանն սպառնացող արտակարգ դրության կամ աղետի դեպքում,  
(iv) ցանկացած աշխատանք կամ ծառայություն, որը սովորական քաղաքայիական պարտականությունների մաս է կազմում:

## Հոդված 9

1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոք չի կարող ենթարկվել կամայական ձերբակալման կամ

կալանավորման: Ոչ ոք չպետք է զրկվի ազատությունից այլ կերպ, քան այնպիսի հիմքերով և այնպիսի ընթացակարգին համապատասխան, որոնք սահմանված են օրենքով:

2. Յուրաքանչյուր անձի ձերբակալման ժամանակ նրան հայտնում են ձերբակալման պատճառները և շտապ կարգով հաղորդում նրան ներկայացվող ամեն մի մեղադրանք:
3. Քրեական մեղադրանքով ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր անձ շտապ կարգով հասցվում է դատավորի կամ օրենքով՝ դատական իշխանություն իրականացնելու համար լիազորված պաշտոնատար անձի մոտ և ունի ողջամիտ ժամկետում դատական քննության կամ ազատ արձակվելու իրավունք: Դատական քննության սպասող անձին կալանքի տակ պահելն ընդհանուր կանոն չպետք է լինի, բայց ազատ արձակվելու կարող է կախման մեջ դրվել դատարան ներկայանալու, ցանկացած փուլում դատական քննության և, անհրաժեշտության դեպքում, դատավճիռն ի կատար ածելու համար ներկայանալու երաշխիքներ տալուց:
4. Ձերբակալման կամ կալանքի տակ պահելու հետևանքով իր ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք ունի դատարանում իր գործի քննության իրավունք, որպեսզի դատարանն անհապաղ կարողանան որոշել կալանավորման օրինականությունը և կարգադրել նրան ազատ արձակելու, եթե կալանավորումն անօրինական է:
5. Յուրաքանչյուր ոք, ով եղել է անօրինական ձերբակալման կամ կալանավորման զոհ, իրավունք ունի հայցային ուժ ունեցող փոխհատուցման:

## Հոդված 10

1. Ազատությունից զրկված բոլոր անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և մարդկային անհատին ներհատուկ արժանապատվության հարզման իրավունք:
2. ա) Այն դեպքերում, եթե չկան բացառիկ հանգամանքներ, մեղադրյալները տեղափորվում են դատապարտյալներից առանձին, և նրանց առանձին ռեժիմը համապատասխանում է շղատապարտված անձի կարգավիճակին,  
բ) անշափահաս մեղադրյալներն առանձնացվում են չափահասներից և հնարավորինս կարծ ժամկետում հասցվում դատարան՝ որոշում կայացնելու համար:  
3. Պատժի համակարգով բանտարկյալների համար նախատեսվում է այնպիսի ռեժիմ, որի էական նպատակը նրանց բարեփոխումն է և սոցիալական վերականգնումը: Անշափահաս օրինախախտներն առանձնացվում են չափահասներից, և նրանց ռեժիմը համապատասխանում է իրենց տարիքին ու իրավական կարգավիճակին:

## **Հոդված 11**

Ոչ ոք չի կարող ազատազրկվել միայն այն հիմքով, որ ի վիճակի չէ կատարելու պայմանագրային պարտավորությունը:

## **Հոդված 12**

1. Որևէ պետության տարածքում օրինականորեն գտնվող յուրաքանչյուր ոք ունի այդ տարածքի սահմաններում ազատ տեղաշարժվելու իրավունք և բնակության վայր ընտրելու ազատություն:
2. Յուրաքանչյուր ոք ունի ցանկացած, ներառյալ իր սեփական, երկրից մեկնելու իրավունք:
3. Վերը նշված իրավունքները չեն կարող ենթարկվել որևէ սահմանափակման, բացի օրենքով նախատեսված այն սահմանափակումներից, որոնք անհրաժեշտ են պետական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ քարոյականության կամ էլ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար, և համատեղելի են սույն Դաշնագրով ճանաչվող այլ իրավունքների հետ:
4. Ոչ ոք չի կարող կամայականորեն գրկվել իր սեփական երկիրը մուտք գործելու իրավունքից:

## **Հոդված 13**

Սույն Դաշնագրի մասնակից որևէ պետության տարածքում օրինականորեն գտնվող օտարերկրության կարող է արտաքսվել միայն ի կատարումն օրենքին համապատասխան կայացված որոշման, և եթե պետական անվտանգության իրամայական նկատառումները չեն պահանջում այլ բան, ունի իր արտաքսման դեմ փաստարկներ ներկայացնելու, իրավասու իշխանության կամ իրավասու իշխանության նշանակած անձի կամ անձանց կողմից իր գործը վերանայելու իրավունք և այդ նպատակով այդ իշխանության, անձի կամ անձանց առջև ներկայացվելու իրավունք:

## **Հոդված 14**

1. Բոլոր անձինք հավասար են դատարանների և տրիբունալների առջև: Յուրաքանչյուր ոք իր դեմ ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի քննության կամ որևէ քաղաքացիական դատավարությունում իր իրավունքների ու պարտականությունների որոշման ընթացքում ունի օրենքի հիման վրա ստեղծված իրավասու, անկախ ու անկողմնակալ դատարանի կողմից գործի արդարացի ու իրապարակային քննության իրավունք: Մամուլին ու հասարակայնությանը կարող է արգելվել մասնակցելու ողջ դատաքննությանը կամ դրա որևէ փուլ՝ ժողովրդավարական հասարակության մեջ քարոյականության,

հասարակական կարգի կամ պետական անվտանգության նկատառումներով, կամ երբ այդ պահանջում են կողմերի նասնավոր կյանքի շահերը, կամ էլ հատուկ հանգանաճների դեպքում, երբ հրապարակայնությունը կխախտի արդարադատության շահերը. նման արգելումը կատարվում է այն չափով, որչափ, դատարանի կարծիքով, այն խիստ անհրաժեշտ է, սակայն քրեական կամ քաղաքացիական գործի վերաբերյալ դատական ցանկացած որոշում պետք է լինի հրապարակային, բացառությամբ այն դեպքերի, երբ անշափահասների շահերը պահանջում են այլ բան, կամ գործը վերաբերում է ամուսնական վեճերին կամ երեխաների խնամակալությանը:

2. Քրեական հանցագործության մեջ մեղադրվող յուրաքանչյուր անձ իրավունք ունի համարվելու անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան:
3. Յուրաքանչյուր որ իրեն ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի քննության ժամանակ ունի առնվազն հետևյալ երաշխիքների իրավունքը՝ լիակատար հավասարության հիման վրա.
  - ա) շտապ կարգով և մանրամասն, այն լեզվով, որը նա հասկանում է, տեղեկացվել իրեն ներկայացված մեղադրանքի քննույթի ու հիմքի մասին,
  - բ) բավարար ժամանակ ու հնարավորություններ ունենալ իր պաշտպանությունը նախապատրաստելու և իր ընտրած պաշտպանի հետ հաղորդակցվելու համար,
  - գ) դատվել առանց չարդարացված հապալման,
  - դ) դատվել իր ներկայությամբ և իրեն պաշտպանել անձանք կամ իր ընտրած պաշտպանի միջոցով. պաշտպան չունենալու դեպքում տեղեկացվել այդ իրավունքի մասին և, ցանկացած դեպքում, ելեկով արդարադատության շահերից, ունենալ իր համար նշանակված պաշտպան՝ նրա համար անվճար բոլոր այն դեպքերում, եթե նա բավարար միջոցներ չունի դրա դիմաց վճարելու,
  - ե) հարցաքննել կամ հարցաքննել տալ իր դեմ ցուցմունք տվող վկաներին և ապահովել իր օգտին ցուցմունք տվող վկաների ներկայանալը և հարցաքննումը՝ նույն պայմաններով, ինչով և իր դեմ ցուցմունք տվող վկաներինը,
  - զ) օգտվել թարգմանչի անվճար օգնությունից, եթե նա չի հասկանում դատարանում օգտագործվող լեզվուն կամ չի խոսում այդ լեզվով,
  - է) պարտադրված շինել իր դեմ ցուցմունքներ տալու կամ իրեն մեղավոր ճանաչելու:
4. Անշափահասների դեպքում դատավարությունը պետք է լինի այնպիսին, որպեսզի հաշվի առնվի նրանց տարիքը և նպաստի նրանց վերականգնմանը:
5. Հանցագործության համար դատապարտված յուրաքանչյուր որ իրավունք ունի, որ իր դատապարտումը և դատավճիռը վերանայվեն վերադաս դատական ատյանի կողմից, օրենքի համաձայն:

- Եթե որևէ անձ վերջնական որոշմամբ դատապարտվել է քրեական հանցագործության համար և եթե նրա նկատմամբ կայացված դատավճիռը հետագայում բեկանվել է կամ նրան ներում է շնորհվել այն հիմքով, որ նոր կամ նոր բացահայտված որևէ փաստ անվիճելիորեն ապացուցում է դատական սխալի առկայությունը, ապա նման դատապարտման հետևանքով պատիժ կրած անձն օրենքի համաձայն ստանում է փոխհատուցում, եթե չապացուցվի, որ հիշյալ անհայտ հանգանանքը ժամանակին չի բացահայտվել բացառապես կամ մասամբ նրա մեղքով:
- Ոչ ոք չպետք է կրկին դատվի կամ պատժվի այն հանցագործության համար, որի համար նա արդեն վերջնականապես դատապարտվել է կամ արդարացվել՝ յուրաքանչյուր երկրի օրենքին և քրեական դատապարությանը համապատասխան:

## **Հոդված 15**

- Ոչ ոք չի կարող հանցագործության համար մեղավոր ճանաչվել, եթե զործողության կամ անզործության պահին զործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն դա հանցագործություն չի համարվել: Նմանապես, չի կարող նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառման եր ենթակա քրեական հանցագործության կատարման պահին: Եթե հանցագործության կատարվելուց հետո օրենքով ավելի մեղմ պատիժ է սահմանվում, այդ օրենքի զործողությունը տարածվում է տվյալ հանցագործի վրա:
- Սույն հոդվածում ոչինչ չի խոչընդոտում ցանկացած անձի դատի տալուն և պատժելուն ցանկացած զործողության կամ անզործության համար, որը կատարվելու պահին, ըստ միջազգային հանրության կողմից ճանաչված իրավունքի ընդհանուր սկզբունքների, հանդիսացել է քրեական հանցագործություն:

## **Հոդված 16**

Յուրաքանչյուր ոք, որտեղ էլ գտնվելիս լինի, ունի իր իրավասությենկության ճանաչման իրավունք:

## **Հոդված 17**

- Արգելվում է կամայական կամ անօրինական միջամտությունն անձի անձնական, ընտանեկան կյանքին, բնակարանի կամ նամակագրության անձեռնմխելիությանը, ինչպես նաև անօրինական ոտնածզությունը նրա պատվի ու հետինակության դեմ:
- Յուրաքանչյուր ոք ունի նման միջամտությունից կամ ոտնածզություններից օրենքով պաշտպանվածության իրավունք:

## **Հոդված 18**

1. Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Այդ իրավունքն ընդգրկում է իր ընտրությամբ կրոն կամ համոզմունք ունենալու կամ ընդունելու ազատությունը և միանձնյա կամ այլոց հետ համատեղ և իրավարակավ, կամ նասնավոր կարգով, իր կրոնը կամ համոզմունքը պաշտամունքի, արարողությունների, ծեսերի և քարոզության միջոցով արտահայտելու ազատությունը:
2. Ոչ ոք չպետք է ենթարկվի այնալիս հարկադրանքի, որը նսեմացնում է սեփական ընտրությամբ կրոն կամ համոզմունք ունենալու կամ ընդունելու ազատությունը:
3. Կրոնի կամ համոզմունքի արտահայտման ազատությունը ենթարկվում է միայն օրենքով սահմանված և հասարակական անվտանգության, կարգի, առողջության ու բարոյականության, ինչպես և այլ անձանց հիմնարար իրավունքների ու ազատությունների պահպանման համար անհրաժեշտ սահմանափակումների:
4. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են հարգել ծնողների և, համապատասխան դեպքերում, օրինական խնամակալների ազատությունը՝ ապահովելու իրենց երեխաների կրոնական ու բարոյական դաստիարակությունը սեփական համոզմունքներին համապատասխան:

## **Հոդված 19**

1. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի առանց միջամտության սեփական կարծիք ունենալ:
2. Յուրաքանչյուր ոք ունի ազատ արտահայտվելու իրավունք. այդ իրավունքն ընդգրկում է, անկախ պետական սահմաններից, ցանկացած տեսակի տեղեկատվություն և գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը, լինեն դրանք բանավոր, գրավոր, թե՝ տպագիր, լինի արվեստի, թե իր ընտրած ցանկացած այլ միջոցով:
3. Սույն հոդվածի 2-րդ կետում նախատեսված իրավունքների իրականացումը հանգեցնում է հատուկ պարտավորությունների և պատասխանատվության: Ուստի այն ենթակա է որոշ սահմանափակումների, որոնք, սակայն, պետք է միայն սահմանվեն օրենքով և լինեն անհրաժեշտ:
- ա) այլ անձանց իրավունքները կամ հեղինակությունը հարգելու համար,
- բ) պետական անվտանգության կամ հասարակական կարգի, կամ քնակչության առողջության, կամ բարոյականության պաշտպանության համար:

## **Հոդված 20**

1. Պատերազմի ցանկացած քարոզություն արգելվում է օրենքով:
2. Ազգային, ռասայական կամ կրոնական ատելության ցանկացած քարոզություն, որն իրենից ներկայացնում է խտրականության, թշնամանքի կամ բռնության հրահրում, արգելվում է օրենքով:

## **Հոդված 21**

Ցանաչվում է խաղաղ հավաքների իրավունքը: Այդ իրավունքի իրականացումը ենթակա չէ ոչ մի սահմանափակման, բացի այն սահմանափակումներից, որոնք կիրառվում են օրենքին համապատասխան և որոնք անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակության մեջ՝ ի շահ պետական կամ հանրային անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության պահպանության, կամ այլոց իրավունքների ու ազատությունների պաշտպանության:

## **Հոդված 22**

1. Յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմելու ազատության իրավունք, ներառյալ՝ արհմիություններ ստեղծելու և իր շահերի պաշտպանության նպատակով դրանց անդամակցելու իրավունքը:
2. Այդ իրավունքի իրականացումը ենթակա չէ ոչ մի սահմանափակման, բացի այն սահմանափակումներից, որոնք նախատեսվում են օրենքով, և որոնք անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակության մեջ՝ ի շահ պետական կամ հանրային անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության պահպանության, կամ այլոց իրավունքների ու ազատությունների պաշտպանության: Սույն հոդվածը չի խոչընդոտում այդ իրավունքի իրականացման օրինական սահմանափակումների կիրաւումն այն անձանց համար, ովքեր մտնում են զինված ուժերի և ոստիկանության կազմի մեջ:
3. Սույն հոդվածում ոչինչ իրավունք չի տալիս միավորումներ կազմելու ազատության և կազմակերպվելու իրավունքի պաշտպանության վերաբերյալ Աշխատանքի միջազգային կազմակերպության 1948թ. կոնվենցիայի մասնակից պետություններին՝ ընդունելու Կոնվենցիայով նախատեսվող երաշխիքներին ի վեհանդիպական ակտեր կամ օրենքը կիրառելու ի վեհանդիպական ակտերի:

## **Հոդված 23**

1. Ընտանիքը հասարակության բնական ու հիմնարար խմբային միավորն է և ունի հասարակության ու պետության կողմից պաշտպանվելու իրավունք:
2. Անուսնության տարիքի հասած տղամարդկանց և կանաց համար ճանաչվում է ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունքը:
3. Ոչ մի ամուսնություն չի կարող կայանալ առանց ամուսնացողների ազատ ու լիակատար համաձայնության:
4. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները ձեռնարկում են պատշաճ միջոցներ՝ ապահովելու ամուսնուների իրավունքների և պարտականությունների հավասարությունն ամուսնության պահին, ամուսնության ընթացքում և ամուսնալուծվելիս: Ամուսնալուծության դեպքում պետք է նախատեսվի երեխայի անհրաժեշտ պաշտպանություն:

## **Հոդված 24**

1. Յուրաքանչյուր երեխա, առանց ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, ազգային կամ սոցիալական ծագման, գույքային դրության կամ ծննդի հատկանիշով որևէ խտրականության, իրավունք ունի իր ընտանիքի, հասարակության և պետության կողմից պաշտպանվածության այնպիսի միջոցների, որոնք անհրաժեշտ են նրան որպես անշփառական:
2. Յուրաքանչյուր երեխա ծնվելուց անմիջապես հետո պետք է գրանցվի և ունենա անուն:
3. Յուրաքանչյուր երեխա ունի քաղաքացիություն ձեռք բերելու իրավունք:

## **Հոդված 25**

Յուրաքանչյուր քաղաքացի, առանց 2-րդ հոդվածում հիշատակվող որևէ խտրականության ու անհիմն սահմանափակումների, իրավունք և հնարավորություն ունի.

ա) մասնակցելու պետական գործերը վարելուն՝ ինչպես անմիջականորեն, այնպես էլ ազատորեն ընտրված ներկայացուցիչների միջոցով,

բ) ընտրելու և ընտրվելու իրական պարբերական ընտրություններում, որոնք անցկացվում են համընդիմանուր ու հավասար ընտրական իրավունքի հիման վրա, զաղտնի քվեարկությամբ և երաշխավորում են ընտրողների կամքի ազատ արտահայտումը,

գ) իր երկրում հավասարության ընդհանուր պայմաններով մտնելու պետական ծառայության:

## **Հոդված 26**

Բոլորը հավասար են օրենքի առջև և, առանց որևէ խտրականության, ունեն օրենքով հավասար պաշտպանվածության իրավունք: Այդ կապակցությամբ օրենքով պետք է արգելվի ցանկացած խտրականություն և բոլորի համար երաշխավորվի հավասար ու արդյունավետ պաշտպանություն խտրականությունից այնպիսի իիմքերով, ինչպիսին են ռասան, մաշկի գույնը, սեղու, լեզուն, կրոնը, քաղաքական կամ այլ համոզմունքը, ազգային կամ սոցիալական ծագումը, գույքային դրությունը, ծնունդը կամ այլ կարգավիճակը:

## **Հոդված 27**

Այն պետություններում, որտեղ գոյություն ունեն ազգային, կրոնական կամ լեզվական փոքրամասնություններ, որանց պատկանող անձանց չի կարող մերժվել նույն խմբի այլ անդամների հետ համատեղ իրենց մշակույթից օգտվելու, իրենց կրոնը դավանելու և դրա ծեսերը կատարելու, ինչպես նաև մայրենի լեզուն օգտագործելու իրավունքը:

## **Մաս 4**

## **Հոդված 28**

1. Ստեղծվում է Մարդու իրավունքների կոմիտե (այսուհետ սույն Դաշնագրում անվանվում է Կոմիտե): Այն կազմված է տասնուր անդամներից և կատարում է ստորև նախատեսվող գործառույթները:
2. Կոմիտեի կազմի մեջ մտնում են այն անձինք, ովքեր սույն Դաշնագրի մասնակից պետությունների քաղաքացիներ են և օժտված են քարոյական քարձր հատկանիշներով ու մարդու իրավունքների բնագավառում ունեն ճանաչված իրազեկություն, ընդ որում, նկատի է առնվում իրավարանական փորձ ունեցող մի քանի անձանց մասնակցության օգտակարությունը:
3. Կոմիտեի անդամներն ընտրվում և աշխատում են անձնապես:

## **Հոդված 29**

1. Կոմիտեի անդամներն ընտրվում են գաղտնի քվեարկությամբ՝ այն անձանց ցուցակից, ովքեր քավարարում են 28-րդ հոդվածում նախատեսված պահանջները և այդ նպատակով առաջադրվել են սույն Դաշնագրի մասնակից պետությունների կողմից:
2. Սույն Դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն կարող է առաջարկել երկու քեկնածությունից ոչ ավելի: Այդ անձինք պետք է լինեն իրենց առաջադրու պետության քաղաքացիներ:
3. Յուրաքանչյուր անձ ունի կրկնակի առաջադրման իրավունք:

## **Հոդված 30**

1. Նախնական ընտրություններն անցկացվում են սույն Դաշնագրի ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ուշ, քան վեց ամիս անց:
2. Կոմիտեի յուրաքանչյուր ընտրության օրվանից առնվազն չորս ամիս առաջ, բացի 34-րդ հոդվածին համապատասխան թափուր հայտարարված տեղերի համարման ընտրություններից, Սլավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը գրավոր հրավերով դիմում է սույն Դաշնագրի մասնակից պետություններին՝ երեք ամսվա լճարացքում ներկայացնելու Կոմիտեի անդամության թեկնածությունները:
3. Սլավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը կազմում է նման ձևով առաջադրված բոլոր անձանց այրբենական ցուցակ՝ նշելով սույն Դաշնագրի մասնակից այն պետությունները, որոնք առաջադրել են այդ անձանց, և հիշյալ ցուցակը ներկայացնում է սույն Դաշնագրի մասնակից պետություններին ոչ ուշ, քան յուրաքանչյուր ընտրության անցկացման օրվանից մեկ ամիս առաջ:
4. Կոմիտեի անդամների ընտրությունն անցկացվում է սույն Դաշնագրի մասնակից պետությունների նիստում, որի հրավիրում է Սլավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը Սլավորված ազգերի կազմակերպության կենտրոնակայանում: Այդ նիստում, որի համար քվորում է կազմում սույն Դաշնագրի մասնակից պետությունների երկու երրորդը, Կոմիտեի կազմում ընտրված են համարվում այն անձինք, որոնց թեկնածություններն ստանում են առավելագույն թվով ձայներ և մասնակից պետությունների՝ ներկա գտնվող ու քվեարկող ներկայացուցիչների ձայնների բացարձակ մեծամասնությունը:

## **Հոդված 31**

1. Կոմիտեի կազմի մեջ չի կարող ընդգրկվել նույն պետության մեկից ավելի քաղաքացի:
2. Կոմիտեի ընտրությունների ժամանակ հաշվի է առնվում անդամության աշխարհագրական հավասար բաշխումը և քաղաքակրթության տարրեր ձևերի ու իրավական հիմնական համակարգերի ներկայացուցությունը:

## **Հոդված 32**

1. Կոմիտեի անդամներն ընտրվում են չորսամյա ժամկետով: Նրանք իրավունք ունեն վերընտրվելու իրենց թեկնածությունների կրկնակի առաջադրման դեպքում: Սակայն, առաջին ընտրություններում ընտրված անդամներից իննի լիազորության ժամկետն ավարտվում է երկամյա ժամանակահատվածի վերջում. առաջին ընտրություններից անմիջապես հետո այդ ինն անդամների անունները որոշվում են վիճա-

կահանությամբ՝ 30-րդ հոդվածի 4-րդ կետում հիշատակված նիստի նախագահողի կողմից:

2. Հիազորությունների լրանալուց հետո ընտրություններն անց են կացվում սույն Դաշնագրի սույն մասի նախորդ հոդվածներին համապատասխան:

### **Հոդված 33**

1. Եթե Կոմիտեի որևէ անդամի լիազորությունները դադարեցվել են մյուս անդամների միաձայն կարծիքով, ժամանակավոր բնույթի բացակայությունից բացի որևէ այլ պատճառով, Կոմիտեի նախագահը տեղյակ է պահում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին, որն այնուհետև այդ անդամի տեղը հայտարարում է թափուր:
2. Կոմիտեի որևէ անդամի մահվան կամ պաշտոնաթողության դեպքում նախագահն անհապաղ տեղյակ է պահում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին, որն այդ տեղը հայտարարում է թափուր մահվան կամ այն օրվանից, եթե պաշտոնաթողությունն ուժի մեջ է մտնում:

### **Հոդված 34**

1. Եթե 33-րդ հոդվածին համապատասխան տեղը թափուր է հայտարարվում և եթե փոխարինման ենթակա անդամի լիազորությունների ժամկետը չի լրանում տեղը թափուր հայտարարելուց հետո վեց ամսվա ընթացքում, Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը տեղյակ է պահում սույն Դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետության, որը կարող է երկու ամսվա ընթացքում, 29-րդ հոդվածին համապատասխան, թեևնածություն ներկայացնել այդ թափուր տեղի համար:
2. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը կազմում է նման ձևով առաջադրված անձանց այրենական ցուցակ և ներկայացնում սույն Դաշնագրի մասնակից պետություններին: Թափուր տեղի համար ընտրություններն այնուհետև անցկացվում են սույն Դաշնագրի սույն մասի համապատասխան դրույթների համաձայն:
3. Կոմիտեի այն անդամը, որն ընտրվում է 33-րդ հոդվածին համապատասխան հայտարարված թափուր տեղի համար, պաշտոնն զբաղեցնում է այն անդամի լիազորությունների ժամկետի մնացյալ մասի ընթացքում, որի տեղը Կոմիտեում ազատվել է հիշյալ հոդվածի դրույթների համաձայն:

## **Հոդված 35**

Կոմիտեի անդամներն ստանում են Սիավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից հաստատվող վարձատրություն՝ Սիավորված ազգերի կազմակերպության միջոցներից, Գլխավոր ասամբլեայի կողմից սահմանվող կարգով ու պայմաններով՝ հաշվի առնելով Կոմիտեի պարտականությունների կարևորությունը:

## **Հոդված 36**

Սիավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարն անհրաժեշտ անձնակազմ ու նյութական միջոցներ է տրամադրում Կոմիտեի կողմից իր գործառույթներն արդյունավետ, սույն Դաշնագրին համապատասխան իրականացնելու համար:

## **Հոդված 37**

1. Սիավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը Կոմիտեի առաջին նիստը իրավիրում է Սիավորված ազգերի կազմակերպության կենտրոնակայանում:
2. Իր առաջին նիստից հետո Կոմիտեն հավաքվում է սեփական Ընթացակարգի կանոններով նախատեսված ժամանակ:
3. Կոմիտեն, սովորաբար, հավաքվում է Սիավորված ազգերի կազմակերպության կենտրոնակայանում կամ Սիավորված ազգերի կազմակերպության՝ Ժնևի գրասենյակում:

## **Հոդված 38**

Կոմիտեի յուրաքանչյուր անդամ, նախքան իր պարտականություններն ստանձնելը, Կոմիտեի դրույց նիստում հանդիսավոր հայտարարություն է անում իր գործառույթներն անաշառ ու բարեխիղճ կատարելու վերաբերյալ:

## **Հոդված 39**

1. Կոմիտեն իր պաշտոնատար անձանց ընտրում է երկամյա ժամկետով: Նրանք կարող են վերընտրվել:
2. Կոմիտեն ընդունում է իր Ընթացակարգի կանոնները, սակայն դրանք պետք է, մասնավորապես, նախատեսեն, որ。
  - ա) քվորում կազմում են Կոմիտեի տասներկու անդամները,
  - բ) Կոմիտեի որոշումներն ընդունվում են ներկա անդամների ձայների մեծամասնությամբ:

## **Հոդված 40**

1. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են գեկույցներ ներկայացնել սույն Դաշնագրով ճանաչվող իրավունքների իրականացման ուղղությամբ իրենց ձեռնարկած միջոցների և այդ իրավունքների օգտագործման ասպարեզում ձեռք բերած առաջընթացի մասին.
  - ա) համապատասխան մասնակից պետության համար սույն Դաշնագրի ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում,
  - բ) դրանից հետո՝ բոլոր այն դեպքերում, երբ դա կպահանջի Կոմիտեն:
2. Բոլոր գեկույցները ներկայացվում են Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին, որը դրանք ուղարկում է Կոմիտեին՝ քննության առնելու համար: Զեկույցներում նշվում են, եթե կան այն գործոններն ու դժվարությունները, որոնք ազդում են սույն Դաշնագրի կենսագործման վրա:
3. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը, Կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո, կարող է շահագրգիռ մասնագիտացված հաստատություններին ուղարկել գեկույցների այն հատվածների պատճենները, որոնք կարող են վերաբերել նրանց իրավասության ոլորտին:
4. Կոմիտեն ուսումնասիրում է սույն Դաշնագրի մասնակից պետությունների ներկայացրած գեկույցները: Նա մասնակից պետություններին է ուղարկում իր գեկույցները և ընդհանուր կարգի այնպիսի դիտողություններ, որոնք ինքը նպատակահարմար կհամարի: Կոմիտեն կարող է նաև այդ դիտողությունները, սույն Դաշնագրի մասնակից պետություններից ստացված գեկույցների պատճենների հետ միասին, ուղարկել Տնտեսական և սոցիալական խորհրդին:
5. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները կարող են Կոմիտեին ներկայացնել իրենց նկատառումները բոլոր այն դիտողությունների վերաբերյալ, որոնք կարող են արվել սույն հոդվածի 4-րդ կետին համապատասխան:

## **Հոդված 41**

1. Սույն Դաշնագրի մասնակից պետությունը, սույն հոդվածին համապատասխան, կարող է ցանկացած ժամանակ հայտարարել, թե ինքը ճանաչում է Կոմիտեի իրավասությունը՝ ստանալու և քննարկելու հարդրումներ այն մասին, որ որևէ մասնակից պետություն հաստատում է, թե մյուս մասնակից պետությունը չի կատարում սույն Դաշնագրով նախատեսված իր պարտավորությունները: Սույն հոդվածով նախատեսվող հաղորդումները կարող են ընդունվել և քննարկվել միայն այն դեպքում, եթե դրանք ներկայացրել է այն մասնակից պետությունը, որը հայտարարություն է արել, թե ինքը ճանաչում է Կոմի-

տեի այդ իրավասությունը: Կոմիտեն չի ընդունում ոչ մի հաղորդում, եթե այն պատկանում է նման հայտարարություն շարած նաև նաև կից պետությանը: Սույն հոդվածին համապատասխան ստացված հաղորդումները քննության են առնվում հետևյալ ընթացակարգով.

ա) Եթե սույն Դաշնագրի նաև կից պետություն գտնում է, որ մյուս նաև կից պետությունը չի կենսագործում սույն Դաշնագրի դրույթները, ապա նա կարող է գրավոր հաղորդմամբ այդ հարցի մասին տեղեկացնել հիշյալ նաև կից պետությանը: Այդ հաղորդումն ստանալուց հետո երեք ամսվա ընթացքում հաղորդումն ստացած պետությունը նման հաղորդում հիմք պետությանը ներկայացնում է հիշյալ հարցը պարզաբանող գրավոր բացարձություն կամ ցանկացած այլ հայտարարություն, որը պետք է բովանդակի, որքանով դա հնարավոր ու նպատակահարմար է, ներպետական այն ընթացակարգերն ու պաշտպանության միջոցները, որոնք կիրառվել են, կիրառվելու են կամ կարող են կիրառվել տվյալ հարցի առնչությամբ,

բ) Եթե ստացող պետության կողմից նախնական հաղորդումն ստանալուց հետո վեց ամսվա ընթացքում հարցը չի լուծվում ի բավարարումն երկու շահագրգիռ նաև կից պետությունների, այդ պետություններից յուրաքանչյուրմ իրավունք ունի հարցը հանձնել Կոմիտեին՝ այդ մասին տեղեկացնելով Կոմիտեին և մյուս պետությանը,

գ) Կոմիտեն իրեն հանձնված հարցը քննության է առնում միայն այն բանից հետո, եթե հավաստիանում է, որ տվյալ դեպքում միջազգային իրավունքի համընդիմությունը ճանաչում գտած սկզբունքներին համապատասխան օգտագործվել և ապառվել են ներպետական պաշտպանության բոլոր մատչելի միջոցները: Տվյալ կանոնը չի գործում, եթե այդ միջոցների կիրառումը չարդարացված կերպով ձգձգվում է,

դ) Սույն հոդվածում նախատեսվող հաղորդումները քննության առնելիս Կոմիտեն անցկացնում է դռնփակ նիստեր,

ե) Կոմիտեն, (գ) ենթակետի դրույթները պահպանելով, իր բարի ծառայություններն է մատուցում շահագրգիռ նաև կից պետություններին՝ սույն Դաշնագրով ճանաչվող մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի հիման վրա հարցը բարեկամարար լուծելու նպատակով,

զ) Իր քննարկմանը հանձնված ցանկացած հարցով Կոմիտեն կարող է դիմել (թ) ենթակետում հիշատակված շահագրգիռ նաև կից պետություններին՝ գործին վերաբերող ցանկացած տեղեկատվություն տրամադրելու խնդրանքով,

է) (թ) Ենթակետում հիշատակված շահագրգիռ նաև կից պետություններն իրավունք ունեն ներկա գտնվելու Կոմիտեում հարցի քննարկման ժամանակ և առաջարկություններ անելու բանավոր և (կամ) գրավոր,

ը) Կոմիտեն (ը) Ենթակետին համապատասխան ծանուցում ստանալու օրվանից հետո տասներկու ամսվա ընթացքում ներկայացնում է զեկույց՝

(i) Եթե (ե) Ենթակետի դրույթների շրջանակներում կարգավորում է ձեռք բերվում, ապա Կոմիտեն իր զեկույցում սահմանափակվում է փաստերն ու ձեռք բերված կարգավորումը հակիրճ շարադրելով,

(ii) Եթե (ե) Ենթակետի դրույթների շրջանակներում կարգավորում ձեռք չի բերվում, ապա Կոմիտեն իր զեկույցում սահմանափակվում է փաստերի հակիրճ շարադրանքով. շահագրգիռ մասնակից պետությունների գրավոր միջնորդությունները և բանավոր միջնորդությունների գրառումը կցվում են զեկույցին: Յուրաքանչյուր հարցի կապակցությամբ զեկույցն ուղարկվում է շահագրգիռ մասնակից պետություններին:

2. Սույն հոդվածի դրույթներն ուժի մեջ են մտնում, եթե սույն Դաշնագրի տասը մասնակից պետություններ հանդես են զալս հայտարարությամբ՝ սույն հոդվածի առաջին կետին համապատասխան: Այդ հայտարարությունները մասնակից պետություններն ի պահ են հանձնում Սիափորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին, որը դրանց պատճեններն ուղարկում է մնացած մասնակից պետություններին: Հայտարարությունը ցանկացած ժամանակ կարող է հետ վերցվել Գլխավոր քարտուղարին ծանուցելու միջոցով: Նման գործողությունը չի խոչընդոտում ցանկացած հարցի քննարկմանը, որը, սույն հոդվածին համապատասխան, արդեն ուղարկված հաղորդման առարկա է. այն բանից հետո, եթե Գլխավոր քարտուղարը ծանուցում է ստացել հայտարարությունը հետ վերցնելու մասին, ցանկացած մասնակից պետության հետազա ոչ մի հաղորդում չի ընդունվում, եթե շահագրգիռ մասնակից պետությունը հանդես չի եկել նոր հայտարարությամբ:

## Հոդված 42

1. ա) Եթե 41-րդ հոդվածին համապատասխան Կոմիտեին հանձնված որևէ հարց չի լուծվել ի բավարարումն շահագրգիռ մասնակից պետությունների, Կոմիտեն կարող է շահագրգիռ մասնակից պետությունների նախնական համաձայնությամբ նշանակել հատուկ հաշտարար հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով): Հանձնաժողովի բարի ծառայությունները շահագրգիռ մասնակից պետություններին են մատուցվում սույն Դաշնագրի դրույթների պահպանման հիման վրա, տվյալ հարցի փոխհամաձայնեցված լուծման նպատակով,
- բ) Հանձնաժողովը կազմվում է շահագրգիռ մասնակից պետությունների համար ընդունելի հինգ անդամից: Եթե շահագրգիռ մասնակից պետությունները երեք ամսվա ընթացքում համաձայնության չեն զալս Հանձնաժողովի ամբողջ կազմի կամ երա մի մասի վերաբերյալ, ապա Հանձնաժողովի՝ նշանակման հարցում ընդիանուր

համաձայնության շարժանացած անդամներն ընտրվում են Կոմիտեի կազմից, գաղտնի քվեարկությամբ, Կոմիտեի ձայների երկու երրորդի մեծամասնությամբ:

2. Հանձնաժողովի անդամներն իրենց պարտականությունները կատարում են անձնապես: Նրանք չպետք է լինեն շահագրգիռ նաևնակից պետությունների կամ սույն Դաշնագրի ոչ մասնակից պետության կամ այն մասնակից պետության քաղաքացիներ, որը հանդես չի եկել 41-րդ հոդվածին համապատասխան հայտարարությամբ:
3. Հանձնաժողովն ընտրում է իր նախագահին և ընդունում իր Ընթացակարգի կանոնները:
4. Հանձնաժողովի նիստերը սովորաբար գումարվում են Սլավորված ազգերի կազմակերպության կենտրոնակայանում կամ Սլավորված ազգերի կազմակերպության ժնկի գրասենյակում: Սակայն Հանձնաժողովն, իր որոշմամբ, խորհրդակցելով Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարի և շահագրգիռ նաևնակից պետությունների հետ, դրանք կարող է գումարել այլ հարմար վայրերում:
5. Քարտուղարությունը 36-րդ հոդվածին համապատասխան սպասարկում է նաև սույն հոդվածի հիման վրա նշանակված հանձնաժողովներին:
6. Կոմիտեի ստացած և ուսումնասիրած տեղեկատվությունը հանձնվում է հանձնաժողովի տնօրինությանը, և վերջինս շահագրգիռ նաևնակից պետություններին կարող է դիմել գործին առնչվող ցանկացած այլ տեղեկատվություն ներկայացնելու խնդրանքով:
7. Հանձնաժողովի կողմից հարցի ամբողջական քննարկումից հետո, սակայն, համենայն դեպքում, ոչ ուշ, քան տվյալ հարցը հանձնաժողովին հանձնելուց 12 ամիս անց, այն Կոմիտեի նախագահին ներկայացնում է գեկույց՝ շահագրգիռ մասնակից պետություններին ուղարկելու համար՝
  - ա) եթե հանձնաժողովը չի կարող տվյալ հարցի քննարկումն ավարտել տասներկու ամսվա ընթացքում, ապա այն իր գեկույցը սահմանափակում է իր կողմից տվյալ հարցի քննարկման վիճակի հակիրճ շարադրանքով,
  - բ) եթե տվյալ հարցի փոխհամաձայնեցված կարգավորում ձեռք է բերվում սույն Դաշնագրով ճանաչվող մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի հիման վրա, Հանձնաժողովն իր գեկույցը սահմանափակում է փաստերի ու ձեռք բերված կարգավորման հակիրճ շարադրանքով,
  - գ) եթե (բ) ենթակետի դրույթների շրջանակում կարգավորում ձեռք չի բերվում, Հանձնաժողովի գեկույցը պարունակում է նրա փաստացի եզրակացությունները շահագրգիռ մասնակից պետությունների վեճին առնչվող բոլոր հարցերի վերաբերյալ և Հանձնաժողովի նկատառությունները՝ այդ հարցի փոխհամաձայնեցված կարգավորման հմարավորությունների մասին: Այդ գեկույցը պարունակում է նաև շա-

հազրով մասնակից պետությունների ներկայացրած գրավոր միջնորդությունները և բանավոր միջնորդությունների գրառումը,

դ) եթե Հանձնաժողովի գեկույցը ներկայացվում է (գ) ներակետի համաձայն, ապա շահագրզիո մասնակից պետություններն այդ գեկույցն ստանալուց հետո երեք ամսվա ընթացքում Կոմիտեի նախագահին տեղեկացնում են այն մասին, թե իրենք համաձայն են արդյոք Հանձնաժողովի գեկույցի բովանդակությանը:

8. Սույն հոդվածի դրույթները չեն նվազեցնում Կոմիտեի՝ 41-րդ հոդվածով նախատեսված պարտականությունները:
9. Շահագրզիո մասնակից պետությունները հավասարապես կրում են Հանձնաժողովի անդամների բոլոր ծախսերը՝ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարի կողմից ներկայացվող նախահաշվին համապատասխան:
10. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը կարող է, անհրաժեշտության դեպքում, վճարել Հանձնաժողովի անդամների ծախսերը՝ մինչև, սույն հոդվածի 9-րդ կետին համապատասխան, դրանց հատուցումը շահագրզիո մասնակից պետությունների կողմից:

## Հոդված 43

Կոմիտեի և հատուկ հաշտարար հանձնաժողովների անդամները, որոնք կարող են նշանակվել 42-րդ հոդվածի համաձայն, օժտված են Միավորված ազգերի կազմակերպության առաքելությունների փորձագետների այն արտոնություններով, առավելություններով և անձեռնմխելիությամբ, որոնք նախատեսված են Միավորված ազգերի կազմակերպության Արտոնությունների և անձեռնմխելիության մասին կոնվենցիայի համապատասխան բաժիններով:

## Հոդված 44

Սույն Դաշնագրի իրականացմանը վերաբերող դրույթները կիրառվում են՝ առանց վնասելու մարդու իրավունքների ոլորտում Միավորված ազգերի կազմակերպության և դրա մասնագիտացված հաստատությունների հիմնարար փաստաթղթերով ու կոնվենցիաներով սահմանված կամ դրանց համաձայն գործող լրացակարգերին, և սույն Դաշնագրի մասնակից պետություններին չեն խոչընդոտում օգտագործելու վեմերի լուծման այլ ընթացակարգեր՝ իրենց միջև գործող լնդիանուր կամ հատուկ միջազգային համաձայնագրերի հիման վրա:

## **Հոդված 45**

Կոմիտեն Սիավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեային Տնտեսական և սոցիալական խորհրդի միջոցով ներկայացնում է իր գործունեության մասին ամենամյա գեկույց:

## **Մաս 5**

### **Հոդված 46**

Սույն Դաշնագրում ոչինչ չպետք է մեկնաբանվի՝ որպես Սիավորված ազգերի կազմակերպության և նրա մասնագիտացված հաստատությունների կանոնադրությունների այն դրույթների նշանակության նվազեցում, որոնք սահմանում են Սիավորված ազգերի կազմակերպության և մասնագիտացված հաստատությունների տարրեր մարմինների համապատասխան պարտականություններն այն հարցերի կապակցությամբ, որոնց վերաբերում է սույն Դաշնագիրը:

### **Հոդված 47**

Սույն Դաշնագրում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես իրենց բնական հարստությունից ու ռեսուրսներից լիարժեքորեն և ազատորեն օգտվելու և դրանք օգտագործելու՝ բոլոր ժողովուրդների անկապտելի իրավունքի սահմանափակում:

## **Մաս 6**

### **Հոդված 48**

1. Սույն Դաշնագիրը բաց է ստորագրման Սիավորված ազգերի կազմակերպության ցանկացած անդամ պետության կամ նրա ցանկացած մասնագիտացված հաստատության անդամի, Սիցազգային դատարանի ստատուտի մասնակից ցանկացած պետության և սույն Դաշնագրին մասնակցելու նպատակով Սիավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի հրավիրած ցանկացած այլ պետության համար:

2. Սույն Դաշնագիրը ենթակա է վավերացման: Վավերագրերն ի պահ են հանձնվում Սիավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

3. Սույն Դաշնագիրը միանալու համար բաց է սույն հոդվածի 1-ին կետում նշված ցանկացած պետության համար:

4. Սիանալը կատարվում է միանալու մասին փաստաբուղբը Սիավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելով:

5. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը սույն Դաշնագիրն ստորագրած կամ Դաշնագրին միացած բոլոր պետություններին տեղեկացնում է յուրաքանչյուր վավերագիրը կամ միանալու վերաբերյալ փաստաթուղթն ի պահ հանձնելու մասին:

## Հոդված 49

1. Սույն Դաշնագիրն ուժի մեջ է մտնում երեսունինգերորդ վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելու օրվանից երեք ամիս անց:

2. Յուրաքանչյուր պետության համար, որը վավերացնում է սույն Դաշնագիրը կամ միանում նրան երեսունինգերորդ վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո, սույն Դաշնագիրն ուժի մեջ է մտնում իր վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվանից երեք ամիս անց:

## Հոդված 50

Սույն Դաշնագրի դրույթները տարածվում են դաշնային պետությունների բոլոր մասերի վրա՝ առանց որևէ սահմանափակման կամ բացառության:

## Հոդված 51

1. Սույն Դաշնագրի մասնակից ցանկացած պետություն կարող է առաջարկել լրացումներ ու փոփոխություններ և դրանք ներկայացնել Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին: Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարն, այնուհետև առաջարկված ցանկացած լրացում ու փոփոխություն ուղարկում է սույն Դաշնագրի մասնակից պետություններին՝ խնդրելով հայտնել, թե իրենք համաձայն են արդյոք իրավիրելու մասնակից պետությունների խորհրդաժողով՝ այդ առաջարկությունները քննարկելու և դրանց վերաբերյալ քվեարկություն անցկացնելու նպատակով: Եթե մասնակից պետությունների առնվազն մեկ երրորդն արտահայտվում է խորհրդաժողովի անցկացման օգտին, Գլխավոր քարտուղարը իրավիրում է այն Միավորված ազգերի կազմակերպության հովանուներուն: Խորհրդաժողովին ներկա գտնված և քվեարկությանը մասնակցած մասնակից պետությունների մեծամասնության ընդունած ցանկացած լրացում կամ փոփոխություն ներկայացվում է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի հաստատմանը:

2. Լրացումներն ու փոփոխություններն ուժի մեջ են մտնում, եթե հաստատվում են Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից և ընդունվում սույն Դաշնագրի մասնակից պետությունների երկու երրորդի մեծամասնությամբ՝ իրենց սահմանադրական գործընթացների համաձայն:

3. Ուժի մեջ մտնելուց հետո լրացումներն ու փոփոխությունները պարտադիր են դաշնում այն մասնակից պետությունների համար, որոնք ընդունել են դրանք, իսկ մյուս մասնակից պետությունների համար պարտադիր են մնում սույն Դաշնագրի դրույթները և նրանց կողմից նախկինում ընդունված ցանկացած լրացում ու փոփոխություն:

## Հոդված 52

48-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն արված ծանուցումներից անկախ՝ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը նույն հոդվածի 1-ին կետում նշված բոլոր պետություններին ծանուցում է՝

ա) 48-րդ հոդվածի համաձայն կատարված ստորագրումների, վավերացումների և միանալու մասին,

բ) 49-րդ հոդվածի համաձայն՝ սույն Դաշնագրի ուժի մեջ մտնելու ամսաթվի և 51-րդ հոդվածի համաձայն կատարված ցանկացած լրացման ու փոփոխության ուժի մեջ մտնելու ամսաթվի մասին:

## Հոդված 53

1. Սույն Դաշնագրիը, որի անգլերեն, իսպաներեն, չինարեն, ռուսերեն և ֆրանսերեն տեքստերը հավասարացոր են, ի պահ է հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության արխիվ:
2. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը սույն Դաշնագրի վավերացված պատճեններն ուղարկում է 48-րդ հոդվածում նշված բոլոր պետություններին:

## 5. ԿԱՍԸՆՏԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային  
դաշնագրին կից<sup>8</sup>  
(16 դեկտեմբերի 1966թ.)

Սույն Արձանագրության մասնակից պետությունները,

նկատի ունենալով, որ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագրի (այսուհետ՝ Դաշնագրի) հետագա նպատակների իրագործման և նրա դրույթների կատարման համար նպատակահարմար է Դաշնագրի 4-րդ մասի համաձայն հիմնադրված Մարդու իրավունքների կոմիտեին (այսուհետ՝ Կոմիտե) հնարիավորություն լինելու ընդունելու և քննության առնելու, ինչպես նաև առաջարկելու և սույն Արձանագրությամբ, հաղորդումներ առանձին անձանցից, ովքեր հայտարարում են, թե իրենք գործ են Դաշնագրում շարադրված որևէ իրավունքի խախտման,

<sup>8</sup> Պաշտոնական քարգմանություն

համաձայնել են ներքոհիշյալի շուրջ.

## Հոդված 1

Դաշնագրի մասնակից այն պետությունը, որը դառնում է սույն Արձանագրության մասնակից, ճանաչում է Կոմիտեի իրավասությունը՝ ընդունելու և քննության առնելու առանձին անձանց՝ իր իրավազորությանը ենթակա հաղորդումները, ովքեր հայտարարում են, թե տվյալ մասնակից պետության կողմից՝ Դաշնագրում շարադրված որևէ իրավունքի խախտման գոհ են դարձել։ Կոմիտեն չի ընդունում որևէ հաղորդում, եթե այն վերաբերում է Դաշնագրի մասնակից պետությանը, որը, սակայն, մասնակից չէ սույն Արձանագրությանը։

## Հոդված 2

1-ին հոդվածի դրույթներին համապատասխան, անձինք, ովքեր հայտարարում են, թե խախտվել է Դաշնագրում ամրագրված իրենց այս կամ այն իրավունքը, և ովքեր սպառել են իրավական պաշտպանության ներպետական բոլոր միջոցները, կարող են գրավոր հաղորդում ներկայացնել Կոմիտեի քննարկմանը։

## Հոդված 3

Կոմիտեն կարող է անընդունելի համարել սույն Արձանագրության համաձայն ներկայացվող, բայց անստորագիր կամ, Կոմիտեի կարծիքով, հաղորդումներ ներկայացնելու իրավունքը շարաշահող և կամ Դաշնագրի դրույթներին անհամատեղելի ցանկացած հաղորդում։

## Հոդված 4

1. Կոմիտեն, 3-րդ հոդվածի դրույթներին համապատասխան, սույն Արձանագրության համաձայն ներկայացվող ցանկացած հաղորդման մասին ծանուցում է սույն Արձանագրության մասնակից այն պետությանը, որը, ինչպես պնդում են, խախտում է Դաշնագրի որևէ դրույթ։

2. Ծանուցում ստացած պետությունը վեց ամսվա ընթացքում Կոմիտեին ներկայացնում է գրավոր բացատրություններ կամ հայտարարություններ՝ պարզաբանելով քննության առարկա խնդիրը, և եթե դրանք կամ՝ պաշտպանության այն միջոցները, որոնք կարող են կիրառվել այդ պետության կողմից։

## **Հոդված 5**

1. Կոմիտեն քննության է առնում սույն Արձանագրության համաձայն ստացված հաղորդումները՝ հաշվի առնելով առանձին անձանց և շահագրգիռ մասնակից պետության ներկայացրած ողջ գրավոր տեղեկատվությունը:

2. Կոմիտեն չի քննում անձանցից ստացված ոչ մի հաղորդում, քանի դեռ չի համոզվել, որ-

ա) այդ նույն հարցը չի քննարկվում միջազգային քննության կամ կարգավորման այլ ընթացակարգի համաձայն,

բ) տվյալ անձն սպառել է իրավական պաշտպանության բոլոր մատչելի ներպետական միջոցները: Այս դրույթը չի գործում, եթե նման միջոցների կիրառումն անհիմն կերպով ձգձգվում է:

3. Սույն Արձանագրությամբ նախատեսված հաղորդումները քննելիս Կոմիտեն գումարում է փակ նիստեր:

4. Իր նկատառումները Կոմիտեն հայտնում է համապատասխան մասնակից պետությանը և անձին:

## **Հոդված 6**

Կոմիտեն Դաշնագրի 45-րդ հոդվածով նախատեսված իր ամենամյա գեկուցման մեջ ամփոփ շարադրում է սույն Արձանագրությանը համապատասխան իրականացրած իր գործունեությունը:

## **Հոդված 7**

Մինչև Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 1960թ. դեկտեմբերի 14-ին ընդունած Գաղութային երկրներին և ժողովրդներին անկախություն շնորհելու մասին հռչակագրի վերաբերյալ 1514 (XV) բանաձևի նպատակների իրագործում՝ սույն Արձանագրության դրույթները ոչ մի կերպ չեն սահմանափակում Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությամբ և Միավորված ազգերի կազմակերպության ու նրա մասնագիտացված հաստատությունների միջազգային այլ համաձայնագրերով ու փաստաթղթերով այդ ժողովուրդներին ընձեռված հանրագիր ներկայացնելու իրավունքը:

## **Հոդված 8**

1. Սույն Արձանագրությունը բաց է ստորագրման Դաշնագիրն ստորագրած ցանկացած պետության կողմից:

2. Սույն Արձանագրությունը ենթակա է վավերացման Դաշնագիրը վավերացրած կամ դրան միացած ցանկացած պետության կողմից: Վավերագրերն ի պահ են տրվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

3. Սույն Արձանագրությունը միանալու համար քաց է Դաշնագիրը վավերացրած կամ դրան միացած ցանկացած պետության համար:

4. Միանալու ուժի մեջ մտնում է միանալու մասին փաստաթուղթը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին հանձնելով:

5. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը սույն Արձանագրությունն ասորագրած կամ դրան միացած բոլոր պետություններին հայտնում է յուրաքանչյուր վավերագրի կամ միանալու վերաբերյալ փաստաթուղթի ի պահ հանձնելու մասին:

## Հոդված 9

1. Դաշնագրի ուժի մեջ մտնելու դեպքում սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին տասներորդ վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելուց երեք ամիս անց:

2. Տասներորդ վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո սույն Արձանագրությունը վավերացրած կամ դրան միացած յուրաքանչյուր պետության համար սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում իր վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելուց երեք ամիս անց:

## Հոդված 10

Սույն Արձանագրության դրույթները տարածվում են դաշնային պետությունների բոլոր մասերի վրա՝ առանց որևէ սահմանափակման կամ բացառության:

## Հոդված 11

1. Սույն Արձանագրության մասնակից յուրաքանչյուր պետություն կարող է առաջարկել լրացումներ ու փոփոխություններ և դրանք ներկայացնել Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին: Այնուհետև Գլխավոր քարտուղարն առաջարկված յուրաքանչյուր լրացում ու փոփոխություն փոխանցում է սույն Արձանագրության մասնակից պետություններին, խնդրելով հայտնել՝ համաձայն են արդյոք իրավիրելու մասնակից պետությունների խորհրդաժողով՝ այդ առաջարկությունները քննարկելու և քվեարկելու նպատակով: Եթե խորհրդաժողովը իրավիրելու օգտին արտահայտվում է մասնակից պետությունների առնվազն մեկ երրորդը, ապա Գլխավոր քարտուղարը իրավիրում է խորհրդաժողովը Միավորված ազգերի կազմակերպության հովանու ներքո: Խորհրդաժողովին ներկա և քվեարկությանը մասնակցող մասնակից պետությունների մեծամասնությամբ ընդունված ամեն մի լրացում և փոփոխություն հաստատման է ներկայացվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեային:

2. Լրացումներն ու փոփոխություններն ուժի մեջ են մտնում Սիավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեյում հաստատվելու և սույն Արձանագրության մասնակից պետությունների երկու երրորդի մեծամասնությամբ այդ պետությունների սահմանադրական ընթացակարգի համաձայն ընդունվելուց հետո:

3. Ուժի մեջ մտնելուց հետո լրացումներն ու փոփոխությունները դառնում են պարտադիր դրանք ընդունած մասնակից պետությունների համար, իսկ մյուս մասնակից պետությունների համար պարտադիր են մնում սույն Արձանագրության դրույթները և նախկինում նրանց կողմից ընդունված լրացումներն ու փոփոխությունները:

## Հոդված 12

1. Մասնակից յուրաքանչյուր պետություն ցանկացած ժամանակ Սիավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ուղղված գրավոր ծանուցումով կարող է չեղյալ հայտարարել սույն Արձանագրությունը: Չեղյալ հայտարարումն ուժի մեջ է մտնում նշված ծանուցումը Գլխավոր քարտուղարի կողմից ստանալուց երեք ամիս անց:

2. Չեղյալ հայտարարումը չի խոչընդոտում մինչև դրա ուժի մեջ մտնելու 2-րդ հոդվածի համաձայն ներկայացված հաղորդումների առնչությամբ սույն Արձանագրության դրույթների կիրառումը շարունակելուն:

## Հոդված 13

Սույն Արձանագրության 8-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն արված ծանուցումներից անկախ՝ Սիավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը Դաշնագրի 48-րդ հոդվածի 1-ին կետում հիշատակված բոլոր պետություններին տեղեկացնում է՝

ա) 8-րդ հոդվածի համաձայն ստորագրումների, վավերացումների և միանալու մասին,

բ) 9-րդ հոդվածի համաձայն՝ սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու և 11-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած լրացման ու փոփոխության ուժի մեջ մտնելու ժամկետի մասին,

գ) 12-րդ հոդվածի համաձայն՝ չեղյալ հայտարարելու մասին:

## Հոդված 14

1. Սույն Արձանագրությունը, որի անգլերեն, իսպաներեն, չինարեն, ռուսերեն և ֆրանսերեն բնագրերը հավասարագոր են, ի պահ է հանձնվում Սիավորված ազգերի կազմակերպության արխիվ:

2. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը սույն Արձանագրության վավերացված պատճեններն ուղարկում է Դաշնագրի 48-րդ հոդվածում նշված բոլոր պետություններին:

## 6. ՄԻՋԱՋԱԳՈՅԻՆ ԴԱԾՆԱԳԻՐ

**Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին<sup>9</sup>**  
(16 դեկտեմբերի 1966թ.)

### Նախարան

Սույն Դաշնագրի մասնակից պետությունները՝

ուշադրության առնելով, որ, Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրությամբ հոչակված սկզբունքներին համապատասխան, մարդկային ընտանիքի բոլոր անդամներին ներհատուկ արժանապատվության և նրանց հավասար ու անկապտելի իրավունքների ճանաչումն ազատության, արդարության և համընդիհանուր խաղաղության իմքն է,

ընդունելով, որ այդ իրավունքները բխում են մարդկային անհատին ներհատուկ արժանապատվությունից,

ընդունելով, որ, Մարդու իրավունքների համընդիհանուր հոչակագրին համապատասխան, վախից ու կարիքից ձերքազատված մարդկային ազատ անհատի իդեալը կարող է իրականացվել, եթե միայն ստեղծվեն այնպիսի պայմաններ, եքր յուրաքանչյուրը կարող է օգտվել ինչպես իր տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներից, այնպես էլ քաղաքացիական ու քաղաքական իրավունքներից,

ուշադրության առնելով, որ Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրությամբ պետությունները պարտավոր են խրախուսել մարդու իրավունքների և ազատությունների հանդեպ համընդիհանուր հարգանքն ու դրանց պահպանումը,

գիտակցելով, որ անհատը, պարտավորություններ ունենալով այլ անձանց և այն համայնքի հանդեպ, որին ինքը պատկանում է, պետք է հետամուտ լինի սույն Դաշնագրում ճանաչվող իրավունքների խրախուսմանն ու պահպանմանը,

համաձայնում են ներքոհիշյալ հոդվածների շուրջ.

### Մաս 1

#### **Հոդված 1**

1. Բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք: Այդ իրավունքի ուժով նրանք ազատորեն սահմանում են իրենց քաղաքական կարգավիճակը և ազատորեն ապահովում իրենց տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացումը:

2. Բոլոր ժողովուրդներն իրենց նպատակներին հասնելու համար կարող են ազատորեն տնօրինել իրենց քնական հարատությունները և ռեսուրսնե-

<sup>9</sup> Պաշտոնական քարգմանություն

ըլ՝ առանց խոշընդոտելու որևէ պարտավորություն, որը բխում է փոխահավետության սկզբունքի վրա հիմնված միջազգային տնտեսական համագործակցությունից և միջազգային իրավունքից: Ոչ մի ժողովուրդ ոչ մի դեպքում չի կարող գրկվել գոյության՝ իրեն պատկանող միջոցներից:

3. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները, այդ բվում և նրանք, որոնք պատասխանատու են ինքնակառավարում շունեցող և խնամարկյալ տարածքների կառավարման համար, պետք է Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության դրույթներին համապատասխան խրախուսեն ինքնորոշման իրավունքի իրականացումը և հարգեն այդ իրավունքը:

## Մաս 2

### Հոդված 2

1. Սույն Դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է իր ունեցած ռեսուրսների առավելագույն սահմաններում, անհատապես և միջազգային օգնության ու համագործակցության միջոցով, ձեռնարկել միջոցներ, մասնավորապես, տնտեսական և տեխնիկական բնագավառներում, առաջադիմորեն հասնելու համար սույն Դաշնագրում ճանաչվող իրավունքների լիարժեք իրականացմանը՝ բոլոր պատշաճ միջոցներով, ներառյալ մասնավորապես, օրենսդրական միջոցների ընդունմամբ:

2. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են երաշխավորել, որ սույն Դաշնագրով հոչակված իրավունքները կիրականացվեն առանց որևէ խստականության, այն է՝ անկախ ռասայից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ծննդից, գույքային կամ այլ դրույթունից:

3. Զարգացող երկրները, պատշաճ կերպով հաշվի առնելով մարդու իրավունքները և իրենց ազգային տնտեսությունը, կարող են որոշել, թե սույն Դաշնագրով ճանաչվող տնտեսական իրավունքներն իրենք ինչ ծավալով պետք է երաշխավորեն իրենց քաղաքացի չհանդիսացող անձանց համար:

### Հոդված 3

Սույն Դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են տղամարդկանց և կանանց համար ապահովել սույն Դաշնագրով նախատեսված բոլոր տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներից օգտվելու հավասար իրավունք:

### Հոդված 4

Սույն Դաշնագրի մասնակից պետություններն ընդունում են, որ պետությունը կարող է սույն Դաշնագրին համապատասխան իր սահմանած իրավունքների իրականացումը ենթարկել միայն այնպիսի սահմանափակումների, որոնք սահմանվում են օրենքով և միայն այնքանով, որքանով դա հա-

մատեղելի է նշված իրավունքների բնույթի հետ, և բացառապես ժողովրդավարական հասարակությունում ընդհանուր բարեկեցությանը նպաստելու նպատակով:

## Հոդված 5

1. Սույն Դաշնագրում ոչինչ չի կարող մեկնաբանվել այնպես, որ ենթադրվի որևէ պետության, խնդիր կամ անձի իրավունքը՝ զրադարձելու այնպիսի գործունեությամբ կամ կատարելու այնպիսի գործություն, որն ուղղված է սույն Դաշնագրով ճանաչված իրավունքների կամ ազատությունների վերացմանը կամ դրանց սահմանափակմանն ավելի մեծ ծավալով, քան նախատեսվում է սույն Դաշնագրով:

2. Չի թույլատրվում մարդու՝ օրենքի, կոնվենցիաների, ենթաօրենսդրական ակտերի կամ սովորույթների հիման վրա ցանկացած երկրում ճանաչված կամ գոյություն ունեցող հիմնարար իրավունքների որևէ սահմանափակում կամ նվազեցում այն հիմնավորմանը, թե սույն Դաշնագրի նման իրավունքներ չի ճանաչում կամ ճանաչում է նվազ ծավալով:

## Մաս 3

## Հոդված 6

1. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները ճանաչում են աշխատանքի իրավունքը, որը ներառում է յուրաքանչյուրի՝ իր ապրուստն այնպիսի աշխատանքով վաստակելու հնարավորության իրավունքը, որը նա ազատորեն ընտրում է, կամ որին նա ազատորեն համաձայնում է, և կձեռնարկեն այդ իրավունքի ապահովմանն ուղղված համապատասխան քայլեր:

2. Սույն Դաշնագրի մասնակից պետության կողմից այս իրավունքի լիարժեք իրականացմանը հասնելու նպատակով ձեռնարկվող քայլերն ընդորուում են տեխնիկական և մասնագիտական ուսուցման ու վերապատրաստման ծրագրեր, տնտեսական, սոցիալական ու մշակութային անշեղ զարգացման և արտադրական լրիվ զրադարձության ձեռքբերման ուղիներ ու մերուներ այնպիսի պայմաններում, որոնք երաշխավորում են մարդու քաղաքական և տնտեսական հիմնարար ազատությունները:

## Հոդված 7

Սույն Դաշնագրի մասնակից պետությունները ճանաչում են յուրաքանչյուրի՝ աշխատանքի արդարացի և բարենպաստ պայմաններից օգտվելու իրավունքը, մասնավորապես,

ա) վարձատրություն, որը բոլոր աշխատավորների համար նվազագույնն ապահովում է.

(ի) արդար աշխատավարձ և հավասարարժեք աշխատանքի դիմաց՝ հավասար վարձատրություն՝ առանց որևէ տարրերակման, մասնավորապես,

կանաց համար պետք է երաշխավորվեն աշխատանքի այնպիսի պայմաններ, որոնցից օգտվում են տղամարդիկ՝ հավասար աշխատանքի դիմաց հավասար վճարում,

(ii) իրենց և իրենց ընտանիքների համար բավարար ապրուստ՝ սույն Դաշնագրի դրույթներին համապատասխան,

թ) անվտանգ և իհզինենիկ աշխատանքային պայմաններ,

զ) յուրաքանչյուրի համար իր աշխատանքում համապատասխան ավելի բարձր աստիճանով առաջնադաշտան հավասար հնարավորություն՝ պայմանավորված բացառապես աշխատանքային ստաժով և որակավորմամբ,

դ) հանգստի, ժամանցի հնարավորություն և աշխատանքային ժամանակի ողջամիտ սահմանափակում ու վճարովի պարբերական արձակուրդ, ինչպես նաև՝ վարձատրություն տոնական օրերի դիմաց:

## Հոդված 8

1. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են ապահովել՝

ա) յուրաքանչյուրի՝ իր տնտեսական և սոցիալական շահերի ներկայացման ու պաշտպանության նպատակով արհեստակցական միություններ ստեղծելու և իր ընտրությամբ արհեստակցական միության անդամակցելու իրավունքը՝ համապատասխան կազմակերպության կանոնների պահպանան միակ պայմանով: Նշանակած իրավունքի իրականացումը ենթակա չէ որևէ սահմանափակման, բացի այն սահմանափակումներից, որոնք նախատեսվում են օրենքով, և որոնք անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության կամ հասարակական կարգի, կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության,

թ) արհեստակցական միությունների՝ ազգային դաշնություններ կամ համադաշնություններ կազմելու իրավունքը և վերջիններիս՝ միջազգային արհեստակցական կազմակերպություններ ստեղծելու ու կամ դրանց միանալու իրավունքը,

զ) արհեստակցական միությունների ազատորեն գործելու իրավունքը՝ առանց որևէ սահմանափակման, բացի այն սահմանափակումներից, որոնք նախատեսվում են օրենքով, և որոնք անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության կամ հասարակական կարգի, կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության,

դ) գործադրություն իրավունքը՝ այն տվյալ երկրի օրենքներին համապատասխան իրականացնելու պայմանով:

2. Սույն հոդվածը չի խոչընդոտում այս իրավունքներն իրականացնելու օրինական սահմանափակումների նախատեսում այն անձանց համար, ովքեր մտնում են պետության գինայի ուժերի, ոստիկանության կամ վարչակազմի մեջ:

3. Սույն հոդվածում ոչինչ իրավունք չի տալիս Աշխատանքի միջազգային կազմակերպության՝ Միավորումներ կազմելու ազատության և կազմակերպվելու իրավունքի պաշտպանության վերաբերյալ 1948թ. կոնվենցիայի մասնակից պետություններին՝ ընդունելու նշված Կոնվենցիայով նախատեսվող երաշխիքներին ի վճառ օրենսդրական ակտեր կամ օրենքը կիրառելու ի վճառ այդ երաշխիքների:

## Հոդված 9

Սույն Դաշնագրի մասնակից պետությունները ճանաչում են յուրաքանչյուրի՝ սոցիալական ապահովության, ներառյալ սոցիալական ապահովագրության, իրավունքը:

## Հոդված 10

Սույն Դաշնագրի մասնակից պետություններն ընդունում են, որ՝

1. Ընտանիքին, որը հասարակության բնական ու հիմնական խճային միավորն է, պետք է ըստ հնարավորին տրամադրվեն ամենալայն պաշտպանություն և աջակցություն, մասնավորապես, ընտանիքի կազմավորման ժամանակ և քանի դեռ ընտանիքը պատասխանատու է ոչ ինքնուրույն երեխաների խնամքի ու կրթության համար: Ամուսնությունը պետք է կայանա ամուսնացողների ազատ համաձայնությամբ:

2. Հատուկ պաշտպանություն պետք է տրամադրվի հղի կանանց՝ մինչև ծննդաբերությունը և դրանից հետո ընկած ողջամիտ ժամանակաշրջանի ընթացքում: Այդ ժամանակաշրջանի ընթացքում աշխատող մայրերին պետք է տրամադրվի վճարովի արձակուրդ կամ արձակուրդ՝ սոցիալական ապահովության բավարար նպաստներով:

3. Պաշտպանության և օգնության հատուկ միջոցներ պետք է ձեռնարկվեն բոլոր երեխաների ու դեռահասների համար՝ առանց որևէ խստրականության ընտանեկան ծագման կամ այլ հատկանիշով: Երեխաներն ու դեռահասները պետք է պաշտպանված լինեն տնտեսական և սոցիալական շահագործություն: Նրանց բարոյականության կամ առողջության համար վճառակարգ կամ կյանքի համար փոխնօսավոր, կամ բնականոն զարգացման համար հնարավոր վճառակարգ բնագավառում նրանց աշխատանքի օգտագործումը պետք է պատժելի լինի օրենքով: Պետությունները պետք է նաև սահմանեն տարիքային սահմանափակումներ, որից ցածր տարիքի երեխայի վճարովի աշխատանքն արգելվում է և պատժվում օրենքով:

## Հոդված 11

1. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները ճանաչում են յուրաքանչյուրի՝ իր ու իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում բավարար սննդի, հագուստի ու բնակարանի, և կենսապայմանների շարունակական բարելավման իրավունքը: Մասնակից պետությունները կձեռ-

նարկեն պատշաճ միջոցներ՝ այդ իրավունքի իրականացումն ապահովելու համար, այս կապակցությամբ ընդունելով ազատ կամքի արտահայտության վրա հիմնված միջազգային համագործակցության կարևոր նշանակությունը:

2. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները, ճանաչելով յուրաքանչյուրի՝ սովոր չմատնվելու հիմնարար իրավունքը, անհատապես և միջազգային համագործակցությամբ ձեռնարկում են միջոցներ, ներառյալ՝ հատուկ ծրագրերը, որոնք նպատակ ունեն.

ա) բարեկավելու սննդամբերը արտադրության, պահպանման և բաշխման մերողները՝ տեխնիկական և գիտական գիտելիքի սպառչ օգտագործման, սննդան սկզբունքների մասին գիտելիքի տարածման և ազրարային համակարգերի զարգացման կամ բարենորոգման միջոցով այնպես, որպեսզի ապահովվեն բնական ռեսուրսների առավել արդյունավետ զարգացումն ու օգտագործումը,

բ) հաշվի առնելով ինչպես սննդամբերք ներմուծող, այնպես էլ արտահանող երկրների հիմնահարցերը՝ ապահովելու պարենի համաշխարհային պաշարների արդարացի բաշխումը՝ պահանջնունքի հարաբերությամբ:

## Հոդված 12

1. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները ճանաչում են յուրաքանչյուրի՝ ֆիզիկական և հոգեկան առողջության առավելագույնս հասանելի մակարդակից օգտվելու իրավունքը:

2. Սույն Դաշնագրի մասնակից պետությունների կողմից այս իրավունքի լիարժեք իրականացումն ապահովելու նպատակով ձեռնարկվող միջոցներն ընդգրկում են միջոցառումներ, որոնք անհրաժեշտ են.

ա) մերեկածնության ու մանկական մահացության կրծատման ապահովման և երեխայի առողջ զարգացման համար,

բ) շրջակա միջավայրի և արդյունաբերության մեջ աշխատանքի հիգիենայի բոլոր կողմերի բարեկավման համար,

գ) համաճարակային, տեղաճարակային, մասնագիտական և այլ հիվանդությունների կանխարգելման, բուժման և վերահսկման համար,

դ) այնպիսի պայմանների ստեղծման համար, որոնք հիվանդության դեպքում բոլորի համար կապահովեն բժշկական օգնություն և բժշկական խնամք:

## Հոդված 13

1. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները ճանաչում են յուրաքանչյուրի կրթության իրավունքը: Նրանք համաձայնում են, որ կրթությունը պետք է ուղղված լինի մարդկային անհատի և նրա արժանապատվության գիտակցման լիակատար զարգացմանը և պետք է ամրապնդի հարգանքը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ: Մասնակից պետություններն այնուհետև համաձայնում են, որ կրթությունը բոլորին պետք է հնարավորություն ընձեռի արդյունավետ մասնակցություն ունենալ ազատ

հասարակությանը, նպաստելու բոլոր ազգերի և ռասայական, էթնիկական կամ կրոնական բոլոր խմբերի միջև փոխըմբռնմանը, հանդուժողականության ու բարեկանությանը և աջակցելու խաղաղության պահպանման ուղղությամբ Միավորված ազգերի կազմակերպության գործունեությանը:

2. Սույն Դաշնագրի մասնակից պետություններն ընդունում են, որ այդ իրավունքի լիարժեք իրականացման նպատակով.

ա) տարրական կրթությունը պարտադիր է և անվճար բոլորի համար,

բ) միջնակարգ կրթությունը՝ իր տարրեր ձևերով, ներառյալ՝ միջնակարգ տեխնիկական և մասնագիտական կրթությունը, բաց և մատչելի է բոլորի համար՝ բոլոր համապատասխան միջոցներով, մասնավորապես, առաջադիմական անվճար կրթություն մտցնելու միջոցով,

գ) բարձրագույն կրթությունը, ըստ յուրաքանչյուրի ընդունակությունների, հավասարապես մատչելի է բոլորի համար՝ բոլոր համապատասխան միջոցներով, մասնավորապես, առաջադիմական անվճար կրթություն մտցնելու միջոցով,

դ) հիմնական կրթությունը խրախուսվում կամ հնարավորինս ակտիվացվում է այն անձանց համար, ովքեր չեն անցել կամ չեն ավարտել իրենց տարրական կրթության լրիվ դասընթացը,

ե) պետք է ակտիվորեն իրականացնել բոլոր մակարդակների դպրոցների համակարգի զարգացումը, սահմանել կրթարոշակների բավարար համակարգ և շարունակաբար կատարելագործել ուսուցչական կազմի նյութական պայմանները:

3. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են հարգել ծննդմերի և համապատասխան դեպքերում օրինական խնամակալների՝ իրենց երեխաների համար պետական իշխանության կողմից ստեղծված դպրոցներից բացի այլ դպրոցների ընտրության ազատությունը, որոնք համապատասխանում են պետության կողմից սահմանվող կամ հաստատվող կրթական նվազագույն ստանդարտներին, ինչպես նաև իրենց երեխաների կրթնական և բարոյական դաստիարակությունը սեփական համոզմներին համապատասխան ապահովելու նրանց ազատությունը:

4. Սույն հոդվածի ոչ մի մաս չպետք է մեկնաբանվի որպես առանձին անձանց և մարմինների՝ ուսումնական հաստատություններ ստեղծելու և դրանք սույն հոդվածի 1-ին կետում շարադրված սկզբունքներին և նման հաստատություններում այնպիսի նվազագույն ստանդարտներին համապատասխան դեկավարելու ազատության սահմանափակում, որոնք կարող են սահմանվել պետության կողմից:

## Հոդված 14

Սույն Դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն, որը մասնակից դառնալու ժամանակ իր մետրոպոլիայի տարածքում կամ իր իրավագորության ներք գտնվող մյուս տարածքներում չի կարողացել ապահովել պարտադիր անվճար տարրական կրթություն, պարտավորվում է երկու տարվա ընթացքում մշակել և ընդունել միջոցառումների մանրամասն ծրագիր, պարտա-

նիր անվճար տարրական կրթության սկզբունքը ողջամիտ ժամկետում, որը պետք է նշված լինի այդ ծրագրում, աստիճանաբար կենսագործելու համար:

## Հոդված 15

1. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները ճանաչում են յուրաքանչյուրի իրավունքը՝

ա) մասնակցելու մշակութային կյանքին,

բ) օգտվելու գիտական առաջընթացի և դրա կիրառման բարիքներից,

գ) օգտվելու այն բարոյական և նյութական շահերի պաշտպանությունից, որոնք առաջանում են իր հեղինակած գիտական, գրական կամ գեղարվեստական ցանկացած երկի կապակցությամբ:

2. Սույն Դաշնագրի մասնակից պետությունների կողմից այդ իրավունքի լիարժեք իրականացման նպատակով ձեռնարկվող միջոցներին դասկում են նրանք, որոնք անհրաժեշտ են կրթության ու մշակույթի նվաճումների պահպանման, զարգացման և տարածման համար:

3. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են հարգել գիտական հետազոտությունների և ստեղծագործական գործունեության համար անհրաժեշտ ազատությունը:

4. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները ճանաչում են գիտական ու մշակութային բնագավառներում միջազգային կապերի և համագործակցության խրախուսումից ու զարգացումից բխող օգուտը:

## Մաս 4

## Հոդված 16

1. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են Դաշնագրի սույն մասին համապատասխան ներկայացնել գեկույցներ իրենց ձեռնարկած միջոցառումների և սույն Դաշնագրով ճանաչվող իրավունքների պահպանման ասպարեզում ձեռք բերված առաջընթացի մասին:

2. ա) Բոլոր գեկույցները ներկայացվում են Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին, որը դրանց պատճեններն ուղարկում է Տնտեսական և սոցիալական խորհրդի քննությանը՝ սույն Դաշնագրի դրույթներին համապատասխան:

բ) Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը նաև մասնագիտացված հաստատություններին է ուղարկում սույն Դաշնագրի մասնակից և միաժամանակ այդ հաստատությունների անդամ պետությունների գեկույցների կամ դրանց ցանկացած համապատասխան հատվածների պատճեններն այնքանով, որքանով նման գեկույցները կամ այդ գեկույցների հատվածները վերաբերում են բոլոր այն հարցերին, որոնք մտնում են վերը նշված հաստատությունների պարտականությունների շրջանակների մեջ՝ նրանց հիմնադիր ակտերին համապատասխան:

## **Հոդված 17**

1. Սույն Դաշնագրի մասնակից պետություններն իրենց գեկույցները ներկայացնում են փուլ առ փուլ, այն ծրագրին համապատասխան, որը պետք է սահմանի Տնտեսական և սոցիալական խորհուրդը սույն Դաշնագրի ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում՝ մասնակից պետությունների և շահագրգիռ մասնագիտացված հաստատությունների հետ խորհրդակցելուց հետո:

2. Զեկույցները կարող են մատնանշել այն գործուներն ու դժվարությունները, որոնք ազդում են սույն Դաշնագրով ստանձնված պարտավորությունների կատարման աստիճանի վրա:

3. Եթե համապատասխան տեղեկատվությունը սույն Դաշնագրի որևէ մասնակից պետություն ավելի վաղ է ներկայացրել Միավորված ազգերի կազմակերպությանը կամ որևէ մասնագիտացված հաստատություն, ապա այդ տեղեկատվությունը վերաշարադրելու անհրաժեշտություն չկա և բավական կլինի ճշգրիտ հղումը ներկայացված տեղեկատվությանը:

## **Հոդված 18**

Տնտեսական և սոցիալական խորհուրդը, մարդու իրավունքների և իշխնարար ազատությունների ասպարեզում Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրությամբ նախատեսված իր պարտականությունների համաձայն, կարող է համաձայնության գալ մասնագիտացված հաստատությունների հետ սույն Դաշնագրի՝ իրենց գործունեության ոլորտին վերաբերող դրույթների կատարման ուղղությամբ ձեռք բերված առաջընթացի մասին իրեն գեկույցներ ներկայացնելու վերաբերյալ: Այդ գեկույցները կարող են ներառնել տվյալներ՝ հիշյալ դրույթների կատարման մասին իրենց իրավասու մարմինների լնդունած որոշումների և հանձնարարականների վերաբերյալ:

## **Հոդված 19**

Տնտեսական և սոցիալական խորհուրդը կարող է քննության առնելու և լնդիանուր հանձնարարականներ տալու համար կամ համապատասխան դեպքերում, որպես ի գիտություն, Մարդու իրավունքների հանձնաժողովին փոխանցել մարդու իրավունքների վերաբերյալ գեկույցներ, որոնք 16-րդ և 17-րդ հոդվածներին համապատասխան ներկայացրել են պետությունները, և մարդու իրավունքների վերաբերյալ գեկույցներ, որոնք 18-րդ հոդվածին համապատասխան ներկայացրել են մասնագիտացված հաստատությունները:

## **Հոդված 20**

Սույն Դաշնագրի մասնակից շահագրգիռ պետությունները և մասնագիտացված հաստատությունները կարող են Տնտեսական և սոցիալական

խորհրդին ներկայացնել դիտողություններ 19-րդ հոդվածի համաձայն ընդունված ցանկացած լենդիանուր հանձնարարականի կամ նման լենդիանուր հանձնարարականի հղման կապակցությամբ, որը տեղ է գտնում Մարդու իրավունքների հանձնաժողովի ցանկացած գեկույցում կամ ցանկացած փաստաթրում, որում առկա է այդ հղումը:

### **Հոդված 21**

Տնտեսական և սոցիալական խորհուրդը կարող է ժամանակ առ ժամանակ Գլխավոր ասամբլեային ներկայացնել գեկույցներ՝ լենդիանուր բնույթի հանձնարարականներով և ձեռնարկված միջոցառումների ու սույն Դաշնագրով ճանաչվող իրավունքների լենդիանուր պահպանման ապահովման բնագավառում ձեռք բերված առաջնաքաջի մասին սույն Դաշնագրի մասնակից պետությունների և մասնագիտացված հաստատությունների ներկայացրած տեղեկատվության համառոտ շարադրանքով:

### **Հոդված 22**

Տնտեսական և սոցիալական խորհուրդը կարող է Սիավորված ազգերի կազմակերպության մյուս մարմինների, նրանց օժանդակ մարմինների և տեխնիկական օգնության տրամադրման գործով գրաղվող մասնագիտացված հաստատությունների ուշադրությունը իրավիրել սույն Դաշնագրի այս մասում հիշատակված գեկույցների կապակցությամբ ծագող հիմնահարցերի վրա, որոնք կարող են այդ մարմինների համար օգտակար լինել իրենց իրավասությունների շրջանակներում միջազգային այն միջոցների նպատակահարմարությունը որոշելիս, որոնք կարող էին նպաստել սույն Դաշնագրի աստիճանական արդյունավետ կենսագործմանը:

### **Հոդված 23**

Սույն Դաշնագրի մասնակից պետությունները համաձայնում են, որ սույն Դաշնագրով ճանաչվող իրավունքների իրականացմանը նպաստող միջազգային միջոցառումները ներառում են այնպիսի մեթոդներ, ինչպիսին են կոնվենցիաների կնքումը, հանձնարարականների լենդունումը, տեխնիկական օգնության տրամադրումը և խորհրդատվության նպատակով տարածաշրջանային հանդիպումների ու տեխնիկական խորհրդակցությունների անցկացումը, ինչպես նաև շահագրգիռ կառավարությունների հետ համատեղ կազմակերպված հետազոտությունները:

### **Հոդված 24**

Սույն Դաշնագրում ոչինչ չպետք է մեկնարանվի որպես Սիավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության և մասնագիտացված հաստատությունների կանոնադրությունների դրույթների նշանակության նվազեցում,

որոնք սահմանում են Սիավորված ազգերի կազմակերպության գանձան մարմինների և մասնագիտացված հաստատությունների համապատասխան պարտականություններն այն հարցերի կապակցությամբ, որոնց վերաբերում է սույն Դաշնագիրը:

## Հոդված 25

Սույն Դաշնագրում ոչինչ չի կարող մեկնաբանվել որպես բոլոր ժողովուրդների՝ իրենց բնական հարատություններից և ռեսուրսներից լիարժեքորեն ու ազատորեն օգտվելու և դրանք օգտագործելու անկապտելի իրավունքի նվազեցում:

## Մաս 5

### Հոդված 26

1. Սույն Դաշնագիրը բաց է ստորագրման Սիավորված ազգերի կազմակերպության անդամ պետության կամ այդ Կազմակերպության ցանկացած մասնագիտացված հաստատության անդամ պետության, Արշազգային դատարանի ստատուտի ցանկացած անդամ պետության և Սիավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից սույն Դաշնագրին մասնակից դառնալու իրավիրված ցանկացած այլ պետության համար:

2. Սույն Դաշնագիրը ենթակա է վավերացման: Վավերագրերն ի պահ են հանձնվում Սիավորված ազգերի կազմակերպության Գլխավոր բարտուղարին:

3. Սույն Դաշնագիրը բաց է միանալու սույն հոդվածի 1-ին կետում նշված ցանկացած պետության համար:

4. Սիանալը կատարվում է միանալու մասին փաստաթուղթը Սիավորված ազգերի կազմակերպության Գլխավոր բարտուղարին ի պահ հանձնելու միջոցով:

5. Սիավորված ազգերի կազմակերպության Գլխավոր բարտուղարը սույն Դաշնագիրն ստորագրած կամ դրան միացած բոլոր պետություններին ծանուցում է յուրաքանչյուր վավերագրի կամ միանալու վերաբերյալ փաստաթորի ի պահ հանձնելու մասին:

### Հոդված 27

1. Սույն Դաշնագիրն ուժի մեջ է մտնում Սիավորված ազգերի կազմակերպության Գլխավոր բարտուղարին երեսունինգերորդ վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթը ի պահ հանձնելու օրվանից երեք ամիս անց:

2. Երեսունինգերորդ վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո սույն Դաշնագիրը վավերացրած կամ դրան միացած յուրաքանչյուր պետության համար սույն Դաշնագիրն ու-

Ժի մեջ է մտնում իր վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվանից երեք ամիս անց:

## Հոդված 28

Սույն Դաշնագրի դրույթները տարածվում են դաշնային պետությունների բոլոր մասերի վրա՝ առանց որևէ սահմանափակման կամ բացառության:

## Հոդված 29

1. Սույն Դաշնագրի մասնակից ցանկացած պետություն կարող է առաջարկել լրացումներ ու փոփոխություններ և դրանք ներկայացնել Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին: Գլխավոր քարտուղարը, այնուհետև, առաջարկված ցանկացած լրացում կամ փոփոխություն ուղարկում է սույն Դաշնագրի մասնակից պետություններին՝ խնդրելով հայտնել, թե նրանք համաձայն են արդյոք այդ առաջարկությունները բնության առնելու և դրանց առթիվ քվեարկություն անցկացնելու նպատակով մասնակից պետությունների խորհրդաժողով հրավիրել: Եթե մասնակից պետությունների առնվազն մեկ երրորդն արտահայտվում է նման խորհրդաժողովի օգտին, ապա Գլխավոր քարտուղարը խորհրդաժողովը հրավիրում է Միավորված ազգերի կազմակերպության հովանու ներքո: Խորհրդաժողովին ներկա և քվեարկությանը մասնակից պետությունների մեծամասնությամբ ընդունված ցանկացած լրացում կամ փոփոխություն ներկայացվում է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի հաստատմանը:

2. Լրացումներն ու փոփոխություններն ուժի մեջ են մտնում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից հաստատվելոց և սույն Դաշնագրի մասնակից պետությունների երկու երրորդի մեծամասնությամբ իրենց սահմանադրական ընթացակարգերին համապատասխան ընդունվելոց հետո:

3. Ուժի մեջ մտնելուց հետո լրացումներն ու փոփոխությունները դառնում են պարտադիր դրանք ընդունած մասնակից պետությունների համար, իսկ մյուս մասնակից պետությունների համար պարտադիր են մնում սույն Դաշնագրի դրույթները և նախկինում կատարված ու նրանց կողմից ընդունված լրացումներն ու փոփոխությունները:

## Հոդված 30

26-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն կատարվող ծանուցումներից անկախ՝ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը նոյն հոդվածի 1-ին կետում նշված բոլոր պետություններին տեղեկացնում է ներքոհիշյալը.

ա) 26-րդ հոդվածի համաձայն՝ ստորագրումների, վավերացումների և միանալու մասին,

թ) 27-րդ հոդվածի համաձայն՝ սույն Դաշնագրի ուժի մեջ մտնելու ամսաթվի, և 29-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած լրացման ու փոփոխության ուժի մեջ մտնելու ամսաթվի մասին:

## Հոդված 31

1. Սույն Դաշնագիրը, որի անգլերեն, իսպաներեն, չինարեն, ռուսերեն և ֆրանսերեն տեքստերը հավասարապես նույնական են, ի պահ է հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության արխիվ:

2. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը սույն Դաշնագրի հաստատված պատճեններն ուղարկում է 26-րդ հոդվածում նշված բոլոր պետություններին:

## 7. ԿՈՆՎԵՆՑԻԱ Երեխայի իրավունքների մասին<sup>10</sup> (20 նոյեմբերի 1989թ.) (քաղաքացիներ)

## Հոդված 1

Սույն Կոնվենցիայի նպատակների համար երեխա է համարվում տասնութ տարին չլրացած յուրաքանչյուր անձ, եթե նրա նկատմամբ կիրառվող օրենքով նա չափահասության չի հասնում ավելի վաղ:

## Հոդված 2

1. Մասնակից պետությունները հարգում և ապահովում են սույն Կոնվենցիայով նախատեսված բոլոր իրավունքները՝ իրենց իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուր երեխայի համար, առանց որևէ խստականության, անկախ երեխայի կամ նրա ծնողների կամ օրինական խնամակալների ռասայից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական և այլ համոզնությունից, ազգային, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գույքային դրույթունից, առողջական վիճակից և ծննդից կամ այլ կարգավիճակից:

2. Մասնակից պետությունները ձեռնարկում են բոլոր անիրաժեշտ միջոցները՝ ապահովելու երեխայի պաշտպանությունը խստականության բոլոր ձևերից կամ պատից՝ նրա ծնողների կամ օրինական խնամակալների կամ ընտանիքի այլ անդամների կարգավիճակի, գործունեության, արտահայտած հայացքների կամ համոզնությունը հիմքով:

<sup>10</sup> Պաշտոնական քարգմանություն

## Հոդված 17

Մասնակից պետություններն ընդունում են զանգվածային լրատվության միջոցների կարևոր դերը և երեխայի համար ապահովում են ներպետական և միջազգային զանազան աղբյուրների տեղեկատվության ու նյութերի մատչելիությունը, հատկապես՝ այնպիսի տեղեկատվության ու նյութերի, որոնք միտքած են երեխայի սոցիալական, հոգևոր և բարոյական բարեկեցությանը, ինչպես նաև նրա ֆիզիկական ու հոգեկան առողջ զարգացմանն աջակցելուն: Այդ նպատակով մասնակից պետությունները.

(ա) Խրախուսում են զանգվածային լրատվության միջոցների կողմից այնպիսի տեղեկատվության ու նյութերի տարածումը, որոնք սոցիալական ու մշակութային առումնով օգտակար են երեխային և համապատասխանում են 29-րդ հոդվածի ողուն:

(բ) Խրախուսում են միջազգային համագործակցությունը զանազան մշակութային, ներպետական և միջազգային աղբյուրներից այդպիսի տեղեկատվության ու նյութերի նախապատրաստման, փոխանակման ու տարածման գործում,

(գ) Խրախուսում են մանկական գրականության լույսընծայումն ու տարածումը,

(դ) Խրախուսում են զանգվածային լրատվության միջոցներին՝ հատուկ ուշադրություն դարձնելու՝ ազգային փորբանանություններին կամ բնիկ ազգաբնակչության այս կամ այն խմբին պատկանող երեխաների լեզվական պահանջմունքներին,

(ե) հաշվի առնելով 13 և 18-րդ հոդվածների դրույթները՝ խրախուսում են երեխայի բարեկեցությանը վճասող տեղեկատվությունից և նյութերից երեխային պաշտպանելու համապատասխան ուղենիշների զարգացումը:

## Հոդված 18

1. Մասնակից պետությունները գործադրում են բոլոր հնարավոր ջանքերը՝ երեխայի դաստիարակության և զարգացման գործում երկու ծնողների ընդհանուր պատասխանատվության սկզբունքի ճանաչումն ապահովելու համար: Ծնողները կամ համապատասխան դեպքերում օրինական խնամակալները երեխայի դաստիարակության ու զարգացման համար կրում են հիմնական պատասխանատվություն: Երեխայի լավագույն շահերը նրանց հիմնական հոգածության առարկան են:

2. Սույն Կոնվենցիայում շարադրված իրավունքները երաշխավորելու և դրանց իրականացմանը նպաստելու նպատակով մասնակից պետությունները ծնողներին և օրինական խնամակալներին անհրաժեշտ օգնություն են տրամադրում երեխայի դաստիարակության իրենց պարտականությունները կատարելու գործում և ապահովում են երեխաների խնամքի հաստատությունների և ծառայությունների զարգացումը:

3. Մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր միջոցները, որպեսզի ապահովվի աշխատող ծնողների երեխաների իրավունքը՝

օգտվելու նրանց համար նախատեսված երեխաների խնամքի ծառայություններից:

## Հոդված 29

1. Մասնակից պետությունները համակարծիք են, որ երեխայի կրթությունը պետք է ուղղված լինի.

(ա) Երեխայի անհատականության, տաղանդի և մտավոր ու ֆիզիկական ունակությունների զարգացմանը՝ դրանց լրիվ ծավալով,

(բ) մարդու իրավունքների և իմանարար ազատությունների, ինչպես նաև Սիավորված ազգերի կազմակերպության կանոնադրության մեջ ամրագրված սկզբունքների նկատմամբ հարգանքի դաստիարակմանը,

(գ) Երեխայի ծնողների, նրա մշակութային ինքնատիպության, լեզվի և արժեքների, երեխայի բնակության երկրի ազգային արժեքների, նրա ծագման երկրի և իր սեփական քաղաքակրթությունից տարբեր քաղաքակրթությունների հանդեպ հարգանքի դաստիարակմանը,

(դ) Երեխային ազատ հասարակության մեջ, փոխընթացունման, խաղաղության, հանդուրժողականության, տղամարդու և կնոջ իրավահավասարության և բոլոր ժողովուրունների, էրնիկական, ազգային և կրոնական խմբերի, ինչպես նաև բնիկ ազգաբնակչությանը պատկանող անձանց միջև բարեկամության ոգով պատասխանատու կյանքով ապրելուն նախապատրաստելը,

(ե) շրջապատող բնության նկատմամբ հարգանքի դաստիարակմանը:

2. Սույն հոդվածի կամ 28-րդ հոդվածի որևէ հատված չի կարող մեկնաբանվել որպես առանձին անձանց և մարմնների իրավունքների սահմանափակում ստեղծելու և դեկավարելու ուսումնական հաստատություններ սույն հոդվածի 1-ին կետում շարադրված սկզբունքները մշտապես պահպանելու և այդպիսի ուսումնական հաստատություններում տարվող կրթությունն այն նվազագույն նորմերին համապատասխանեցնելու պահանջները կատարելու պայմանով, որոնք կարող են սահմանվել պետության կողմից:

## Հոդված 30

Այն պետություններում, ուր գոյություն ունեն էրնիկական, կրոնական կամ լեզվական փոքրամասնություններ, կամ բնիկ ազգաբնակչության թվին պատկանող անձինք, այդպիսի փոքրամասնություններին կամ բնիկ ազգաբնակչությանը պատկանող երեխային չի կարող մերժվել իր խնքի մյուս անդամների հետ իր մշակույթից օգտվելու, իր կրոնը դավանելու և նրա ծեսերը կատարելու, ինչպես նաև նայենի լեզուն գործածելու իրավունքը:

## 8. ՀՌԴԱԿԱԳԻՐ

### Ուսայի և ուսայական նախապաշտմունքների մասին<sup>11</sup>

**Ընդունված և հոչակված Միավորված ազգերի կրթական, գիտական և մշակութային կազմակերպության Գլխավոր խորհրդաժողովի կողմից՝ իր  
1978թ. նոյեմբերի 27-ի քաներորդ նստաշրջանի ընթացքում**

#### **Նախարան**

Միավորված ազգերի կրթական, գիտական և մշակութային կազմակերպության Գլխավոր խորհրդաժողովը, հանդիպելով Փարիզում 1978թ. նոյեմբերի 24-ին իր քաներորդ նստաշրջանի ընթացքում,

մինչ 1945թ. նոյեմբերի 16-ին ընդունված ՅՈՒՆԵՍԿՕ-ի Սահմանադրության նախարանում նշված է, որ «ահեղ և դաժան պատերազմը, որն այժմ ավարտված է, մի պատերազմ էր, որ հնարավոր դարձավ արժանապատվության, հավասարության և մարդկանց փոխադարձ հարգաճքի ժողովրդավարական սկզբունքների մերժման, և, որա փոխարեն, տղիտության ու նախապաշտմունքի միջոցով մարդկանց և ուսաների անհավասարության դրկտրինացի քարոզության միջոցով», և մինչ հիշյալ Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի նպատակն է «նպաստել խաղաղությանը և անվտանգությանը՝ խրանելով ազգերի համագործակցությունը կրթության, գիտության և մշակույթի միջոցով, խրախուսելու արդարությունը, իրավունքի գերակայությունը և մարդու իրավունքների ու ինմանարար ազատությունների նկատմամբ համընդիանուր հարգանքը, որոնք աշխարհի ժողովուրդների համար անբարված են Միավորված ազգերի կանոնադրության մեջ՝ առանց ուսայի, սեռի, լեզվի կամ կրոնի խտրականության»,

ճանաչելով, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ի իիմնադրումից ավելի քան երեք տասնամյակ անց այս սկզբունքները նույնական նշանակալի են, որքան և այն ժամանակ, երբ նրանք տեղ էին գտնել հիշյալ Սահմանադրության մեջ,

հաշվի առնելով ապագադրացման գործընթացը և պատմական այլ փոփոխությունները, որոնց արդյունքում օտարերկրյա իշխանության տակ գտնվող ժողովուրդների մեծ մասը ետ ստացավ իր ինքնիշխանությունը՝ վերածելով միջազգային հանրությունը համընդիանուր և բազմազան ամբողջության և ստեղծելով ուսիզմի աղետը վերացնելու և հասարակական ու քաղաքական կյանքում դրա զարգելի դրսևորումներին վերջ դնելու նոր հնարավորություններ՝ ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակներում,

համոզված լինելով, որ մարդկային ուսայի կարևորագույն նիստությունը և, հետևաբար, փիլիսոփայության, բայորագիտության և կրոնի ամենածանրակշիռ արտահայտումներում բոլոր մարդկային էակների ու ժողովուրդների ճանաչված հիմնարար հավասարությունն արտացոլում է այն իդեալը, որին այսօր հանգել են քարոյականությունը և գիտությունը,

<sup>11</sup> ԵԱՀԿ երեսանյան գրասենյակի կողմից իրականացված ոչ պաշտոնական քարգմանություն

համոզված լինելով, որ բոլոր ժողովուրդները և մարդկային խմբերը, անկախ նրանց կազմից կամ էթնիկ ծագումից, իրենց հանձարի չափով նպաստում են քաղաքակրությունների և մշակույթների առաջնորդացին, որոնք, իրենց թվի և փոխներգործության արդյունքում, կազմում են մարդկության ընդհանուր ժառանգությունը,

հաստատելով իր նվիրվածությունը Միավորված ազգերի կանոնադրությամբ և Մարդու իրավունքների համընդհանուր հոչակագրով ճանաչված սկզբունքներին և իր վճռականությունը՝ խթանելու մարդու իրավունքների միջազգային դաշնագրերի, ինչպես նաև Նոր միջազգային տնտեսակարգի հաստատման մասին հոչակագրի իրագործումը,

նաև վճռական՝ խթանելու Միավորված ազգերի հոչակագրերի և «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» միջազգային կոնվենցիայի իրագործումը,

հաշվի առնելով «Յեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիան, «Ապարտեիլի հանցագործության կանխման և պատժելու մասին» միջազգային կոնվենցիան և «Պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ հանցագործությունների պարագայում վաղենության ժամկետների չկիրառման մասին» կոնվենցիան,

Վերիշելով նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ընդունված միջազգային փաստարդերը, այդ թվում՝ Կրթության հարցում խտրականության դեմ կոնվենցիան և հանձնարարականը, Ռատուժների կարգավիճակի մասին հանձնարարականը, Միջազգային մշակության համագործակցության սկզբունքների հոչակագիրը, Հանուն միջազգային փոխարքունան կրթության մասին հանձնարարականը, Համագործակցությունը և խաղաղությունը և կրթությունը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ոլորտում, Գիտական հետազոտողների կարգավիճակի մասին հանձնարարականը, և Լայն հանրության կողմից մշակութային կյանքին մասնակցելու և դրանում իրենց նպաստն ունենալու մասին հանձնարարականը,

հաշվի առնելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի իրավիրած փորձագետների՝ ռասայի հարցի վերաբերյալ ընդունած չորս հայտարարությունները,

Վերահաստատելով Միավորված ազգերի Գլխավոր ասամբլեայի կողմից իր քանութերորդ նստաշրջանում ընդունած Ռասիզմի և ռասայական խտրականության դեմ պայքարի տասնամյակի գործողությունների ծրագրի իրագործմանը եռանդուն և կառուցողական մասնակցություն ունենալու իր ցանկությունը,

հաշվի առնելով՝ լրջագույն մտահոգությամբ, որ ռասիզմը, ռասայական խտրականությունը, գաղութարարությունը և ապարտեիլի իրենց հարափոխի ձևերով շարունակում են քացասական ազլեցություն ունենալ աշխարհի վրա, ինչն արդյունք է մարդու իրավունքների սկզբունքներին հակասող օրենսդրական դրույթների և կառավարական ու վարչարարական գործեակարգերի, ինչպես նաև անարդարությամբ և մարդկային էակների նկատմամբ արհամարհանով բնորոշվող քաղաքական ու հասարակական կառույցների հարաբերությունների և մոտեցումների շարունակական

առկայության, որոնք հանգեցնում են խոցելի խմբերի անդամների մեկուսացման, նվաստացման և շահագործման, հարկադիր ուժման,

արտահայտելով իրենց վրդրվունքը մարդկային արժանապատվության դեմ հիշյալ հանցագործությունների առնչությամբ, ցավով նշելով այն խոշընդոտները, որոնք նրանց կողմից դրվում են ժողովուրդների վոխըմբոննան ճանապարհին և տագնապած միջազգային խաղաղությունը և անվտանգությունը լրջորեն խարթելու վտանգով,

ընդունում և հանդիսավոր կերպով հոչակում է Ռասայի և ռասայական նախապաշտունքների մասին հոչակագիրը:

## Հոդված 1

- Բոլոր մարդկային էակները պատկանում են մի տեսակի և ծագել են ընդհանուր ցեղից: Նրանք ծնված են հավասար՝ իրենց արժանապատվությամբ և իրավունքներով, և բոլորն ել կազմում են մարդկության բաղկացուցիչ մասը:
- Բոլոր անհատները և խմբերն իրավունք ունեն լինելու տարրեր, համարելու, որ իրենք տարրեր են և համարվելու այդպիսին: Այդուհանդեռձ, կենսակերպի բազմազանությունը և տարրեր լինելու իրավունքը որևէ պարագայում չի կարող ծառայել որպես ռասայական նախապաշտունքների պատրիակ, այն չի կարող, օրենքով կամ փաստացի, արդարացնել խսրական գործելակարգերը կամ ել հող ստեղծել ապարտեիլի բաղաքանության համար, ինչը ռասիզմի ծայրահեղ դրսություն է:
- Ծագման ինքնությունը որևէ կերպ չի կարող ազդել այն փաստի վրա, որ մարդկային էակները կարող են և իրավունք ունեն ապրելու տարրեր կերպ, այն չի բացառում նաև մշակութային, միջավայրային և պատմական բազմազանության վրա հիմնված տարրերությունների գոյությունը և ոչ ել մշակութային ինքնության պահպանման իրավունքը:
- Աշխարհի բոլոր մարդիկ ունեն մտավոր, մասնագիտական, սոցիալական, տնտեսական, մշակութային և բաղաքական զարգացման բարձր մակարդակի հասնելու հավասար ունակություններ:
- Տարրեր ժողովուրդների նվաճումների տարրերությունները լիովին վերագրելի են աշխարհագրական, պատմական, բաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային գործուներին: Այդորինակ տարրերությունները ոչ մի դեպքում չեն կարող ծառայել որպես ազգերի և ժողովուրդների կարգավորված դասակարգման պատրիակ:

## Հոդված 2

- Որևէ տեսություն, որ կպնդի, թե ռասայական կամ եթնիկ խմբերն ունեն բնատուր գերարժեքություն կամ թերարժեքություն՝ ենթալլությամբ, որ դրանցից ոմանք իրավունք ունեն գերիշխելու մնացածի վրա

կամ վերացնելու թերարժեք համարվողներին, կամ որը զնահատման դատողություններ կպարունակի ռասայական տարբերակման առնչությամբ, չունի որևէ գիտական հիմք և հակասում է մարդկության բարոյական ու եթիկական սկզբունքներին:

2. Ուսափոմը ներառում է ռասայական զաղափարախոսություններ, նախապաշտպած մոտեցումներ, խտրական վերաբերմունք, կառուցվածքային կարգավորումներ և ինստիտուցիոնալացված գործելակարգեր, որոնք հանգեցնում են ռասայական անհավասարության, ինչպես նաև այն բյուր պլատկերացման, թե խմբերի խտրական հարաբերությունները բարոյական և գիտական տեսանկյունից արդարացված են: Այն արտացոլված է օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի խտրական դրույթներում, խտրական գործելակարգերում, ինչպես նաև հակահասարակական համոզմունքներում և գործողություններում, այն խոչընդոտում է իր զոհերի զարգացմանը, փշացնում դա դավանող անձանց, ներսից բաժանում ազգերին, խաթարում միջազգային համագործակցությունը և հանգեցնում ժողովուրդների քաղաքական լարումների, այն հակառակ է միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներին և, հետևաբար, լրջորեն խաթարում է միջազգային խաղողաբանությունը:
3. Ուսայական նախապաշտումները, որոնք պատճականորեն կապված են իշխանության անհավասարությունների հետ և անրապնդվել են անհատների ու խմբերի տնտեսական և սոցիալական տարբերություններով, որոնք նույնիսկ այսօր փորձում են արդարացնել նման անհավասարությունները, ընդհանրապես չունեն որևէ արդարացում:

### Հոդված 3

Որևէ տարբերակում, բացառում, սահմանափակում կամ նախապատվություն՝ հիմնված ռասայի, գույնի, եթնիկ կամ ազգային ծագման կամ կրոնական անհանդուրժականության վրա և պայմանավորված ռասայական նկատառումներով, որոնք ոչնչացնում կամ խաթարում են պետությունների ինքնիշխան հավասարությունը և ժողովուրդների ինքնորոշման իրավունքը, կամ որոնք կամայականորեն կամ խտրական ձևով սահմանափակում են յուրաքանչյուր մարդկային եակի և խմբի՝ լիարժեքորեն զարգանալու իրավունքը, անհամատեղելի են միջազգային պահանջների հետ, որոնք արդարացի են և երաշխավորում են հարգանք մարդու իրավունքների նկատմամբ: Լիարժեքորեն զարգանալու իրավունքը ենթադրում է անհատական և կոլեկտիվ առաջխաղացման և ինքնաղբյուրման միջոցների մատչելիություն՝ ինչպես ազգային, այնպես էլ համամարդկային քաղաքակրթությունների և մշակույթների արժեքների նկատմամբ հարգանքի միջավայրում:

## **Հոդված 4**

1. Մարդկային էակների լիարժեք ինքնադրսևորման և նրանց ազատ հաղորդակցության որևէ սահմանափակում, որ հիմնված է ռասայական կամ էքսիկական նկատառումների վրա, հակառակ է արժանապատվության և իրավունքների հավասարության սկզբունքին և անընդունելիք:
2. Այս սկզբունքի ամենալուրջ խախտումներից է ապարտեհողը, որը, ցեղասպանության նման մարդկության դեմ ուղղված հանցագործություն է և լրջորեն խաթարում է միջազգային խաղաղությունը և անվտանգությունը:
3. Ռասայական տարանջատումը և խտրականության այլ քաղաքականություններն ու գործելակարգերը, որպես մարդկության խոճի և արժանապատվության դեմ հանցագործություններ, կարող են հանգեցնել քաղաքական լարվածության ու լրջորեն վտանգել միջազգային խաղաղությունը և անվտանգությունը:

## **Հոդված 5**

1. Մշակույթը, որպես բոլոր մարդկային էակների արդյունք և մարդկության ընդհանուր ժառանգություն, և կրթությունը՝ իր ամենալայն իմաստով, տղամարդկանց և կանանց առաջարկում են աղապտացման ավելի ու ավելի արդյունավետ միջոցներ՝ դրանով իսկ նրանց հնարավորություն տալով ոչ միայն հաստատելու, որ իրենք ծնվել են հավասար իրենց արժանապատվությամբ և իրավունքներով, այլև ճանաչելու, որ իրենք պետք է հարգեն բոլոր խմբերի՝ սեփական մշակութային ինքնություն ունենալու և ազգային ու միջազգային համատեքստերում յուրահատուկ մշակութային կյանք ձևավորելու իրավունքը, գիտակցելով, որ յուրաքանչյուր խումբ ինքն է լիարժեք ազատությամբ որոշում այն արժեքների պահպանման և, անհրաժեշտության դեպքում, աղապտացման կամ հարստացման հարցերը, որոնք այդ խումբն էական է համարում իր ինքնության համար:
2. Պետություններն, իրենց սահմանադրական սկզբունքների և ընթացակարգերի համաձայն, ինչպես նաև իրավասու այլ մարմինները և ուսուցադասախոսական ողջ կազմը պարտավոր են հետևել, որ բոլոր պետությունների կրթական ուսուրսներն օգտագործվեն ուսիղմի դեմ պայքարի համար, մասնավորապես ապահովելով, որ ուսումնական ծրագրերը և դասագրքերը մարդկության միասնության ու քաղմազանության հարցում ենթեն գիտական և էրիկական նկատառումներից, և որ դրանք որևէ ժողովրդի վերաբերյալ վիրավորական տարբերակումներ չպարունակեն, որ ուսուցիչները ուսուցանվեն, թե ինչպես հասնել այս նպատակներին, որ կրթական համակարգի ուսուրսները հասանելի լինեն բնակչության բոլոր խմբերի համար՝ առանց ռասայական սահմանափակումների կամ խտրականության, և որ պատշաճ քայլեր

ձեռնարկվեն՝ ուղղելու այն բարդույթները, որոնցով տառապում են ռասայական կամ էթնիկ որոշ խմբեր՝ կապված իրենց կրության և կենսանակարդակի հետ և, հատկապես, կանխելու նման բարդույթների փոխանցումը երեխաներին:

3. Չանգվածային լրատվամիջոցներին և այն անձանց, ովքեր վերահսկում են դրանք կամ ծառայում դրանց, ինչպես նաև ազգային համայնքների կազմակերպված խմբերին կոչ ենք անում պատշաճորեն հաշվի առնել Մարդու իրավունքների համընդիանուր հոչակագրուս ամրագրված սկզբունքները, այդ թվում՝ արտահայտվելու ազատուրյան սկզբունքը, խրանել անհատների և խմբերի փոխըմբռնումը, հանդուժողականությունն ու բարեկամությունը և նպաստել ռասիզմի, ռասսայական խտրականության և ռասայական նախապաշարմունքների վերացմանը, մասնավորապես՝ ձեռնպահ մնալով անհատների և ամենատարբեր մարդկային խմբերի կարծրատիպային, միակողմանի կամ կողմնակալ պատկերներ ներկայացնելուց: Հաղորդակցությունը ռասայական և էթնիկական խմբերի միջև պետք է երկկողմանի գործընթաց լինի՝ թույլ տալով նրանց արտահայտվելու և լիարժեքորեն լսված լինելու առանց որևէ արգելքի կամ խոչընդոտի: Չանգվածային լրատվամիջոցները, հետևարար, պետք է ազատորեն ընդունեն անհատների և խմբերի զաղափարները, ինչը հնարավոր կդարձնի այդ հաղորդակցությունը:

## Հոդված 6

1. Պետությունն առաջնային պարտավորություն ունի, արժանապատվության և իրավունքների հավասարության հիմքերով, ապահովելու մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները՝ բոլոր անձանց և խմբերի համար:
2. Իր իրավագործության սահմաններում և իր սահմանադրական սկզբունքներին ու ընթացակարգերին համապատասխան, պետությունը պետք է ձեռնարկի բոլոր համապատասխան քայլերը, այդ թվում՝ օրենսդրական, մասնավորապես՝ կրթության, մշակույթի և հաղորդակցության ոլորտներում, կանխարգելելու, արգելելու և վերացնելու ռասիզմը, ռասխստական քարոզությունը, ռասայական տարանջատումը և ապարտեիլը և խրախուսելու բնական ու հասարակական գիտությունների ոլորտներում համապատասխան հետազոտությունների արդյունք հանդիսացող զիտելիքներն ու քացահայտումները ռասայական նախապաշարմունքների և ռասխստական մոտեցումների պատճառների ու դրանց կանխարգելման վերաբերյալ՝ պատշաճ ուշադրություն դարձնելով Մարդու իրավունքների համընդիանուր հոչակագրով և Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրով ամրագրված սկզբունքներին:
3. Չանի որ ռասայական խտրականությունն արգելող օրենքներն ինքնին բավարար չեն, պետությունները նաև պարտավոր են դրանք լրաց-

նել ռասայական խտրականության համակարգային քննություն իրականացնող վարչարարական մեխանիզմներով, ռասայական խտրականության գործողությունների դեմ իրավական արդյունավետ միջոցների համապարփակ շրջանակով, ռասայական նախապաշարմունքների ու ռասայական խտրականության դեմ պայքարի կրթական և հետազոտական լնդգրկուն ծրագրերով, քաղաքական, սոցիալական, կրթական և մշակութային դրական միջոցառումների ծրագրերով՝ միտված խմբերի իրական փոխադարձ հարգանքի խթանմանը: Եթե հանգամանքները բույս են տալիս, պետք է հատուկ ծրագրեր ծերնարկել՝ խթանելու խոցելի խմբերի առաջխաղացումը, իսկ քաղաքացիների դեպքում՝ ապահովելու նրանց արդյունավետ մասնակցությունը համայնքի որոշումների լնդունման գործընթացում:

## Հոդված 7

Ի լրումն քաղաքական, տնտեսական և սոցիալական միջոցառումների, օրենքն առաջնային այն միջոցներից է, որով ապահովում է անհատների միջև արժանապատվության և իրավունքների հավասարությունը ու կանսվոս որևէ քարոզչություն, կազմակերպության որևէ ծև կամ գործելակերպ, որը հիմնված է ռասայական կամ էթնիկ խմբերի ենթադրյալ գերարժեքության վրա, կամ որը փորձում է արդարացնել կամ խրախուսել ռասայական ատելության և խտրականության բոլոր ձևերը: Պետությունները պետք է ընդունեն այնպիսի օրենսդրություն, որը համապատասխանում է այս նպատակին և ապահովեն, որպեսզի այն ուժի մեջ մտնի և կիրառվի իրենց բոլոր ծառայությունների կողմից՝ պաշշաճ ուշադրություն դարձնելով Մարդու իրավունքների համընդիանուր հոչակագրի սկզբունքներին: Այդօրինակ օրենսդրությունը պետք է կազմի այն քաղաքական, տնտեսական և սոցիալական դաշտի մասը, որը կիանցեցնի դրա կիրարկմանը: Անհատները և իրավաբանական անձինք, ինչպես պետական, այնպես էլ մասնավոր, պետք է պահպանեն այդօրինակ օրենսդրությունը և օգտագործեն բոլոր համապատասխան միջոցները՝ ողջ բնակչությանն օգնելու հասկանալ և կիրառել այն:

## Հոդված 8

1. Անհատները, ինչպես ազգային, այնպես էլ միջազգային հարթություններում իրավունք ունենալով ապրել այնպիսի տնտեսական, սոցիալական, մշակութային և իրավական կարգում, որը բույս կտա նրանց օգտվել իրենց բոլոր կարողություններից՝ իրավունքների և հնարավորությունների բացարձակ հավասարության հիմքի վրա, համապատասխան պարտականություններ ունեն այլ մարդկանց, իրենց հասարակության և միջազգային հանրության նկատմամբ: Նրանք, հետևաբար, պարտավոր են խթանել ներդաշնակությունը ժողովուրդների միջև, պայքարել ռասիզմի և ռասայական նախապաշարմունքների դեմ և ի-

թենց համար հասանելի բոլոր միջոցներով օժանդակել ռասայական խտրականության վերացման՝ իր բոլոր ձևերով:

2. Ռասայական նախապաշտունքների և ռասայական մոտեցումների ու գործելակարգերի ոլորտում բնական, հասարակական և մշակութային գիտությունների ոլորտի մասնագետները, ինչպես նաև գիտական կազմակերպություններն ու ընկերակցությունները խրախուսվում են ձեռնարկել օբյեկտիվ հետազոտություններ լայն միջառարկայական հիմքի վրա. բոլոր պետությունները պետք է քաջալերեն նրանց այդ գործում:
3. Այդպիսի մասնագետները, մասնավորապես, իրենց համար հասանելի բոլոր միջոցներով, պարտավոր են ապահովել, որ իրենց հետազոտությունների բացահայտումները սխալ չմեկնարաբանվեն, և որ դրանք նաև աջակցեն հանրության՝ հասկանալու իրենց բացահայտումները:

## Հոդված 9

1. Մարդկային բոլոր էակների և բոլոր ժողովուրդների արժանապատվությամբ և իրավունքներով հավասար լինելու սկզբունքը, անկախ ռասայից, գոյսից և ծագումից, միջազգային իրավունքի հանրաճանաչ և ընդունված սկզբունք է: Հետևաբար, պետության կողմից կիրառվող ռասայական խտրականության որևէ ձև միջազգային իրավունքի խախտում է և միջազգային պատասխանատվություն է առաջացնում:
2. Պետք է, անհրաժեշտության դեպքում, հատուկ միջոցներ ձեռնարկել անհատների և խմբերի համար արժանապատվության և իրավունքների հավասարություն ապահովելու համար, միևնույն ժամանակ հոգ տանելով, որպեսզի դրանք ռասայի հիմքով չըվան խտրական: Այս առումով հատուկ ուշադրություն պետք է դարձնել ռասայական կամ երեխի խմբերին, որոնք սոցիալապես կամ տնտեսապես խոցելի են, նրանց համար միանգամայն հավասար հիմքով և առանց որևէ խտրականության կամ սահմանափակման ապահովելով օրենքների և այլ կանոնների պաշտպանությունը և ուժի մեջ մտած սոցիալական միջոցառումների առավելությունները, մասնավորապես՝ բնակարանի, աշխատանքի և առողջության հետ կապված հարցերում, պետք է հարգել նրանց մշակույթի և արժեքների էությունը, և պետք է նպաստել նրանց սոցիալական և աշխատանքային առաջխաղացմանը, հատկապես՝ կրթության միջոցով:
3. Բնակչության՝ օտար ծագում ունեցող խմբերը, հատկապես՝ միջանտ աշխատողները և նրանց լնտանիքները, որոնք նպաստում են հյուրընկալող պետության զարգացմանը, պետք է օգտվեն համապատասխան միջոցներից, որոնք նախատեսված են նրանց ապահովության և արժանապատվության ու մշակութային արժեքների նկատմամբ հարգանք ապահովելու և նրանց՝ հյուրընկալող պետության միջավայրին աղապատացմանն ու մասնագիտական առաջխաղացմանը նպաստելու համար, ինչը հնարավոր կդարձնի նրանց հետազա վերահս-

տեղորումն իրենց հայրենի երկրում և վերջինիս զարգացմանը նպաստելը. պետք է միջոցներ ձեռնարկել՝ նրանց երեխաներին հնարավորություն ընձեռելու սովորել իրենց մայրենի լեզուն:

4. Միջազգային տնտեսական հարաբերություններում գոյություն ունեցող անհավասարակշռությունը նպաստում է ռասիզմի և ռասայական նախապաշարնունքների սրմանը. բոլոր պետությունները, հետևաբար, պետք է փորձեն նպաստել առավել արդարացի հիմքների վրա միջազգային տնտեսության վերակազմակերպմանը:

## Հոդված 10

Միջազգային կազմակերպություններին՝ համաշխարհային, թե տարածաշրջանային, կառավարական, թե ոչ կառավարական, համագործակցելու և օժանդակելու կոչ է արվում, իրենց համապատասխան ոլորտների և միջոցների սահմաններում, սույն Հոչակազրում ամրագրված սկզբունքների լիարժեք և վերջնական իրազորման համար՝ դրանով իսկ նպաստելով հավասար արժանապատվությամբ և իրավունքներով ծնված բոլոր մարդկանց օրինական պայքարին՝ ընդդեմ ռասիզմի, բռնատիրության և ճնշման, ռասայական տարանջատման, ապարտեիտի և ցեղասպանության, որպեսզի աշխարհի բոլոր ժողովուրդները մեկընդմիշտ ազատվեն այդ աղետներից:

## 9. ՀՈՉԱԿԱԳԻՐ

Կրոնի կամ համոզմունքների հիման վրա անհանդուրժողականության և  
խորականության բոլոր ձևերի վերացման մասին<sup>12</sup>

Հոչակված է Գլխավոր ասամբլեայի 1981թ. նոյեմբերի 25-ի  
թիվ 36/55 բանաձևով

Գլխավոր ասամբլեան,

հաշվի առնելով, որ ըստ Միավորված ազգերի կանոնադրության հիմնական սկզբունքներից մեկի՝ մարդկային բոլոր էակներին ներհատուկ է արժանապատվությունն ու հավասարությունը, և որ անդամ պետությունները պարտավորվել են համատեղ և կազմակերպության հետ համագործակցությամբ առանձին գործողություններ ձեռնարկել՝ բոլորի համար խթանելու և խրախուսելու մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հանրներանուր հարգանքը և դրանց պահպանումը՝ առանց ռասայի, սեռի, լեզվի կամ կրոնի տարբերակման,

հաշվի առնելով, որ Մարդու իրավունքների համընդիանուր հոչակազիքը և մարդու իրավունքների միջազգային դաշնագրերը հոչակում են խորականության բացառման և օրենքի առջև հավասարության սկզբունքները, ինչպես նաև մտքի, խղճի, կրոնի և համոզմունքների ազատության իրավունքը,

<sup>12</sup> ԵԱՀԿ երեխանյան գրասենյակի կողմից իրականացված ոչ պաշտոնական քարգմանություն

հաշվի առնելով, որ մարդու իրավունքների և իիմնարար ազատությունների, մասնավորապես՝ մտքի, խղճի, կրոնի կամ համոզմունքների արհամարհանքը և դրանց խախտումները, ուղղակիորեն կամ անուղղակիորեն, հանգեցրել են պատերազմների և մեծ տառապանք պատճառել մարդկությանը, հատկապես, եթե ծառայել են որպես պետությունների ներքին գործերին արտաքին միջամտության միջոց և հանգեցրել ժողովուրդների և ազգերի միջև ատելություն սերմանելուն,

հաշվի առնելով, որ կրոնը կամ համոզմունքը՝ դրան դավանող յուրաքանչյուր անձի համար կյանքի մասին այդ անձի այլատկերացումների հիմնարար տարրերից մեկն է, և որ կրոնի կամ համոզմունքի ազատությունը պետք է լիովին հարգել և երաշխափորել,

հաշվի առնելով, որ կրոնի կամ համոզմունքի ազատության առնչվող հարցերում անհրաժեշտ է խրանել ընթացումը, հանդուրժողականությունը և հարգանքը, և ապահովել Միավորված ազգերի կանոնադրության, Միավորված ազգերի համապատասխան այլ փաստարդերի և սույն Հռչակագրի նպատակներին և սկզբունքներին հակառակ նպատակների համար կրոնի կամ համոզմունքի օգտագործման անընդունելիությունը,

համոզմունք հայտնելով, որ կրոնի և համոզմունքների ազատությունը պետք է նաև նպաստի աշխարհում խաղաղության, սոցիալական արդարության և ժողովուրդների բարեկամության նպատակների իրազործմանը, ինչպես նաև զարութարարության և ռասայական խտրականության զաղակարախոսությունների կամ գործելակերպի վերացմանը,

գոհունակությամբ նշելով Միավորված ազգերի և նրա մասնագիտացված կառույցների հովանու ներքո խտրականության տարբեր ձևերի վերացման ոլորտում որոշ կոնվենցիաների ընդունումը և դրանցից մի քանիսի ուժի մեջ մտնելը,

նտահոգված աշխարհի որոշ վայրերում անհանդուրժողականության դեռևս առկա դրսերումներով և կրոնին կամ համոզմունքներին վերաբերող հարցերում խտրականության գոյությամբ,

Վճռական՝ ձեռնարկելու անհրաժեշտ բոլոր միջոցները նման անհանդուրժողականության բոլոր ձևերի և դրսերումների արագ վերացման ու կրոնի կամ համոզմունքների հիման վրա խտրականության կանխման և դրա դեմ պայքարի համար,

հոչակում է Կրոնի կամ համոզմունքների հիման վրա անհանդուրժողականության և խտրականության բոլոր ձևերի վերացման մասին սույն հոչակագիրը.

## Հոդված 1

1. Յուրաքանչյուր որ ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է իր ընտրությամբ կրոն կամ որևէ համոզմունք ունենալու ազատությունը, և ազատություն՝ դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ, իրապարակային կամ մասնավոր կարգով, պաշտամունքի, արարողությունների, այլ ծիսա-

կատարությունների և քարոզության միջոցով արտահայտելու համար:

2. Ոչ որի չի կարելի ենթարկել այնպիսի հարկադրանքի, որը կխոչընդուտի սեփական ընտրությամբ կրոն կամ համոգմունք ունենալու ազատությունը:
3. Սեփական կրոնը կամ համոգմունքն արտահայտելու ազատությունը ենթակա է միայն այնպիսի սահմանափակումների, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են հասարակական անվտանգության, կարգի, առողջության կամ բարոյականության, կամ այլոց հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանության համար:

## Հոդված 2

1. Ոչ ոք չպետք է ենթարկվի խտրականության կրոնի կամ այլ համոգմունքի հատկանիշներով՝ որևէ պետության, մարմնի, անձանց խմբի կամ անձի կողմից:
2. Սույն Հոչակագրի նպատակներից ելնելով՝ «կրոնի կամ համոգմունքների հիման վրա անհանդուրժողականություն և խտրականություն» նշանակում է որևէ տարրերակում, բացառում, սահմանափակում կամ նախապատվություն՝ կախված կրոնից կամ համոգմունքից, որի նպատակը կամ արդյունքը հավասար հիմունքներով մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ճանաչման, դրանցից օգտվելու կամ իրականացման վերացումը կամ խոչընդոտումն է:

## Հոդված 3

Խտրականությունը կրոնի կամ համոգմունքների հիման վրա մարդկային էակների միջև վիրավորում է մարդկային արժանապատվությունը, հակառակ է Միավորված ազգերի կանոնադրության սկզբունքներին և դատապահարտվություն է որպես Մարդու իրավունքների համընդիանուր հոչակագրով ճանաչված և մարդու իրավունքների միջազգային դաշնագրերով հոչակագր իրավունքների և հիմնարար ազատությունների խախտում ու խոչընդուտ՝ ազգերի բարեկամական և խաղաղ հարաբերությունների համար:

## Հոդված 4

1. Բոլոր պետությունները պետք է արդյունավետ միջոցներ ձեռնարկեն՝ կանխարգելելու և վերացնելու կրոնի կամ համոգմունքների հատկանիշներով խտրականությունը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ճանաչման, իրականացման և դրանցից օգտվելու հարցում քաղաքացիական, տնտեսական, քաղաքական, հասարակական և մշակութային կյանքի բոլոր ոլորտներում:
2. Բոլոր պետությունները պետք է գործադրեն բոլոր ջանքերը, որպեսզի, անհրաժեշտության դեպքում, ընդունեն կամ ուժը կորցրած ճանաչեն

օրենսդրությունը՝ արգելելու այդօրինակ որևէ խտրականություն և ձեռնարկելու բոլոր համապատասխան միջոցներն այս հարցերում կրոնի կամ այլ համոզմունքների հատկանիշներով անհանդուրժողականության դեմ պայքարելու համար:

## Հոդված 5

1. Ծնողները կամ, որոշ իրավիճակներում, օրինական խնամակալներն իրավունք ունեն իրենց ըստանիքի ներսում կյանքը կազմակերպելու իրենց կրոնին կամ համոզմունքներին համապատասխան՝ հաշվի առնելով բարոյական այն կրթությունը, որն, իրենց կարծիքով, պետք է ստանա երեխան:
2. Յուրաքանչյուր երեխա պետք է օգտվի կրոնի կամ համոզմունքների հարցերում այնպիսի կրթություն ստանալու իրավունքից, որն համապատասխանում է իր ծնողների կամ խնամակալների ցանկություններին և կրոնի և համոզմունքների հարցերում չպետք է պարտադրվի այնպիսի ուսուցում, որը դեմ է նրա ծնողների կամ խնամակալների ցանկություններին՝ առաջնորդվելով, ամեն դեպքում, երեխայի լավագույն շահերից ելնելու սկզբունքով:
3. Երեխան պետք է պաշտպանված լինի կրոնի կամ համոզմունքների հատկանիշներով խտրականության բոլոր ձևերից: Նրան պետք է դաստիարակել փոխարժենան, հանդուրժողականության, ժողովուրդների բարեկամության, խաղաղության և համընդիանուր եղբայրության, այլ անձանց կրոնի կամ համոզմունքների ազատության նկատմամբ հարգանքի ոգով և այն լիարժեք գիտակցությամբ, որ իր եռանդն ու տաղանդը նաև պետք է նվիրի մարդկությանը ծառայելու նպատակին:
4. Այն երեխաների պարագայում, որոնք չեն գտնվում իրենց ծնողների կամ խնամակալների խնամքի տակ, կրոնին կամ համոզմունքներին վերաբերող հարցերում պետք է հաշվի առնել նրանց արտահայտած ցանկությունները կամ այդ ցանկությունների ինչ-ինչ ապացույցները՝ ամեն դեպքում առաջնորդվելով երեխայի լավագույն շահերից ելնելու սկզբունքով:
5. Կրոնական կամ համոզմունքային այն ծխակատարությունները, որոնց միջավայրում դաստիարակվում է երեխան, չպետք է վճառ պատճուն նրա ֆիզիկական և հոգեկան առողջությանը կամ նրա լիարժեք զարգացմանը՝ հաշվի առնելով սույն Հոչակագրի 1-ին հոդվածի 3-րդ - մասը:

## Հոդված 6

Համաձայն սույն Հոչակագրի 1-ին հոդվածի և պահպանելով 1-ին հոդվածի 3-րդ մասի դրույթները՝ մտքի, խղճի, կրոնի կամ համոզմունքի ազա-

տուրքյան իրավունքը, ի թիվս այլոց, ներառում է նաև հետևյալ ազատությունները.

- ա. տվյալ կրոնի կամ համոգմոնքի պաշտամունքային ծխակատարությունների կամ հավաքներ, և այդ նպատակներով վայրերի ստեղծում և պահպանում,
- բ. համապատասխան բարեգործական կամ մարդափրական հաստատությունների ստեղծում և պահպանում,
- շ. տվյալ կրոնի կամ համոգմոնքի ծխակատարությունների կամ սովորությունների պարագաների և նյութերի պատշաճ մակարդակով ստեղծում, ձեռքբերում և օգտագործում,
- դ. այս հարցերի շուրջը համապատասխան իրապարակումների մշակում, թողարկում և տարածում,
- ե. այդ նպատակի համար համապատասխան վայրերում կրոնի կամ համոգմոնքի ուսուցում,
- զ. անհատներից և հաստատություններից կամավոր ֆինանսական և այլ օգնության հայցում և ստացում,
- է. տվյալ կրոնի կամ համոգմոնքի պահանջներին և չափորոշիչներին համապատասխանող առաջնորդների պատրաստում, նշանակում, ընտրություն կամ հաջորդականությամբ նշանակում,
- ը. սեփական կրոնի կամ համոգման կանոններով սահմանված հանգստի օրերի պահպանում և տոնների և արարողությունների նշում,
- թ. ազգային և միջազգային մակարդակներում կրոնին կամ համոգմոնքին առնչվող հարցերում անհատների և համայնքների հետ հաղորդակցության հաստատում և պահպանում:

## Հոդված 7

Սույն Հոչակագրում ամրագրված իրավունքներն ու ազատությունները պետք է ներառվեն ազգային օրենսդրության մեջ այնպես, որպեսզի յուրաքանչյուր ոք գործնականում կարողանա օգտվել այդ իրավունքներից և ազատություններից:

## Հոդված 8

Սույն Հոչակագրում որևէ դրույթ չպետք է մեկնաբանվի որպես սահմանափակում կամ շեղում Մարդու իրավունքների համընդիանուր հոչակագրով և մարդու իրավունքների միջազգային դաշնագրերով սահմանված իրավունքներից:

## 10. ՀՌԴԱԿԱԳԻՐ

Ազգային կամ էքնիկ, կրոնական և լեզվական փոքրամասնություններին  
պատկանող անձանց իրավունքների մասին<sup>13</sup>

Ընդունվել է Գլխավոր ասամբլեայի թիվ 47/135 քանաձևով,  
1992թ. դեկտեմբերի 18-ին

Գլխավոր ասամբլեան՝

վերահաստատելով, որ Միավորված ազգերի առանցքային նպատակներից մեկը, ինչպես հոչակված է կանոնադրության մեջ, բոլորի իրավունքների և իմնարար ազատությունների հարգանքի խրանումն ու խրախուսումն է՝ անկախ ռասայից, սեռից, լեզվից կամ կրոնից,

վերահաստատելով հավատը մարդու իմնարար իրավունքների, մարդարածի արժանապատվության և արժեքի, տղամարդկանց և կանանց, ինչպես նաև մեծ ու փոքր ազգերի հավասար իրավունքների հանդեպ,

ցանկանալով խրանել կանոնադրության մեջ, Մարդու իրավունքների համընդիանուր հոչակագրում, Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիայում, Ռասայականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայում, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրում, Կրոնի կամ համոզմունքների հիման վրա անհանդուժողականության և խտրականության բոլոր ձևերի վերացման մասին հոչակագրում և Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայում, ինչպես նաև համընդիանուր և տարածաշրջանային մակարդակներում ընդունված և Միավորված ազգերի անդամ առանձին պետությունների միջև կնքված այլ համապատասխան փաստարդերում արտահայտված սկզբունքները,

ոգեշնչված Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 27-րդ հոդվածի՝ էքնիկ, կրոնական և լեզվական փոքրամասնությունների իրավունքներին վերաբերող դրույթներից,

հաշվի առնելով, որ ազգային կամ էքնիկ, կրոնական և լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների խրանումն ու պաշտպանությունը նպաստում է նրանց բնակության պետությունների քաղաքական և սոցիալական կայունությանը,

ընդգծելով, որ ազգային կամ էքնիկ, կրոնական և լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների հաստատուն խրանումն ու իրականացումը, որպես ողջ հասարակության զարգացման քաղկացուցիչ մաս և իրավունքի գերակայության վրա հիմնված ժողովրդականության շրջանակ, կնպաստի ժողովրդական և պետությունների բարեկամության և համագործակցության ամրապնդմանը,

հաշվի առնելով, որ Միավորված ազգերի կազմակերպությունը կարևոր դեր է խաղում փոքրամասնությունների պաշտպանության հարցում,

<sup>13</sup> ԵԱՀԿ երեանյան գրասենյակի կողմից իրականացված ոչ պաշտոնական քարգմանություն  
86

հաշվի առնելով այն աշխատանքը, որ մինչ այժմ կատարվել է Միավորված ազգերի համակարգում, մասնավորապես՝ Մարդու իրավունքների հանձնաժողովի, Խորականության կանխարգելման և փորբանանությունների պաշտպանության հանձնաժողովի և մարդու իրավունքների միջազգային դաշնագրերով ու մարդու իրավունքների ոլորտում համապատասխան միջազգային այլ փաստաթղթերով ստեղծված մարմինների կողմից ազգային կամ էթնիկ, կրոնական և լեզվական փորբանանությունների իրավունքների խրանման և պաշտպանության ոլորտում,

հաշվի առնելով այն կարևոր աշխատանքը, որն արվում է միջկառավարական և ոչ կառավարական կազմակերպությունների կողմից՝ փորբանանությունների պաշտպանության և ազգային կամ էթնիկ, կրոնական և լեզվական փորբանանություններին պատկանող անձանց իրավունքների խրանման և պաշտպանության ոլորտում,

ճանաչելով ազգային կամ էթնիկ, կրոնական և լեզվական փորբանանություններին պատկանող անձանց իրավունքներին վերաբերող մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերի առավել արդյունավետ կիրարկում ապահովելու անհրաժեշտությունը,

Հոչակում է Ազգային կամ էթնիկ, կրոնական և լեզվական փորբանանությունների իրավունքների մասին սույն հոչակագիրը:

## Հոդված 1

1. Պետությունները պարտավոր են պաշտպանել փորբանանությունների գոյությունը և նրանց ազգային կամ էթնիկ, մշակութային, կրոնական և լեզվական ինքնությունն իրենց համապատասխան տարածքներում և խրախուսել այդ ինքնությունը խրանող պայմանները:
2. Պետությունները պարտավոր են ընդունել համապատասխան օրենսդրական և այլ միջոցառումներ այս նպատակներին հասնելու համար:

## Հոդված 2

1. Ազգային կամ էթնիկ, կրոնական և լեզվական փորբանանություններին պատկանող անձինք (այսուհետև՝ փորբանանություններին պատկանող անձինք) իրավունք ունեն տնօրինելու իրենց սեփական մշակույթը, դավանելու և պաշտելու իրենց սեփական կրոնը և օգտվելու իրենց սեփական լեզվից, մասնավոր և հրապարակավ, ազատորեն և առանց միջամտության կամ որևէ տեսակի խորականության:
2. Փորբանանություններին պատկանող անձինք իրավունք ունեն արդյունավետորեն մասնակցելու մշակութային, կրոնական, սոցիալական, տնտեսական և հանրային կյանքին:

3. Փոքրամասնություններին պատկանող անձինք իրավունք ունեն արդյունավետորեն մասնակցելու որոշումների ընդունմանն ազգային և, հարկ եղած դեպքում, իրենց բնակության տարածաշրջանի մակարդակում, ազգային օրենսդրության հետ համատեղելի եղանակով:
4. Ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք իրավունք ունեն իիմնելու և պահպանելու իրենց սեփական ընկերակցությունները:
5. Փոքրամասնություններին պատկանող անձինք, առանց որևէ խստրականության, իրավունք ունեն ազատ և խաղաղ շփումներ իիմնելու և պահպանելու իրենց խմբի այլ անդամների և այլ փոքրամասնություններին պատկանող անձանց, ինչպես նաև սահմաններից անդին այն պետությունների քաղաքացիների հետ, որոնց հետ կապված են ազգային կամ եթնիկ, կրոնական կամ լեզվական կապերով:

### **Հոդված 3**

1. Փոքրամասնություններին պատկանող անձինք կարող են իրականացնել իրենց իրավունքները, այդ թվում՝ նրանք, որոնք ամրագրված են սույն Հռչակագրում, անհատական կարգով կամ իրենց խմբի այլ անդամների հետ համատեղ, առանց որևէ խստրականության:
2. Փոքրամասնությանը պատկանող որևէ անձի համար բացասական հետևանք չի կարող ունենալ սույն Հռչակագրում ամրագրված իրավունքների իրականացումը կամ շրականացումը:

### **Հոդված 4**

1. Պետությունները, անհրաժեշտության դեպքում, ձեռնարկում են միջոցներ՝ ապահովելու, որ փոքրամասնություններին պատկանող անձինք լիարժեքորեն և արդյունավետորեն իրականացնեն իրենց բոլոր իրավունքները և իիմնարար ազատությունները՝ առանց որևէ խստրականության և օրենքի առջև լիարժեք իրավահավասարության պայմաններում:
2. Պետությունները ձեռնարկում են միջոցներ ստեղծելու բարենպաստ պայմաններ, որոնք թույլ կտան փոքրամասնություններին պատկանող անձանց արտահայտել իրենց հատկանիշները և զարգացնել իրենց մշակույթը, լեզուն, կրոնը, ավանդույթները և սովորույթները, բացառությամբ այն դեպքերի, երբ կոնկրետ գործելակարգերը խախտում են ազգային օրենսդրությունը և միջազգային շափորոշիչները:
3. Պետությունները պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկեն, որպեսզի փոքրամասնություններին պատկանող անձինք,

հնարավորության դեպքում, իրենց մայրենի լեզուն սովորելու կամ իրենց մայրենի լեզվով կրթություն ստանալու պատշաճ հնարավորություններ ունենան:

4. **Պետությունները պետք է, հարկ եղած դեպքում, կրթության ոլորտում միջոցներ ձեռնարկեն՝ խրախուսելու իրենց տարածքում ապրող փոքրամասնությունների պատմության, ավանդույթների, լեզվի և մշակույթի իմացությունը։ Փոքրամասնություններին պատկանող անձինք պետք է պատշաճ հնարավորություններ ունենան գիտելիքներ ստանալու հասարակության մասին՝ որպես ամբողջություն։**
5. **Պետությունները պետք է մտածեն համապատասխան միջոցների մասին, որոնք թույլ կտան փոքրամասնություններին պատկանող անձանց լիարժեքորեն մասնակցել իրենց պետության տնտեսական առաջնարացին և զարգացմանը։**

## Հոդված 5

1. Ազգային քաղաքականությունները և ծրագրերը նախատեսվում և իրագործվում են՝ պատշաճ ուշադրություն դարձնելով փոքրամասնություններին պատկանող անձանց օրինական շահերին։
2. **Պետությունների համագործակցության և օժանդակության ծրագրերը պետք է նախատեսվեն և իրագործվեն՝ պատշաճ ուշադրություն դարձնելով փոքրամասնություններին պատկանող անձանց օրինական շահերին։**

## Հոդված 6

Պետությունները, փոխազմբունման ու փոխսպատահության խթանման նպատակով, պետք է համագործակցեն փոքրամասնություններին պատկանող անձանց վերաբերող հարցերի շուրջը, այդ թվում՝ տեղեկատվության և փորձի փոխանակման միջոցով։

## Հոդված 7

Պետությունները պետք է համագործակցեն՝ խթանելու հարգանքը սույն Հոչակագրում ամրագրված իրավունքների նկատմամբ։

## Հոդված 8

1. Սույն Հոչակագրում ամրագրված որևէ ոյլույթ չի կանխում փոքրամասնություններին պատկանող անձանց վերաբերյալ պետությունների միջազգային պարտավորությունների կատարումը։ Մասնավորապես, պետությունները բարեխաղճորեն կատարում են այն պարտավորությունները և հանձնառությունները, որոնք ստանձնել են

միջազգային պայմանագրերին և համաձայնագրերին իրենց մասնակցությամբ:

2. Սույն Հռչակագրում ամրագրված իրավունքների իրականացումը չպետք է բացասարար անդրադառնա բոլոր անձանց կողմից համընդիանարորեն ճանաչված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների իրականացման վրա:
3. Սույն Հռչակագրում ամրագրված իրավունքների արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով պետությունների ձեռնարկած քայլերը չպետք է, առաջին հայացքից, հակասող համարվեն Մարդու իրավունքների համընդիանուր հռչակագրի հավասարության սկզբունքին:
4. Սույն Հռչակագրի որևէ որույր չպետք է մեկնարանել որպես այնպիսի գործողությունների կատարման թույլտվություն, որոնք հակասում են Միավորված ազգերի նպատակներին և սկզբունքներին, այդ թվում՝ ինքնիշխան հավասարությանը, տարածքային ամբողջականությանը և պետությունների քաղաքական անկախությանը:

## Հոդված 9

Միավորված ազգերի համակարգի մասնագիտացված գործակալություններն ու այլ կազմակերպությունները պետք է նպաստեն սույն Հռչակագրում ամրագրված իրավունքների և սկզբունքների լիարժեք իրագործմանը՝ իրենց իրավասությունների համապատասխան ոլորտներում:

## 11. ՀԱՍՏԵՂԱՆՈՒՐ ՀՌԴԱԿԱԳԻՐ Մշակութային քաղմազանության մասին<sup>14</sup>

Ընդունված է Միավորված ազգերի կրթական, գիտական և մշակութային կազմակերպության Գլխավոր խորհրդաժողովի կողմից 2001թ. նոյեմբերի 2-ին՝ իր երեսունմեկերրորդ նստաշրջանում

Գլխավոր ասամբլեան,

պարտավորված լինելով ամբողջապես իրականացնել մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, որոնք հռչակված են Մարդու իրավունքների համընդիանուր հռչակագրում և համընդիանարորեն ճանաչված այլ միջազգային փաստարութերում, ինչպիսիք են քաղաքացիական և քաղաքական, ինչպես նաև տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներին վերաբերող 1966թ. երկու միջազգային դաշնագրերը,

<sup>14</sup> ԵԱՀԿ երեսանյան գրասենյակի կողմից իրականացված ոչ պաշտոնական քարգմանություն  
90

հիշեցնելով, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ի Սահմանադրության նախարանի հաստատումը՝ «մշակույթի լայն տարածումը և մարդկության կրթումն արդարության, ազատության և խաղաղության առումով, կենսական անհրաժեշտություն են մարդու արժանապատվության համար և հանդիսանում են սուրբ պարտականություն, որ բոլոր ազգերը պետք է կատարեն փոխօգնության և փոխադարձ հոգատարության ոգով»,

ի լրումն սրա՝ հիշեցնելով Սահմանադրության 1-ին հոդվածը, որն, ի թիվս այլ նպատակների, հանձնարարում է ՅՈՒՆԵՍԿՕ-ին առաջարկել «այնպիսի միջազգային համաձայնագրեր, որոնք կարող են անհրաժեշտ լինել խոսքի և պատկերի միջոցով գաղափարների ազատ տարածումը իրանելու համար»,

հղում կատարելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ընդունված միջազգային փաստարդիքում ամրագրված մշակութային բազմազանությանը և մշակութային իրավունքների իրականացմանը վերաբերող դրույթներին,

վերահաստատելով, որ մշակույթը պետք է դիտարկել որպես հասարակության կամ հասարակական որևէ խմբի ոգեղեն, նյութական, մտավոր և էմոցիոնալ հատկանիշների յուրահատուկ ամբողջություն, և որ այն ընդգրկում է, ի լրումն արվեստի և գրականության, նաև կենսակերպը, համատեղ ապրելու եղանակները, արժեհամակարգերը, ավանդույթները և համոզմունքները,

նշելով, որ մշակույթն ինքնության, սոցիալական համերաշխության և գիտելիքահենք տնտեսության զարգացման ժամանակակից քննարկումների կիզակետում է,

հաստատելով, որ փոխստահության և փոխըմբունման մթնոլորտում մշակույթների բազմազանության հանդեպ հարզանքը, հանդուրժողականությունը, երկխոսությունը և համագործակցությունը միջազգային խաղաղության և անվտանգության լավագույն երաշխիքների շարքում են,

ճգտելով մշակութային բազմազանության ճանաչմանը հասնել առավել մեծ համերաշխության, մարդկության միասնականության գիտակցման և միջմշակութային փոխստակումների զարգացման,

համարելով, որ զորայացման գործընթացը, որին նպաստում է տեղեկատվական և հաղորդակցական նոր տեխնոլոգիաների արագընթաց զարգացումը, մարտահրավեր լինելով մշակութային բազմազանության համար, մշակույթների և քաղաքակրթությունների նոր երկխոսության պայմաններ է ստեղծում,

գիտակցելով Միավորված ազգերի համակարգում ՅՈՒՆԵՍԿՕ-ին, վստահված հատուկ մանդատը՝ ապահովելու մշակույթների արդյունավետ բազմազանության պահպանումը և խթանումը,

Հոչակում է հետևյալ սկզբունքները և ընդունում սույն Հոչակագիրը.

## Ինքնություն, բազմազանություն և բազմակարծություն

## **Հոդված 1. Մշակութային բազմազանություն. մարդկության լնողիանուր ժառանգությունը**

Մշակութքը ժամանակի և տարածության մեջ բազում ձևեր է ձեռք բերում: Այս բազմազանությունը մարմնավորվում է մարդկությունը կազմող խմբերի և հասարակությունների ինքնությունների առանձնահատկության և բազմակարծության մեջ: Որպես փոխանակման, նորարարության և ստեղծարարության աղբյուր՝ մշակութային բազմազանությունը նոյյնքան անհրաժեշտ է մարդկությանը, որքան կենսաբազմազանությունը՝ բնությանը: Այս առումով, այն մարդկության լնողիանուր ժառանգությունն է և պետք է ճանաչվի ու հաստատվի՝ հանուն ներկա և ապագա սերունդների բարօրության:

## **Հոդված 2. Մշակութային բազմազանությունից դեպի մշակութային բազմակարծություն**

Աստիճանաբար ավելի բազմազան դարձող մեր հասարակություններում անհրաժեշտ է ապահովել ներդաշնակ փոխարարքերություններ բազմաթիվ, բազմազան և դինամիկ մշակութային ինքնություններ ունեցող մարդկանց և խմբերի միջև, ինչպես նաև նպաստել որ նրանք մասին ապրելու ցանկություն ունենան: Բոլոր բաղաքացիների ներգրավմանն ու մասնակցությանն ուղղված բաղաքականությունները սոցիալական համերաշխության, բաղաքացիական հասարակության կենսունակության և խաղաղության երաշխիքն են: Այս սահմանման՝ մշակութային բազմակարծությունը բաղաքականության արտահայտություն է տալիս մշակութային բազմազանության իրականությանը: Լինելով ժողովրդակարական շրջանակից անքակտելի՝ մշակութային բազմակարծությունը հանգեցնում է հանրային կյանքը սնող մշակութային շփումների և ստեղծագործական կարողությունների ծաղկմանը:

## **Հոդված 3. Մշակութային բազմազանությունը որպես զարգացման գործոն**

Մշակութային բազմազանությունն լնողայնում է յուրաքանչյուրին հասու տարբերակների շարքը. այն զարգացման հիմքերից մեկն է, զարգացում, որը պետք է հասկանալ ոչ միայն տնտեսական աճի տեսանկյունից, այլև որպես միջոց առավել գոհացուցիչ մտավոր, էմոցիոնալ բարոյական և ոգեղեն կյանքի հասնելու համար:

**Մշակութային բազմազանությունը և մարդու իրավունքները**

#### **Հոդված 4. Մարդու իրավունքները որպես մշակութային բազմազանության երաշխիքներ**

Մշակութային բազմազանության հանդեպ հարգանքն էթիկայի իրամայական է, որն անբաժանելի է մարդկային արժանապատվության նկատմամբ հարգանքից: Այն ենթադրում է նվիրում մարդու իրավունքներին և հիմնարար ազատություններին, մասնավորապես՝ փոքրամասնություններին և բնիկ ժողովուրդներին պատկանող անձանց իրավունքներին: Ոչ ոք իրավունք չունի վկայակոչել մշակութային բազմազանությունը՝ ոտնահարելու միջազգային իրավունքով երաշխավորված մարդու իրավունքները և ոչ ու սահմանափակելու դրանց շրջանակը:

#### **Հոդված 5. Մշակութային իրավունքները որպես մշակութային բազմազանությանը նպաստող միջավայր**

Մշակութային իրավունքները մարդու իրավունքների բաղկացուցիչ մասն են, որոնք համընդիանուր են, անբաժանելի և փոխկախյալ: Ստեղծագործական բազմազանության ծաղկումը պահանջում է մշակութային իրավունքների լիարժեք իրականացում, ինչպես որանք սահմանված են Մարդու իրավունքների համընդիանուր հոչակագրի 27-րդ հոդվածում և Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 13-րդ և 15-րդ հոդվածներում: Բոլոր անձինք, հետևաբար, պետք է կարողանան արտահայտվել և ստեղծագործել ու տարածել իրենց ստեղծագործություններն իրենց ընտրած և, հատկապես, մայրենի լեզվով, բոլոր անձինք պետք է իրավունք ունենան ստանալու որակյալ կրթություն և վերապատրաստում իրենց մշակութային ինքնության հանդեպ հարգանքի մքնուրություն, և բոլոր անձինք իրավունք ունեն մասնակցելու մշակութային կյանքին՝ իրենց ընտրությամբ և զբաղվելու իրենց սեփական մշակութային գործունեությամբ՝ հարգելով մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները:

#### **Հոդված 6. Մշակութային բազմազանության մատչելիությունը բոլորի համար**

Խոսքի և պատկերի միջոցով գաղափարների ազատ հոսքի ապահովման ընթացքում պետք է հոգ տանել, որպեսզի բոլոր մշակույթները կարողանան արտահայտվել և ճանաչելի դառնալ: Արտահայտվելու ազատությունը, լրատվամիջոցների բազմակարծությունը, բազմալեզու լինելը, արվեստի և գիտատեխնոլոգիական գիտելիքների հավասար մատչելիությունը, այդ բվում՝ թվայնացված տարբերակով, ինչպես նաև բոլոր մշակույթների արտահայտման և տարածման միջոցների մատչելիության հնարավորությունը մշակութային բազմազանության երաշխիքներն են:

**Մշակութային բազմազանությունը և ստեղծարարությունը**

## **Հոդված 7. Մշակութային ժառանգությունը որպես ստեղծարարության աղբյուր**

Ստեղծագործելու կարողությունը ներշնչվում է մշակութային ավանդույթներից, սակայն ծաղկում է այլ մշակույթների հետ շփումների միջոցով: Այդ պատճառով, անհրաժեշտ է պահպանել, ավելացնել և ապագա սերունդներին փոխանցել ժառանգությունն իր բոլոր ձևերով, որպես մարդու փորձի և ձգտումների արգասիք՝ նպաստելու ստեղծարարությանն իր ողջ բազմազանությամբ հանդերձ և ոգեշնչելու իրական երկխոսություն մշակույթների միջև:

## **Հոդված 8. Մշակութային ապրանքները և ժառայությունները՝ որպես յուրահասուկ բարիքներ**

Հաշվի առնելով ներկայիս տնտեսական և տեխնոլոգիական փոփոխությունները, ստեղծարարության և նորարարության լայն հորիզոնների հնարավորությունը՝ հատուկ ուշադրություն պետք է դարձնել ստեղծագործ աշխատանքի առաջարկի բազմազանության, հեղինակների և արվեստագետների իրավունքների պաշտամ ճանաչման և մշակութային ապրանքների ու ժառայությունների առանձնահատկությունների վրա, որոնց որպես ինքնության, արժեքների և իմաստի վեկտորների, չպետք է վերաբերվել ինչպես զուտ կամ լայն սպառման ապրանքների:

## **Հոդված 9. Մշակութային քաղաքականությունը որպես ստեղծարարության կատալիզատոր**

Գաղափարների և ստեղծագործությունների ազատ շրջանառությունն ապահովելիս մշակութային քաղաքականությունները պետք է այնպիսի պայմաններ ստեղծեն, որոնք կհաճացնեն բազմազան մշակութային ապրանքների և ժառայության արտադրությանն ու տարածմանը մշակութային այնպիսի ճյուղերի միջոցով, որոնք ինքնայրակարգ միջոցներ ունեն տեղական և համաշխարհային մակարդակներում: Յուրաքանչյուր պետություն, պատշաճորեն հաշվի առնելով իր միջազգային պարտավորությունները, ինքը պետք սահմանի իր մշակութային քաղաքականությունը և իրագործի այնպիսի միջոցներով, որոնք ինքը տեղին կարգավորմամբ:

**Մշակութային բազմազանություն և միջազգային համերաշխություն**

## **Հոդված 10. Ստեղծագործական կարտղությունների հզորացումը և տարածումն աշխարհում**

Հաշվի առնելով ներկայիս անհամաշափությունները մշակութային ապրանքների և ծառայությունների հոգածում և փոխանակումներում՝ անհրաժեշտ է ամրապնդել միջազգային այնային համագործակցություն և համերաշխություն, որի նպատակը բոլոր և, հատկապես, զարգացող և անցումային փուլում գտնվող պետություններին հնարավորության ընձեռումն է ստեղծելու մշակույթի ճյուղեր, որոնք կենտրոնակ և մրցունակ են ազգային և միջազգային մակարդակներում:

## **Հոդված 11. Գործընկերության ձևավորում պետական, մասնավոր հատվածների և քաղաքացիական հասարակության միջև**

Միայն շուկայական ուժերն անկարող են երաշխավորել մշակութային բազմազանության պահպանումը և խթանումը, ինչը մարդկային զարգացումն ապահովելու բանալին է: Այս տեսանկյունից, պետք է վերատին հաստատել մասնավոր հատվածի և քաղաքացիական հասարակության հետ համագործակցությամբ ձևավորված պետական քաղաքականության առաջնային դերը:

## **Հոդված 12. ՅՈՒՆԵՍԿՕ-ի դերը**

ՅՈՒՆԵՍԿՕ-ն, իր մանդատի և գործառույթների ուժով, պատասխանատվություն է կրում.

ա. խրանելու սույն Հռչակագրում ամրագրված սկզբունքների ներառումը տարբեր միջկառավարական մարմինների մշակած զարգացման ռազմավարություններում,

բ. ծառայելու որպես աղբյուր և ֆորում, որտեղ պետությունները, միջազգային կառավարական և ոչ կառավարական կազմակերպությունները, քաղաքացիական հասարակությունը և մասնավոր հատվածը կարող են համատեղել ջանքերը՝ մշակելու հայեցակարգեր, նպատակներ և քաղաքականություններ՝ հանուն մշակութային բազմազանության,

գ. հետամուտ լինելու իր գործունեության՝ չափորոշչների սահմանման, իրագեկության բարձրացման և կարողությունների ձևավորման ուղղությամբ սույն Հռչակագրին առնչվող ոլորտներում և իր իրավասության շրջանակներում,

դ. ապահովելու գործողությունների ծրագրի իրականացումը, որի հիմնական ուղղությունները կցված են սույն Հռչակագրին:

12. ՍԱՐԴՈՒ ԻՐԱՆՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՍԻՒՆ 2005/79 ԲԱՆԱԳԵՎ  
Ազգային կամ էքսիկ, կրոնական և լեզվական փոքրամասնություններին  
պատկանող անձանց իրավունքները<sup>15</sup>

Մարդու իրավունքների հանձնաժողովը,  
վկայակոչելով Գլխավոր ասամբլեայի՝ 1992թ. դեկտեմբերի 18-ի  
47/135 բանաձևը, որում ասամբլեան կոնսենսուսով ընդունեց Ազգային կամ  
էրիքի, կրոնական և լեզվական փորձանասնություններին պատկանող  
անձանց իրավունքների հոչակագիրը, ինչպես նաև Գլխավոր ասամբլեայի և  
Հանձնաժողովի՝ ընդունված հոչակագրից բխող այլ բանաձևերը,

վկայակոչելով նաև 1995թ. մարտի 3-ի 1995/24 իր բանաձեռ, ինչպես նաև Տնտեսական և սոցիալական հարցերով խորհրդի՝ 1995թ. հուլիսի 25-ի 1995/31 բանաձեռ և 1998թ. հուլիսի 1998/246 որոշումը Մարդու իրավունքների պաշտպանության և խրախուսման ենթահանձնաժողովի՝ փոքրամասնությունների հարցերով աշխատանքային խսքի մանդատի մասին,

վկայակոչելով Ենթահանձնաժողովի՝ 2004թ. օգոստոսի 9-ի 2004/13 բանաձևը փոքրամասնությունների իրավունքների և դրանց առնչությամբ հանձնարարականների մասին,

հաստատելով, որ ազգային կամ էթնիկ, կրոնական և լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանության և խրախուսման արդյունավետ միջոցներն ու բարենպաստ պայմանների ստեղծումը, բոլորի նկատմամբ անհարականության և հավասարության, ինչպես նաև նրանց առնչվող հարցերում լիարժեք և արդյունավետ մասնակցության ապահովումը նպաստում են փոքրամասնություններին առնչվող մարդու իրավունքների հիմնախնդիրների ու իրադրությունների կանչմանն ու խաղաղ լուծմանը,

նտահոգված շատ երկրներում փոքրամասնությունների հետ կապված վեճերի և բախումների հաճախականությամբ և լրջությամբ ու հաճախ դրանց ողբերգական հետևանքներով և այն հանգամանքով, որ փոքրամասնություններին պատկանող անձինք անարդարացիորեն կրում են այդ բախումների ծանր հետևանքները, ինչի արդյունքում խախտվում են նրանց իրավունքները, և նրանք առավել խոցելի են դաշնում տեղահանումների առումով՝ նաև բնակչության տեղափոխումների, փախստականների հոսքի և բռնի վելարնակեցման միջոցով,

հաշվի առնելով, որ ազգային կամ էթնիկ, կրոնական և լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանությունն ու խրախուսումը նպաստում են քաղաքական և սոցիալական կայունությանն ու խաղաղությանը և հարստացնում են հասարակության մշակութային բազմազանությունն ու ժառանգությունը,

<sup>15</sup> ԵՎՀԿ երևանյան գրասենյակի կողմից իրականացված ոչ պաշտոնական թարգմանություն 96

ընդգծելով ազգային կամ էքնիկ, կրոնական և լեզվական փոքրամասնություններին առնչվող մարդու իրավունքների հիմնախնդիրներ ու իրադրությունները ժամանակին նախանշելու կարևորությունը,

ընդունելով հասարակություններում հանդուժողականության տարածման կարևորությունը՝ ի թիվս այլ միջոցների, նաև կրության, մասնավորապես՝ մարդու իրավունքների ոլորտում կրթության միջոցով,

ողջունելով Միավորված ազգերի՝ Մարդու իրավունքների հարցերով գերազույն հանձնակատարի գեկույցը (E/CN.4/2005/81) և նշելով դրանուն գետեղված առաջարկներն ու եզրակացությունները՝ փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների միջազգային պաշտպանության ամրապնդման ուղղությամբ.

1. Վերահաստատում է պետությունների պարտավորությունը՝ պահպանվելու, որ ազգային կամ էքնիկ, կրոնական և լեզվական փոքրամասնություններին պատկանող անձինք լիարժեքորեն և արդյունավետ կերպով կարողանան կիրառել մարդու բոլոր իրավունքներն ու հիմնարար ազատությունները՝ առանց խտրականության և օրենքի առջև լիարժեք հավասարության պայմաններում, ինչպես հոչակած է Ազգային կամ էքնիկ, կրոնական և լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների մասին հոչակագրում:
2. Կոչ է անում բոլոր պետություններին՝ պաշտպանել և տարածել ազգային կամ էքնիկ, կրոնական և լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքները, ինչպես սահմանված է հոչակագրում և, հաշվի առնելով գենդերային նկատառումները, անհրաժեշտության դեպքում, ձեռնարկել հոչակագիրը կյանքի կոչելու բոլոր սահմանադրական, օրենսդրական, վարչական և այլ միջոցները՝ ներառյալ կրթության հավասար մատչելիության ապահովումը և տնտեսական գործընթացներին ու զարգացմանը լիարժեք մասնակցության խթանումը:
3. Կոչ է անում պետություններին հատուկ ուշադրություն դարձնել ազգային կամ էքնիկ, կրոնական և լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավիճակի վրա ռասիզմի, ռասայական խտրականության, այլատյացության և անհանդուժողականության այլ ձևերի բացասական հետևանքներին, և պետությունների ուշադրությունը իրավիրում է 2001թ. սեպտեմբերին Ռազմական ռասայական խորհրդաժողովում ընդունված Դուրքանի հոչակագրի և գործողությունների ծրագրի համապատասխան դրույթներին (A/CONF.189/12 և Corr.1)՝ ներառյալ բազմակի խտրականության ձևերի մասին դրույթները:
4. Հորդորում է պետություններին հատուկ ուշադրություն դարձնել փոքրամասնություններին պատկանող երեխաների իրավունքների

պաշտպանությանն ու տարածմանը, հաշվի առնելով, որ աղջիկներն ու տղաները կարող են ենթարկվել ռիսկերի տարրեր տեսակների:

5. Նաև հորդորում է պետություններին՝ ձևանարկել բոլոր համապատասխան միջոցները ազգային կամ էքնիկ, կրոնական և լեզվական փոքրամասնությունների մշակութային և կրոնական վայրերի պաշտպանության համար:
6. Խնդրում է Միավորված ազգերի՝ Մարդու իրավունքների հարցերով գերազույն հանձնակատարին՝ երկու տարրով փոքրամասնությունների հարցերով անկախ փորձագետ նշանակել հետևյալ մանդատով。
  - (ա) խթանել Ազգային կամ էքնիկ, կրոնական և լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների մասին հոչակագրի կատարումը, ի թիվս այլ միջոցների, նաև կառավարությունների հետ խորհրդակցությունների միջոցով՝ հաշվի առնելով գոյություն ունեցող միջազգային չափանիշները և փոքրամասնությունների մասին տեղական օրենսդրությունը,
  - (բ) որոշել կառավարությունների խնդրանքով Մարդու իրավունքների հարցերով գերազույն հանձնակատարի գրասենյակի և կառավարությունների համագործակցության լավագույն փորձի օրինակներն ու տեխնիկական համագործակցության հնարավորությունները,
  - (գ) հաշվի առնել գեներային մոտեցումն աշխատանքում,
  - (դ) սերտ համագործակցել՝ խուսափելով գործառույթների կրկնումից, ՄԱԿ-ի համապատասխան մարմինների, մանդատների, մեխանիզմների, ինչպես նաև տարածաշրջանային կազմակերպությունների հետ,
  - (ե) հաշվի առնել հասարակական կազմակերպությունների տեսակետները՝ իր մանդատին առնչվող հարցերի վերաբերյալ:
7. Հատուկ ներկայացուցչին խնդրում է իր գործունեության տարեկան գեկույց ներկայացնել Հանձնաժողովին՝ ներառյալ փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների ավելի լավ կիրառման արդյունավետ ռազմավարության մասին հանձնարարականները:
8. Գլխավոր քարտուղարին խնդրում է առկա բյուջետային միջոցներից տրամադրել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ անկախ փորձագետի մանդատի արդյունավետ կատարման համար:
9. Ողջունում է Մարդու իրավունքների պաշտպանության և խրախուսման ենթականագործության փոքրամասնությունների հարցերով աշխատանքային խմբի ղերը՝ որպես հասարակական կազմակերպությունների հետ երկխոսության և փոքրամասնությունների խնդիրների լուծումներ փնտրելու կարևոր ֆորում, և սույն բանաձևի լույսի ներքո որոշում է աշխատանքային խմբի մանդատում լրացում կատարել՝ սահմանելով, որ այն

Ենթահանձնաժողովի տարեկան նստաշրջանում երեք աշխատանքային օր տևողությամբ նիստ անցկացնի՝ իր աշխատանքը կենտրոնացնելով համապատասխան հասարակական կազմակերպությունների ինտերակտիվ երկխոսության և անկախ փորձագետին (կմասնակցի որպես դիտող) ցուցաբերած հայեցակարգային աջակցության ու նրա հետ երկխոսության վրա:

10. Հրավիրում է բոլոր պետություններին, մասնագիտացված մարմիններին, հասարակական կազմակերպություններին և գիտնականներին՝ շարունակելու ակտիվ մասնակցությունն աշխատանքային խմբի աշխատանքին:
11. Հրավիրում է մարդու իրավունքների դաշնագրի կատարման մոնիթորինգի մարմիններին՝ անդամ պետությունների տրամադրած գեկույցներն, ինչպես նաև Հանձնաժողովի և Սիավորված ազգերի համապատասխան մարմինների ու ծրագրերի հատուկ ընթացակարգերը դիտարկելիս իրենց մանդատների շրջանակներում շարունակաբար ուշադրություն դարձնել ազգային կամ էրեխ, կրոնական և լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրադրություններին և իրավունքներին:
12. Գերազույն հանձնակատարին իրավիրում է շարունակելու ազգային կամ էրեխ, կրոնական և լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում ակտիվութեն գործող ՍԱԿ-ի կառույցների և ծրագրերի, այդ թվում՝ Խաղաղության և անվտանգության գործադիր կոմիտեի, Սիավորված ազգերի զարգացման խմբի, Տնտեսական և սոցիալական հարցերի գործադիր կոմիտեի շրջանակներում համակարգումն ու համագործակցությունը բարելավելու ջանքերը, հատկապես միջազգայնորեն համաձայնեցված զարգացման նպատակների համատեքստում, ներառյալ նրանք, որոնք ընդունված են Սիավորված ազգերի Հազարամյակի հոչակարում, և համապատասխան կառավարությունների հետ ներգրավվել երկխոսության մեջ՝ այս ոլորտում նրանց տեխնիկական ծրագրերն ամրապնդելու նպատակով:
13. Գերազույն հանձնակատարին խնդրում է ամրապնդել իր գրասենյակի՝ փոքրամասնություններին առնչվող տեխնիկական համագործակցության ծրագիրը և խրախուսել աշխատանքային խմբի աշխատանքներում հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների և փոքրավոր երկխոսության մեջ՝ այս ոլորտում նրանց տեխնիկական ծրագրերն ամրապնդելու նպատակով:
14. Գլխավոր քարտուղարին խնդրում է երկու տարի անց ուսումնասիրել գործող մեխանիզմների կիրառման արդյունավետությունը և Հանձնաժողովի 63-րդ նստաշրջանին գեկույց ներկայացնել՝ մեխանիզմների մանրամասների ներառմամբ:

15. Որոշում է շարունակել սույն հարցի դիտարկումն իր 62-րդ նստաշրջանում՝ օրակարգի միևնույն կետի ներքո:
16. Առաջարկվում է, որպեսզի Տնտեսական և սոցիալական հարցերով խորհրդի կողմից ընդունվի հետևյալ որոշման նախագիծը.

«Տնտեսական և սոցիալական հարցերի խորհրդողը, հաշվի առնելով Մարդու իրավունքների հանձնաժողովի 2005թ. ապրիլի 21-ի 2005/79 բանաձևը, հաստատում է Միավորված ազգերի՝ Մարդու իրավունքների հարցերով գերազույն հանձնակատարին ուղղված Հանձնաժողովի խնդրանքը՝ երկու տարով նշանակել փոքրամասնությունների հարցերով անկախ փորձագետ, հետևյալ մանդատով.

- (ա) խթանել Ազգային կամ էթնիկ, կրոնական և լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների մասին հոչակագրի կատարումը, ի թիվս այլ միջոցների, նաև կառավարությունների հետ խորհրդակցությունների միջոցով՝ հաշվի առնելով գոյություն ունեցող միջազգային չափանիշները և փոքրամասնությունների մասին տեղական օրենսդրությունը,
- (բ) որոշել կառավարությունների խնդրանքով Մարդու իրավունքների հարցերով գերազույն հանձնակատարի գրասենյակի և կառավարությունների համագործակցության լավագույն փորձի օրինակներն ու տեխնիկական համագործակցության հնարավորությունները,
- (գ) հաշվի առնել գենդերային մոտեցումն աշխատանքում,
- (դ) սերտ համագործակցել՝ խուսափելով գործառությների կրկնումից, ՍԱԿ-ի համապատասխան մարմինների, մանդատների, մեխանիզմների, ինչպես նաև տարածաշրջանային կազմակերպությունների հետ,
- (ե) հաշվի առնել հասարակական կազմակերպությունների տեսակետները՝ իր մանդատին առնչվող հարցերի վերաբերյալ:

«Խորհրդող հաստատում է նաև Հատուկ ներկայացուցչին ուղղված խնդրանքը՝ Հանձնաժողովին ներկայացնելու իր գործունեության վերաբերյալ տարեկան գեկույց՝ ներկայալ փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների ավելի լավ կիրառման արդյունավետ ռազմավարության վերաբերյալ առաջարկություններ, ինչպես նաև Գլխավոր քարտուղարին ուղղված խնդրանքը՝ առկա բյուջետային միջոցներից տրամադրել բոլոր անհրաժեշտ միջոցները հատուկ ներկայացուցչի մանդատի արդյունավետ կատարման համար»:

60-րդ հանդիպում  
21 ապրիլի, 2005թ.

[Ընդունվել է առանց քվեարկության. տես՝ գլ. XIV, E/CN.4/2005/L.10/Add.14]

## ԳԼՈՒԽ 2. ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ

### 1. ԿՈՆՎԵՆՑԻԱ

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության  
մասին<sup>16</sup>  
փոփոխված 11-րդ արձանագրությամբ<sup>17</sup>  
1950թ., նոյեմբերի 4-ը

Սույն Կոնվենցիան ստորագրած կառավարությունները, լինելով  
Եվրոպայի խորհրդի անդամներ,

նկատի ունենալով 1948 թվականի դեկտեմբերի 10-ին Սլավորված  
ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի հոչակած Մարդու  
իրավունքների համբնդիանուր հոչակագիրը,

նկատի ունենալով, որ սույն Հոչակագիրը նպատակ ունի ապահովելու  
այնտեղ հոչակաված իրավունքների համբնդիանուր և արդյունավետ ճանաչումն  
ու պահպանումը,

նկատի ունենալով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն իր անդամների  
միջև առավել միասնություն ձեռք բերելու է, և որ այդ նպատակին հասնելու  
միջոցներից մեկը մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների  
պահպանումը և հետագա իրականացումն է,

կրկին հավաստելով իրենց խորին հավատը այդ հիմնարար ազատութ-  
յունների նկատմամբ, որոնք արդարության ու խաղաղության հիմքն են  
աշխարհում, և որոնց լավագույն պահպանումը կախված է, մի կողմից,  
քաղաքական արդյունավետ ժողովրդավարությունից և, մյուս կողմից, մարդու՝  
դրանց վերաբերող իրավունքների ընդիանուր ընդունումից ու պահպանումից,

համակված վճռականությամբ՝ որպես միասնական հայացքներ և  
քաղաքական ավանդությների, իդեալների, ազատության և իրավական  
պետության ընդիանուր ժառանգություն ունեցող Եվրոպական երկրների  
կառավարություններ՝ առաջին քայլերն անել Համբնդիանուր հոչակագրում  
ամրագրված որոշ իրավունքների հավաքական իրականացման  
ճանապարհին,

համաձայնեցին ներքոհիշյալի շուրջ.

<sup>16</sup> Կոնվենցիայի տեքստը փոփոխված է համաձայն 1970թ. սեպտեմբերի 21-ին ուժի մեջ մտած 3-րդ Արձանագրության, 1971թ. դեկտեմբերի 20-ին ուժի մեջ մտած 5-րդ Արձանագրության և 1990թ. հունվարի 1-ին ուժի մեջ մտած 8-րդ Արձանագրության, որը ընդունվում է նաև 2-րդ Արձանագրության տեքստով, դրույթները, որը 1970թ. սեպտեմբերի 21-ին ուժի մեջ մտնելուց հետո նրա 5-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն Կոնվենցիայի բաղկացուցիչ մասն է: Բոլոր դրույթները, որոնք լրացվել կամ փոփոխվել են այս Արձանագրություններով, փոխարինված են 1998թ. նոյեմբերի 1-ին ուժի մեջ մտած 11-րդ Արձանագրությամբ: Վերջինին ուժի մեջ մտնելուց հետո լրացրած են գործել 1994թ. հոկտեմբերի 1-ին ուժի մեջ մտած 9-րդ Արձանագրությունը և 10-րդ Արձանագրությունը կորցնում է իր նպատակը:

<sup>17</sup> Պաշտոնական բարգմաննություն

## **Հոդված 1<sup>18</sup>** **Մարդու իրավունքները հարգելու պարտականությունը**

Բարձր պայմանավորվող կողմերն իրենց իրավազորության ներք գտնվող յուրաքանչյուրի համար ապահովում են այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են սույն Կոնվենցիայի Ի բաժնում:

### **Բաժին 1<sup>19</sup>** **Իրավունքներ և ազատություններ**

#### **Հոդված 2<sup>20</sup>** **Կյանքի իրավունք**

1. Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով:

Ոչ մեկին չի կարելի դիտավորությամբ գրկել կյանքից այլ կերպ, քան ի կատարումն դատարանի կայացրած դատավճռի՝ այն հանցագործության համար, որի կապակցությամբ օրենքով նախատեսված է այդ պատիժը:

2. Կյանքից գրկելը չի համարվում սույն հոդվածի խախտում, եթե այն հետևանք է ուժի գործադրման, ինչը բացարձակացնելու համար:

ա) ցանկացած անձի անօրինական բռնությունից պաշտպանելու համար,

բ) օրինական ձերքակալում իրականացնելու կամ օրինական հիմքերով կալանավորված անձի փախուստը կանխելու համար,

գ) խոռվությունը կամ ապստամբությունը ճնշելու նպատակով օրենքին համապատասխան գործողություն ձեռնարկելու համար:

### **Հոդված 3<sup>21</sup>** **Խոշտանգումների արգելում**

Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատիժի:

### **Հոդված 4<sup>22</sup>** **Ստրկության և հարկադիր աշխատանքի արգելում**

1. Ոչ ոք չպետք է պահվի ստրկության մեջ կամ անազատ վիճակում:

2. Ոչ ոք չպետք է պարտադրվի կատարելու պարտադիր կամ հարկադիր աշխատանք:

<sup>18</sup> Վերնագիրը ավելացվել է 11-րդ Արձանագրության (ETS No. 155) դրույթների համաձայն:

<sup>19</sup> Վերնագիրը ավելացվել է 11-րդ Արձանագրության (ETS No. 155) դրույթների համաձայն:

<sup>20</sup> Վերնագիրը ավելացվել է 11-րդ Արձանագրության (ETS No. 155) դրույթների համաձայն:

<sup>21</sup> Վերնագիրը ավելացվել է 11-րդ Արձանագրության (ETS No. 155) դրույթների համաձայն:

<sup>22</sup> Վերնագիրը ավելացվել է 11-րդ Արձանագրության (ETS No. 155) դրույթների համաձայն:

3. Սույն հոդվածի նպատակների համար «պարտադիր կամ հարկադիր աշխատանք» հասկացությունը չի ներառում

ա) ցանկացած աշխատանք, որը սովորաբար պահանջվում է կատարել սույն Կոնվենցիայի 5-րդ հոդվածի դրույթների համաձայն կալանքի տակ գտնվելու կամ նման կալանքից պայմանականորեն ազատված լինելու լնդացընթացում,

բ) զինվորական բնույթի ցանկացած ծառայություն, իսկ այն երկրներում, որտեղ օրինական է ճանաչվում զինվորական ծառայությունից հրաժարվելը՝ համոզունքներից ենելով՝ սլարտադիր զինվորական ծառայության փոխարեն նշանակված ծառայությունը,

գ) ցանկացած ծառայություն, որը պարտադիր է բնակչության կյանքին կամ քարենկեցությանն սպառնացող արտակարգ դրույթյան կամ աղետի դեպքում,

դ) սովորական քաղաքացիական պարտականությունների մաս կազմող ցանկացած աշխատանք կամ ծառայություն:

### Հոդված 5<sup>23</sup>

#### Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք

1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից գրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

ա) անձին օրինական կերպով կալանքի տակ պահելը իրավասու դատարանի կողմից նրա դատապարտվելուց հետո,

բ) անձի օրինական ձերբակալումը կամ կալանավորումը դատարանի օրինական կարգադրությանը չենթարկվելու համար կամ օրենքով նախատեսված ցանկացած պարտավորության կատարումն ապահովելու նպատակով,

գ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախսատում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախտատը կանխելու համար,

դ) անշափահասին կալանքի վերցնելը օրինական կարգադրության հիման վրա՝ դաստիարակչական հսկողության համար, կամ նրա օրինական կալանավորումը՝ նրան իրավասու իրավական մարմնին ներկայացնելու նպատակով,

ե) անձանց օրինական կալանքի վերցնելը՝ վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով, ինչպես նաև հոգեկան հիվանդներին, զինեմոլներին կամ թմրամոլներին կամ քափառաշրջիկներին օրինական կալանքի վերցնելը,

<sup>23</sup> Վերնագիրը ավելացվել է 11-րդ Արձանագրության (ETS No. 155) դրույթների համաձայն:

զ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ նրա անօրինական մուտքը երկիր կանխելու նպատակով, կամ այն անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը, որի դեմ միջոցներ են ձեռնարկվում՝ նրան արտաքսելու կամ հանձնելու նպատակով:

2. Յուրաքանչյուր ձերբակալված իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է իր ձերբակալման պատճառների և ներկայացվող ցանկացած մեղադրանքի նասին:

3. Սույն հոդվածի 1-ին կետի «զ» ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարփում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով:

4. Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է:

5. Յուրաքանչյուր ոք, ով, ի խախտումն սույն հոդվածի դրույթների, ձերբակալման կամ կալանավորման զոհ է դարձել, իրավունք ունի հայցի ուժով օժտված վոխսիատուցման:

## Հոդված 6<sup>24</sup> Արդար դատաքննության իրավունք

1. Յուրաքանչյուր ոք, եթե որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաշառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և իրապարակային դատաքննության իրավունք: Դատավճիռը իրապարակվում է դրանք նիստում, սակայն մասունք ներկայացուցիչների և հանրության ներկայությունը կարող է չթույլատրվել ամբողջ դատաքննության կամ նրա մի մասի ընթացքում՝ ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության շահերից ենթելով, եթե դա են պահանջում անշափահասների շահերը կամ կողմերի մասնավոր կյանքի պաշտպանությունը, կամ՝ այնքանով, որքանով դա, դատարանի կարծիքով, հատուկ հանգամանքների բերումով խիստ անհրաժեշտ է, եթե իրապարակայնությունը կխախտեր արդարադատության շահերը:

<sup>24</sup> Վերմագիրը ավելացվել է 11-րդ Արձանագրության (ETS No. 155) դրույթների համաձայն:  
104

2. Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղադրությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան:

3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

ա) իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին,

բ) բավարար ժամանակ ու հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար,

գ) պաշտպանելու իրեն անձամբ կամ իր ընտրած դատապաշտպանների միջոցով կամ, եթե նա բավարար միջոցներ չունի դատապաշտպանի ծառայության դիմաց վճարելու համար, ունենալու անվճար նշանակված դատապաշտպան, երբ դա պահանջում են արդարադատության շահերը,

դ) հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները,

ե) օգտվելու բարգմանչի անվճար օգնությունից, եթե ինքը չի հասկանում դատարանում գործածվող լեզուն կամ չի խոսում այդ լեզվով:

## Հոդված 7<sup>25</sup>

### Պատիճ՝ բացառապես օրենքի հիման վրա

1. Ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ գործողության կամ անգործության համար, որը, կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն, քրեական հանցագործություն չի համարվել: Չի կարող նաև նշանակվել ավելի ճանր պատիճ, քան այն, որը կիրարելի է եղել քրեական հանցագործության կատարման պահին:

2. Սույն հոդվածը չի խոչընդոտում ցանկացած անձի դատի տալ և պատժել որևէ գործողության կամ անգործության համար, որը կատարվելու պահին, քաղաքակիրք ազգերի կողմից ճանաչված իրավունքի ընդհանուր սկզբունքներին համապատասխան, համարվել է քրեական հանցագործություն:

## Հոդված 8<sup>26</sup>

### Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք

1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:

2. Չի բոլյատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախա-

<sup>25</sup> Վերնագիրը ավելացվել է 11-րդ Արձանագրության (ETS No. 155) դրույթների համաձայն:

<sup>26</sup> Վերնագիրը ավելացվել է 11-րդ Արձանագրության (ETS No. 155) դրույթների համաձայն:

տեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տեսնական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

### **Հոդված 9<sup>27</sup>** **Մտքի, խղճի և կրոնի ազատություն**

1. Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք. այս իրավունքը ներառում է իր կրոնը կամ համոգմունքը փոխելու ազատությունը և դրանք ինչպես միանձնյա, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով, քարոզչության, արարողությունների, պաշտամունքի և ծեսերի միջոցով արտահայտելու ազատություն:

2. Սեփական կրոնը կամ համոգմունքները դավանելու ազատությունը ենթակա է միայն այնպիսի սահմանափակումների, որոնք սահմանված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի պաշտպանություն հասարակական անվտանգության, հասարակական կարգի, առողջության կամ բարոյականության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների:

### **Հոդված 10<sup>28</sup>** **Արտահայտվելու ազատություն**

1. Յուրաքանչյուր ոք ունի ազատութեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: Այս իրդվածը չի խոչընդոտում պետություններին՝ սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում:

2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության

<sup>27</sup> Վերնագիրը ավելացվել է 11-րդ Արձանագրության (ETS No. 155) դրույթների համաձայն:

<sup>28</sup> Վերնագիրը ավելացվել է 11-րդ Արձանագրության (ETS No. 155) դրույթների համաձայն:

բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաշառությունը պահպանելու նպատակով:

### **Հոդված 11<sup>29</sup>** **Հավաքների և միավորման ազատություն**

1. Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ հավաքների ազատության և այլոց հետ միավորվելու ազատության իրավունք՝ ներառյալ իր շահերի պաշտպանության համար արհմիություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքը:

2. Այս իրավունքների իրականացումը ենթակա չէ որևէ սահմանափակման, բացի նրանցից, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը կամ այլ անձանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու նպատակով։ Սույն հոդվածը չի խոչընդոտում օրինական սահմանափակումներ նախատեսել զինված ուժերի, ոստիկանության և պետական վարչակազմի մեջ մտնող անձանց կողմից այդ իրավունքների իրականացման նկատմամբ։

### **Հոդված 12<sup>30</sup>** **Ամուսնության իրավունք**

Ամուսնական տարիքի հասած տղամարդիկ ու կանայք ունեն ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունք՝ այդ իրավունքի իրականացումը կարգավորող ներպետական օրենսդրությանը համապատասխան։

### **Հոդված 13<sup>31</sup>** **Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք**

Յուրաքանչյուր ոք, ում սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, ուույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոն գործող անձինք։

<sup>29</sup> Վերնագիրը ավելացվել է 11-րդ Արձանագրության (ETS No. 155) դրույթների համաձայն։

<sup>30</sup> Վերնագիրը ավելացվել է 11-րդ Արձանագրության (ETS No. 155) դրույթների համաձայն։

<sup>31</sup> Վերնագիրը ավելացվել է 11-րդ Արձանագրության (ETS No. 155) դրույթների համաձայն։

## **Հոդված 14<sup>32</sup>** **Խտրականության արգելում**

Սույն Կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելը ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փորբամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրություննից:

## **Հոդված 15<sup>33</sup>** **Արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղում**

1. Պատերազմի կամ ազգի կյանքին սպառնացող այլ արտակարգ դրության ժամանակ ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ կարող է ձեռնարկել միջոցառումներ՝ ի շեղումն սույն Կոնվենցիայով ամրագրված իր պարտավորությունների՝ բացառապես այնքանով, որքանով դա պահանջում է դրության լրջությունը՝ պայմանով, որ նման միջոցառումներն անհամատեղելի չեն միջազգային իրավունքով ստանձնած նրա մյուս պարտավորությունների հետ:

2. Այս դրույթը չի կարող հիմք ծառայել՝ շեղվելու 2-րդ հոդվածից, բացառությամբ պատերազմական օրինական գործողությունների հետևանորով մարդկային գոհերի կապակցությամբ, կամ 3-րդ հոդվածի, 4-րդ հոդվածի 1-ին կետի և 7-րդ հոդվածի դրույթներից:

3. Ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ, օգտագործելով շեղվելու այդ իրավունքը, Եվրոպայի խորիրդի Գլխավոր քարտուղարին ամբողջությամբ իրազեկում է իր կիրառած միջոցառումների և դրանք կիրառելու լրացածառների մասին: Եվրոպայի խորիրդի Գլխավոր քարտուղարը ծանուցվում է նաև այդ միջոցառումների գործողությունը դադարեցնելու և Կոնվենցիայի դրույթների լիակատար իրազործումը վերսկսելու մասին:

## **Հոդված 16<sup>34</sup>** **Օտարերկրացիների քաղաքական գործունեության սահմանափակում**

10-րդ, 11-րդ և 14-րդ հոդվածներում ոչինչ չի կարող խոչընդոտել Բարձր պայմանավորվող կողմերին՝ սահմանափակումներ նախատեսելու օտարերկրացիների քաղաքական գործունեության համար:

<sup>32</sup> Վերնագիրը ավելացվել է 11-րդ Արձանագրության (ETS No. 155) դրույթների համաձայն:

<sup>33</sup> Վերնագիրը ավելացվել է 11-րդ Արձանագրության (ETS No. 155) դրույթների համաձայն:

<sup>34</sup> Վերնագիրը ավելացվել է 11-րդ Արձանագրության (ETS No. 155) դրույթների համաձայն:

## Հոդված 17<sup>35</sup> Իրավունքների չարաշահման արգելում

Սույն Կոնվենցիայի ոչ մի դրույթ չի կարող մեկնաբանվել այն իմաստով, թե որևէ պետություն, անձանց խումբ կամ որևէ անձ իրավունք ունեն զրադաշտություն, այնպիսի գործունեությամբ կամ կատարելու այնպիսի գործություն, որն ուղղված է սույն Կոնվենցիայում շարադրված ցանկացած իրավունքի և ազատության վերացմանը կամ դրանց սահմանափակմանը ավելի մեծ չափով, քան նախատեսված է Կոնվենցիայով:

## Հոդված 18<sup>36</sup> Իրավունքների նկատմամբ սահմանափակումների կիրառման սահմանները

Նշված իրավունքների և ազատությունների՝ սույն Կոնվենցիայով թույլատրվող սահմանափակումները չեն կիրառվում որևէ այլ նպատակով, բացի այն, որի համար դրանք նախատեսվել են:

### 2. ՏԱՐԱԾՐՁԱՆԱՅԻՆ ԿԱՄ ՓՈՔՐԱՍՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽԱՐՏԻԱ<sup>37</sup>

#### Ներածություն

Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները, ստորագրելով սույն Խարտիան,

համարելով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն է հասնել առավել սերտ միասնության իր անդամների միջև, հատկապես ընդհանուր ժառանգություն հանդիսացող իդեալների և սկզբունքների գիտակցման և պահպանման նպատակով,

համարելով, որ Եվրոպայի պատմական տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների պահպանումը, որոնցից մի քանիսը վերջնական ոչնչացման վտանգի տակ են, նպաստում է Եվրոպայի մշակութային հարստության և ավանդույթների պահպանմանը և զարգացմանը,

համարելով, որ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվի գործածումը անձնական և հասարակական կյանքում մարդու անօտարելի իրավունքն է, համաձայն քաղաքացիական և քաղաքական իրավունքների վերաբերյալ Միավորված ազգերի կազմակերպության միջազգային դաշնագրում ամրագրված սկզբունքներին և համաձայն Եվրոպայի խորհրդի՝ Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության վերաբերյալ կոնվենցիայի ոգուն,

<sup>35</sup> Վերնագիրը ավելացվել է 11-րդ Արձանագրության (ETS No. 155) դրույթների համաձայն:

<sup>36</sup> Վերնագիրը ավելացվել է 11-րդ Արձանագրության (ETS No. 155) դրույթների համաձայն:

<sup>37</sup> Պաշտոնական քարզմանություն

հաշվի առնելով ԵԱՀԽ շրջանակներում իրականացված աշխատանքը, մասնավորապես 1975 թվականի Հեղիների Վերջնական ակտու ու 1990 թվականին Կոպենհագենի հանդիպման փաստաթուղթը,

շեշտելով մշակութային կապերի, ինչպես նաև բազմաթիվ գործառություններ և համարելով, որ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների պահպանումն ու նրանց ցուցաբերվող աջակցությունը պետք է շնչառեն պաշտոնական լեզուներին և չխոչընդոտեն դրանք սովորելու անհրաժեշտությանը,

զիտակցելով, որ Եվրոպայի տարրեր երկրներում և շրջաններում տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների պահպանումն ու զարգացումը կարևոր ավանդ են հանդիսանում Եվրոպայի կառուցման գործում, որն իր հերթին իմանված է ժողովրդավարության սկզբունքների և մշակութային բազմազանության վրա՝ ազգային ինքնիշխանության և տարածքային ամբողջականության շրջանակներում,

հաշվի առնելով Եվրոպական պետությունների տարրեր շրջաններում առկա առանձնահատուկ պայմանները և համապատասխան սովորույթները,

համաձայնեցին հետևյալի մասին.

## Մաս 1 Ընդհանուր դրույթներ

### Հոդված 1 Սահմանումներ

Սույն Խարտիայի նպատակների համար՝

ա/ «տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներ» հասկացությունը վերաբերում է այն լեզուներին, որոնք՝

i. ավանդական ձևով գործածվում են պետության տվյալ տարածքում այդ պետության քաղաքացիների կողմից, որոնք քանակապես ավելի փոքր խումբ են կազմում, քան տվյալ պետության բնակչության մնացած մասը, և

ii. տարրերվում են այդ պետության պաշտոնական լեզվից (լեզուներից) և չեն ընդգրկում ո՞չ պետության պաշտոնական լեզվի (լեզուների) բարբառները, ո՞չ էլ՝ միզրանտների լեզուները,

թ/ «տարածք», որտեղ գործածվում է տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուն» նշանակում է՝ այն աշխարհագրական շրջանը, որտեղ տվյալ լեզուն հանդիսանում է գալիս իրեն արտահայտման միջոց մի շարք անձանց այնալիս քանակի համար, որն արդարացնում է սույն Խարտիայում նախատեսված տարրեր պաշտպանողական և աջակցող միջոցների ընդունումը,

զ/ «ոչ տարածքային լեզուներ» նշանակում է՝ այն լեզուները, որոնք գործածվում են պետության քաղաքացիների կողմից և տարրերվում են տվյալ պետության բնակչության մնացած մասի կողմից գործածվող լեզվից կամ լեզուներից, բայց որոնք, չնայած գործածվում են այդ պետության

տարածքում ավանդականորեն, չեն կարող նույնացվել այդ երկրի որևէ տարածքի հետ:

## **Հոդված 2 Պարտավորություններ**

1. Յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է կիրառել 2-րդ մասի կետերը իր տարածքում գործող բոլոր տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների նկատմամբ, որոնք համապատասխանում են 1-ին հոդվածի սահմանմանը:

2. 3-րդ հոդվածի համաձայն վավերացման, ընդունման կամ հաստատման ժամանակ սահմանված յուրաքանչյուր լեզվի առնչությամբ յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է կիրառել Խարտիայի III մասի կետերից ընտրված ամենաքիչը 35 կետեր կամ ենթակետեր՝ ներառյալ առնվազն 3-ը, ընտրված 8-րդ և 12-րդ հոդվածներից, և 1-ական՝ յուրաքանչյուր 9-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ հոդվածներից:

## **Հոդված 3 Գործնական պայմանավորվածություններ**

1. Յուրաքանչյուր պայմանավորվող պետություն վավերացման, ընդունման կամ հաստատման իր փաստաթղում նշում է յուրաքանչյուր տարածաշրջանային կամ փոքրամասնության լեզուն, կամ պաշտոնական լեզուն, որն ավելի քիչ է գործածվում իր տարածքի ամբողջ կամ որևէ մի մասում, որի նկատմամբ կիրառվեն 2-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն ընտրված կետերը:

2. Ցանկացած Կողմ հետազայում կարող է ծանուցել զլսավոր քարտուղարին, որ ինքը ընդունում է Խարտիայի որևէ այլ կետի դրույթներից բխող պարտավորությունները, որոնք դեռ նշված չեն վավերացման, ընդունման կամ հաստատման իր փաստաթղում, կամ՝ որ ինքը կիրառի սույն հոդվածի 1-ին կետը այլ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների կամ այլ պաշտոնական լեզուների նկատմամբ, որոնք ավելի քիչ են գործածվում իր տարածքի ամբողջ կամ որևէ մի մասում:

3. Վերոհիշյալ կետում սահմանված պարտավորությունները կկազմեն վավերացման, ընդունման կամ հաստատման անթաժամելի մասը և, ծանուցման ժամկետից սկսած, կունենան միևնույն ուժը:

## **Հոդված 4 Պահպանության գոյություն ունեցող ռեժիմները**

1. Սույն Խարտիայում ոչինչ չպետք է մեկնարանվի որպես Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի կողմից երաշխավորված որևէ իրավունքի սահմանափակում կամ ուժահարում:

2. Սույն Խարտիայի կետերը չպետք է վճարեն տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների կարգավիճակին վերաբերող ավելի բարենպաստ կետերին կամ փոքրամասնություններին պատկանող անձանց

իրավական ռեժիմին, որը կարող է գոյություն ունենալ Կողմերից որևէ մեկում կամ էլ առկա է երկկողմանի կամ բազմակողմանի միջազգային համաձայնագրերով:

## Հոդված 5 Առկա պարտավորություններ

Սույն Խարտիայում ոչինչ չի կարող մեկնաբանվել որպես այնպիսի գործունեությամբ զրադարձություն կամ այնպիսի գործունեություն ծավալելու իրավունք, որը հակասում է ԱՌԿ-ի կանոնադրության նպատակներին կամ, միջազգային իրավունքի համաձայն, այլ պարտավորություններին՝ ներառյալ պետությունների ինքնիշխանության և տարածքային ամրողականության սկզբունքը:

## Հոդված 6 Տեղեկատվություն

Կողմերը պարտավորվում են հետևել, որ շահագրգիռ մարմինները, կազմակերպությունները և անձինք տեղեկացվեն Խարտիայով սահմանված իրավունքների և պարտավորությունների մասին:

### Մաս 2

#### 2-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն հետապնդվող նպատակներն ու սկզբունքները

## Հոդված 7 Նպատակներ և սկզբունքներ

1. Որոշակի տարածքներում գործածվող տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների առնչությամբ և յուրաքանչյուր լեզվի կարգավիճակին համաձայն՝ Կողմերը կիմնեն իրենց քաղաքականությունը, օրենսդրությունը և փորձառությունը հետևյալ նպատակների և սկզբունքների վրա.

ա/ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների ճանաչումը որպես մշակութային հարստության արտահայտություն,

բ/ տարածաշրջանային կամ փոքրամասնության յուրաքանչյուր լեզվի աշխարհագրական տարածքի ընդունումը՝ երաշխավորելու համար, որ առկա կամ նոր վարչական բաժանումները չեն խոչընդոտում տվյալ տարածաշրջանային կամ փոքրամասնության լեզվի զարգացմանը,

գ/ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներին աջակցելու համար վճռական գործողություններին դիմելու անհրաժեշտությունը՝ դրանք պաշտպանելու համար,

դ/ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածնան հեշտացումը և/կամ խրախուսումը բանավոր և զրավոր խոսքի մեջ, հասարակական կամ անձնական կյանքում,

ե/ սույն Խարտիայում ընդգրկված բնագավառներում կապերի պահպանումն ու զարգացումը տարածաշրջանային կամ

փոքրամասնությունների լեզուներ գործածող խմբերի և միանման կամ նույնանման ձևով լեզուն գործածող պետության այլ խմբերի միջև, ինչպես նաև մշակութային կապերի հաստատումը այդ պետության մյուս խմբերի միջև, որոնք գործածում են տարբեր լեզուներ,

զ/ համապատասխան մերողների և միջոցների ապահովումը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների դասավանդման և ուսուցման համար՝ բոլոր համապատասխան փուլերում,

է/ պայմանների ապահովում, որոնք հնարավորություն կտան տվյալ տարածքում ապրող՝ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվով չխոսողներին (որտեղ այդ լեզուն գործածվում է) ցանկության դեպքում ստվորել այն,

ը/ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների ուսումնասիրման և հետազոտման խթանումը համալսարաններում կամ համարժեք ուսումնական հաստատություններում,

թ/ սույն Խարտիայում ընդգրկված բնագավառներում ազգամիջյան համապատասխան ձևերի փոխանակման խթանում՝ երկու կամ ավելի պետություններում միանման կամ նույնանման ձևով գործածվող տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների համար:

2. Կողմերը պարտավորվում են վերացնել (Եթե դեռ չի արվել) ցանկացած չարդարացված տարրերություն, բացառում, սահմանափակում կամ նախապատվություն, որոնք վերաբերում են տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվի գործածմանը և ուղղված են տվյալ լեզվի պահպանումն ու զարգացումը վճարելուն կամ վտանգելուն։ Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների առնչությամբ հատուկ միջոցառումների ընդունումը, որը նպատակառուղղված է՝ աջակցելու իրավահավասարությանը այս լեզուները գործածողների և մնացած բնակչության միջև, կամ որը պատշաճորեն հաշվի է առնում նրանց հատուկ պայմանները, չի համարվի խտրականության ակտ ավելի լայնորեն գործածվող լեզուներ գործածողների նկատմամբ։

3. Կողմերը պարտավորվում են համապատասխան միջոցներով աջակցել փոխադարձ ըմբռնմանը երկրի բոլոր լեզվական խմբերի միջև և, մասնավորապես, իրենց երկրներում կրթության և ուսուցման նպատակների մեջ ներառել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների նկատմամբ հարգանքը, փոխարժեումը և հանդուժողականությունը, ինչպես նաև խրախուսել զանգվածային լրատվամիջոցներին՝ հետապնդելու միևնույն նպատակները։

4. Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների նկատմամբ իրենց քաղաքականությունը որոշելիս Կողմերը պետք է հաշվի առնեն այդ լեզուները գործածող խմբերի կարիքներն ու ցանկությունները։ Անհրաժեշտության դեպքում նրանք խրախուսվում են՝ ստեղծելու մարմիններ՝ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներին առնչող բոլոր խնդիրների մասին իշխանություններին խորհուրդ տալու նպատակով։

5. Կողմերը պարտավորվում են, բայց առաջարկությունը կիրառել վերոհիշյալ 1-4-րդ կետերում թվարկված սկզբունքները ոչ տարածքային լեզուների նկատմամբ: Սակայն, քանի որ խոսքը այս լեզուների մասին է, սույն Խարտիան ուժի մեջ մտցնելու համար ձեռնարկվող միջոցառումների բնույթն ու գործունեության շրջանակը պետք է որոշվի ճկում ձևով՝ հաշվի առնելով նաև տվյալ լեզուները գործածող խմբերի կարիքներն ու ցանկությունները և հարգելով նրանց սովորություններն ու առանձնահատկությունները:

### Մաս 3

**Հասարակական լյանքում տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածմանը ուղղված միջոցառումները՝ համաձայն 2-րդ հոդվածի 2-րդ կետում ընդգրկված պարտավորությունների**

#### Հոդված 8 Կրթություն

1. Կրթության կապակցությամբ այն տարածքներում, որտեղ այսպիսի լեզուները գործածվում են՝ համաձայն յուրաքանչյուր լեզվի կարգավիճակին և առանց վնասելու պետության պաշտոնական լեզվի կամ լեզուների ուսուցմանը, Կողմերը պարտավորվում են.

ա/ i. մատչելի դարձնել նախադպրոցական կրթությունը՝ համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ

ii. մատչելի դարձնել նախադպրոցական կրթության հիմնական մասը համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնության լեզուներով,

iii. կիրառել վերոհիշյալ i և ii կետերում նշված նախաձեռնված միջոցառումներից որևէ մեկը առնվազն այն աշակերտների նկատմամբ, որոնց ընտանիքները այդպիսի խնդրանք են ներկայացրել, և որոնց քանակը համարվում է քավարար, կամ

iv. եթե պետական մարմինները նախադպրոցական կրթության բնագավառում չունեն անմիջական իրավասություն՝ աջակցելու i-iii կետերում նշված միջոցառումների կիրառմանը և/կամ խրախուսելու այն,

թ/ i. մատչելի դարձնել տարրական կրթությունը համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով,

ii. մատչելի դարձնել տարրական կրթության հիմնական մասը համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով,

iii. տարրական կրթության շրջանակներում ապահովել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների ուսուցանումը որպես ուսումնական պլանի անբաժանելի մաս, կամ

iv. կիրառել վերոնշյալ i-ից մինչև iii միջոցներից մեկը առնվազն այն աշակերտների նկատմամբ, որոնց ընտանիքները այդպիսի խնդրանք են ներկայացրել, և որոնց քանակը համարվում է քավարար,

գ/ i. մատչելի դարձնել միջնակարգ կրթությունը համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ

ii. մատչելի դարձնել միջնակարգ կրթության հիմնական մասը համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ

iii. միջնակարգ կրթության շրջանակներում ապահովել համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների ուսուցանումը որպես ուսումնական պլանի անբաժանելի մաս, կամ

iv. կիրառել վերոնշյալ i-ից մինչև iii միջոցներից մեկը առնվազն այն աշակերտների նկատմամբ, որոնք (կամ, հնարավորության դեպքում, որոնց ընտանիքները) այդպես են ցանկանում, և որոնց թիվը համարվում է բավարար,

դ/ i. մատչելի դարձնել տեխնիկական և մասնագիտական կրթությունը համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ

ii. մատչելի դարձնել տեխնիկական և մասնագիտական կրթության հիմնական մասը համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ

iii. տեխնիկական և մասնագիտական կրթության շրջանակներում ապահովել համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների ուսուցանումը որպես ուսումնական պլանի անբաժանելի մաս, կամ

iv. կիրառել վերոնշյալ i-ից մինչև iii միջոցներից մեկը առնվազն այն աշակերտների նկատմամբ, որոնք (կամ, հնարավորության դեպքում, որոնց ընտանիքները) այդպես են ցանկանում, և որոնց թիվը համարվում է բավարար,

ե/ i. մատչելի դարձնել համալսարանական կամ այլ բարձրագույն կրթությունը համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ

ii. ստեղծել հնարավորություններ՝ ուսուցանելու այդ լեզուները որպես համալսարանական և այլ բարձրագույն կրթական հաստատությունների ուսուցանվող առարկաներ, կամ

iii. բարձրագույն կրթական հաստատությունների կապակցությամբ, եթե պետության ստանձնած դերի պատճառով i և ii ենթակետերը չեն կարող կիրառվել, ապա աջակցել և/կամ թույլ տալ համալսարանի կամ բարձրագույն կրթական այլ ձևերի տրամադրումը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով կամ հնարավորությունների տրամադրումը այս լեզուների ուսուցման համար՝ որպես համալսարանական կամ բարձրագույն կրթական հաստատությունների առարկաներ,

գ/ i. կազմակերպել չափահասների կամ շարունակական կրթության դասընթացներ, որոնք հիմնականում կամ ամբողջովին

ուսուցանվում են տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ

ii. առաջարկել նման լեզուներ՝ որպես չափահասների կամ շարունակական կրթության առարկաներ, կամ

iii. եթե պետական մարմինները չունենան անմիջական իրավասություն չափահասների կրթության ոլորտում, ապա աջակցել նշված լեզուների առաջարկմանը կամ խրախուսել դրանց՝ որպես շարունակական կրթության առարկաների,

է/ ձեռնարկել միջոցառումներ՝ երաշխավորելու համար պատմության և նշակույրի ուսուցումը տարածաշրջանային և փոքրամասնությունների լեզուներով,

լ/ ապահովել ուսուցիչների հիմնական և հետագա վերապատրաստումը՝ Կողմից կողմից ընդունված «ա»-ից մինչև «է» կետերը իրականացնելու նպատակով,

i. հիմնել վերահսկող մարմին կամ մարմիններ, որոնք պատախանատու կլինեն տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով ուսուցման հաստատմանը կամ զարգացմանը ուղղված՝ ձեռնարկված միջոցների և ձեռք բերված առաջընթացի վերահսկման համար և իրենց հայտնաբերումների մասին պարբերական հաշվետվությունների պատրաստման համար, որոնք կներկայացվեն հասարակությանը:

2. Կրթության կապակցությամբ և տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները ավանդաբար օգտագործող տարածքներից բացի այլ տարածքների առնչությամբ Կողմերը պարտավորվում են (Եթե տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները գործածողների թիվը արդարացված է) թույլ տալ, աջակցել կամ ապահովել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվի կամ լեզվով ուսուցանումը կրթության բոլոր հանապատասխան փուլերում:

## Հոդված 9 Դատական մարմիններ

1. Այն դատական տարածքների առնչությամբ, որտեղ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով խոսող բնակչիների թիվը համապատասխանում է ներքոնշյալ միջոցառումներին՝ համաձայն այս լեզուներից յուրաքանչյուրի դերի, և այն պայմանով, որ սույն կետով տրամադրված հնարավորությունների օգտագործումը դատավորի կողմից չի համարվում պատշաճ արդարադատության իրականացմանը խոչընթացող, Կողմերը պարտավորվում են՝

ա/ քրեական գործերում՝

i. ապահովել, որ Կողմերից մեկի հարցման դեպքում դատարանները վարեն գործը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվով, և/կամ

ii. Երաշխավորել մեղադրյալին, որ նա իրավունք կունենա գործածելու իր տարածաշրջանային կամ փոքրամասնության լեզուն, և/կամ

iii. ապահովել, որ հարցումները և ապացույցները (զրավոր թանավոր) չպետք է բացառապես անընդունելի համարվեն, որովհետև դրանք ձևակերպվել են տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվով, և/կամ

iv. հարցման հիման վրա՝ իրավական գործերի հետ կապված փաստարդեր տրամադրել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվով, եթե անհրաժեշտ է, թարգմանիչների և թարգմանությունների միջոցով՝ չներառելով լրացուցիչ ծախսեր շահագրգիռ անձանց համար,

բ/ քաղաքացիական գործերում՝

i. ապահովել, որ Կողմերից մեկի հարցման դեպքում դատարանները գործը վարեն տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվով, կամ

ii. թույլատրել, որ դատարանի առաջ կանգնելու դեպքում կողմը խոսի տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվով՝ առանց դրա համար լրացուցիչ ծախսեր կրելու, և/կամ

iii. թույլատրել, որ փաստարդերը և վկայությունները տպվեն տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվով, անհրաժեշտության դեպքում՝ թարգմանիչների և թարգմանությունների օգնությամբ,

գ/ դատարաններում վարչական գործերի վերաբերյալ դատական գործերում՝

i. ապահովել, որ Կողմերից մեկի հարցման դեպքում դատարանավորները դատը վարեն տվյալ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվով,

ii. թույլատրել, որ դատարանի առաջ կանգնելու դեպքում կողմը խոսի տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվով՝ առանց դրա համար լրացուցիչ ծախսեր կրելու, և/կամ

iii. թույլատրել, որ փաստարդերը և վկայությունները տրամադրվեն տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվով, անհրաժեշտության դեպքում՝ թարգմանիչների և թարգմանությունների օգնությամբ,

դ/ քայլեր ձեռնարկել՝ երաշխավորելու, որ վերոհիշյալ «ք» և «զ» կետերի i և iii ենթակետերի կիրառումը և անհրաժեշտության դեպքում թարգմանությունների ու թարգմանիչների օգնության դիմելը չի ներառի հավելյալ ծախսեր շահագրգիռ անձանց համար:

2. Կողմերը պարտավորվում են՝

ա/ չմերժել իրավական փաստարդերի վավերականությունը (որոնք կազմվել են տվյալ երկրում) միայն այն պատճառով, որ դրանք կազմված են տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվով,

բ/ չմերժել կողմերի միջև իրավական փաստարդերի վավերականությունը (որոնք կազմվել են տվյալ երկրում) միայն այն

պատճառով, որ դրանք կազմված են տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվով, և ապահովել, որ նրանք ի վիճակի լինեն շահագրգիռ Յ-րդ կողմերի օգնությանը դիմելու, որոնք չեն հանդիսանում տվյալ լեզուն օգտագործողներ, այն պայմանով, որ փաստաբերի բովանդակությունը նրանց կմեկնաբանվի դրանք վկայակոչող անձի (անձանց) կողմից, կամ

գ/ չմերժել կողմերի միջև իրավական փաստաբերի վավերականությունը (որոնք կազմվել են տվյալ երկրում) միայն այն պատճառով, որ դրանք կազմված են տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով:

3. Կողմերը պարտավորվում են տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով մատչելի դարձնել ազգային օրենքով սահմանված ամենակարևոր տեքստերը. հատկապես այն տեքստերը, որոնք վերաբերում են այս լեզուներով խոսողներին (եթե նրանք այլ կերպ չեն սահմանում):

## Հոդված 10 Վարչական մարմիններ և հասարակական ծառայություններ

1. Պետության վարչական տարածքների ներսում, որտեղ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով խոսող բնակչության քանակը արդարացնում է ներքոնշյալ միջոցները, և, համաձայն յուրաքանչյուր լեզվի վիճակի, Կողմերը հնարավորության սահմաններում պարտավորվում են.

ա/ i. Երաշխավորել, որ վարչական մարմինները կգործածեն տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները, կամ

ii. Երաշխավորել, որ հասարակության հետ հարաբերություն ունեցող պետական ծառայողները, իրենց դիմող տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով խոսող անձանց հետ փոխհարաբերության մեջ մտնելով, կիսուն նույն լեզվով, կամ

iii. Երաշխավորել, որ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով խոսողները կկարողանան քանակոր կամ գրավոր հայտեր ներկայացնել և ստանալ պատասխանը այդ լեզուներով, կամ

iv. Երաշխավորել, որ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով խոսողները կկարողանան գրավոր կամ քանակոր հայտեր ներկայացնել այդ լեզուներով, կամ

v. Երաշխավորել, որ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով խոսողները իրավասու կլինեն փաստաբեր ներկայացնել այդ լեզուներով,

թ/ լայնորեն կիրառվող վարչական տեքստերը և ձևերը մատչելի դարձնել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով խոսող բնակչության համար կամ ներկայացնել դրանք երկեղու տարրերակներով,

գ/ թույլատրել վարչական մարմիններին՝ փաստաբեր կազմել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով:

2. Տեղական և մարզային մարմինների առնչությամբ, որոնց տարածքում բնակվող՝ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով խոսող բնակչության քանակը արդարացնում է ներքոնշյալ միջոցները, Կողմերը պարտավորվում են քույլատրել և/կամ խրախուսել.

ա/ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով օգտագործումը մարզային կամ տեղական իշխանությունների սահմաններում,

բ/ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով խոսողներին հնարավորություն տալ գործոր կամ բանավոր կերպով հայտ ներկայացնել այդ լեզուներով,

գ/ մարզային իշխանությունների կողմից իրենց պաշտոնական փաստաթղթերի հրատարակումը համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով,

դ/ տեղական իշխանությունների կողմից իրենց պաշտոնական փաստաթղթերի հրատարակումը համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով,

ե/ մարզային իշխանությունների կողմից տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածումը իրենց ժողովների ընթացքում (քննարկումների ժամանակ), սակայն առանց բացառելու պետության պաշտոնավես ընդունված լեզվի (լեզուների) գործածումը,

զ/ տեղական իշխանությունների կողմից տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածումը իրենց ժողովների ընթացքում (քննարկումների ժամանակ), սակայն առանց բացառելու պետության պաշտոնավես ընդունված լեզվի (լեզուների) գործածումը,

է/ անհրաժեշտության դեպքում՝ տեղանունների ճշգրիտ կամ ավանդական ձևերի կիրառումը կամ ընդունումը տարածաշրջանային և փոքրամասնությունների լեզուներով՝ պաշտոնական լեզվով (լեզուներով) ընդունված անունների հետ միասին:

3. Վարչական մարմինների կամ նրանց անունից գործող այլ անձանց պետական ծառայությունների առնչությամբ այն տարածքում, որտեղ գործածվում են տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները և համաձայն յուրաքանչյուր լեզվի դիրքի, Կողմերը հնարավորության սահմաններում պարտավորվում են.

ա/ Երաշխավորել, որ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները կօգտագործվեն ծառայությունների մատուցման ժամանակ, կամ

բ/ Քույլատրել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով խոսողներին՝ հարցում ներկայացնել այդ լեզուներով, կամ

գ/ Քույլատրել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով խոսողներին հարցում ներկայացնել այդ լեզուներով:

4. Կողմերի կողմից ընդունված 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի դրույթներն ուժի մեջ մտցնելու համար նրանք պարտավորվում են ձեռնարկել հետևյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը.

ա/ գրավոր կամ բանավոր թարգմանություններ՝ ըստ պահանջի,  
թափառագրել և անհրաժեշտության դեպքում ուսուցանել  
պահանջվող պաշտոնյաներին և այլ պետական ծառայողներին,

զ/ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներին  
տիրապետող պետական ծառայողների կողմից հնարավորության  
սահմաններում բավարարել հարցումներն այն տարածքում, որտեղ տվյալ  
լեզուն գործածվում է:

5. Համապատասխան հարցում ստանալու դեպքում Կողմերը  
պարտավորվում են թույլ տալ ազգանունների ընդունումը կամ օգտագործումը  
տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով:

## Հոդված 11 Լրատվամիջոցներ

1. Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները  
գործածողների համար այն տարածքում, որտեղ տվյալ լեզուները  
գործածվում են, յուրաքանչյուր լեզվի դիրքին համաձայն և այնքանով,  
որքանով պետական մարմինները ուղղակիորեն կամ անուղղակիորեն  
իրավասու են, լիազորություն ունեն կամ որևէ դեր են խաղում այս ոլորտում, և  
հարգելով լրատվամիջոցների անկախության և ինքնավարության սկզբունքը,  
Կողմերը պարտավորվում են՝

ա/ այնքանով, որքանով ռադիոն և հեռուստատեսությունը  
կատարում են հասարակական ծառայության առաքելություն՝

ի. երաշխավորել ամենաքիչը մեկ ռադիոկայանի և մեկ  
հեռուստաալիքի ստեղծումը տարածաշրջանային կամ  
փոքրամասնությունների լեզուներով, կամ

ii. աջակցել և/կամ հեշտացնել ամենաքիչը մեկ ռադիոկայանի և  
մեկ հեռուստաալիքի ստեղծումը տարածաշրջանային կամ  
փոքրամասնությունների լեզուներով, կամ

iii. ապահովել համապատասխան որոշումներ, որպեսզի  
հաղորդավարները առաջարկեն ծրագրեր տարածաշրջանային կամ  
փոքրամասնությունների լեզուներով,

թ/ i. աջակցել և/կամ հեշտացնել ամենաքիչը մեկ  
ռադիոկայանի ստեղծումը տարածաշրջանային կամ  
փոքրամասնությունների լեզուներով, կամ

ii. աջակցել և/կամ հեշտացնել ռադիոծրագրերի կանոնավոր  
հեռարձակումը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների  
լեզուներով,

զ/ i. աջակցել և/կամ հեշտացնել ամենաքիչը մեկ  
հեռուստաալիքի ստեղծումը տարածաշրջանային կամ  
փոքրամասնությունների լեզուներով, կամ

ii. աջակցել և/կամ հեշտացնել կանոնավոր հեռուստածրագրերի  
հեռարձակումը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների  
լեզուներով,

η/      աջակցել և/կամ հեշտացնել տեսողական և տեսալսողական աշխատանքների արտադրությունը և տարածումը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով,

ե/      i.      աջակցել և/կամ հեշտացնել ամենաքիչը մեկ թերթի ստեղծումը և/կամ պահպանումը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ

ii.      աջակցել և/կամ հեշտացնել թերթերի հոդվածների կանոնավոր հրատարակումը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով,

գ/      i.      ծածկել այն լրատվամիջոցների հավելյալ ծախսերը, որոնք օգտագործում են տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուն, չնայած որ օրենքը սովորաբար ապահովում է ֆինանսական աջակցություն տվյալ լրատվամիջոցներին, կամ

ii.      կիրառել գոյություն ունեցող միջոցները տեսալսողական արտադրանքների ֆինանսական աջակցության համար տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով.

է/      աջակցել այն լրագրություն և լրատվամիջոցների այլ անձնակազմների ուսուցմանը, որոնք գործածում են տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները:

2. Կողմերը պարտավորվում են երաշխավորել ռադիոյի և հեռուստատեսության հեռարձակումների անմիջական ստացման ազատությունը հարևան երկրներից այն լեզվով, որը օգտագործվում է տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվին համարժեք կամ նույնական լեզվով, և չհակառակվել տվյալ լեզվով ռադիո և հեռուստատեսային հաղորդումների վերահաղորդումներին հարևան երկրներից:

Այսուհետև նրանք պարտավորվում են երաշխավորել, որ ոչ մի սահմանափակում չի լինի գրավոր նամուլում խոսքի ազատության և տեղեկատվության ազատ շրջանառության հետ կապված՝ այն լեզվով, որը գործածվում է տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվին համարժեք կամ նույնական ձևով:

Վերոհիշյալ ազատությունների իրականացումը (երբ այն իրականացվում է պատասխանատվությամբ և պարտավորություններով) կարող է ենթակա լինել նման ձևականությունների, պայմանների, սահմանափակումների կամ տուգանքների, որոնք սահմանված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդականություն ազգային անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակական անվտանգության, անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության և բարձերի պաշտպանության, այլոց հաճրավի կամ իրավունքների պաշտպանության, զաղունի տեղեկության արտահոսքի կանխման կամ դատավորների հեղինակության և անկողմնակալության պահպանան նպատակով:

3. Կողմերը պարտավորվում են երաշխավորել, որ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները գործածողների

շահերը ներկայացված են կամ հաշվի են առնվում օրենքի համաձայն ստեղծված մարմինների կողմից, որոնք պատասխանատվություն են կրում լրատվամիջոցների ազատության և բազմակարծության երաշխավորման համար:

## Հոդված 12 Մշակութային գործունեություն և հնարավորություններ

1. Այն տարածքում, որտեղ նման լեզուները գործածվում են, և այնքանով, որքանով պետական մարմինները իրավասու են, լիազորություն ունեն կամ որևէ դեր են խաղում այդ բնագավառում, հատկապես գրադարանների, տեսագրադարանների, մշակութային կենտրոնների, թանգարանների, արխիվների, ակադեմիաների, բատրոնների և կինոռատրոնների, ինչպես նաև գրական աշխատությունների և կինոնկարների արտադրության, մայրենի լեզվով մշակութային գործունեության, փառատոնների և մշակութային արդյունաբերությունների, ներառյալ, *inter alia*, նոր տեխնոլոգիաների կիրառման առնչությամբ, Կողմերը պարտավորվում են՝

ա/ խրախուսել արտահայտման ձևերին և նախաձեռնություններին, որոնք բնորոշ են տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներին, ինչպես նաև զարգացնել տարբեր միջոցներ՝ այդ լեզուներով արտադրվող աշխատանքները մատչելի դարձնելու համար,

թ/ զարգացնել այլ լեզուներով տարբեր միջոցներ՝ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով ստեղծագործությունները մատչելի դարձնելու համար՝ աջակցելով և զարգացնելով թարգմանչական գործը, ֆիլմերի կրկնօրինակումը, հետհամաժամանակացումը և ենթավերնագրերի հետ կապված գործունեությունը,

զ/ խրանել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով ստեղծագործությունների մատչելիությունը՝ աջակցելով և զարգացնելով թարգմանչական գործը, ֆիլմերի կրկնօրինակումները, հետհամաժամանակացումը և ենթավերնագրերի հետ կապված գործունեությունը,

թ/ երաշխավորել, որ տարբեր տեսակի մշակութային գործունեության կազմակերպման և աջակցման համար պատասխանատու մարմինները համապատասխան բոլյտվություն կտան, որպեսզի տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների և մշակությի զիտեսալը և գործածումը միավորվեն այն նախաձեռնություններին, որոնք ձեռնարկվում են նրանց կողմից, կամ որոնց համար նրանք աջակցություն են տրամադրում,

ե/ ձեռնարկել միջոցներ՝ երաշխավորելու, որ մշակութային գործունեությունների կազմակերպման համար պատասխանատու կամ նրանց աջակցող մարմինները իրենց տրամադրության տակ կունենան

տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներին, ինչպես նաև մնացած բնակչության լեզվին (լեզուներին) տիրապետող անձնակազմ,

գ/ աջակցել տվյալ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուն գործածողների ներկայացուցիչների ուղղակի մասնակցությունը մշակութային գործունեության իրականացման և պլանավորման գործում,

է/ խրանել և/կամ հեշտացնել այն մարմնի կամ մարմինների ստեղծումը, որոնք պատասխանատու կլինեն տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով արտադրված աշխատանքների հավաքման, կրկնօրինակման, ներկայացման կամ հրապարակման համար,

լ/ անհրաժեշտության դեպքում ստեղծել և/կամ խրանել ու ֆինանսավորել բարգմանչական և տերմինաբանական հետազոտական ծառայությունները, մասնավորապես, յուրաքանչյուր տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվում վարչական, առևտրական, տնտեսական, հասարակական, տեխնիկական կամ իրավական տերմինաբանության պահպանման և զարգացման նկատառումով:

2. Տարածաշրջանային և փոքրամասնությունների լեզուները ավանդականորեն գործածող տարածքներից տարբեր տարածքների առնչությամբ Կողմերը պարտավորվում են բոլոր տալ, աջակցել և/կամ ապահովել համապատասխան մշակութային գործունեություն և հնարավորություններ, նախորդ կետի համաձայն, եթե տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուն գործածողների թիվը բավարար է:

3. Իրենց մշակութային քաղաքականությունը արտասահմանում վարելու նպատակով Կողմերը պարտավորվում են ապահովել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները և նրանցով արտահայտված մշակույթները:

### Հոդված 13 Տնտեսական և հասարակական կյանք

1. Տնտեսական և հասարակական գործունեության բնագավառում ամբողջ երկրի տարածքում Կողմերը պարտավորվում են.

ա/ իրենց օրենսդրությունից հանել որևէ կետ, որն առանց արդարացվող պատճառների արգելում կամ սահմանափակում է տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվի օգտագործումը տնտեսական կամ հասարակական կյանքին վերաբերող փաստաթղթերում, մասնավորապես՝ աշխատանքի ընդունման պայմանագրերում և տեխնիկական փաստաթղթերում, ինչպիսիք են հրահանգները ապրանքների կամ սարքավորումների օգտագործման համար,

բ/ արգելել ընկերությունների ներքին կանոնակարգերում և մասնավոր փաստաթղթերում տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների օգտագործումը (առնվազն նույն լեզուն գործածողների մոտ) չընդունող կամ սահմանափակող որևէ կետ մտցնելը,

գ/ ընդունմանալ տնտեսական կամ հասարակական գործունեության հետ կապված՝ տարածաշրջանային կամ

փոքրամասնությունների լեզուների օգտագործմանը խոչընդոտող պրակտիկային,

η/ հեշտացնել և/կամ աջակցել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների օգտագործմանը վերոնշյալ ենթակետերում սահմանված միջոցներից բացի այլ միջոցներով:

2. Տնտեսական և հասարակական գործունեության առնչությամբ, այնքանով, որքանով պետական մարմինները իրավասու են, տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները օգտագործող տարածքում հնարավորության դեպքում Կողմերը պարտավորվում են.

ա/ իրենց ֆինանսական և բանկային կանոնակարգերում ներառել այնպիսի դրույթներ, որոնք առևտրական աշխատանքի հետ համատեղելի ընթացակարգային մեթոդներով քոյլ են տալիս տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների օգտագործումը վճարման ձևերի (չեկեր) կամ այլ ֆինանսական փաստաթղթերի կազմնան ժամանակ, կամ, հնարավորության դեպքում, երաշխավորել նման դրույթների իրականացումը,

թ/ տնտեսական և հասարակական հատվածներում իրենց անմիջական (պետական հատված) հսկողության տակ կազմակերպել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների օգտագործումը խթանող գործունեությունները,

զ/ երաշխավորել, որ հասարակական խնամքի հիմնարկությունները (ինչպիսիք են հիվանդանոցները, ծերանոցները, հանրակացարանները) հնարավորություն կտան ընդունել և խնամել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով խոսող անձանց, որոնք խնամքի կարիք ունեն վատառողջության, ծերության կամ այլ պատճառներով,

η/ համապատասխան միջոցներով երաշխավորել, որ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով նույնպես կկազմվեն անվտանգության հրահանգներ,

թ/ մատչելի դարձնել իրավասու պետական մարմինների կողմից սպառողների իրավունքների վերաբերյալ տրված տեղեկությունը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով:

#### Հոդված 14 Միջսահմանային փոխանակումներ

##### Կողմերը պարտավորվում են՝

ա/ կիրառել գոյություն ունեցող երկկողմանի և բազմակողմանի համաձայնագրեր, որոնք իրենց կկապեն այն պետությունների հետ, որտեղ այդ լեզուն գործածվում է նույնատիպ և նույնական ձևով, կամ, եթե անհրաժեշտ է, կնքել նման համաձայնագրեր՝ այդ պետություններում միևնույն լեզուվ խոսդների միջև կապերի հաստատմանը նպաստելու նպատակով՝ նշակութային, կրթական, տեղեկատվական, մասնագիտական ուսուցման և մշտական կրթության բնագավառներում,

թ/ ի շահ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների՝ հեշտացնել և/կամ խրանել միջսահմանային համագործակցությունը, մասնավորապես, մարզային կամ տեղական իշխանությունների միջն, որոնց տարածքում գործում է միևնույն լեզուն նմանատիպ կամ նույնական ձևով:

## Մաս 4 Խարտիայի կիրառությունը

### **Հոդված 15 Պարբերական գեկույցներ**

1. Կողմերը պետք է Նախարարների կոմիտեի կողմից սահմանված կարգով Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին պարբերաբար գեկույցներ ներկայացնեն սույն Խարտիայի II մասի համաձայն իրենց վարած քաղաքականության և այն միջոցառումների մասին, որոնք ձեռնարկվել են նրանց կողմից ընդունված III մասի դրույթների կիրառման համար: Առաջին գեկույցը պետք է ներկայացվի շահագրգիռ Կողմի նկատմամբ Խարտիայի ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում, մյուս գեկույցները՝ առաջին գեկույցից հետո՝ 3 տարին մեկ:

2. Կողմերը պետք է հրապարակեն իրենց գեկույցները:

### **Հոդված 16 Զեկույցների քննում**

1. 15-րդ հոդվածի համաձայն Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ներկայացված զեկույցները պետք է քննվեն 17-րդ հոդվածի համաձայն հաստատված փորձագետների կոմիտեի կողմից:

2. Որևէ Կողմում օրինականորեն հաստատված մարմինները կամ ընկերակցությունները կարող են փորձագետների կոմիտեի ուշադրությունը հրավիրել սույն Խարտիայի III մասի համաձայն տվյալ Կողմի նախաձեռնած պարտավորությունների հետ կապված հարցերի վրա: Շահագրգիռ Կողմի հետ խորհրդակցելուց հետո փորձագետների կոմիտեն կարող է ներքոնշյալ երրորդ կետում սահմանված գեկույցը կազմելիս հաշվի առնել այդ տեղեկությունները: Այս մարմինները կամ ընկերակցությունները կարող են հաշվետվություններ ներկայացնել II մասի համաձայն Կողմի վարած քաղաքականության վերաբերյալ:

3. Առաջին կետում նշված գեկույցների և 2-րդ կետում նշված տեղեկատվության հիմնա վրա փորձագետների կոմիտեն պետք է պատրաստի հաշվետվություն Նախարարների կոմիտեի համար: Զեկույցը կուղեկցվի մեկնարանություններով, որոնք պետք է կատարեն Կողմերը, և որոնք կարող են հրապարակվել Նախարարների կոմիտեի կողմից:

4. 3-րդ կետում նշված գեկույցը պետք է մաճրամասնորեն պարունակի փորձագետների կոմիտեի կողմից Նախարարների կոմիտեին ուղղված առաջարկությունները՝ վերջինիս կողմից մեկ կամ մի քանի Կողմերին տրվող հանձնարարականների պատրաստման համար:

5. Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը երկամյա մանրամասն հաշվետվություն պետք է ներկայացնի Խորհրդարանական ասամբլեային Խարտիայի կիրառման վերաբերյալ:

## Հոդված 17 Փորձագետների կոմիտե

1. Փորձագետների կոմիտեն պետք է լճղգրկի յուրաքանչյուր Կողմից մեկ անդամ, որը պետք է նշանակվի Նախարարների կոմիտեի կողմից, Խարտիայի հետ կապված գործերում նկատելի իրազեկություն և գերազանց ազնվություն ունեցող անդամների ցանկից, որոնց առաջարրում է շահագրգիռ Կողմը:

2. Կոմիտեի անդամները պետք է նշանակվեն վեց տարի ժամկետով և պետք է ունենան վերանշանակվելու իրավունք: Այն անդամը, որն ի վիճակի չէ աշխատելու մինչև իր պաշտոնի ժամկետի ավարտը, կփոխարինվի առաջին կետում նշված լնբացակարգին համապատասխան, իսկ փոխարինող անդամը պետք է ավարտի իր նախորդի պաշտոնի սահմանված ժամկետը:

3. Փորձագետների կոմիտեն պետք է լճղունի լնբացակարգային կանոններ: Կոմիտեի քարտուղարությունը պետք է ապահովվի Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի կողմից:

## Մաս 5 Եզրափակիչ դրույթներ

### Հոդված 18

Խարտիան բաց է Եվրոպայի խորհրդի անդամ երկրների ստորագրման համար: Այն ենթակա է վավերացնան, լճղունման կամ հաստատման: Վավերագրերը, լճղունման կամ հաստատման մասին փաստաթորթերը պետք է ի պահ տրվեն Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին:

### Հոդված 19

1. Սույն Խարտիան ուժի մեջ է մտնում Եվրոպայի խորհրդի հինգ անդամ պետությունների՝ 18-րդ հոդվածի դրույթների համաձայն Խարտիային հետևելու մասին համաձայնություն տալուց հետո եռամսյա ժամկետին հաջորդող ամսվա առաջին օրվանից:

2. Ցանկացած անդամ պետության համար, որը համաձայնություն է տվել միանալու Խարտիային հետագայում, Խարտիան ուժի մեջ է մտնում վավերագրիրը, լճղունման կամ հաստատման մասին փաստաթորթը ի պահ տալուց հետո եռամսյա ժամկետին հաջորդող ամսվա առաջին օրվանից:

## **Հոդված 20**

1. Սույն Խարտիայի ուժի մեջ մտնելուց հետո Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն կարող է հրավիրել Եվրոպայի խորհրդի ցանկացած ոչ անդամ պետության՝ միանալու սույն Խարտիային:

2. Յուրաքանչյուր միացող պետության նկատմամբ Խարտիան ուժի մեջ է մտնում Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին՝ միանալու մասին փաստաթուղթը ի պահ տալու օրվանից հետո եռամսյա ժամկետին հաջորդող ամսվա առաջին օրվանից:

## **Հոդված 21**

1. Յուրաքանչյուր պետություն կարող է ստորագրման ժամանակ կամ վավերագիրը, ընդունման, հաստատման կամ միանալու մասին փաստաթուղթը ի պահ տալու ժամանակ կատարել մեկ կամ ավել վերապահում սույն Խարտիայի 7-րդ հոդվածի 2-ից 5-րդ կետերի կապակցությամբ: Այլ վերապահումներ չեն կարող կատարվել:

2. Նախորդ կետի համաձայն վերապահում կատարած յուրաքանչյուր պայմանագրովող պետություն կարող է ամբողջովին կամ մասամբ հետ վերցնել այն Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին հասցեազրկած ծանուցման միջոցով: Հետ վերցնելը ուժի մեջ է մտնում նման ծանուցումը գլխավոր քարտուղարի ստանալու օրվանից:

## **Հոդված 22**

1. Յուրաքանչյուր Կողմ ցանկացած ժամանակ կարող է չեղյալ համարել սույն Խարտիան Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին հասցեազրկած ծանուցման միջոցով:

2. Նման չեղյալ հայտարարումը ուժի մեջ կմտնի ծանուցումը գլխավոր քարտուղարի ստանալու օրվանից վեցամսյա ժամկետին հաջորդող ամսվա առաջին օրը:

## **Հոդված 23**

Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը ծանուցում է Խորհրդի անդամ պետություններին և Խարտիային միացած յուրաքանչյուր պետության՝

ա/ ցանկացած ստորագրության մասին,

բ/ վավերագրի, ընդունման, հաստատման կամ միացման մասին փաստաթուղթը ի պահ տալու մասին,

գ/ 19-րդ և 20-րդ հոդվածների համաձայն սույն Խարտիան ուժի մեջ մտնելու յուրաքանչյուր ամսաթվի մասին,

դ/ 3-րդ հոդվածի, 2-րդ կետի դրույթների համաձայն յուրաքանչյուր ծանուցման մասին,

Ե/ սույն Խարտիային առնչվող այլ ակտի, ծանուցման կամ հաղորդման մասին:

Ի վկայումն վերոհիշյալի՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով, ստորագրեցին սույն Խարտիան:

Կատարված է 1992 թվականի նոյեմբերի 5-ին՝ Ստրաստրուգում, մեկ օրինակով, անզերեն և ֆրանսերեն, ընդ որում երկու տեքստերն եւ հավասարազոր են, որոնք ի պահ կտրվեն Եվրոպայի խորհրդի արխիվներին։ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը հաստատված պատճենները ուղարկում է Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ պետության և յուրաքանչյուր պետության, որը իրավիրվել է՝ միանալու սույն Խարտիային։

**Համաձայն Խարտիայի 3-րդ հոդվածի 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետությունը հայտարարում է, որ «Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի» իմաստով Հայաստանի Հանրապետության փոքրամասնությունների լեզուներ են ասորերենը, եզրիերենը, հունարենը, ռուսերենը և քրդերենը։**

**Համաձայն «Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի» 2-րդ հոդվածի 2-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետությունը հայտարարում է, որ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիան կիրառել ասորերենի, եզրիերենի, հունարենի, ռուսերենի և քրդերենի նկատմամբ։**

### Հոդված 8

#### Վրույրյում

1-ին կետի ա-ի և ենթակետ

1-ին կետի բ-ի և ենթակետ

1-ին կետի գ-ի և ենթակետ

1-ին կետի դ-ի և ենթակետ

1-ին կետի ե-ի և ենթակետ

1-ին կետի զ-ի և ենթակետ

### Հոդված 9

#### Դատական մարմիններ

1-ին կետի ա-ի և ենթակետեր

1-ին կետի բ-ի և ենթակետ

1-ին կետի գ-ի և ենթակետեր

1-ին կետի դ-ի և ենթակետեր

1-ին կետի ե-ի և ենթակետեր

3-րդ կետ

### *Հոդված 10*

Վարչական մարմիններ և հասարակական ծառայություններ  
 1-ին կետի ա-ի և բ-ի մասին պահանջումներ  
 1-ին կետի «ք» ենթակետ  
 2-րդ կետի «ք» ենթակետ  
 2-րդ կետի «զ» ենթակետ  
 2-րդ կետի «է» ենթակետ  
 3-րդ կետի «զ» ենթակետ  
 4-րդ կետի «զ» ենթակետ  
 5-րդ կետ

### *Հոդված 11*

Լրատվամիջոցներ  
 1-ին կետի ա-ի մասին պահանջումներ  
 1-ին կետի բ-ի մասին պահանջումներ  
 1-ին կետի գ-ի մասին պահանջումներ  
 1-ին կետի ե-ի մասին պահանջումներ  
 2-րդ կետ  
 3-րդ կետ

### *Հոդված 12*

Մշակութային գործունեություն և հմարավորություններ  
 1-ին կետի ա, ի, զ ենթակետներ  
 2-րդ կետ  
 3-րդ կետ

### *Հոդված 13*

Տնտեսական և հասարակական կյանք  
 1-ին կետի «ք» ենթակետ  
 1-ին կետի «զ» ենթակետ  
 1-ին կետի «գ» ենթակետ  
 2-րդ կետի «ք» ենթակետ  
 2-րդ կետի «զ» ենթակետ

### *Հոդված 14*

Միջասահմանային փոխանակումներ  
 «ա» կետ  
 «ք» կետ»

## ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ<sup>38</sup>

### Ներածություն

1. Եվրոպական շատ երկրներ իրենց տարածքներում ունեն տեղայնացված բնիկ խմբեր, որոնք խոսում են բնակչության մեծամասնությունից տարրեր լեզվով: Սա հետևանք է պատմական գործընթացների, որոնց պատճառով պետությունների կազմավորումը տեղի չի ունեցել սուկ լեզուների հիման վրա, և փոքր հանրությունները կլանվել են ավելի մեծերի կողմից:
2. Այդ տարածքային կամ փոքրամասնությունների լեզուների ժողովրդագրական իրավիճակը միմյանցից մեծապես զանազանվում է՝ մի քանի հազար խոսողներից մինչև մի քանի միլիոն, և այդպիսին է նաև նրանց վերաբերյալ յուրաքանչյուր պետության օրենսդրությունն ու պարագայիկան: Այնուամենայնիվ, ընդհանուրը նրանցից շատերի համար այն է, որ նրանք գտնվում են քիչ թե շատ անապահով վիճակում: Ավելին, ինչպիսին էլ եղած լինի վիճակը անցյալում, ներկայումս այս տարածքային կամ փոքրամասնությունների լեզուների վրա կախված վտանգը հաճախ պայմանավորված է գրեթե նույնքան ժամանակակից քաղաքակրթության և մանավանդ զանգվածային լրատվամիջոցների անխուսափելի համահարթեցնող ազդեցությամբ, որքան և ձուլման պետական քաղաքականությամբ ու անբարեկամական միջավայրով:
3. Երկար տարիներ Եվրոպայի խորհրդի զանազան մարմիններ մտահոգություն են հայտնել տարածքային կամ փոքրամասնությունների լեզուների իրավիճակի վերաբերյալ: Ճիշտ է, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան իր 14-րդ հոդվածում ձևակերպել է ոչ խտրականության սկզբունքը, մասնավորապես, անօրինական համարելով, գոնե Կոնվենցիայով երաշխավորված իրավունքներից ու ազատություններից օգտվելու առումով, որեւ խտրականություն լեզվի կամ ազգային փոքրամասնության պատկանելու հիմունքով: Որքան էլ դա կարեւոր լինի, այսուամենայնիվ, դա միայն իրավունք է տալիս անհատներին չենթարկվել խտրականության, բայց չի ստեղծում դրական պաշտպանության հանակարգ փոքրամասնությունների լեզուների և դրանք գործածող հանրությունների համար, ինչպես նշել է Խորհրդակցական վեհաժողովը դեռևս 1957 թվականին իր 136 որոշման մեջ: 1961 թվականին 285 Հանձնարարականի մեջ Խորհրդարանական վեհաժողովը պահանջել է ի լրացում Եվրոպական կոնվենցիայի մշակել մի պաշտպանական միջոց, որի նպատակն էր երաշխավորել փոքրամասնություններին օգտվելու իրենց մշակույթից, գործածելու իրենց լեզուն, հիմնելու իրենց դպրոցները և այլն:

<sup>38</sup> Ոչ պաշտոնական թարգմանություն, տես՝ [http://www.coe.int/t/dg4/education/minlang/textcharter/CharterExpl\\_hy.pdf](http://www.coe.int/t/dg4/education/minlang/textcharter/CharterExpl_hy.pdf)

4. Այսուհետև, 1981 թվականին Եվրոպայի խորհրդարանական վեհաժողովը ընդունել է 928 Հանձնարարականը Եվրոպայի փոքրամասնությունների լեզուների և բարբառների կրթական և մշակութային խնդիրների վերաբերյալ, և նույն տարում Եվրոպական խորհրդարանը որոշում է կայացրել նույն հարցերի վերաբերյալ: Երկու փաստաթուղթն եւ եզրակացնում են, որ անհրաժեշտ է խարտիա կազմել տարածքային կամ փոքրամասնությունների լեզուների և մշակույթների մասին:

5. Հիմնվելով այս հանձնարարականների և որոշումների վրա, Եվրոպայի տեղական և տարածքային իշխանությունների մշտական կոնֆերանսը (ԵՏՏԻԿ) որոշել է ձեռնարկել տարածքային կամ փոքրամասնությունների լեզուների մասին Եվրոպական խարտիայի պատրաստումը այն նկատառումով, որ տեղական և տարածքային իշխանությունները պետք է դեռ ունենան լեզուների և մշակույթների հարցում տեղական կամ տարածքային մակարդակով:

6. Խարտիայի իրական կազմումից առաջ նախնական աշխատանքը ներառում էր Եվրոպայում տարածքային կամ փոքրամասնությունների լեզուների առկա վիճակի դիտարկումը և 1984 թ. իրապարակային լսումները, որոնց մասնակցել են ավելի քան 40 լեզուների 250 ներկայացուցիչներ: Սկզբնական նախագիծը կազմվել է փորձագետների խմբի օգնությամբ: Ելնելով Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի և Եվրոպական խորհրդարանի շրուացող և տևական հետաքրքրությունից այս թեմայի վերաբերյալ՝ սրանցից առաջինը մասնակցել է նախնական նախագծի կազմնանքը, և կապ է պահպանվել երկրորդի գիտակ անդամների հետ:

7. Վերջապես, Մշտական կոնֆերանսը իր 192 որոշման մեջ (1988) առաջարկել է խարտիայի տերստը, որը նախատեսված էր կոնվենցիայի կարգավիճակ ունենալ:

8. Հետեւելով այս նախաձեռնությանը, որին աջակցում էր Խորհրդարանական վեհաժողովը իր հ. 142 Կարծիքով (1988)` Նախարարների կոմիտեն հիմնեց Եվրոպայի տարածքային կամ փոքրամասնությունների լեզուների փորձագետների հատուկ կոմիտե (CAHLR)` նրա վրա դնելով խարտիայի նախագծի պատրաստման պատասխանատվությունը, նկատի ունենալով Մշտական կոնֆերանսի կազմած տերստը: Միջկառավարական այս կոմիտեն սկսեց աշխատել 1989 թ. Վերջերից: Նկատի ունենալով նրանց կարևոր դերը նախագծին աջակցելու գործում՝ թե՛ ԵՏՏԻԿ-ն, թե՛ Խորհրդարանական վեհաժողովը ներկայացուցիչներ ունեին նրա հանդիպումներում: Խարտիայի նախագծի վերջնական տերստը Նախարարների խորհրդին 1992 թ. ընճարկման ներկայացնելուց առաջ CAHLR-ն խորհրդակցել և հաշվի էր առել Եվրոպական խորհրդի մի շարք մասնագիտական կոմիտեների (մշակութային, կրթական, մարդու իրավունքների, իրավական

համագործակցության, հանցագործության խնդիրների, տեղական և տարածքային իշխանությունների, լրատվամիջոցների), ինչպես նաև ժողովրդավարությունը օրենքի միջոցով Եվրոպական հանձնաժողովի կարծիքները:

9. Խարտիան ընդունվեց որպես կոնվենցիա Նախարարների կոմիտեի կողմից Նախարարների պատգամավորների 478-րդ նիստում 1992 թ. հունիսի 25-ին և բացվեց ստորագրման համար 1992 թ. նոյեմբերի 5-ին Ստրասբուրգում:

### **Ընդհանուր նկատառումներ Խարտիայի նպատակները**

10. Ինչպես նշված է նախարանում, խարտիայի գերադաս նպատակը մշակութային է: Այն նախատեսված է պաշտպանելու և զարգացնելու տարածքային կամ փորձամասնությունների լեզուները որպես Եվրոպայի մշակութային ժառանգության վտանգի տակ գտնվող բնագավառ: Այս պատճառով այն ոչ միայն պարունակում է դրույթ այդ լեզուների գործածությանը վերաբերող ոչ խտրականության մասին, այլև նախատեսում է նրանց գործուն աշակցություն ցույց տալու միջոցառումներ, դրա նպատակն է, որքանով այդ բանականորեն հնարավոր է, երաշխափորել տարածքային կամ փորձամասնությունների լեզուների կիրառումը կրթության և լրատվության բնագավառում և բույլատրել նրանց գործածությունը իրավական և վարչական համակարգերում, տնտեսական ու սոցիալական կյանքում և մշակութային գործունեության մեջ: Միայն այս ճանապարհով այս լեզուների համար կարելի է, որտեղ անհրաժեշտ է, փոխսհատուցել անցյալի անբարենպաստ պայմանները և պահպանել ու զարգացնել դրանք որպես Եվրոպայի մշակութային ինքնատիպության կենդանի կողմ:

11. Խարտիան առաջարկում է պաշտպանել և զարգացնել տարածքային կամ փորձամասնությունների լեզուները և ոչ լեզվական փորձամասնություններին: Այս պատճառով շեշտը դրվում է մշակութային կողմի և տարածքային կամ փորձամասնությունների լեզուների գործածության վրա՝ նրանցով խոսողների կյանքի բոլոր բնագավառներում: Խարտիան չի սահմանում որևէ անհատական կամ կոլեկտիվ իրավունքներ տարածքային կամ փորձամասնությունների լեզուներով խոսողների համար: Սակայն կողմերի պարտավորությունները այդ լեզուների կարգավիճակի վերաբերյալ և ներքին օրենսդրությունները, որը պետք է ընդունվի խարտիայի համապատասխան, ակնհայտ ազդեցություն կունենան նշված հանրությունների իրավիճակի և նրանց անհատ անդամների վրա:

12. ԵՏՏԻԿ-ն մշակել և ներկայացրել էր խարտիայի իր նախագիծը նախքան Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի լրամատիկ փոփոխությունները և այդ ժամանակ արդեն Եվրոպայի խորիրդի անդամ երկրների կարիքների լույսի տակ: Չնայած դրան, խարտիայի տեղին լինելը և նրա մոտեցումը

Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների իրավիճակին այնուհետև ապացուցվել է այս բնագավառում Եվրոպական չափորոշիչների հաստատման նկատմամբ այդ երկրներից մի քանիսի ներկայացուցիչների արտահայտած նշանակալից հետաքրքրությամբ:

13. Թեև խարտիայի նախագիծը չի անդրադառնում ազգությունների խնդրին, որոնք ձգտում են անկախության կամ սահմանների փոփոխության, պետք է հուսալ, որ նա օգնելու է չափավոր և իրազործելի ձևերով մեղմելու փոքրամասնությունների պրոբլեմը, որոնց լեզուն նրանց տարրերակիչ հատկանիշն է՝ հնարավորություն տալով նրանց լավ զգալ այն երկրում, որտեղ պատմությունը նրանց տեղադրել է: Հեռու լինելով ապահնտեզրացնող միտումներն ուժեղացնելուց՝ կյանքի տարրեր ոլորտներում տարածքային կամ փոքրամասնությունների լեզուների գործածնան հնարավորության մեծացումը կարող է միայն քաջալերել դրանցով խոսող խմբերին մոռանալու անցյալի վրդովմունքները, որոնք խանգարում էին նրանց տեղը գտնել այն երկրում, որտեղ նրանք ապրում են, և ընդհանրապես Եվրոպայում:

14. Այս առումով պետք է լնդգծել, որ խարտիան չի վերաբերում պաշտոնական լեզուների և տարածքային կամ փոքրամասնությունների լեզուների փոխարարելությանը մրցակցության կամ հակամարտության տեսանկյունից: Ավելի ճիշտ, նա միտումնավոր որդեգրում է մշակույթների փոխազդեցության և քազմակեցության մոտեցումը, որտեղ ամեն մի կարգի լեզու ունի իր ուրույն տեղը: Այս մոտեցումը լիակատար կերպով համապատասխանում է Եվրոպայի խորիրոյի կողմից ավանդաբար պաշտպանվող արժեքներին, և մարդկանց միջև ավելի սերտ հարաբերություններ, Եվրոպայում հարաճուն համագործակցություն և մշակույթների փոխազդեցության հիմքի վրա երկրի բնակչության տարրեր խմբերի միջև ավելի խոր փոխվարժություն ստեղծելու նրա ջանքերին:

15. Խարտիան չի առնչվում նոր, հաճախ ոչ Եվրոպական լեզուների իրավիճակին, որոնք կարող են հայտնվել Խարտիան ստորագրած երկրներում որպես արդյունք զաղթի նոր հոսքերի, որոնք հաճախ ծագում են տնտեսական դրագատճառներից: Այդպիսի լեզուներով խոսող բնակչության դեպքում ծագում են ինտեգրացիայի առանձնահատուկ հիմնախնդիրներ: CAHLR-ն այն տեսակետին է, որ այս հիմնախնդիրներն արժանի են առանձին մոտեցման, եթե անհրաժեշտ է, հատուկ իրավական վաստարդում:

16. Վերջապես, պետք է նշել, որ Եվրոպայի խորիրոյի մի քանի անդամ պետություններ արդեն վարում են այնպիսի քաղաքականություն, որն ավելի հեռուն է գնում, քան խարտիայի որոշ պահանջները: Դա ոչ մի դեպքում չի նշանակում, թե խարտիայի դրույթները պետք է նվազեցնեն այդ անելու իրենց իրավունքը:

## **Հիմնական հասկացություններն ու մոտեցումը**

### ***Lեզվի հասկացությունը***

17. Լեզվի հասկացությունը, ինչպես այն գործածվում է խարտիայում, կենտրոնանում է զիսավորապես լեզվի մշակութային գործառույթի վրա: Այդ պատճառով այն չի բնորոշվում սուբյեկտիվորեն այնպես, որ սրբագրութիւն անհատական իրավունքը, այսինքն «սեփական լեզվով» խոսելու իրավունքը, բողնելով, որ յուրաքանչյուր անհատ ինքը սահմանի այդ լեզուն: Ոչ էլ կարելի է հենվել սոցիալ-քաղաքական կամ էթնիկական բնորոշման վրա՝ լեզուն ներկայացնելով որպես առանձնահատուկ սոցիալական կամ էթնիկական խմբի արտահայտման միջոց: Հետևաբար, խարտիան կարող է ձեռնպահ մնալ լեզվական փոքրամասնության հասկացությունը սահմանելուց, քանի որ նրա նպատակը էթնիկական և/կամ մշակութային փոքր խմբերի իրավունքները նախատեսելը չէ, այլ պաշտպանելն ու զարգացնելը տարածքային կամ փոքրամասնությունների լեզուները որպես այդպիսիք:

### ***Կիրառվող տերմինարանությունը***

18. Գերադասելով այլ արտահայտություններից, ինչպես «նվազ տարածված լեզուներ», CAHLR-ն նախընտրել է «տարածքային կամ փոքրամասնությունների լեզուներ» տերմինը: «Տարածքային» ածականը նշանակում է որևէ պետության տարածքի սահմանափակ մասում խոսվող լեզուները, ընդ որում, նրա ներսում դրանով կարող է խոսել քաղաքացիների մեծ մասը: «Փոքրամասնություն» տերմինը վերաբերում է այն իրավիճակներին, որտեղ կամ այդ լեզվով խոսում են անձինք, որոնք կենտրոնացած չեն պետության տարածքի որևէ հատուկ մասում, կամ նրանով խոսում են մի խումբ մարդիկ, որոնք թեև կենտրոնացած են պետության տարածքի մի մասում, բայց քանակապես ավելի փոքր են, քան այդ շրջանի բնակչությունը, որը խոսում է պետության մեծամասնության լեզվով: Երկու ածականն ել հետևաբար վերաբերում են փաստական չափանիշների և ոչ իրավաբանական հասկացությունների և ամեն դեպքում վերաբերում են տվյալ պետության առկա իրավիճակին (օրինակ՝ մի պետության փոքրամասնության լեզուն կարող է լինել մի այլ պետության մեծամասնության լեզու):

*Տարածքային կամ փոքրամասնությունների լեզուների զանազան «կարգերի» միջև տարրերության բացակայությունը*

19. Խարտիայի հեղինակները բախվել են Եվրոպայում տարածքային կամ փոքրամասնությունների լեզուների իրավիճակում առկա մեծ տարրերությունների հիմնախնդիրին: Որոշ լեզուներ գրապում են համեմատաբար ընդարձակ տարածաշրջան, դրանցով խոսում է զգալի թվով բնակչություն, և դրանք ունեն զարգացման որոշակի կարողություն և

մշակութային կայունություն, մյուսներով խոսում է միայն բնակչության շատ փոքր տոկոսը սահմանափակ տարածքում կամ բացահայտ փոքրամասնության շրջանակներում և արդեն գոյատելու ու զարգանալու խիստ բուլացած ներուժով:

20. Այնուամենայնիվ, որոշվեց փորձ չանել սահմանելու լեզուների տարրեր կարգեր՝ նրանց օբյեկտիվ իրավիճակի համապատասխան: Այդպիսի մոտեցումը իրավացի չեր լինի Եվրոպայում լեզվական իրադրության բազմազանության նկատմամբ: Իրականում ամեն մի տարածքային կամ փոքրամասնության լեզու հատուկ դեպք է ներկայացնում, և անհմատ է փորձել դրանք բռնի կերպով մտցնել որոշակի խմբերի մեջ: Ընդունված լուծումն էր պահել միայն տարածքային կամ փոքրամասնության լեզու հասկացությունը, հնարավորություն տալով պետություններին հարմարեցնել իրենց պարտավորությունները ամեն մի տարածքային կամ փոքրամասնության լեզվի իրադրությանը:

### **Եվրոպայի տարածքային կամ փոքրամասնությունների լեզուների ցուցակի բացակայությունը**

21. Խարտիան հատուկ չի նշում, թե որ եվրոպական լեզուներն են համապատասխանում տարածքային կամ փոքրամասնությունների լեզուներ հասկացությանը, ինչպես դա բնորոշված է խարտիայի առաջին հոդվածում: Փաստորեն Եվրոպայի տեղական և տարածքային իշխանությունների մշտական կոնֆերանսի կատարած՝ Եվրոպայի լեզվական իրադրության նախնական դիտարկումը խարտիայի հեղինակներին դրդեց ձեռնպահ մնալ կցելու տարածքային կամ փոքրամասնությունների լեզուների ցուցակը: Որքան էլ փորձառու լինեն նրա կազմողները, այդպիսի ցուցակը անկասկած լայն բանավեճեր կհարուցեր լեզվաբանական և այլ առումներով: Բացի այդ, նրա արժեքը սահմանափակ կլիներ, քանի որ բոլոր դեպքերում խարտիայի III մասի հատուկ միջոցառումների վերաբերյալ մեծ չափով կողմերին է բողնված սահմանելու՝ որ լեզվի նկատմամբ ինչ դրույթ պետք է կիրառվի: Խարտիան առաջադրում է համապատասխան լուծումներ տարածքային կամ փոքրամասնությունների առանձին լեզուների տարբեր իրավիճակների համար, բայց չի կանխորոշում՝ որն է կոնկրետ դեպքի համար հատուկ իրավիճակը:

### **Խարտիայի կառուցվածքը**

22. Մի կողմից՝ խարտիան սահմանում է II մասում շարադրված սկզբունքների ընդհանուր առանցքը, որը վերաբերում է բոլոր տարածքային կամ փոքրամասնությունների լեզուներին: Մյուս կողմից՝ խարտիայի III մասը պարունակում է հատուկ դրույթների մի շարք, որը վերաբերում է հանրության կյանքի տարբեր ոլորտներում տարածքային կամ փոքրամասնությունների լեզուների դիրքին, առանձին պետությունները ազատ են, որոշակի

սահմաններում, որոշելով՝ այդ դրույթներից ո՞րը կարելի է կիրառել իրենց սահմանների ներսում գործածվող լեզուների նկատմամբ: Բացի այդ, դրույթների մի զգալի քանակ ներառում է խստության տարրեր աստիճանների մի քանի այլընտրանք, որոնցից մեկը կարող է կիրառվել «յուրաքանչյուր լեզվի իրադրության համապատասխան»:

23. Այս ձկունությունը հաշվի է առնում տարածքային կամ փորձամասնությունների լեզուների փաստացի իրադրությունների մեջ տարրերությունները (խոսողների թիվը, մասնատվածության աստիճանը և այլն): Այն նաև ուշադրություն է դարձնում շատ դրույթների պահանջած ծախսերի և Եվրոպայի երկրների տարրեր վարչական ու ֆինանսական հնարավորությունների վրա: Այս առումով կարելոր է, որ կողմերը իրավունք ունենան ընդլայնել իրենց պարտավորությունները որոշ ժամանակ անց, եթե այդ բույլ կտան իրենց ֆինանսական հանգամանքները կամ ավելի կատարյալ կդառնա օրենսդրական դաշտը:

24. Վերջապես, խարտիայի IV մասը պարունակում է իրականացումն ապահովող դրույթներ, մասնավորապես, ներառյալ փորձագետների Եվրոպական կոմիտեի ստեղծումը՝ հետևելու համար խարտիայի կիրառմանը:

### **Խարտիայի դրույթների մեկնարանությունը Նախարան**

25. Նախարանը շարադրում է խարտիայի ստեղծման պատճառները և բացատրում նրա հիմնական փիլիսոփայական մոտեցումը:

26. Եվրոպայի խորիրդի նպատակը նրա անդամների միջև ավելի սերտ միասնություն ստեղծելն է՝ նրանց ընդհանուր ժառանգության և իդեալների առաջնորդացի համար: Լեզվական տարրերակվածությունը Եվրոպայի մշակութային ժառանգության առավել արժեքավոր տարրերից մեկն է: Եվրոպայի մշակութային ինքնատիպությունը չի կարող կառուցվել լեզվական համահարթեցման հիմքի վրա: Ընդհակառակը, նրա ավանդական տարածքային կամ փորձամասնությունների լեզուների պաշտպանությունն ու ուժեղացումը նպաստում է այն Եվրոպայի կառուցմանը, որը Եվրոպայի խորիրդի անդամների իդեալներին համապատասխան կարող է հիմնվել միայն բազմակարծության սկզբունքի վրա:

27. Նախարանը հղում է անում Միավորված ազգերի կազմակերպության Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին և Եվրոպայի խորիրդի Մարտու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիային: Բացի այդ, նա մեջքերում է Եվրոպայում անվտանգության և համագործակցության կոնֆերանսի շրջանակներում ընդունված քաղաքական բնույթի պարտավորությունները: Ուշադրության առնելով Եվրոպայի պատմական

տարածքային կամ փոքրամասնությունների լեզուներից մի քանիսի ներկայիս բոլորունը՝ նրանց կրողների նկատմամբ խտրականության արգելումը բավարար պաշտպանություն չէ: Այդ լեզուների կրողների շահերին ու ցանկություններին վերաբերող հատուկ աջակցությունը կարևոր է դրանց պահպանության ու զարգացման համար:

28. Խարտիայի մոտեցումը հարգում է ազգային ինքնիշխանության և տարածքային ամբողջականության սկզբունքները: Յուրաքանչյուր երկրից պահանջվում է հաշվի առնել մշակութային և սոցիալական իրականությունը և հարց չի կարող լինել մերժելու որևէ քաղաքական կամ հաստատադրական կարգ: Ընդհակառակն, անդամ պետությունները ընդունում են տարածքային և պետական կառուցվածքներն այնպես, ինչպես նրանք կամ, ուստի և անհրաժեշտ են համարում ամեն պետության ներսում, քայց համաձայնեցված ձևով միջոցներ ձեռնարկել առաջ մղելու տարածքային կամ փոքրամասնական բնույթ ունեցող լեզուները:

29. Մշակույթների փոխազդեցության և քազմալեզվության սկզբունքների հաստատումը ծառայում է խարտիայի նպատակների ամեն մի թյուրմբունման վերացմանը. խարտիան ոչ մի դեպքում չի ծովում նպաստելու լեզվական խմբերի որևէ կարգի սահմանազատման: Ընդհակառակն, ընդունվում է, որ յուրաքանչյուր երկրում անհրաժեշտ է իմանալ պաշտոնական լեզուն (կամ պաշտոնական լեզուներից մեկը), հետևաբար, խարտիայի դրույթներից ոչ մեկը չպետք է մեկնարանվի որպես պաշտոնական լեզուներն իմանալու դեմ խոչընդոտ հարուցելու մտադրություն:

## Մաս I. Ընդհանուր դրույթներ

### Հոդված 1 - Սահմանումներ

*«Տարածքային կամ փոքրամասնությունների լեզուների» սահմանումը (հոդված 1, կես ա)*

30. Խարտիայում կիրառված սահմանումը շեշտում է երեք տեսանկյուն.

### Պետության քաղաքացիների կողմից ավանդաբար գործածվող լեզուներ

31. Խարտիայի նպատակը չէ լուծել նոր ներգաղթերի երևոյթի հետևանքով ծառացած խնդիրները, որի արդյունքում առաջացել են օտար լեզվով խոսող խմբեր ներգաղթի երկրում, իսկ երբեմն հայրենի երկրում՝ այնտեղ վերադառնալու դեպքում: Սասմավորապես, խարտիան չի անդրադարձում ոչ եվրոպացի խմբերի փաստին, որոնք վերջերս ներգաղթել են Եվրոպա և Եվրոպական որևէ երկրի քաղաքացիություն ստացել: «Եվրոպայի պատմական տարածքային կամ փոքրամասնությունների լեզուներ» (տես

նախարանի երկրորդ պարբերությունը) և պետության մեջ «ավանդաբար գործածվող» լեզուներ (հոդված 1., կետ ա) արտահայտությունները պարզ ցույց են տալիս, որ խարտիան վերաբերում է միայն պատմական լեզուներին, այսինքն՝ այն լեզուներին, որոնք երկար ժամանակից ի վեր խոսվել են տվյալ երկրում:

### *Տարրեր լեզուներ*

32. Այդ լեզուները պետք է հստակորեն տարրերվեն այլ լեզուներից կամ երկրի մնացյալ բնակչության լեզուներից: Խարտիան չի ներառում միևնույն լեզվի տեղական տարրերակները կամ տարրեր բարբառները: Սակայն այն չի արտահայտվում հաճախ քննարկվող այն հարցի վերաբերյալ, թե որ պահից են արտահայտվելու տարրեր ձևերը առանձին լեզու կազմում: Այս հարցը կախված է ոչ միայն ճշգրիտ լեզվաբանական նկատառումներից, այլև սոցիալ-հոգեբանական և քաղաքական երևոյթներից, որոնք կարող են ամեն դեպքի հաճար տարրեր պատասխաններ ունենալ: Ուստի պետք է քողնն յուրաքանչյուր երկրի շահագրգիռ իշխանություններին՝ իրենց սեփական ժողովրդավարական գործընթացների համապատասխան սահմաննելու՝ որ դեպքում է արտահայտվելու ձևը առանձին լեզու կազմում:

### *Տարածքային հիմքը*

33. Խարտիայի ներառած լեզուները առաջին հերթին տարածք ունեցող լեզուներն են, այսինքն՝ այն լեզուները, որոնք պահանջար գործածվում են որոշակի աշխարհագրական շրջանում: Այդ պատճառով խարտիան ձգտում է սահմաննել «այն տարածքը, որտեղ գործածվում է տարածքային կամ փորրամասնության լեզուն»: Դա միայն այն տարածքը չէ, որի ներսում այդ լեզուն գերակշռում է կամ խոսվում մեծամասնության կողմից, քանի որ շատ լեզուներ դարձել են փորրամասնության լեզու նույնիսկ այն շրջաններում, որտեղ նրանք ունեցել են իրենց ավանդական տարածքային հիմքը: Խարտիան զիսավորապես անդրադառնում է ավանդական տարածքային հիմքը ունեցող լեզուներին այն պատճառով, որ միջոցառումների մեծ մասը, որ նա առաջարկում է, անհրաժեշտություն են առաջացնում սահմանելու կիրառման աշխարհագրական տարածքը, որ ամբողջ երկիրը չէ: Ակնհայտ է, որ կան իրավիճակներ, երբ տվյալ տարածքում գործածվում են մեկից ավելի տարածքային կամ փորրամասնության լեզուներ, խարտիան ներառում է և այս իրավիճակները:

### *Տարածքային կամ փորրամասնության լեզվի տարածքի սահմանումը (հոդված 1, կետ բ)*

34. Նկատի առնվող տարածքը այն է, որտեղ նշանակալից չափով գործածվում է տարածքային կամ փորրամասնության լեզուն թեկուզ և միայն փորրամասնության կողմից, և որը համապատասխանում է նրա պատմական

հիմքին: Քանի որ խարտիայում գործածված տերմինները այս տեսակետից անխուսափելիորեն բավականին ճկուն են, ամեն երկրի քողնվում է ավելի ճշգրիտ սահմանելու, խարտիայի ոգով, տարածքային կամ փոքրամասնությունների լեզուների տարածք հասկացությունը՝ հաշվի առնելով 7-րդ հոդվածի 1.ք կետի դրույթները, որը վերաբերում է տարածքային կամ փոքրամասնության լեզուների տարածքի պահպանմանը:

35. Այս դրույթի հիմնական արտահայտությունն է՝ «զանազան պաշտպանական և զարգացման միջոցառումների ձեռնարկումն արդարացնող մարդկանց քանակը»: Խարտիայի հեղինակները խուսափել են տարածքային կամ փոքրամասնության լեզվով խոսողների որոշակի տոկոսաչափ սահմանելուց, որի դեպքում, կամ որից ավելի լինելու դեպքում պետք է կիրառվեն խարտիայում նշված միջոցառումները: Նրանք գերադասել են քողնել պետություններին խարտիայի ոգով, յուրաքանչյուր նախատեսված միջոցառման բնույթից ելնելով, սահմանել տվյալ միջոցառումն ընդունելու համար պահանջվող լեզվակիրների թիվը:

36. «Տարածք չունեցող լեզուները» դուրս են մնում տարածքային կամ փոքրամասնությունների լեզուներից, քանի որ նրանք տարածքային հիմք չունեն: Այլ տեսակետներից, սակայն, նրանք համապատասխանում են 1-ին հոդվածի ա կետում պարունակվող սահմանմանը, քանի որ ավանդաբար գործածվել են տվյալ պետության տարածքում այդ պետության քաղաքացիների կողմից: Տարածք չունեցող լեզուների օրինակ են իդիշը և զնշուերենը:

37. Տարածքային հիմքի բացակայության դեպքում խարտիայի միայն սահմանափակ մասը կարող է կիրառվել այդ լեզուների նկատմամբ: Մասնավորապես, III մասի դրույթների մեծ մասը նպատակ ունի պահպանելու կամ զարգացնելու տարածքային կամ փոքրամասնությունների լեզուները այն տարածքների հարաբերմամբ, որտեղ դրանք գործածվում են: II մասը ավելի հեշտությամբ կարող է կիրառվել տարածք չունեցող լեզուների նկատմամբ, բայց միայն Mutatis Mutandis (համապատասխան փոփոխություններով) և 7-րդ հոդվածի 5-րդ կետում շարադրված իմաստով:

## Հոդված 2. Պարտավորություններ

38. 2-րդ հոդվածը սահմանազատում է խարտիայի երկու գլխավոր մասերը, այն է՝ II և III մասերը:

### II մասի իրազործումը (Հոդված 2, կետ 1)

39. II մասը ընդիանուր ընդգրկում ունի և ամողությամբ վերցրած վերաբերում է տարածքային կամ փոքրամասնությունների լեզուներին որևէ մասնակից պետության մեջ: Պետք է սակայն նշել, որ «յուրաքանչյուր լեզվի իրավիճակի

համապատասխան» արտահայտության կիրառումը ցույց է տալիս, որ այդ մասը կազմված է այնպես, որ ծառայի լեզվական իրադրությունների այն հսկայական տարրերակվածությանը, որին կարելի է հանդիպել Եվրոպայի տարրեր երկրներում և յուրաքանչյուր երկրի ներտում: Մասնավորապես, 1-ին կետը մասնակից պետություններից պահանջում է պարտավորվել համապատասխանեցնել իրենց քաղաքականությունը, օրենսդրությունը և պրակտիկ գործունեությունը մի շարք սկզբունքների և նպատակների: Դրանք քավականին ընդհանուր են ձևակերպված և համապատասխան պետություններին մեկնաբանության և կիրառման հարցում ընձեռում են գործողությունների լայն ազատություն (տես ստորև II մասին վերաբերող բացարձությունը):

40. Թեև մասնակից պետությունները ազատ չեն ընդունելու կամ մերժելու տարածքային կամ փոքրամասնության լեզվի կարգավիճակը, որը երաշխավորվում է խարտիայի II մասով, նրանք՝ որպես խարտիան իրականացնող իշխանություններ, պատասխանատու են որոշելու՝ իրենց տարածքի որոշակի շրջանում քաղաքացիների առանձին խմբի կողմից կիրառվող արտահայտվելու ձևը կազմում է արդյոք տարածքային կամ փոքրամասնության լեզու՝ խարտիայում նշված իմաստով:

### *III մասի իրազործումը (Խողված 2, կետ 2)*

41. III մասի նպատակն է II մասում հաստատված ընդհանուր սկզբունքները վերածել ճշգրիտ կանոնների: Դա պարտադիր է այն պայմանավորվող երկրների համար, որոնք ի հավելում II մասի դրույթների, պարտավորվում են կիրառել III մասի իրենց ընտրած դրույթները: Հնարավորություն տալու համար խարտիան հարմարեցնելու Եվրոպայի տարրեր երկրներուն հանդիպող լեզվական բազմազան իրավիճակներին՝ խարտիայի հեղինակները նախատեսել են երկու կարգի ձևակիրակություն. նախ՝ պետություններն ազատ են նշելու այն լեզուները, որոնց նկատմամբ նրանք համաձայն են կիրառելու խարտիայի III մասը, և երկրորդ՝ յուրաքանչյուր լեզվի համար, որի նկատմամբ նրանք համաձայն են կիրառել խարտիան, նրանք կարող են որոշել, թե III մասի որ դրույթներին են միանում:

42. Պայմանավորվող պետության համար հնարավոր է, առանց խարտիայի տառը խախտելու, ճանաչել, որ իր տարածքում գոյություն ունի տարածքային կամ փոքրամասնության առանձին լեզու, բայց իր հայեցողությունից ելնող պատճառներով գերադասելի է համարում այդ լեզվի վրա չտարածել խարտիայի III մասի դրույթների արտոնությունները: Սակայն պայման է, որ այն պատճառները, որոնք դրդում են պետությանը տարածքային կամ փոքրամասնության լեզուն ամբողջությամբ դուրս բռնել III մասի արտոնություններից, պետք է համատեղելի լինեն խարտիայի ոգու, նպատակների և սկզբունքների հետ:

43. Եթե պետությունը համաձայնել է կիրառել III մասը իր տարածքում խոսվող տարածքային կամ փորբամասնության լեզվի նկատմամբ, նա պետք է նաև սահմանի՝ III մասի որ կետերը պետք է կիրառվեն այդ որոշակի տարածքային կամ փորբամասնության լեզվի նկատմամբ: 2-րդ հոդվածի 2-րդ կետով Կողմերը պարտավորվում են կիրառել III մասի դրույթների միջից ընտրված առնվազն 35 կետ կամ ենթակետ: Այդ տարրեր կետերից ընտրություն կատարելու մեջ պետության դերը պետք է լինի խարտիան որքան հնարավոր է ավելի համապատասխանեցնել յուրաքանչյուր տարածքային կամ փորբամասնության լեզվի առանձնահատուկ իրավիճակին:

44. Այս նպատակով 2-րդ հոդվածի 2-րդ կետով վերապահված պայմանները պետք է պահվեն նվազագույնի սահմաններում՝ կանխորոշելով կողմերի ընտրած պարտավորությունները խարտիայի տարրեր հոդվածներում տրամարանորեն բաշխելու ապահովումը, և այսպիսով երաշխավորել, որ նրանք չեն անտեսի տարածքային կամ փորբամասնությունների լեզուների պաշտպանության որևէ խոշոր բնագավառ (կրթություն, դատական իշխանություններ, վարչական իշխանություններ ու պետական ծառայություններ, լրատվություն, մշակութային գործունեություն ու մշակութային հիմնարկներ, տնտեսական ու սոցիալական կյանք):

45. «Կետեր կամ ենթակետեր» արտահայտությունը վերաբերում է խարտիայի առանձին դրույթներին, որոնք ինքնուրույն տեղ ունեն: Այսպես՝ եթե պետությունն ընտրում է 9-րդ հոդվածի 3-րդ կետը, այն պետք է համարվի մեկ միավոր՝ 2-րդ հոդվածի 2-րդ կետի համար, ոույնը կիրառվում է, եթե պետությունն ընտրում է 8-րդ հոդվածի 1-ին կետի է ենթակետը: Որտեղ տվյալ կետը կամ ենթակետը պարունակում է մի քանի տարրերակ, մեկ տարրերակի ընտրությունը կազմում է մեկ ենթակետ՝ 2-րդ հոդվածի 2-րդ կետի համար: Օրինակ, եթե 8-րդ հոդվածից պետությունն ընտրում է 1-ին կետի ա. տարրերակը, այդ տերսար կիամարվի մեկ «ենթակետ»: Դրույթունն այլ է, եթե տարրերակները չեն հանդիսանում այլնտրանք և կարող են ընդունվել միասին: Այսպիսով, 9-րդ հոդվածում, եթե պետությունը ընտրում է 1-ին կետում ա.iii և ա.iv տարրերակները, ապա այս տերսարը կիամարվեն երկու ենթակետեր 2-րդ հոդվածի իմաստով:

46. Այդ տարրերակների նպատակն է լրացուցիչ ճկունություն հաղորդել խարտիային՝ հաշվի առնելու համար տարածքային կամ փորբամասնությունների լեզուների դե ֆակտո իրադրության մեծ տարրերությունները: Պարզ է, որ որոշակի դրույթներ, որոնք կատարելապես հարմարվում են մեծ թվով խոսողներ ունեցող որևէ տարածքային լեզվի, հարմար չեն որևէ փորբամասնության լեզվի համար, որ գործածվում է միայն մարդկանց փոքր խմբի կողմից: Պետությունների դերը պետք է լինի ոչ թե կամայականորեն ընտրություն անել այս տարրերակների միջև, այլ յուրաքանչյուր տարածքային կամ փորբամասնության լեզվի համար որոնել

նրա զարգացման աստիճանին և առանձնահատկություններին առավել հարմարվող ծևակերպում: Այս տարբերակային ծևակերպումների նպատակը հստակ արտահայտված է III մասի համապատասխան հոդվածների և կետերի բուն տեքստում, որը նախատեսում է, որ դրանք կիրառելի են «յուրաքանչյուր լեզվի իրավիճակին համապատասխան»: Լայն իմաստով և այլ կարևոր գործոնների բացակայության դեպքում սա կարող է նշանակել որ, օրինակ, որքան ավելի մեծ է տարածքային կամ փոքրամասնության լեզվով խոսողների թիվը և որքան ավելի համասեռ է այդ տարածքի բնակչությունը, այնքան ավելի «ուժեղ» կարող է լինել ընդունվող տարբերակը, ավելի բույլ տարբերակ կարելի է ընդունել, միայն եթե ավելի ուժեղ տարբերակը չի կարող կիրառվել խնդրո առարկա լեզվավիճակի նկատմամբ:

47. Հետևաբար, պետությունների համար III մասի դրույթների ընտրությունը պետք է կազմի կապակցված շրջանակ՝ հարմարեցված յուրաքանչյուր լեզվի առանձնահատուկ իրավիճակին: Նրանք նաև կարող են, ցանկության դեպքում, ընդունել բոլոր լեզուների կամ լեզուների մի խմբի նկատմամբ կիրառելի ընդիհանուր շրջանակը:

### **Հոդված 3. Իրագործման եղանակները**

48. 3-րդ հոդվածը նկարագրում է 2-րդ հոդվածում սոսկ ուրվագծված սկզբունքների իրագործման ընթացակարգը, յուրաքանչյուր պայմանավորվող պետություն իր վավերացման, ընդունման, հավանության կամ միանալու փաստաթղթում նախ սահմանում է այն տարածքային կամ փոքրամասնությունների լեզուները, որոնց նկատմամբ կիրառվում է III մասը, և երկրորդ՝ յուրաքանչյուր լեզվի նկատմամբ III մասից ընտրված կիրառելիք կետերը, հասկանալի է, որ ընտրված կետերը կարող են բոլոր լեզուների համար նույնը չլինել:

49. Խարտիան իր 2-րդ հոդվածով չի ստիպում II և III մասերն էլ ընդունել, քանի որ պետությունը ինքը կարող է որոշել իր շրջանակները՝ կոնվենցիան վավերացնել առանց որևէ լեզու ընտրելու III մասի կիրառման համար: Այդպիսի դեպքում կարող է կիրառվել միայն II մասը: Ընդհանրապես, խարտիայի ողին պահանջում է, որ պետություններն օգտվեն III մասի առաջարկած հնարավորություններից, որը կազմում է խարտիայի ընձեռած պաշտպանության էությունը:

50. Պարզ է նաև, որ ամեն պահի կողմը կարող է ընդունել նոր պարտավորություններ, օրինակ, լրացուցիչ տարածքային կամ փոքրամասնության լեզվի վրա տարածելով խարտիայի III մասի արտոնությունները կամ ընդունելով իր տարածքում խոսվող տարածքային կամ փոքրամասնության որևէ լեզվի կամ բոլոր լեզուների վերաբերյալ խարտիայի սկզբնապես իր չընդունած կետերը:

51. 3-րդ հոդվածի ձևակերպումը հաշվի է առնում իրավիճակը որոշ անդամ պետություններում, որտեղ ամբողջապես կամ նրա տարածքի մի մասում պետության պաշտոնական լեզվի կարգավիճակը ունեցող որևէ ազգային լեզու կարող է այլ տեսակետներից համեմատելի իրավիճակում լինել տարածքային կամ փոքրամասնությունների լեզուների հետ, ինչպես բնորոշված է 1-ին հոդվածի ակտում, եթե այն գործածվում է քանակապես ավելի փոքր խմբի կողմից, քան այլ պաշտոնական լեզու(ներ) գործածող բնակչությունը: Եթե պետությունը ցանկանում է նման նվազ տարածում ունեցող պաշտոնական լեզվին օժանդակել խարտիայում նախատեսված՝ պաշտպանության և զարգացման միջոցառումներով, ապա նրան հետևաբար հնարավորություն է տրվում որոշելու, որ խարտիան պետք է կիրառվի դրա նկատմամբ: Խարտիայի կիրառության այդպիսի տարածումը պաշտոնական լեզվի վրա լավ է հարմարվում խարտիայի բոլոր հոդվածներին՝ ներառյալ 4-րդ հոդվածի 2-րդ կետը:

#### **Հոդված 4. Պաշտպանության առկա նեխանիզմները**

52. Այս հոդվածը վերաբերում է խարտիայի զուգակցմանը ներքին օրենսդրության կամ միջազգային համաձայնագրերին, որոնք հաստատում են լեզվական փոքրամասնությունների կարգավիճակը:

53. Որտեղ կոնկրետ լեզուները կամ դրանք գործածող փոքրամասնությունները արդեն ունեն ներքին օրենսդրությամբ կամ միջազգային համաձայնագրերով սահմանված կարգավիճակ, խարտիան անշուշտ չպետք է նվազեցնի այդ դրույթներով ճանաչված իրավունքներն ու երաշխիքները: Այնուամենայնիվ, խարտիայի ընձեռած պաշտպանությունը լրացնում է այլ փաստարդերով արդեն շնորհված իրավունքներն ու երաշխիքները: Բոլոր այդ պարտավորությունների կիրառման համար այնտեղ, որ կան նույն առարկայի վերաբերյալ մրցակցող դրույթներ, համապատասխան փոքրամասնությունների կամ լեզուների նկատմամբ պետք է կիրառվեն առավել նպաստավոր դրույթները: Այդպես էլ, ներքին օրենսդրությամբ կամ այլ միջազգային պարտավորություններով ստանձնած ավելի սահմանափակող դրույթները չպետք է խոչընդոտեն խարտիայի կիրառմանը:

54. Այս հոդվածի 1-ին կետը առնչվում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքների հասուլ դեպքին: Այն ձգտում է բացառել խարտիայի որևէ դրույթը այնպես մեկնարաբերու հնարավորությունը, որը կվտանգի անհատների՝ խարտիայով տրամադրվող մարդու իրավունքների պաշտպանությունը:

## **Հոդված 5. Առկա պարտավորությունները**

55. Ինչպես արդեն նշված է նախարանում, տարածքային և փորձամասնությունների լեզուների պաշտպանությունն ու գարգացումը, որը խարտիայի նպատակն է, պետք է կատարվի ազգային ինքնիշխանության և տարածքային ամբողջականության շրջանակներում: Այս հոդվածը այդ առունով ակնհայտ է դարձնում, որ կողմերի գոյություն ունեցող պարտավորությունները անփոփոխ են մնում: Մասնավորապես, այն փաստը, որ խարտիան վավերացնելիս պետությունը ստանձնել է պարտավորություններ որևէ տարածքային կամ փորձամասնության լեզվի վերաբերյալ, չի կարող այդ լեզվի նկատմամբ հասուն շահագրգություն ունեցող մի այլ պետության կամ լեզուն գործածողների կողմից օգտագործվել որպես այդ պետության ինքնիշխանությանը և տարածքային ամբողջականությանը վճարող որևէ գործողություն ձեռնարկելու պատրվակ:

## **Հոդված 6. Տեղեկատվությունը**

56. Այս հոդվածով սահմանված տեղեկատվությունը ապահովելու պարտավորության շարժառիքը ընկած է այն իրողության հիմքում, որ խարտիան երբեք չի կարող լիակատար կերպով արդյունավետ լինել, եթե իրավասու իշխանությունները և շահագրգոր կազմակերպություններն ու անհատները տեղեկացված չեն այն պարտավորությունների մասին, որոնք բխում են նրանից:

## **Մաս II. Նպատակներն ու սկզբունքները**

### **Հոդված 7**

*Խարտիայի ներառած նպատակների ու սկզբունքների ցանկը (հոդված 7, կետ I)*

57. Այս դրույթները լստ եռթյան վերաբերում են նպատակներին ու սկզբունքներին և ոչ թե իրականացման ճշգրիտ կանոններին: Այդ նպատակներն ու սկզբունքները կոչված են հիմնելու տարածքային և փորձամասնությունների լեզուների պահպանության անհրաժեշտ շրջանակները: Դրանք բաշխված են վեց զլյակով վերնագրերի:

*Տարածքային և փորձամասնությունների լեզուների ճանաչումը (հոդված 7, կետ 1.ա)*

58. Սա այս լեզուների գոյության և նրանց գործածնան օրինականության ճանաչման հարցն է: Այդախի ճանաչումը չպետք է շփորել որևէ լեզու որպես պաշտոնական լեզու ճանաչելու հետ: Որևէ լեզվի գոյության լնդունումը նրա առանձնահատկություններն ու կարիքները հաշվի առնելու և նրա անունից գործելու նախապայմանն է:

**Յուրաքանչյուր տարածքային կամ փոքրամասնորյան լեզվի աշխարհագրական տարածքի պահպանումը (հոդված 7, կետ 1.թ)**

59. Թեև խարտիան ցանկալի է համարում ապահովել տարածքային կամ փոքրամասնորյան լեզվի տարածքի և համապատասխան վարչատարածքային կազմավորման համբեկումը, պարզ է, որ այս նպատակին չի կարելի հասնել բոլոր դեպքերում, քանի որ բնակեցվածության ձևերն ու բնույթը կարող են խիստ բարդ լինել, և վարչատարածքային կազմավորումների որոշումը տրամադրանորեն կարող է կախված լինել այլ նկատառումներից, քան որևէ լեզվի գործածությունն է: Ուստի խարտիան չի պահանջում, որ տարածքային կամ փոքրամասնորյան լեզվի տարածքը բոլոր դեպքերում համընկնի վարչական միավորի հետ:

60. Մյուս կողմից՝ խարտիան դատապարտում է այն պրակտիկան, երբ վարչական բաժանումները կատարվում են այնպես, որ դժվարացնեն որևէ լեզվի գործածումն ու հարատևումը կամ մասնատեն լեզվական հաճրությունը մի քանի վարչական կամ տարածքային միավորների միջև: Եթե վարչական միավորները անհնարին և հարմարեցնել տարածքային կամ փոքրամասնորյան լեզվին, ապա նրանք պետք է առնվազն մնան չեզոք և չունենան բացասական ազդեցություն լեզվի վրա: Տեղական կամ տարածքային իշխանությունները պետք է, մասնավորապես, ի վիճակի լինեն կատարել իրենց պարտավորությունները այդ լեզուների նկատմամբ:

գ) **տարածքային կամ փոքրամասնորյունների լեզուների զարգացման համար դրական գործունեության անհրաժեշտությունը (հոդված 7, կետեր 1. գ և դ)**

61. Այսօր պարզ է, որ շատ տարածքային կամ փոքրամասնորյունների լեզուների բուլության պատճառով միայն խտրականորյան արգելումը բավարար չէ նրանց գոյատևումը ապահովելու համար: Նրանք դրական աջակցության կարիք ունեն: Այս գաղափարն է արտահայտված 1.գ կետում: Այս կետում պետություններին է բողնված որոշելու այն եղանակը, որով նրանք մտադիր են գործել՝ սատարելու տարածքային կամ փոքրամասնորյունների լեզուները՝ դրանք պահպանելու նպատակով, բայց խարտիան շեշտում է, որ այդպիսի գործունեությունը պետք է հաստատակամ լինի:

62. Բացի այդ, ինչպես նշվում է 1.դ կետում, աջակցության ջանքերը պետք է ներառեն գործողությունները հօգուտ տարածքային կամ փոքրամասնորյունների լեզուների թե՛ բանավոր, թե՛ գրավոր ազատ գործածության հնարավորության ոչ միայն անհատական կյանքում և անձնական հարաբերությունների մեջ, այլև հանրային կյանքում, այսինքն՝ հաստատությունների, սոցիալական գործունեության և տնտեսական կյանքի շրջանակում: Այն տեղը, որ կարող է գրադարձնել տարածքային կամ

փոքրամասնության լեզուն հասարակական տեսակետից, ակնհայտորեն կախված կլինի նրա անհատական առանձնահատկություններից և կտարբերվի լեզվից լեզու: Խարտիան այս առումով հստակ խնդիրներ չի դնում, այլ բավարարվում է կոչ անելով աջակցության ջանքեր գործ դնել:

*Տարածքային կամ փոքրամասնությունների լեզուների ուսուցման և ուսումնասիրության երաշխիքները (Խողված 7, կետ 1.գ և ը)*

63. Տարածքային կամ փոքրամասնությունների լեզուների խնամքի և պահպանության վճռորոշ գործոն է կրթական համակարգում նրանց հատկացվող տեղը: Խարտիան II մասում բավարարվում է հաստատելով այն սկզբունքը, որ պետություններին է բողնովում որոշելու իրագործվող միջոցառումները: Սակայն նա պահանջում է, որ տարածքային կամ փոքրամասնությունների լեզուները ներկայացված լինեն կրթական համակարգի «բոլոր համապատասխան փուլերում»: Որևէ տարածքային կամ փոքրամասնության լեզվի ուսուցման միջոցառումները ակնհայտորեն կտարբերվեն՝ կախված համապատասխան կրթական մակարդակից: Մասնավորապես, որոշ դեպքերում հարկ կլինի դրույթ սահմանել տարածքային կամ փոքրամասնության «լեզվով» դասավանդելու, իսկ այլ դեպքերում՝ միայն «լեզուն» սովորեցնելու մասին: Տարածքային կամ փոքրամասնության լեզվի ուսուցումը կարող է ուշադրության շառնվել միայն այն մակարդակներում, որոնց չի համապատասխանի տվյալ լեզուն իր սեփական առանձնահատկությունների պատճառով:

64. Եթե 1.գ կետը վերաբերում է լեզվի ուսուցումը կամ նրանով դասավանդումը հիմնելուն կամ պաշտպանելուն՝ որպես լեզուն փոխանցելու միջոցի, 1.ը կետը նախատեսում է խրանել տարածքային կամ փոքրամասնությունների լեզուներով ուսուցումը և հետազոտությունը համալսարանում կամ համարժեք հաստատությունում, քանի որ այսպիսի աշխատանքը կարևոր է այդ լեզուների բառապաշարի, քերականության և շարահյուսության զարգացման տեսակետից: Այդպիսի աշխատանքների խրանումը տարածքային կամ փոքրամասնությունների լեզուների զարգացման լնդիանուր ջանքերի մի մասն է՝ խրախուսելու համար նրանց ներքին առաջընթացը:

*Միջոցներ տարածքային կամ փոքրամասնությունների լեզուներով չխոսողների համար՝ ձեռք բերելու դրամց իմացությունը (Խողված 7, կետ 1.1)*

65. Տարածքային կամ փոքրամասնությունների լեզուներով խոսողները զիտեն, որ իրենց անձնական կատարելության համար նրանք պետք է իմանան պաշտոնական լեզուն: Սակայն, նախարանում մշակույթների փոխազդեցության և բազմալեզվության արժեքի շեշտման համապատասխան ցանկալի է, որ մի քանի լեզուների ընկալունակության ողին չսահմանափակվի տարածքային կամ փոքրամասնությունների լեզուներով խոսողներով:

Լեզվակիրների խմբերի միջև հաղորդակցումն ու ըմբռնումը դյուրացնելու նպատակով կրղմերին կոչ է արփում՝ այն տարածքներում, որտեղ գոյություն ունի տարածքային կամ փոքրամասնության լեզու, միջոցներ տրամադրել այն անձանց, որոնց համար դա մայրենի լեզու չէ՝ ցանկության դեպքում սովորել այդ լեզուն:

66. Քաջ հայտնի է, որ որոշ պետություններում համապատասխան իշխանությունների նպատակն է, որ տարածքային լեզուն լինի այդ տարածքում սովորական և ընդհանուր լեզու, և միջոցներ ձեռք առնվեն, որ լեզուն իմանան նույնիսկ այն մարդիկ, որոնց համար դա մայրենի լեզու չէ: Այդպիսի քաղաքականությունը հակառակ չէ խարտիային, բայց չի կազմում 1.է կետի նպատակը: Այս կետը միայն ճգնաժամ է լեզվական խմբերի միջև ավելի մեծ փոխադարձ քափանցելիության:

**Հարաբերությունները տարածքային կամ փոքրամասնության լեզվով խոսողների միջև (Խորված 7, կետ 1 և ք)**

67. Անհրաժեշտ է, որ միևնույն տարածքային կամ փոքրամասնության լեզվով խոսող խմբերը հնարավորություն ունենան մշակութային փոխանակումների մեջ նտնելու և ընդհանրապես զարգացնելու իրենց հարաբերությունները՝ միասին նպատակով համար իրենց լեզվի պահպանմանն ու հարատացմանը: Այս նպատակով խարտիան ճգնաժամ է զգուշացնել, որ մասնատված ձևով բնակեցումները, պետության մեջ վարչական բաժանումները կամ այն փաստը, որ այդ խմբերը բնակվում են տարբեր պետություններում, խոչընդոտները չառաջացնեն նրանց հարաբերությունների համար:

68. Հասկանալի է, տարածքային կամ փոքրամասնության լեզվով խոսողների կողմից իրենց նույնության այդպիսի գիտակցումը չպետք է կրի սոցիալական այլ խմբերի նկատմամբ բացարիկության կամ հեռացվածության բացասական անդրադարձը: Հետևաբար, տարբեր տարածքային կամ փոքրամասնությունների լեզուներով խոսողների հետ մշակութային հարաբերությունների զարգացման ճգնաժամը ծառայում է միաժամանակ մշակութային հարստացման և պետության բոլոր խմբերի միջև փոխանցման աճի նպատակին:

69. 1.ք կետն ավելացնում է մի նոր կողմ՝ գաղափար, որ այդպիսի հարաբերությունները կարող են զարգանալ նաև ազգային սահմաններից դուրս, եթե նոյն կամ նման տարածքային կամ փոքրամասնության լեզվով խոսող խմբերը ցրված են մի քանի երկրներում: Ըստ բնորոշման տարածքային կամ փոքրամասնությունների լեզուներով համապատասխան պետություններում խոսում է մարդկանց համեմատաբար փոքր քանակ, մշակութային ոլորտում փոխադարձ հարստացման նպատակով նրանք կարող են կարիք ունենալ ապավինելու մշակութային արժեքներին, որոնք մատչելի են սահմանից այն կողմ նոյն կամ նման լեզվով խոսող այլ խմբերի:

Սա հատկապես կարևոր է այնտեղ, որտեղ մի երկրի տարածքային լեզուն համապատասխանում է մի այլ պետության ավելի մեծ մշակութային լեզվի կամ նույնիսկ ազգային լեզվին, և որտեղ անդրսահմանային համագործակցությունը կարող է հնարավորություն տալ տարածքային հանրությանը օգտվելու այդ ավելի լայն տարածված լեզվի մշակութային գործունեությունից: Կարևոր է, որ պետությունները ճանաչեն այդպիսի հարաբերությունների օրինականությունը և դրանց չվերաբերվեն կասկածով հավատարնության տեսակետից, որ ամեն մի պետություն սպառում է իր քաղաքացիներից, կամ դրանք շղթեն որպես իրենց ազգային ամբողջականության սպառնալիք: Լեզվական խումբը կարող է ավելի ներգրավված զգալ իրեն պետության մեջ, որի մասն է կազմում, եթե այն ճանաչված է որպես այդպիսին և եթե մշակութային կապերը հարևան հանրությունների հետ արգելված չեն:

70. Այնուամենայնիվ, պետություններն ազատ են մշակելու առավել հարմար միջոցառումներ՝ իրականացնելու համար այդպիսի անդրսահմանային փոխանակումները՝ հատկապես նկատի ունենալով ներքին և միջազգային հարկադրանքները, որոնց կարող են նրանք բախվել: Ավելի մասնավոր պարտավորությունները շարադրված են III մասի 14-րդ հոդվածում:

### *Խորականության բացառումը (Խողված 7, կետ 2)*

71. Խորականության արգելումը տարածքային կամ փոքրամասնությունների լեզուների գործածման առումով նվազագույն երաշխիք է ստեղծում այդպիսի լեզուներով խոսդների համար: Այս պատճառով կողմերը պարտավորվում են բացառել այնպիսի միջոցառումները, որոնք չեն խրախուսում տարածքային կամ փոքրամասնության լեզվի գործածությունը կամ վտանգում են նրա պահպանումը կամ զարգացումը:

72. Սակայն այս կետի նպատակը չէ հաստատել կատարյալ հավասարություն լեզուների իրավունքների միջև: Ինչպես ցույց է տալիս նրա ձևակերպումը, և հատկապես «անարդար» տերմինի ներմուծումը, խարտիայի ոգուն լիովին համատեղելի է, որ տարածքային կամ փոքրամասնությունների լեզուների նկատմամբ տարվող քաղաքականության մեջ որոշ տարրերակում մտցվի լեզուների միջև: Մասնավորապես, յուրաքանչյուր երկրում ի նպաստ ազգային կամ պաշտոնական լեզվի ձևոնարկված միջոցները խորականություն չեն ճշանակում տարածքային լեզուների նկատմամբ սուսկ այն հիմքով, որ նույն այդ միջոցները ձևոնարկված չեն հօգուտ վերջինների: Սակայն այդ միջոցները խոշընդուն չափությունը է ստեղծեն տարածքային կամ փոքրամասնությունների լեզուների պահպանության ու զարգացման համար:

73. Միևնույն ժամանակ, քանի որ գոյություն ունեն անհամամասնություններ պաշտոնական լեզուների և տարածքային կամ փոքրամասնությունների

լեզուների իրադրությունների միջև, և քանի որ վերջիններիս գործածողները հաճախ անշահավետ վիճակում են, խարտիան ընդունում է, որ անհրաժեշտ կլինեն դրական միջոցառումներ այդ լեզուները պահպանելու և զարգացնելու նպատակով: Նկատի ունենալով, որ այդ միջոցառումներն այդպիսի նպատակ կունենան և կձգտեն անել ոչ ավելին, քան մեծացնել հավասարությունը լեզուների միջև, դրանք չեն կարող դիտվել որպես խտրական:

*Լեզվական խմբերի միջև փոխադարձ հարզանքի և ըմբռնման խրանումը (Խողված 7, կետ 3)*

74. Հարզանքը տարածքային կամ փոքրամասնությունների լեզուների նկատմամբ և նրանց վերաբերյալ հանդուրժողականության ոգու զարգացումը պետության մեջ բազմաթեզվության իրադրության ըմբռնումը զարգացնելու ընդհանուր մտահոգության մի մասն են: Հանդուրժողականության և ընկալունակության այս ոգու զարգացումը կրթական համակարգի և լրատվության միջոցով կարևոր գործոն է տարածքային կամ փոքրամասնությունների լեզուների գործնական պահպանության համար: Զանգվածային լրատվամիջոցների խրախուսում՝ հետապնդելու այդ նպատակները, չի նշանակում ստեղծել անօրինական պետական ազդեցություն, իսկապես, մարդու իրավունքների հարզանքը, հանդուրժողականությունը փոքրամասնությունների նկատմամբ և ատելություն հարուցելու մերժումը ճգոտումներ են, որ եվրոպական պետությունների մեծ մասը չի վարանում պարտավորեցնել լրատվամիջոցներին: Նույն ոգով տարածքային կամ փոքրամասնությունների լեզուներով խոսողների համար այս սկզբունքը կարևոր գործոն է դառնում ստիպելու նրանց ըմբռնող լինել մեծամասնությունների լեզուների և մշակույթների նկատմամբ:

*Տարածքային կամ փոքրամասնությունների լեզուների շահերը ներկայացնող մարմինների հիմնումը (Խողված 7, կետ 4)*

75. CAHLR-ն կարևոր է համարում, որ յուրաքանչյուր պետության մեջ գոյություն ունենան մեխանիզմներ, որոնց միջոցով պետական իշխանությունները հաշվի են առնում իրենց՝ տարածքային կամ փոքրամասնությունների լեզուներով խոսողների հայտնած կարիքներն ու ցանկությունները: Հետևաբար, խորհրդությունը է տրվում, որ այնտեղ յուրաքանչյուր տարածքային կամ փոքրամասնության լեզվի համար լինի գործուն մարմին, որը պատասխանատու է այդ լեզվի շահերը ազգային մակարդակով ներկայացնելու համար՝ անցկացնելու դրանց զարգացման գործնական միջոցառումներ և հետևելու խարտիայի իրագործմանը այդ առանձին լեզվի նկատմամբ: «Անհրաժեշտության դեպքում» արտահայտությունը ցույց է տալիս, իմիջիայլոց, որ որտեղ արդեն գոյություն ունեն այդպիսի հաստատություններ այս կամ այն տեսքով, նկատի չի

առնվում խրախուսել պետություններին՝ ստեղծելու նորերը, որոնք կկրկնորդեն եղածները:

**Խարտիայի սկզբունքների կիրառումը տարածք չունեցող լեզուների նկատմամբ (հոդված 7, կետ 5)**

76. Թեև խարտիան հիմնականում վերաբերում է պատմականորեն պետության որևէ հասուկ աշխարհագրական շրջանի հետ նոյնացվող լեզուներին՝ CAHLR-ն չի ուզում անտեսել պետության մեջ ավանդաբար խոսվող լեզուները, որոնք հստակ տարածքային հիմք չունեն:

77. Սակայն, հասկանալի է, որ II մասում շարադրված մի շարք սկզբունքների և նպատակների կիրառման տարածքային ոլորտի հետևանքով և առանց աշխարհագրական ընդգրկումը սահմանելու դրանց իրագործման միջոցների ձեռնարկման դժվարությունների պատճառով այդ սկզբունքները չեն կարող առանց որոշակի ճշգրտումների կիրառվել տարածք չունեցող լեզուների նկատմամբ: 5-րդ կետը համապատասխանաբար ճշգրտում է, որ դրանք պետք է կիրառվեն այդ լեզուների նկատմամբ միայն հնարավորության սահմաններում:

78. 1-ից 4-րդ կետերում պարունակված դրույթներից մի քանիսը առանց դժվարության կարող են կիրառվել նաև տարածք չունեցող լեզուների նկատմամբ, սա այն դեպքն է, որ վերաբերում է այդ լեզուների ճանաչմանը, դրանց նկատմամբ հարգանքի, ըմբռնման և հանդուրժողականության ոգու զարգացմանը, խտրականության արգելմանը և նրանց դրական աշակեցություն ցույց տալու գործունեությանը, այդ լեզուներով խոսողների խմբերի միջև պետության մեջ և արտասահմանում կապեր հաստատելու հնարավորությունը և լեզվի հետազոտության և տվյալներու խթանումը: Մյուս կողմից, հնարավոր չի լինի տարածք չունեցող լեզուների նկատմամբ կիրառել վարչական բաժանումներին վերաբերող դրույթները և այդ լեզուներով չխոսողներին դրանց որոշ իմացությունը ձեռք բերելու համար նախատեսվող միջոցները, քանի որ այդպիսի միջոցառումները կարելի է ձեռնարկել միայն ճշգրիտ որոշված տարածքում: Վերջապես, տարածք չունեցող լեզուների ուսուցման և ուսումնասիրման և հասարակական կյանքում նրանց գործածությունը խթանելու ապահովման նախականները, հավանաբար, գործնական պատճառներով կարող են իրագործվել միայն որոշակի ճշգրտումներով:

**Մաս III. Հասարակական կյանքում տարածքային կամ փոքրամասնությունների լեզուների գործածությունը խթանելու միջոցառումները՝ 2-րդ հոդվածի 2-րդ կետով ընդունված պարտավորությունների համապատասխան**

## **Հոդված 8. Կրթությունը**

79. Այս հոդվածի 1-ին կետի դրույթները վերաբերում են միայն այն տարածքին, որում գործածվում է տվյալ տարածքային կամ փոքրամասնության լեզուն: Դրանք պետք է կիրառվեն նաև «այդ լեզուներից յուրաքանչյուրի իրավիճակի հաշվառմամբ»: Ինչպես վերը ցույց տրվեց 2-րդ հոդվածի 2-րդ կետի վերաբերյալ, այս պայմանը հատկապես կարևոր է, քեզ որ լեզվի համար ա-ից զ ենթակետերից որ տարբերակը պետք է ընտրել:

80. «Առանց պետության պաշտոնական լեզու(ներ)ի դասավանդմանը վճարելու» արտահայտությունը դիտավորություն ունի կանխելու 8-րդ հոդվածի 1-ին կետի և հատկապես ա-ից զ ենթակետերից յուրաքանչյուրի առաջին տարբերակի մեկնարանումը որպես մեծամասնության կողմից գործածվող լեզուների դասավանդման բացառում: Լեզվական գետոտուեր ստեղծելու այդպիսի միտումը դեմ կլինել մշակույթների փոխազդեցության և բազմազեզվության՝ նախարանում ընդգծված սկզբունքներին և անբարենպաստ՝ բնակիչների համապատասխան խմբերի շահերի տեսակետից: Այն երկրների հասուկ հանգամանքներում, որտեղ խարժիան կիրառվում է նվազ տարածում ունեցող պաշտոնական լեզուների նկատմամբ, այս արտահայտությունը պետք է մեկնարանել այն ինաստով, որ 1-ին կետի դրույթները չպետք է վնասն մյուս պաշտոնական լեզուների դասավանդմանը:

81. 8-րդ հոդվածը գործ ունի կրթության մի քանի մակարդակների հետ՝ նախադպրոցական, տարրական, միջնակարգ, տեխնիկական և մասնագիտական, համալսարանական և մեծահասակների: Այս մակարդակներից յուրաքանչյուրի համար ներկայացված է տարբերակների ընտրություն՝ ըստ ամեն մի տարածքային կամ փոքրամասնության լեզվի իրավիճակի:

82. Մի շարք ենթակետերում գործածված է «որոնց թիվը բավարար կիամարվի» արտահայտությունը: Սրանով լրացնվում է, որ պետական իշխանություններից չի կարելի պահանջել համապատասխան միջոցառումներ ձեռնարկել այնտեղ, որ լեզվական խմբի իրավիճակը դժվարություն է հարուցում հասնելու դասարան կազմելու համար պահանջվող աշակերտների նվազագույն քանակին: Մյուս կողմից, ելեւլով տարածքային կամ փոքրամասնությունների լեզուների առանձնահատուկ հանգամանքներից, ենթադրվում է, որ դասարան կազմելու համար պահանջվող սովորական սահմանարանակը կարող է ճկուն կիրառվել և կարող է «քավարար համարվել» աշակերտների ավելի փոքր քանակը:

83. Գ և դ ենթակետերի IV տարբերակի ձևակերպումը հաշվի է առնում այն փաստը, որ ազգային իրավիճակները տարբերվում են քեզ շափահասության տարիքի, թե՛ այն տարիքի առումով, երբ կարող է ավարտված լինել այդ

կրթությունը: Այս հաճամանքներից կախված՝ կարող են հաշվի առնվել կամ իրենց՝ աշակերտների, կամ նրանց ընտանիքների ցանկությունները:

84. Հայտնի է, որ ոչ բոլոր կրթական համակարգերն են առանձնացնում միջնակարգ և մասնագիտական կրթությունը՝ վերջինս համարելով միայն միջնակարգ կրթության մի տեսակ: Այսուամենայնիվ, ինչպես արված է զ և դ ենթակետերում, այդ տարրերակումը հաշվի է առնում մասնագիտական պատրաստման համակարգերի զանազանությունը: Մասնավորապես այն երկրների դեպքում, որտեղ մասնագիտական պատրաստումը մեծ չափով կատարվում է աշակերտության միջոցով և հետևաբար դժվար է կիրառել միջոցառումներ հօգուտ տարածքային կամ փոքրամասնությունների լեզուների, այն հնարավորություն է տալիս առնվազն ընդունել ավելի խիստ պահանջներ ընդհանուր մասնագիտական կրթության բնագավառում:

85. Համալսարանական և մեծահասակների կրթությանը վերաբերող դրույթները համեմատելի են կրթության մյուս մակարդակների համար նախատեսված դրույթների հետ այնքանով, որ նրանք այլընտրանք են առաջարկում տարածքային կամ փոքրամասնության լեզվով դասավանդելու և այն որպես կրթական առարկա ուսուցանելու միջև: Բացի այդ, ինչպես նախադպրոցական կրթության դեպքում, ոոր լուծում է առաջարկվում այն դեպքերի համար, երբ պետական իշխանությունները ուղղակի իրավասություն չունեն համապատասխան կրթության տիպի համար: Որոշ պետություններում, տարածքային կամ փոքրամասնության լեզվով խոսողների թիվը կարող է բավարար չհամարվել տվյալ լեզվի կամ տվյալ լեզվով համալսարանական կրթություն ապահովելու համար: Այս կապակցությանը բերված է այն երկրների օրինակը, որոնք դիպլոմների ճանաչման հատուկ կամ ընդհանուր համաձայնագրի հիման վրա ճանաչում են տարածքային կամ փոքրամասնության լեզվով խոսողի համալսարանական աստիճանը, որ նա ստացել է մի այլ պետությունում, որտեղ գործածվում է նույն լեզուն:

86. 1.է կետը պատճառաբանված է տարածքային կամ փոքրամասնությունների լեզուների ուսուցումը նրանց մշակութային շրջապատից շկտրելու մտահոգությամբ: Այս լեզուները հաճախ կապված են առանձնակի պատմության և յուրահատուկ ավանդույթների հետ: Այդ պատմությունը և տարածքային կամ փոքրամասնության նշակույթը կազմում է Եվրոպայի ժառանգության բաղադրամասը: Համապատասխանաբար, ցանկալի է, որ այդ լեզուներով չխոսողները նույնպես կարողանան դրանք յուրացնել:

87. Եթե պետությունը պարտավորվում է երաշխավորել, որ կդասավանդվի տարածքային կամ փոքրամասնության լեզուն, նա պետք է հետևի, որ մատչելի լինեն ֆինանսական, աճանակագիր և ուսուցման օժանդակության հարկ եղած միջոցները: Այս անհրաժեշտ հետևությունը կարիք չունի հատուկ

սահմանվելու խարտիայում: Սակայն, եթե հոգ է տարվում անձնակազմի մասին, ծառանում է նաև նրանց ձեռնհասության և հետևաբար նրանց պատրաստման հարցը: Սա հիմնարար հարց է, ուստի և հատուկ դրույթ է նշված դրա համար 1.թ կետում:

88. Նկատի ունենալով ուսուցման և, մասնավորապես, դպրոցական համակարգի հիմնարար կարևորությունների լեզուների պահպանության գործում, CAHLR-ն անհրաժեշտ է համարում նախատեսել, որ հատուկ մարմին կամ մարմիններ հետևեն՝ ինչ է արվում այս բնագավառում: Այդպիսի վերահսկիչ հաստատության բնութագրերը չեն ճշգրտված 1.թ կետում: Դա համապատասխանարար կարող է լինել կրթական իշխանության մարմին կամ անկախ հաստատություն: Այդ գործառույթը կարող է դրվել և խարտիայի 7-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված մարմնի վրա: Բոլոր դեպքերում, խարտիան պահանջում է վերահսկողության հայտնաբերումները հրապարակել:

89. Խարտիան սովորաբար տարածքային կամ փորձամասնությունների լեզուների պաշտպանությունը սահմանափակում է այն տարածքով, որտեղ նրանցով ավանդաբար խոսում են: Բայց 8-րդ հոդվածի 2-րդ կետը այս կանոնից բացառություն է կազմում: Դա պատճառաբանված է այն գիտակցումով, որ ժամանակակից շարժունակության պայմաններում տարածի սկզբունքը այևս չի կարող բավարար լինել տարածքային կամ փորձամասնության լեզվի արդյունավետ պաշտպանության պրակտիկայում: Մասնավորապես, այդպիսի լեզուներով խոսողների մի զգալի քանակ տեղափոխվել են ավելի մեծ քաղաքներ: Սակայն, նկատի ունենալով իրենց ավանդական տարածքային հիմքից դուրս գտնվող տարածքային կամ փորձամասնությունների լեզուների վրա կրթական դրույթը տարածելու դժվարությունները՝ 8-րդ հոդվածի 2-րդ կետը կազմված է ճկուն կերպով, որան առնչվող պարտավորությունների սահմաններում և բոլոր դեպքերում կիրառվում է միայն այնտեղ, որ այդ միջոցառումներն արդարացված են համապատասխան լեզուն գործածողների քանակով:

#### **Հոդված 9. Դատական իշխանություններ**

90. Այս հոդվածի 1-ին կետը վերաբերում է այն դատական շրջաններին, որտեղ տարածքային կամ փորձամասնությունների լեզուներ գործածող մշտական բնակիչների թիվը արդարացնում է նշված միջոցառումները: Այս պայմանը նաև համապատասխանում է խարտիայի դրույթների մեծ մասի ընդհանուր կանոնին, որը կոչված է պաշտպանելու տարածքային կամ փորձամասնությունների լեզուները այն տարածքում, որտեղ նրանք ավանդաբար գործածվում են: Ինչ վերաբերում է ավելի բարձր դատական ատյաններին, որոնք տեղադրված են տարածքային կամ փորձամասնությունների լեզուների գործածության տարածքից դուրս,

համապատասխան պետությունները պետք է հաշվի առնեն դատական համակարգի հատուկ բնույթը և նրա ատյանների ստորակարգությունը:

91. 9-րդ հոդվածի 1-ին կետի ներածական նախադատության ձևակերպումը նույնականացնելու անդրադառնում է CAHRL-ի մտահոգությանը պաշտպանելու դատական համակարգի հիմնարար սկզբունքները, ինչպես օրինակ՝ կողմերի հավասարությունը և դատավարության ժամանակ անօրինական ձգձգումների արգելումը, տարածքային կամ փոքրամասնությունների լեզուներին դիմելու արտոնությունների դեմ հնարավոր չարաշահումները: Այս օրինական մտահոգությունը, սակայն, չի արդարացնում ըստ այս կետի կողմերի պարտավորությունների որևէ լնդիանուր սահմանափակում, ավելի ճիշտ, առաջարկված հնարավորությունների չարաշահումը պետք է սահմանվի դատավորի կողմից կոնկրետ դեպքի համար:

92. Տարբերակված են քրեական, քաղաքացիական և վարչական դատավարությունները և նախատեսված այլընտրանքները հարմարեցված են յուրաքանչյուրի առանձնահատկություններին: Ինչպես ցույց են տալս «ե/կամ» բառերը, այս այլընտրանքներից մի քանիսը կարող են լնդունվել միասնարար:

93. 9-րդ հոդվածի 1-ին կետի դրույթները վերաբերում են դատավարությանը դատական աայաններում: Յուրաքանչյուր պետության մեջ լնդունված արդարադատության իրագործման կոնկրետ մեխանիզմից կախված «դատարաններ» տերմինը, որտեղ համապատասխան է, պետք է հասկացվի որպես դատական գործառույթ ունեցող այլ նարմիններ ներառող: Սա հատկապես տեղին է, զ ենթակետի դեպքում:

94. 9-րդ հոդվածի 1-ին կետի ա, թ և զ ենթակետերի առաջին տարբերակում գործածված է «քննությունը վարեն տարածքային կամ փոքրամասնությունների լեզուներով» արտահայտությունը: Արտահայտությունը նշանակում է, համենայնդեպս, որ տվյալ տարածքային կամ փոքրամասնության լեզուն գործածվում է դատարանի դահլիճում և այն դատավարությունների լնդացքում, որին մասնակցում է այս լեզվով խոսող կողմը: Սակայն ամեն պետություն իր դատական համակարգի առանձնահատկությունների լույսի տակ ինքը կարող է սահմանել «քննությունը վարել» արտահայտության ճշգրիտ լնդգրկումը:

95. Պետք է նշել, որ 1.ա.ii կետը, որով կողմերը պարտավորվում են երաշխավորել մեղադրյալին գործածելու իր տարածքային կամ փոքրամասնության լեզուն, գերազանցում է Մարդու իրավունքների եվլուպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3.ե կետում նշված՝ մեղադրյալի իրավունքը ազատորեն դիմելու քարզմանչի օգնությանը, եթե նա չի կարող հասկանալ կամ խոսել դատարանում գործածվող լեզվով: Ինչպես թ.ii և զ.ii ենթակետերը, նա հիմնված է այն նկատառման վրա, որ եթե նույնիսկ

տարածքային կամ փոքրամասնության լեզվով խոսողները ի վիճակի են խոսելու պաշտոնական լեզվով, բայց երբ գործը հասնում է դատական ատյանի առաջ իրենց արդարացնելուն, նրանք կարող են կարիք զգալ արտահայտվելու այն լեզվով, որը հոգեբանորեն առավել մոտ է իրենց, կամ որով նրանք ավելի սահուն են խոսում: Հետևաբար, խարտիայի նպատակին դեմ կիմներ նրա կիրառման համար սահմանափակված լինել գործնական անհրաժեշտության իրադրությամբ: Մյուս կողմից, քանի որ այս դրույթը զերազանցում է մարդու իրավունքների նկատառումը՝ իրականուն մեղադրյալին տալով ազատ ընտրություն, և պահանջում է նրա որոշման համաձայն նախատեսվող հնարավորություններ, բանական համարվեց քոյլ տալ պետություններին որոշ ազատություն՝ այն ընդունելու կամ չընդունելու և սահմանափակել նրա կիրառությունը որոշակի դատական շրջաններով:

96. 1-րդ կետի նպատակն է նախատեսել, որ գրավոր կամ բանավոր թարգմանությունը, որի անհրաժեշտությունը կզգացվի 9-րդ հոդվածի 1.ք և գ կետերի կիրառման համաձայն, անվճար լինի: Այն պետությունների դեպքում, որոնք չեն ընտրում այս ենթակետը, նրանք ազատ են այս հարցը լուծելու կամ ըստ գոյություն ունեցող իրավական դրույթների կամ ընդունելով նոր հատուկ դրույթներ, որոնք հաշվի կառնեն տարածքային կամ փոքրամասնությունների լեզուները զարգացնելու անհրաժեշտությունը: Հետևաբար, ծախսերը կարող են ամբողջությամբ կամ մասսամբ դրվել այն անձի վրա, որը պահանջում է տվյալ գործողությունը, կամ բաշխվել կողմերի միջև և այլ:

97. 2-րդ կետը վերաբերում է տարածքային կամ փոքրամասնության լեզվով կազմված փաստաթղթերի օրինականությանը: Նրա ընդգրկումը փաստորեն սահմանափակված է այնքանով, որքանով չի մատնանշում իրավական փաստաթղթի օրինականության բոլոր պայմանները, այլ բավարարվում է պայման դնելով, որ փաստաթղթի տարածքային կամ փոքրամասնության լեզվով գրված լինելը միայն ինքնին չի կարող նրա օրինականությունը մերժելու հիմք ծառայել: Բացի այդ, այն չի խանգարում պետությանը լրացուցիչ ձևականություններ սահմանել օրինակ այնպիսի դեպքի համար, ինչպիսին է պաշտոնական լեզվով հատուկ հաստատագրի ձևակերպման կարիքը: 2.ք կետը ենթադրում է, որ տարածքային կամ փոքրամասնության լեզու գործածող կողմի ներկայացրած փաստաթղթի բովանդակությունը ուղղակի կամ անուղղակի ճանապարհով (հայտարարություն, պետական լրատվական ծառայություն և այլն) պետք է հայտնի դարձվի մյուս կողմին կամ շահագրգության երրորդ անձին, որոնք չեն խոսում տարածքային կամ փոքրամասնության լեզվով, այնպես, որ դա հասկանալի լինի:

98. 9-րդ հոդվածի 2-րդ կետի կիրառումը չի վճառում իրավական հարցերում փոխադարձ օգնության պայմանագրերի և կոնվենցիաների կիրառմանը, որոնցից յուրաքանչյուրում գործածվող լեզուների հարցը բացահայտորեն արձարձվում է:

99. 3-րդ կետը վերաբերում է օրենսդրական տեքստերի թարգմանությանը տարածքային կամ փոքրամասնությունների լեզուներով: «Եթե որպան նրանց տրամադրության տակ չեն դրվել այլ եղանակով» բառակապահցությունը վերաբերում է այն դեպքերին, երբ տեքստը արդեն գոյություն ունի տարածքային կամ փոքրամասնության լեզվով, քանի որ այն արդեն թարգմանված է նման կամ նույնական լեզվով, որը մի այլ պետության պաշտոնական լեզուն է:

#### **Հոդված 10. Վարչական իշխանությունները և պետական ծառայությունները**

100. Այս հոդվածի նպատակն է բոլոր տալ տարածքային կամ փոքրամասնությունների լեզուներով խոսողներին իրազործել իրենց իրավունքները որպես քաղաքացիներ և կատարել իրենց քաղաքացիական պարտականությունները այն պայմաններում, որոնք հարգում են նրանց արտահայտվելու ձևը:

101. Դրույթների հիմնական նպատակն է բարեկավել հաղորդակցումը պետական իշխանությունների և տարածքային կամ փոքրամասնությունների լեզուներով խոսողների միջև: Ընշտ է, սոցիալական և մշակութային իրադրությունները այնպես են զարգացել, որ այդ լեզուներով խոսող մարդկանց ճնշող մեծամասնությունը երկլեզու է և ի վիճակի է գործածել պաշտոնական լեզուն հաղորդակցվելու համար պետական իշխանությունների հետ: Սակայն, բույլատրելով գործածել տարածքային կամ փոքրամասնությունների լեզուները այդ իշխանությունների հետ ունեցած հարաբերություններում հիմնարար է այդ լեզուների կարգավիճակի և զարգացման համար, ինչպես նաև սուբյեկտիվ տեսակետից: «Պարզ է, որ եթե մի լեզու լինակատար կերպով մեկուսացած լինի իշխանությունների հետ կապված հարաբերություններից, այն փաստորեն կմերժվի որպես այդպիսին, քանի որ լեզուն հասարակական հաղորդակցման միջոց է և չի կարող սահմանափակվել միայն մասնավոր հարաբերությունների ոլորտով: Բացի այդ, եթե լեզուն մերձնեցում չունի քաղաքական, իրավական կամ վարչական ոլորտներին, այն աստիճանաբար կորցնում է իր տերմինաբանական կարողությունը այդ ասպարեզում և դառնում «պակասավոր» լեզու՝ անկարող արտահայտելու հանրության կյանքի բոլոր կողմերը:

102. 10-րդ հոդվածը պետական իշխանությունների գործունեության տեսակների մեջ տարրերակում է երեք կարգ.

- պետության վարչական իշխանությունների գործունեությունը, այսինքն՝ պետական իշխանությունների ավանդական գործողությունները հատկապես որպես պետական առանձնաշնորհների և լիազորությունների իրազործում ըստ ընդիհանուր իրավունքի (կետ 1),
- տեղական և տարածքային իշխանությունների գործունեությունը, այսինքն՝ ընդիհանուր ենթապետական տարածքային

- իշխանություններ, որոնք ունեն ինքնակառավարման  
լիազորություններ (կետ 2),
- պետական ծառայությունները մատուցող մարմինների գործունեություն՝ ըստ պետական կամ մասնավոր իրավունքի, այնուղիւ որտեղ նրանք մնում են պետական հսկողության տակ՝ փոստային ծառայություններ, իիվանդանոցներ, էլեկտրականություն, տրանսպորտ և այլն (կետ 3):

103. Յուրաքանչյուր բնագավառում՝ հարկ եղած հարմարեցումներով համապատասխան իշխանությունների կամ մարմինների առանձնահատկություններին, պետք է հաշվի առնել լեզվական իրադրության բազմազանությանը: Որոշ դեպքերում տարածքային կամ փոքրամասնության լեզվի բնույթը բույլ է տալիս այն ճանաչել որպես «պաշտոնականակերպ» լեզու, այսպիսով այն դարձնելով իր տարածքում պետական իշխանությունների աշխատանքային լեզուն կամ հաղորդակցման սովորական միջոցը: (Պաշտոնական կամ ավելի տարածված լեզվին դիմելը մնում է որպես կանոն այն մարդկանց հետ հաղորդակցվելիս, ովքեր չեն խոսում տարածքային կամ փոքրամասնության լեզվով): Կամ լեզուն կարող է գործածվել առնվազն իշխանությունների հարաբերություններում այն անձանց հետ, ովքեր դիմում են նրանց այդ լեզվով: Սակայն որտեղ տարածքային կամ փոքրամասնության լեզվի օբյեկտիվ իրադրությունը անհրագործելի է դարձնում այդպիսի լուծումները, նախատեսվում են նվազագույն պարտավորություններ պաշտպանելու համար տվյալ լեզվով խոսողների դիրքերը՝ բանավոր կամ գրավոր դիմումներն ու փաստաթղթերը օրինականորեն կարող են ներկայացվել տարածքային կամ փոքրամասնության լեզվով, բայց առանց որևէ պարտավորություն վերցնելու դրանց պատասխանելու նույն լեզվով:

104. Կողմերի պարտավորությունները ըստ 1-ին և 3-րդ կետերի բնորոշված են «որքանով դա բանականորեն հնարավոր է» բառակապակցությամբ: Այս վերապահությունը չի նախատեսվում որպես փոխարինում այն իրավունքի իրականացման, որ տրված է կողմերին 2-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ հոդվածի 1-ին կետերով՝ յուրաքանչյուր առանձին լեզվի վերաբերմանը իրենց պարտավորություններից դուրս թողնելու խարտիայի III մասի որոշ դրույթները: Սակայն նա ձգտում է հաշվի առնել այն փաստը, որ մի շարք նախատեսվող միջոցառումներ զգալի հետևանքներ ունեն ֆինանսների, անձնակազմի կամ ուսուցման առումով: Տվյալ լեզվի վերաբերյալ առանձին դրույթի ընդունումը անհրաժեշտորեն հանգեցնում է պարտավորվելու՝ այն արդյունավետ դարձնելու համար նախատեսել միջոցներ և անել վարչական կարգադրանքներ: Այնուամենայնիվ, ընդունվում է, որ կարող են լինել որոշ հանգամանքներ, երբ այս դրույթի համընդիանուր և անվերապահ կիրառումը իրագործելի չէ, կամ դեռևս իրագործելի չէ: «Որքանով դա բանականորեն հնարավոր է» բառակապակցությունը բույլ է տալիս կողմերին

համապատասխան դրույթները իրազործելիս առանձին դեպքերում որոշել արդյոք կա՞ն այդպիսի հանգամանքներ:

105. 2-րդ կետի դրույթները և մասնավորապես կողմերի պարտավորություն՝ «Քրույլատրել և/կամ խրախուսել» կազմված են այնպես, որ նկատի առնվի տեղական կամ տարածքային ինքնավարությունը: Դրանք չեն նշանակում, թե նվազ կարենություն պիտի տրվի այնտեղ շարադրված դրույթների կիրառմանը, որոնք վերաբերում են քաղաքացիներին առավել մոտ պետական իշխանություններին: Ավելի ընդհանուր ասած՝ CAHLR-ն գիտակցում է, որ խարտիայի որոշ դրույթների կիրառումը ընկնում է տեղական կամ տարածքային իշխանությունների իրավասության տակ և կարող է հանգեցնել համապատասխան իշխանությունների համար էական ծախսերի: Կողմերը պետք է ապահովեն, որ խարտիան իրազործվելիս հարգվի տեղական ինքնավարության սկզբունքը՝ ինչպես այն սահմանված է Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայում, և հատկապես նրա 9-րդ հոդվածի 1-ին կետը, որը պայման է դնում, որ «Տեղական իշխանություններին պետք է իրավունք տրվի ազգային տնտեսական քաղաքականության սահմաններում ունենալու իրենց սեփական ֆինանսական միջոցները, որոնք կարող են ազատորեն տնօրինել իրենց իրավասությունների շրջանակներում»:

106. 2.ա կետը նախատեսում է տարածքային կամ փոքրամասնությունների լեզուների գործածությունը տարածքային կամ տեղական իշխանության «շրջանակներում»: Այս ձևակերպումը նպատակ ունի ցույց տալու, որ տարածքային կամ փոքրամասնության լեզուն կարող է կիրառվել որպես աշխատանքային լեզու համապատասխան իշխանության կողմից, սակայն դա չպետք է նշանակի, որ տարածքային կամ փոքրամասնության լեզուն կարող է կիրառվել կենտրոնական կառավարության հետ հաղորդակցվելիս:

## Հոդված 11. Լրատվամիջոցները

107. Այն ժամանակն ու տեղը, որ տարածքային կամ փոքրամասնությունների լեզուները կարող են գրավել լրատվամիջոցների մեջ, կենսական է նրանց պաշտպանության համար: Այսօր ոչ մի լեզու չի կարող պահպանել իր ազդեցությունը, եթե մերձեցում չունի զանգվածային հաղորդակցման նոր ձևերին: Մրանց զարգացումը ամբողջ աշխարհում և տեխնոլոգիայի առաջընթացը տանում են դեպի նվազ տարածում ունեցող լեզուների մշակութային ազդեցության քուլացում: Մեծ լրատվամիջոցների, հատկապես հեռուստատեսության համար լարանի մեծությունը ընդհանրապես վճռական գործոն է: Բայց տարածքային կամ փոքրամասնությունների լեզուները մշակութային փոքր շուկա են ներկայացնում: Չնայած հեռարձակման տեխնոլոգիայի առաջընթացով նրանց տրվող նոր հնարավորություններին, ճիշտ է և այն, որ լրատվամիջոցներին մասնակցելու համար նրանք պետք է ունենան պետական աջակցություն: Սակայն, լրատվամիջոցները այնպիսի

բնագավառ են կազմում, որտեղ պետական միջամտությունը սահմանափակված է, և կարգավորման իմաստով արվող գործողությունները շատ արդյունավետ չեն: Պետական իշխանությունները այս բնագավառում գործում են ըստ էության խրախուսաման և օգնություն տրամադրելու միջոցով: Նպատակ ունենալով երաշխափորել, որ այդպիսի խրախուսանքն ու օգնությունը տրամադրվում են աջակցելու համար տարածքային կամ փոքրամասնությունների լեզուներին՝ խարտիան պետություններին խնդրում է պարտավորություններ վերցնել տարբեր նակարդակներով:

108. Այս հոդվածում նախատեսվող միջոցառումները գործում են ի նպաստ տարածքային կամ փոքրամասնությունների լեզուները գործածողների՝ այդ լեզուների համապատասխան աշխարհագրական տարածքների շրջանակներում: Սակայն այս առումով 1-ին կետի ձևակերպումը, որ տարբերվում է մյուս հոդվածների ձևակերպումներից, հաշվի է առնում հատկապես տեսալսողական լրատվամիջոցների հատուկ բնույթը: Այսպիսով, եթե նույնիսկ միջոցները ձեռնարկվեն առանձին տարածքի նկատմամբ, նրանց ազդեցությունը կարող է մեծ չափով տարածվել դրանից դուրս, մյուս կողմից՝ միջոցները կարիք չունեն ձեռնարկվելու բուն խնդրու առարկա տարածքում, նախատեսելով, որ դրանք նպաստում են այնտեղ ապրողներին:

109. Հայտնի է, որ պետական իշխանությունները տարբեր երկրներում ունեն լրատվամիջոցներին հսկելու տարբեր աստիճաններ: Այս պատճառով 1-ին և 3-րդ կետերում ճշգրտվում է, որ նրանց պարտավորության չափը որոշվում է ըստ այս բնագավառում նրանց ունեցած իրավասության, լիազորությունների կամ օրինական դերի աստիճանի: Բացի այդ, ընդգծվում է, որ ամեն երկրում պետության օրինական դերը՝ ստեղծելու իրավական շրջանակներ և պայմաններ, որոնցում կարելի է հասնել այս հոդվածի նպատակին, սահմանափակվում է լրատվամիջոցների ինքնավարության սկզբունքով:

110.11-րդ հոդվածի 1-ին կետը տարբերություն է դնում հօգուտ տարածքային կամ փոքրամասնությունների լեզուների առաջարկված պարտավորությունների միջև ռադիոյի և հեռուստատեսության բնագավառներում ըստ այնմ, թե վերջինս կատարո՞ւմ է արդյոք հասարակական ծառայության առաքելություն: Այս առաքելությունը, որը կարող է իրագործվել պետական կամ մասնավոր հեռարձակման մարմնի կողմից, ընդգրկում է ծրագրերի լայն շրջանակի ապահովումը, ներառյալ փոքրամասնության ճաշակի և հետաքրքրությունների նկատառումը: Այս առումով պետությունը կարող է նախատեսել (օրինակ՝ օրենսդրության մեջ կամ հեռարձակութերի հանար մասնագրելում) հաղորդումներ տարածքային կամ փոքրամասնությունների լեզուներով: Այս իրադրությանն է վերաբերում անքանեւոր: Մյուս կողմից, որտեղ հեռարձակումը դիտվում է որպես զուտ մասնավոր սեկտորի գործառույթ, պետությունը չի կարող անել ավելին, քան «խրախուսել և/կամ աջակցել» (ք և գ ենթակետեր): Միայն վերջին իրադրությունը վերաբերում է գրավոր մասունքն (ե ենթակետ): Որտեղ տեղին

Է, կողմերի ստանձնած պարտավորությունը ներառում է տարածքային կամ փոքրամասնությունների լեզուներով հեռարձակողներին անհրաժեշտ հաճախականությունների տրամադրումը:

111. Որքան էլ նվազագույն լինի պետության դերը լրատվամիջոցների վերաբերմամբ, սովորաբար նա առնվազն պահպանում է հաղորդակցման ազատությունը երաշխավորելու կամ այդ ազատության արգելքների բացառումը ներառող միջոցներ ձեռնարկելու լիազորությունը: Այս պատճառով, 2-րդ կետը չի պարունակում նույն վերապահությունը, ինչ 1-ին կետը, որը վերաբերում է պետական իշխանությունների իրավասության աստիճանին: Ընդունման ազատությունը երաշխավորող պարտավորությունը վերաբերում է ոչ միայն հարևան երկրների հեռարձակած ծրագրերի ընդունման ճանապարհին դիտավորյալ կերպով դրված արգելքներին, այլև պասիվ արգելքներին, որոնք արդյունք են այդ ընդունումները հնարավոր դարձնելու համար իրավասու իշխանությունների՝ որևէ գործողություն կատարելու անկարողության:

112. Նկատի ունենալով, որ հեռարձակումները հարևան երկրներից կարող են չենթարկվել միևնույն օրինական պայմաններին, որոնք ստեղծված են տվյալ կողմի սեփական տարածքում, այս կետի երրորդ նախադասությունը առաջադրում է երաշխիք, որը ձևակերպված է նույն իմաստով, ինչ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետը, որը վերաբերում է խոսրի ազատությանը: Սակայն հեռուստատեսության վերաբերյալ պետք է նշել, որ այն երկրների համար, որոնք Անդրսահմանային հեռուստատեսության մասին եվրոպական կոնվենցիայի մասնակից կողմերից են, այն հանգամանքներն ու պայմանները, որոնցում կարող են սահմանափակվել խարտիայի 11-րդ հոդվածի 2-րդ կետով երաշխավորված ազատությունները, պետք է որոշված լինեն այդ կոնվենցիայով, մասնավորապես, իրենց տարածքները ծրագրային սպասարկումների վերահեռարձակումները չսահմանափակելու սկզբունքով, որը համապատասխանում է Անդրսահմանային հեռուստատեսության մասին կոնվենցիայի պայմաններին:

113.11-րդ հոդվածի 3-րդ կետը նախատեսում է ներկայացնել տարածքային կամ փոքրամասնությունների լեզուներ գործածողների շահերը լրատվամիջոցների բազմակարծության համար պատասխանատու մարմիններում: Այդպիսի կառուցվածքներ կան եվրոպայի երկրների մեծ մասում: «Կամ հաշվի առնվեն» բառերը մտցված են ի պատասխան այն հարցի որոշման հետ կապված հնարավոր դժվարությունների, թե ովքեր են այդ լեզուները գործածողների ներկայացուցիչները: Սակայն, CAHLR-ն գտնում է, որ բավարար է, եթե լեզվական խմբերը ներկայացված լինեն բնակչության մյուս կազմերի նման պայմաններով: Սա կարելի է կարգավորել օրինակ, տարածքային կամ փոքրամասնությունների լեզուները

ներկայացնող մարմինների միջոցով, որոնք նախատեսված են խարտիայի 7-րդ հոդվածի 4-րդ կետով:

## Հոդված 12. Մշակութային գործունեությունը և մշակութային հիմնարկները

114. Այս բնագավառում, ինչպես և 11-րդ հոդվածի դեպքում, երկրներից խնդրվում է պարտավորվել արդյունավետ գործելու հնարավորություն տալ պետական իշխանություններին, որքանով նրանք իրավասությունները, լիազորությունները կամ օրինական դեր ունեն: Սակայն, քանի որ պետական իշխանությունները անկանություն ունեն այն պայմանների վրա, որոնցում օգտագործվում են մշակութային հիմնարկները, խարտիան նրանցից պահանջում է հետևել, որ տարածքային կամ փորձամասնությունների լեզուները պատշաճ տեղ ունենան այդ հիմնարկների գործունեության մեջ:

115.1.ա կետով պետություններից խնդրվում է ընդհանրապես խրախուսել տարածքային կամ փորձամասնությունների լեզուներին յուրահատուկ մշակութային արտահայտչածների համար բնորոշ նախաձեռնությունները: Այդ աջակցության միջոցներն են նրանք, որոնք սովորաբար օգտագործվում են մշակութային զարգացման նպատակների համար: «Գործերը մատչելի դարձնելու բազմազան հնարավորություններ» արտահայտությունը, կախված մշակութային գործունեության համապատասխան ձևից, նշանակում է հրատարակում, ստեղծում, շնորհանդես, տարածում, հեռարձակում և այլն:

116. Բնակչության մեջ այդ լեզուներով խոսողների սահմանափակ թվի պատճառով տարածքային կամ փորձամասնությունների լեզուները չունեն նոյն մշակութային արտադրողականությունը, ինչ ավելի լայն տարածում ունեցող լեզուները: Հետևաբար, նրանց գործածությունը խթանելու, այլև նրանցով խոսողներին լայնածավալ մշակութային ժառանգությանը մերձեցման հնարավորություն տալու համար անհրաժեշտ է դիմել քարգմանության, կրկնօրինակման, հետ-համաժամանակյա քարգմանության և ենթագրման օգնությանը (կետ 1.գ): Մշակութային պատճենների վերացումը, սակայն, երկկողմանի գործընթաց է: Ուստի տարածքային կամ փորձամասնությունների լեզուների կենսունակության և կարգավիճակի համար էական է, որ նրանցով ստեղծված կարևոր գործերը հայտնի դառնան ավելի լայն հասարակայնությանը: Սա է 1.թ կետի նպատակը:

117. Նկատի ունենալով մշակութային հաստատությունների, այսինքն՝ այն մարմինների գործունեությունը, որոնք պարտավոր են բազմազան ձևերով աջակցել մշակութային գործունեությանը, երկրներից խնդրվում է հետևել, որ այդ հաստատությունները իրենց ծրագրերում բավարար կարևորություն տան տարածքային կամ փորձամասնությունների լեզուների իմացությանն ու գործածությանը և նրանց հետ կապված մշակույթներին (հոդված 12, կետ 1. դ և զ): Խարտիան չի կարող անշուշտ սահմանել, թե ինչպես պետք է

տարածքային կամ փոքրամասնությունների լեզուները ներգրավվեն այդ հաստատությունների գործունեության մեջ: Այն պարզապես խոսում է նրանց համար «համապատասխան պայմաններ» ստեղծելու մասին: Այս ոլորտում պետությունները ընդհանուր առմամբ առաջնորդող և վերահսկող դեր ունեն, նրանցից չի պահանջվում անձամբ իրազործել այդ խնդիրը, այլ միայն «երաշխավորել», որ դա արվի:

118. Խարտիան նաև նախատեսում է յուրաքանչյուր տարածքային կամ փոքրամասնության լեզվի համար ստեղծել այդ լեզվով եղած գործերը հավաքող, օրինակը պահպանող և տարածող մարմին (հոդված 12, կետ 1. է): Նկատի ունենալով այն բույլ իրավիճակը, որում գտնվում են տարածքային կամ փոքրամասնությունների շատ լեզուներ, այս տիպի աշխատանքը անհրաժեշտ է կազմակերպել սխստեմատիկաբար՝ բողենվով, որ նրանց կազմակերպման ձևը որոշի պետությունը: Այս է կետի իրազործման նպատակի համար որոշ երկրների համար կարող է հարկ լինել հարմարեցնել իրավական գրապահոցների և արխիվների վերաբերյալ իրենց օրենսդրությունը այնպես, որ դրա համար նախատեսված մարմինները կարողանան մասնակցել տարածքային կամ փոքրամասնությունների լեզուներով ստեղծված աշխատությունների պահպանմանը:

119. 12-րդ հոդվածի 1-ին կետի կիրառումը վերաբերում է այն տարածքին, որտեղ գործածվում են տարածքային կամ փոքրամասնությունների լեզուները, եթե նույնիսկ ընդունվում է, որ իրականում նրա դրույթներից շատերի հետևանքները առկա են նաև այդ տարածքից դուրս: Սակայն, նկատի ունենալով մշակութային զարգացման բնոյքը և լեզուների գործածության ավանդական սահմաններից դուրս ծագող կարիքները (մասնավորապես՝ որպես արդյունք ներքին վերաբնակեցման) 12-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է դրույթներ, որոնք համապատասխանում են 8-րդ հոդվածի 2-րդ կետին:

120. Բոլոր երկրները ձգտում են իրենց մշակույթը տարածել արտասահմանում: Այդ մշակույթի լիակատար և հավաստի պատկերը տալու համար այդպիսի տարածումը չպետք է անտեսի տարածքային կամ փոքրամասնությունների լեզուներն ու մշակույթը: Այս պարտավորությունը, որ նախատեսվում է 12-րդ հոդվածի 3-րդ կետով, ներկայացնում է տարածքային կամ փոքրամասնությունների լեզուների ճանաչման՝ խարտիայի II մասի 7-րդ հոդվածի 1.ա կետում արտահայտված սկզբունքի կիրառման մի ուղին:

### Հոդված 13. Տնտեսական և սոցիալական կյանքը

121. Տնտեսական և սոցիալական համակարգերում, որոնցով բնութագրվում են Եվրոպայի խորհրդի երկրները, պետական իշխանությունների միջամտությունը տնտեսական և սոցիալական կյանքին հիմնականում սահմանափակվում է օրենքների և ենթաօրենսդրական ակտերի

հրապարակմամբ: Նշված հաճգամանքներից ելնելով՝ սահմանափակված է իշխանությունների գործունեության հնարավորությունը՝ վերահսկելու համար, ստանո՞ւմ են արդյոք տարածքային կամ փոքրամասնությունների լեզուները հարկ եղած ուշադրությունը այս ոլորտներում: Այնուամենայնիվ, խարտիան նախատեսում է մի շարք միջոցառումներ այս բնագավառում: Այն մի կողմից ձգտում է վերացնել այդ լեզուների գործածությունը տնտեսական կամ սոցիալական կյանքում արգելող կամ չփրախուսող միջոցառումները, մյուս կողմից՝ առաջադրում է մի շարք դրական միջոցառումներ:

122. 13-րդ հոդվածի 1-ին կետի դրույթները կոնկրետ կիրառություն է տալիս ոչ խորականության սկզբունքին: Ահա թե ինչու նախատեսվում է դրանք կիրառել պայմանավորվող պետությունների ամբողջ տարածքներով, որտեղ գործածվում են այն աշխարհագրական տարածքներով, որտեղ գործածվում են այդ լեզուները: «Որքանով դա բանականորեն հնարավոր է» վերապահության կապակցությամբ պետք է հղում անել վերը տրված 10-րդ հոդվածի բացատրություններին (տես կետ 104): Վերջապես, կողմերի պարտավորությունները տարածվում են միայն պետական իշխանությունների իրավասության սահմաններում, մի վերապահություն, որը, սակայն, տեղին է միայն զ ենթակետի վերաբերյալ:

#### **Հոդված 14. Անդրսահմանային փոխանակումներ**

124. Այս հոդվածը ընդլայնում և զարգացնում է 7-րդ հոդվածի 1.թ կետում շարադրված զաղափարը և հետևաբար հղում է արվում վերը տրված բացատրություններին (տես 69 և 70 կետերը):

125. Շատ բնագավառներում անդրսահմանային համագործակցությունը զարգանում է տարբեր երկրների հարևան շրջանների միջև: Նշվում է, որ որոշ դեպքերում այդպիսի իրադրությունը դեռևս կարող է դիտվել որպես պրոբլեմ տարածքային ամբողջականության տեսակետից: Ներկայումս տեղի ունեցող եվրոպական երկրների մերձեցումը, այնուամենայնիվ, համապատասխան պետությունների համար այժմ ստեղծում է հնարավորություն օգտագործելու «մշակութային գործոնը» իրենց փոխականությունը խորացնելու համար: Եվրոպայի խորհուրդը պատրաստել է շրջանակային կոնվենցիա անդրսահմանային համագործակցության մասին տեղական և տարածքային մակարդակներում: Քանի որ ցանկալի է, որ այդպիսի համագործակցությունը զարգանա ընդհանուր ձևով, բ կետն ընդգծում է, որ սա մասնավորապես այն

դեպքն է, եթե միևնույն տարածքային լեզուն խոսվում է սահմանի երկու կողմերում:

126. Քննարկվող համագործակցությունը կարող է տարածվել այնպիսի հարցերի վրա, ինչպիսիք են դպրոցների եղբայրացումը, ուսուցիչների փոխանակումը, դիլումների և որևէ ավորման փոխադրք ճանաչումը, մշակութային միջոցառումների համատեղ կազմակերպումը, մշակութային արժեքների շրջանառության զարգացումը (գրքեր, ֆիլմեր, ցուցահանդեսներ և այլն) և մշակութային գործակալությունների (քատերախմբերի, դասախոսների և այլն) ամերսահմանային գործունեությունը: Որոշ պարագաներում բավարար (և նվազ ծախսատար) միջոց կլինի նաև խարտիայի այլ հոդվածների տակ ընկերող պարտավորությունների իրազրությունը, օրինակ՝ համաձայն բարձրագույն կրթության հաստատությունների վերաբերյալ դրույթի, ինչպես շարադրված է 8-րդ հոդվածի 1.ե կետում, երկողմանի համաձայնությամբ կարելի է նախատեսել որ ուսանողները հաճախեն հարեւան երկրի համապատասխան հաստատությունները:

#### **Մաս IV. Խարտիայի կիրառումը**

##### **Հոդվածներ 15 - 17**

127. Խարտիայի կիրառումը Եվրոպայի խորհրդի, նրա անդամ պետությունների, ընդհանրապես հասարակության կողմից վերահսկելի դարձնելու համար խարտիան ընտրել է իր նպատակների հետապնդման ուղղությամբ կատարված գործողությունների մասին կողմերի պարերական գեկույցների համակարգը: Զեկույցները ներկայացվում են երեք տարին մեկ սակայն առաջին գեկույցը, որը նախատեսված է նկարագրելու տարածքային կամ փոքրամասնությունների լեզուների իրավիճակը խարտիան համապատասխան երկրի համար ուժի մեջ մտնելու ժամանակ, պետք է ներկայացվի այդ պահից հետո մեկ տարվա ընթացքում:

128. Ապահովելու համար խարտիայի իրազրությունը վերահսկելու այս համակարգի արդյունավետությունը, խարտիան նախատեսում է ստեղծել փորձագետների կոմիտե, որը քննելու է տարբեր կողմերի ներկայացրած գեկույցները: Փորձագետների կոմիտեն նաև հնարավորություն կունենա մերձենալու այն մարմիններին կամ միավորումներին, որոնք կցանկանան լրացրուիչ տեղեկություններ տրամադրել կամ ներկայացնել խարտիայի, հատկապես նրա III մասի (հոդված 16, կետ 2) կիրառման հետ առնչվող յուրահատուկ իրադրությունները: Միայն որևէ կողմնում օրինականորեն հիմնված մարմինները կարող են առնչվել փորձագետների այս կոմիտեի հետ այդ կողմին վերաբերող հարցերով: Այս կանոնի նպատակն է արգելել այն խմբերին, որոնց դեկազար կենտրոնը գտնվում է խարտիայի կիրառման հետ կապված երկրից լուրս, օգտագործել նրա սահմանած վերահսկողության համակարգը կողմերի միջև երկարակություն սերմանելու համար:

129. Պետք է շեշտել, որ սա դատական գանգատարկման նմանվող լնթացակարգ չէ: Փորձագետների կոմիտեին միայն հրահանգված է հետևելու խարտիայի իրագործմանը և տեղեկատվություն ստանալու այդ նպատակով: 16-րդ հոդվածում հիշատակված մարմինները չեն կարող նրան խնդրել գործելու որպես այս կամ այն չափով դատական բողոքարկման մարմին:

130. Փորձագետների կոմիտեն կարող է ստուգել իր կողմից ստացված՝ համապատասխան երկրներին վերաբերող ցանկացած տեղեկատվություն և կարող է խնդրել նրանց տալ լրացուցիչ բացատրություններ կամ տեղեկատվություն՝ հետազոտություններ կատարելու նպատակով: Արդյունքները պետք է հայտնվեն Նախարարների կոմիտեին՝ փորձագետների գեկույցների ներկայացման առիթով տրված՝ համապատասխան պետությունների մեջնաբանությունների հետ միասին: Թեև կարող է բվալ, թե բացախոսության շահերից ելնելով այս գեկույցները պետք է ինքնարերարար հրատարակվեն, համարվել է, որ քանի որ դրանք կարող են պարունակել առաջարկություններ հաճանարարականների համար, որ Նախարարների կոմիտեն կարող է տալ մեկ կամ մի քանի երկրի, պետք է թողնել Նախարարների կոմիտեին՝ ամեն դեպքի համար մեկ առ մեկ վճռել՝ ինչ չափով պետք է գեկույցները հրատարակվեն:

131. Փորձագետների կոմիտեի անդամների թիվը պետք է լինի նույնը, ինչ որ խարտիայի կողմերի թիվն է: Նրանք պետք է լինեն ճանաչված գլխակներ տարածքային կամ փոքրամասնությունների լեզուների բնագավառում: Միաժամանակ, շեշտելով «ամենաբարձր բարոյականության» ներքին անձնական հատկանիշը, խարտիան հստակեցնում է, որ կոմիտեում նշանակված փորձագետները իրենց պարտականությունը կատարելիս պետք է անկախ գործելու ազատություն ունենան և ենթակա չլինեն համապատասխան կառավարությունների հրահանգներին:

132. Փորձագետների կոմիտեի կողմից խարտիայի կիրառմանը հետևելու այս մեխանիզմը հնարավոր կղարձնի տրամադրության տակ ունենալ տարածքային կամ փոքրամասնությունների լեզուների մասին օրյեկտիվ տեղեկատվություն՝ միաժամանակ լիովին հաշվի առնելով պետությունների հատուկ պատասխանատվությունը:

## Մաս V. Եզրափակիչ դրույթներ

133. 18-ից 23-րդ հոդվածներում պարունակվող եզրափակիչ դրույթները հիմնված են Եվրոպայի խորհրդի շրջանակներում կնքվող կոնվենցիաների և համաձայնագրերի հանար կիրառվող եզրափակիչ դրույթների նմուշօրինակի վրա:

134. Որոշվել է այս եզրափակիչ դրույթների մեջ չներառել դրույթ տարածքների վերաբերյալ, որ հնարավորություն կտար պետություններին

բացառելու իրենց տարածքների մի մասը խարտիայի կիրառման ոլորտից: Սրա պատճառն այն է, որ սույն խարտիայի ներքին առանձնահատկությունը արդեն այն է, որ նա հատկապես վերաբերում է առանձին տարածքների, այսինքն այն տարածքներին՝ որտեղ գործածվում են տարածքային կամ փոքրամասնությունների լեզուները, բացի այդ, պայմանավորվող պետությունները 3-րդ հոդվածի 1-ին կետով արդեն իրավունք ունեն ճշգրտելու այն տարածքային կամ փոքրամասնությունների լեզուները, որոնց նկատմամբ կիրառվելու են նրանց մանրամասն պարտավորությունները:

135. 21-րդ հոդվածով կողմերը իրավունք ունեն վերապահություններ անելու խարտիայի միայն 7-րդ հոդվածի 2-ից 5-րդ կետերի վերաբերյալ: CAHLR-ն գտնում է, որ պայմանավորվող պետությունները պետք է հնարավորություն չունենան վերապահություններ անելու 7-րդ հոդվածի 1-ին կետի վերաբերյալ, քանի որ այդ կետը պարունակում է նապատակներն ու սկզբունքները: Ինչ վերաբերում է III մասին, ապա այն գտնում է, որ տերստում, որն արդեն կողմերին թույլ է տալիս այդպիսի մեծ ընտրություն կատարել ստանձնած պարտավորությունների նկատմամբ, վերապահությունները տեղին չեն լինի:

136. Խարտիայի խնդրո առարկայի կարևորության պատճառով շատ երկրների համար, որոնք Եվրոպայի խորհրդի անդամ չեն, կամ դեռևս նրա անդամ չեն, որոշվել է, որ խարտիան պետք է լինի բաց կոնվենցիա, որին կարող են իրավիրվել միանալու ոչ անդամ պետությունները (հոդված 20):

### 3. ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ

#### Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին <sup>39</sup>

Սույն Շրջանակային Կոնվենցիան ստորագրած Եվրոպայի Խորհրդի անդամ պետությունները և այլ պետությունները,

հաշվի առնելով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն է իր անդամ պետությունների ավելի սերտ միության հասնելը՝ նրանց ընդհանուր հարստություն համարվող իդեալների և սկզբունքների պաշտպանության և զարգացման նպատակով,

հաշվի առնելով, որ այդ նպատակին հասնելու միջոցներից մեկը՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պահպանումը և հետագա իրականացումն է,

ցանկանալով զարգացնել և կյանքի կոչել Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների՝ Պետությունների և Կառավարությունների դեկավարների՝ 1993 թվականի հոկտեմբերի 9-ին ընդունված Վիեննայի Հռչակագրի դրույթները,

<sup>39</sup> Պաշտոնական քարզմանություն

իրենց համապատասխան տարածքներում ազգային փոքրամասնությունների գոյությունը պաշտպանելու վճռականությամբ լեցուն,

հաշվի առնելով, որ Եվրոպայի պատմության մեջ եղած ցնցումները ցույց են տվել, որ ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը անհրաժեշտ է Եվրոպական մայրամարուն կայունության, ժողովրդավարական անվտանգության և խաղաղության համար,

հաշվի առնելով, որ բազմակարծիք և խսկապես ժողովրդավարական հասարակությունը պարտավոր է ոչ միայն հարգել ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձի եթեկական, մշակութային, լեզվական և կրոնական ինքնությունը, այլև ստեղծել համապատասխան պայմաններ, որոնք թույլ կտան արտահայտել պահպանել և զարգացնել այդ ինքնությունը,

հաշվի առնելով, որ հանդուրժողականության և երկխոսության մքնուրութիւն ստեղծումն անհրաժեշտ է, որպեսզի մշակութային բազմազանությունը լինի յուրաքանչյուր հասարակության հարստացման և ոչ թե պառակտման աղբյուր և գործոն,

հաշվի առնելով, որ հանդուրժող և բարգավաճող Եվրոպայի զարգացումը կախված է ոչ միայն երկրների միջև համագործակցությունից, այլև պահանջում է տեղական և տարածաշրջանային իշխանությունների միջամատադրության համագործակցություն՝ յուրաքանչյուր պետության սահմանադրությունն ու տարածքային ամրողականությունը հարգելու պայմանով,

Ելնելով «Մարդու իրավունքների և իրմանարար ազատությունների պաշտպանության մասին» Կոնվենցիայից և դրա Արձանագրություններից,

Ելնելով Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիաներում և հոչակագրերում, ինչպես նաև Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհրդաժողովի փաստաթղթերում, մասնավորապես, 1990 թվականի հունիսի 29-ի Կոպենհագենի փաստաթղթում, ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության բնագավառում ստանձնած պարտավորություններից,

Վճռականությամբ լեցուն՝ որոշելու այն սկզբունքները, որոնց պետք է հետևել, և դրանցից բխող պարտականությունները անդամ պետություններում և այլ պետություններում, որոնք կարող են դառնալ սույն փաստաթղթի մասնակիցներ, ազգային փարքամասնությունների և այդ փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար, հարգելով օրենքի գերակայությունը, պետությունների տարածքային ամրողականությունը և ինքնիշխանությունը,

սույն Շրջանակային կոնվենցիայում ամրագրված սկզբունքները ազգային օրենսդրության և համապատասխան պետական բաղաքականության հիման վրա կյանքի կոչելու վճռականությամբ լի,

համաձայնեցին հետևյալի շուրջ.

## Բաժին 1

### Հոդված 1

Ազգային փոքրամասնությունների և այդ փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանությունը մարդու իրավունքների միջազգային պաշտպանության անբաժան մասն է և, որպես այդպիսին, հանդիսանում է միջազգային համագործակցության բնագավառ:

### Հոդված 2

Սույն Շրջանակային կոնվենցիայի դրույթները պետք է կիրառվեն բարեխղճ կերպով, ըմբռնման և հանդուրժողականության ոգով և բարի-դրացիության, պետությունների միջև բարեկանական հարաբերությունների և համագործակցության սկզբունքներին համապատասխան:

### Հոդված 3

1. Ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձ պետք է ունենա այդպիսին համարվելու կամ չհամարվելու ազատ ընտրության իրավունք, և այդ ընտրությունը կամ այն իրավունքների իրականացումը, որոնք կապված են այդ ընտրության հետ, չպետք է տվյալ անձին դնեն անբարենպաստ պայմաններում:

2. Ազգային փոքրամասնությունների պատկանող անձինք անհատապես, ինչպես նաև մյուսների հետ խմբերով կարող են իրականացնել իրավունքներ և օգտվել ազատություններից, որոնք բխում են սույն Շրջանակային կոնվենցիայում ամրագրված սկզբունքներից:

## Բաժին 2

### Հոդված 4

1. Կողմերը պարտավորվում են ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար երաշխավորել օրենքի առջև հավասարություն և օրենքով հավասար պաշտպանություն: Այդ առումով արգելվում է ազգային փոքրամասնության պատկանելության վրա հիմնված ցանկացած խտրականություն:

2. Կողմերը պարտավորվում են անհրաժեշտ դեպքերում ձեռնարկել համապատասխան միջոցներ, որպեսզի տնտեսական, սոցիալական, քաղաքական և մշակութային կյանքի բոլոր բնագավառներում աջակցեն ազգային փոքրամասնությանը և բնակչության մեծամասնությանը

պատկանող անձանց միջև լիակատար և իրական հավասարությունը: Այս նպատակով Կողմերը, ըստ պատշաճի, պետք է հաշվի առնեն ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց առանձնահատուկ պայմանները:

3. Երկրորդ կետի դրույթներին համապատասխան ընդունված միջոցները չեն պետք է համարվեն խորականություն:

## Հոդված 5

1. Կողմերը պարտավորվում են նպաստել ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար այնպիսի պայմանների ստեղծմանը, որոնք նրանց անհրաժեշտ են իրենց մշակույթը պահպանելու և զարգացնելու, ինչպես նաև ինքնության հիմնական տարրերը՝ կրոնը, լեզուն, ավանդույթները և մշակութային ժառանգությունը պահպանելու համար:

2. Իրենց ընդհանուր ինտեգրացիոն քաղաքականության իրականացման համար ձեռնարկվող միջոցներին ոչ ի վեա Կողմերը պետք է ձեռնպահ մնան ցանկացած քաղաքական կամ գործնական գործողությունից, որը հետապնդում է ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց, հակառակ նրանց կամքի, միաձուլելու նպատակ, և պետք է այդ անձանց պաշտպանեն ցանկացած գործողությունից, որը ուղղված է այդպիսի միաձուլման:

## Հոդված 6

1. Կողմերը պետք է խրախուսեն հանդուժողականության և մշակույթների միջև երկխոսության մքնադրտը և պետք է արդյունավետ քայլեր ձեռնարկեն իրենց տարածքներում բնակվող բոլոր անձանց միջև, անկախ նրանց էթնիկական, մշակութային, լեզվական կամ կրոնական պատկանելությունից, փոխադարձ հարգաճքը, փոխըմբռնումը և համագործակցությունը խրանելու համար, մասնավորապես, կրության, մշակույթի և լրատվական միջոցների բնագավառներում:

2. Կողմերը պարտավորվում են ձեռնարկել համապատասխան միջոցներ այն անձանց պաշտպանելու համար, ովքեր կարող են իրենց էթնիկական, մշակութային, լեզվական կամ կրոնական պատկանելության պատճառով դառնալ սպառնալիքների, խոսքի, մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունքների հարգումը:

## Հոդված 7

Կողմերը պետք է ապահովեն ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձի՝ խաղաղ հանրահավաքների, միությունների մեջ ընդգրկվելու, խոսքի, մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունքների հարգումը:

## **Հոդված 8**

Կողմերը պարտավորվում են ճանաչել ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձի՝ սեփական կրոնը կամ հավատը բացահայտ դաշվանելու, ինչպես նաև կրոնական հաստատություններ, կազմակերպություններ և ընկերություններ ստեղծելու իրավունքը:

## **Հոդված 9**

1. Կողմերը պարտավորվում են ճանաչել, որ ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձի՝ իր կարծիքն արտահայտելու իրավունքը ներառում է կարծիքներ ունենալու և փոքրամասնության լեզվով տեղեկատվություն և գաղափարներ ստանալու և հաղորդելու ազատությունը՝ անկախ պետական իշխանությունների միջանակներում և սահմաններից: Իրենց իրավական համակարգի շրջանակներում Կողմերը պետք է ապահովեն, որ լրատվական միջոցների մատչելիության հարցում ազգային փոքրամասնությունների պատկանող անձինք չենքարկվեն խտրականության:

2. Առաջին կետը չի արգելում, որ Կողմերը ռադիոյի և հեռուստահեռարձակման կամ կինեմատոգրաֆիայի ձեռնարկությունների համար արտոնագրում պահանջեն՝ առանց որևէ խտրականության և օրյեկտիվ չափանիշների հիման վրա:

3. Կողմերը չափեր է արգելեն ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց կողմից տպագիր մամուլի միջոցների ստեղծումն ու օգտագործումը: Ռադիոյի և հեռուստահեռարձակման իրավական դաշտի շրջանակներում, որքանով դա հնարավոր է, և հաշվի առնելով 1-ին կետի դրույթները՝ Կողմերը ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար պետք է երաշխավորեն լրատվական սեփական միջոցների ստեղծման և օգտագործման հնարավորություն:

4. Իրենց իրավական համակարգերի շրջանակներում Կողմերը պետք է համապատասխան /համարժեք/ միջոցներ ձեռնարկեն ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար լրատվական միջոցների մատչելիությունը դյուրացնելու, ինչպես նաև հանդուժողականությունը խրախուսելու և մշակութային բազմակարծությունը ապահովելու համար:

## **Հոդված 10**

1. Կողմերը պարտավորվում են ճանաչել, որ ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձ անձնական կյանքում և հասարակական վայրերում իր փոքրամասնության լեզվով բանավոր և գրավոր անարգել օգտվելու իրավունք ունի:

2. Ավանդապես կամ զգայի բանակությամբ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանցով բնակեցված վայրերում, եթե այդ անձինք խնդրել են, և այնտեղ, որտեղ այդպիսի խնդրանքը

համապատասխանում է իրական կարիքներին, Կողմերը, որքանով հնարավոր է, պետք է ձգտեն ապահովել այնպիսի պայմաններ, որոնք հնարավորություն կտան այդ անձանց և վարչական իշխանությունների միջև հարաբերություններում օգտագործել փոքրամասնության լեզուն:

3. Կողմերը պարտավորվում են երաշխավորել ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձի իրավունքը՝ ամենասեղմ ժամկետներում իրեն հասկանալի լեզվով տեղեկություն ստանալ իր ձերքակալության պատճառների, իր դեմ հարուցված մեղադրանքների բնույթի և պատճառների մասին, ինչպես նաև իր պաշտպանությունը իրականացնել այդ լեզվով՝ դրա համար անհրաժեշտության դեպքում ստանալով քարզմանչի անվճար ծառայություն:

## Հոդված 11

1. Կողմերը պարտավորվում են ճանաչել, որ ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձ ունի իր անունը, ազգանունը և հայրանունը փոքրամասնության լեզվով օգտագործելու, ինչպես նաև դրանց պաշտոնական ճանաչման իրավունք՝ տվյալ երկրի իրավական պահանջներին համապատասխան:

2. Կողմերը պարտավորվում են ճանաչել, որ ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձ իր փոքրամասնության լեզվով հասարակության համար տեսանելի մասնավոր բնույթի նշումներ, գրություններ և այլ տեղեկատվություն տեղադրելու իրավունք ունի:

3. Ազգային փոքրամասնության պատկանող անձանց զգակի թվաքանակով պահանջարար բնակեցված տարածքներում Կողմերը իրենց իրավական համակարգերի շրջանակներում, անհրաժեշտության դեպքում ներառյալ նաև այլ պետությունների հետ կնքված համաձայնագրերը, ինչպես նաև հաշվի առնելով կոնկրետ պայմանները, պետք է ապահովեն ավանդական տեղական անվանումների, փորոցների անվանումների, ինչպես նաև բնակչության համար նախատեսված տեղագրական այլ նշումների, փոքրամասնության լեզվով ցուցանակների տեղադրումը, եթե այդպիսի նշումների բավարար կարիք կա:

## Հոդված 12

1. Կողմերը անհրաժեշտության դեպքում կրթության և գիտական ուսումնասիրությունների բնազավառում պետք է միջոցներ ձեռնարկեն իրենց ազգային փոքրամասնությունների և բնակչության մեծամասնության մշակույթի, պատճության, լեզվի և կրոնի վերաբերյալ գիտելիքներն ամրապնդելու համար:

2. Այս ենթատեքստում Կողմերը, մասնավորապես, պետք է համարժեք հնարավորություններ տրամադրեն ուսուցիչների պատրաստման, դպրոցական դասագրքերով ապահովման համար և դյուրացնեն շփումները տարբեր համայնքների ուսանողների և ուսուցիչների միջև:

3. Կողմերը պարտավորվում են ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար բոլոր մակարդակներով ապահովել կրթության մատչելիության հավասար հնարավորություններ:

### Հոդված 13

1. Իրենց կրթական համակարգերի շրջանակներում Կողմերը պետք է ճանաչեն, որ ազգային փոքրամասնության պատկանող անձինք իրավունք ունեն ստեղծելու և ղեկավարելու իրենց սեփական մասնավոր կրթական և վերապատրաստման հաստատությունները:

2. Այս իրավունքի իրագործումը Կողմերի վրա ոչ մի ֆինանսական պարտավորություն չի դնում:

### Հոդված 14

1. Կողմերը պարտավորվում են ճանաչել ազգային փոքրամասնությանը պատկանող յուրաքանչյուր անձի իրավունքը՝ սովորել իր փոքրամասնության լեզուն:

2. Ավանդաբար կամ զգալի քանակությամբ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանցով բնակեցված տարածքներում բավարար կարիքի դեպքում Կողմերը հնարավորությունների սահմաններում և իրենց կրթական համակարգերի շրջանակներում պետք է ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար երաշխավորեն իրենց լեզուն ուսումնասիրելու կամ այդ լեզվով կրթություն ստանալու համարժեք հնարավորություններ:

3. Սույն հոդվածի 2-րդ պարբերության դրույթները չպետք է իրագործվեն ի վճառ պաշտոնական լեզվի ուսուցման և դասավանդման:

### Հոդված 15

Կողմերը պետք է անիրաժեշտ պայմաններ ստեղծեն ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց արդյունավետ մասնակցությունը մշակութային, հասարակական և տնտեսական կյանքում, ինչպես նաև պետական գործունեության մեջ, մասնավորապես, իրենց առնչվող հարցերում ապահովելու համար:

### Հոդված 16

Կողմերը պետք է ձեռնպահ մնան այնպիսի միջոցներից, որոնք փոխում են բնակչության կառուցվածքային կազմը այն տարածքներում, որոնք բնակեցված են ազգային փոքրամասնություններին պատկանող անձանցով, և նպատակ ունեն սահմանափակելու սույն Շրջանակային կոնվենցիայի սկզբունքներից բխող իրավունքները և ազատությունները:

## **Հոդված 17**

1. Կողմերը պարտավորվում են չխռչնդոտել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքը՝ հաստատել և պահպանել ազատ և խաղաղ միջահմանային շփումներ այլ պետություններում օրինական կերպով գտնվող անձանց հետ, մասնավորապես, նրանց հետ, ովքեր ունեն լնդիանուր էքնիկական ինքնություն, լեզվական, կրոնական կամ մշակութային լնդիանուր ժառանգություն:

2. Կողմերը պարտավորվում են չխռչնդոտել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ ոչ կառավարական կազմակերպությունների գործունեությանը ազգային և միջազգային մակարդակներով մասնակցելու իրավունքը:

## **Հոդված 18**

1. Համապատասխան ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց պաշտպանությունն ապահովելու համար Կողմերը անհրաժեշտության դեպքում պետք է ջանք գործադրեն այլ պետությունների, մասնավորապես, հարեւան երկրների հետ երկկողմ և բազմակողմ համաձայնագրեր կնքելու համար:

2. Կողմերը անհրաժեշտության դեպքում պետք է միջոցներ ձեռնարկեն միջսահմանային համագործակցությունը խրախուսելու համար:

## **Հոդված 19**

Կողմերը պարտավորվում են հարգել և կիրառել սույն Շրջանակային կոնվենցիայի սկզբունքները՝ անհրաժեշտության դեպքում կատարելով միայն այնպիսի սահմանափակումներ և բացառություններ, որոնք նախատեսված են միջազգային իրավական փաստաթղթերում, մասնավորապես, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Կոնվենցիայում, այնքանով, որքանք դրանք վերաբերում են նշված սկզբունքներից բխող իրավունքներին և ազատություններին:

## **Բաժին 3**

## **Հոդված 20**

Սույն Շրջանակային կոնվենցիայի սկզբունքներից բխող իրավունքների և ազատությունների իրազործման ժամանակ ազգային փոքրամասնությանը պատկանող յուրաքանչյուր անձ պետք է հարգի ազգային օրենսդրությունը և մյուսների իրավունքները, մասնավորապես, բնակչության մեծամասնության և այլ ազգային փոքրամասնությունների իրավունքները:

## **Հոդված 21**

Ոչինչ սույն Շրջանակային կոնվենցիայում չի կարող մեկնաբանվել որպես ցանկացած անհատի որևէ ենթադրվող գործունեությամբ զբաղվելու կամ ինչ-որ գործողություններ կատարելու իրավունք, որը հակասում է միջազգային իրավունքի, մասնավորապես, ինքնիշխան հավասարության, տարածքային ամբողջականության և պետությունների քաղաքական անկախության սկզբունքներին:

## **Հոդված 22**

Ոչինչ սույն Շրջանակային կոնվենցիայում չի կարող մեկնաբանվել որպես Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի օրենքներով կամ որևէ այլ համաձայնագրով, որին այդ Կողմը մասնակից է, երաշխավորվող մարդու իրավունքների կամ իիմնարար ազատությունների սահմանափակում կամ նվազեցում:

## **Հոդված 23**

Սույն Շրջանակային կոնվենցիայում շարադրված սկզբունքներից բխող ազատությունները և իրավունքները, այնքանով, որքանով հանդիսանում են «Մարդու իրավունքների և իիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Կոնվենցիայի կամ դրա Արձանագրությունների առարկա, պետք է հասկացվեն որպես վերջինիս համապատասխան դրույթներ:

## **Բաժին 4**

## **Հոդված 24**

1. Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն լիազորված է հետևելու Պայմանավորվող պետությունների կողմից սույն Շրջանակային կոնվենցիայի իրագործմանը:

2. Կողմերը, որոնք չեն հանդիսանում Եվրոպայի խորհրդի անդամ, Կոնվենցիայի իրագործման մեխանիզմին կմասնակցեն համաձայն այն պայմանների, որոնք պետք է սահմանվեն:

## **Հոդված 25**

1. Որևէ Պայմանավորվող կողմի նկատմամբ սույն Շրջանակային կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, վերջինս Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին պետք է փոխանցի օրենսդրական և այլ միջոցառումների մասին համալիր տեղեկատվություն,

որոնք ընդունվել և ձեռնարկվել են սույն Շրջանակային կոնվենցիայից բխող սկզբունքները իրականացնելու համար:

2. Հետագայում յուրաքանչյուր Կողմ պարբերաբ և ամեն անգամ, եթե Նախարարների կոմիտեի կողմից կստանա համապատասխան խնդրանք, Գլխավոր քարտուղարին պետք է ներկայացնի ցանկացած այլ տեղեկատվություն՝ կապված սույն Շրջանակային կոնվենցիայի իրազործման հետ:

3. Սույն հոդվածի դրույթների համաձայն ստացված ամբողջ տեղեկատվությունը Գլխավոր քարտուղարը պետք է փոխանցի Նախարարների կոմիտեին:

## Հոդված 26

1. Սույն Շրջանակային կոնվենցիայում շարադրված սկզբունքների իրականացման համար Կողմերից որևէ մեկի ընդունած միջոցառումների նույնականության գնահատման ժամանակ Նախարարների կոմիտեին պետք է օժանդակի Խորհրդակցական կոմիտեն, որի անդամները պետք է ճանաչված իրազեկություն ունենան ազգային փոքրամասնությունների պաշտպանության բնագավառում:

2. Խորհրդակցական կոմիտեի կազմավորման կարգը, ինչպես նաև աշխատանքային ընթացակարգը պետք է սահմանվեն Նախարարների կոմիտեի կողմից սույն Շրջանակային կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

## Բաժին 5

### Հոդված 27

Սույն Շրջանակային կոնվենցիան բաց է Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների ստորագրման համար: Մինչև Կոնվենցիաի ուժի մեջ մտնելը այն բաց է նաև ցանակացած այն պետության ստորագրման համար, ում կիրավիրի ստորագրել Նախարարների կոմիտեն: Կոնվենցիան ենթակա է վավերացման, ընդունման կամ հավանության: Վավերացման, ընդունման կամ հավանության վերաբերյալ փաստաթղթերը պետք է ի պահ տրվեն Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին:

### Հոդված 28

1. Սույն Շրջանակային կոնվենցիան ուժի մեջ կմտնի այն օրից եռամսյա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը, եթե, սույն Շրջանակային կոնվենցիաի 27-րդ հոդվածի դրույթներին համաձայն, Եվրոպայի խորհրդի տասներկու անդամ պետություններ կարտահայտեն իրենց համաձայնությունը սույն Կոնվենցիան իրենց համար պարտադիր լինելու մասին:

2. Յուրաքանչյուր անդամ պետության համար, որը հետագայուն կարտահայտի իր համաձայնությունը սույն Շրջանակային կոնվենցիան իր համար պարտադիր լինելու մասին, Կոնվենցիան ուժի մեջ կմտնի վավերացման, ընդունման կամ հաստատման փաստաթուղթը ի պահ հանձնելու օրից եռամսյա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:

## Հոդված 29

1. Սույն Շրջանակային կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց և Պայմանագրովող պետությունների հետ անցկացված խորհրդակցություններից հետո, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի որոշմամբ, որը համաձայն Եվրոպայի խորհրդի Կանոնադրության 20-րդ հոդվածի «Դ» կետի՝ ընդունվում է մեծամասնությամբ, Նախարարների կոմիտեն Եվրոպայի խորհրդի անդամ չհանդիսացող յուրաքանչյուր պետության կարող է առաջարկել միանալ սույն Շրջանակային կոնվենցիային, որը, համաձայն 27-րդ հոդվածի դրույթների, իրավիրվել է՝ ստորագրելու այն, բայց չի ստորագրել, ինչպես նաև որևէ այլ անդամ չհանդիսացող պետության:

2. Յուրաքանչյուր միացած պետության համար սույն Շրջանակային կոնվենցիան ուժի մեջ կմտնի միացման փաստաթուղթը Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելու օրից եռամսյա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:

## Հոդված 30

1. Յուրաքանչյուր պետություն ստորագրման կամ վավերացման պահին, ինչպես նաև ընդունման և միանալու փաստաթուղթը ի պահ հանձնելու ժամանակ կարող է նշել այն տարածքը կամ տարածքները, որոնց սահմաններում ինքը պատասխանատվություն է կրում միջազգային հարաբերությունների և սույն Կոնվենցիայի կիրառման համար:

2. Յուրաքանչյուր պետություն կարող է հետազայում՝ ցանկացած պահի, Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ուղղված հայտարարությամբ տարածել սույն Շրջանակային կոնվենցիայի կիրառումը որևէ որիշ՝ հայտարարության մեջ նշված տարածքի վրա: Այդ տարածքների վերաբերյալ սույն Կոնվենցիան ուժի մեջ կմտնի այդ հայտարարությունը Գլխավոր քարտուղարի ստանալու օրից եռամսյա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:

3. Նախորդ երկու կետերի դրույթների հիման վրա արված ցանկացած հայտարարություն կարող է հետ վերցվել Գլխավոր քարտուղարին ուղղված ծանուցագրի միջոցով՝ այդպիսի հայտարարության մեջ նշված ցանկացած տարածքի վերաբերյալ: Այդպիսի հետ վերցնելը ուժի մեջ կմտնի ծանուցագրի Գլխավոր քարտուղարի ստանալու օրից եռամսյա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:

## **Հոդված 31**

1. Յուրաքանչյուր կողմ ցանկացած պահի կարող է չեղյալ հայտարարել սույն Շրջանակային կոնվենցիան՝ ծանուցագիր հղելով Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին:

2. Այդպիսի չեղյալ հայտարարումը ուժի մեջ կմտնի ծանուցագիրը Գլխավոր քարտուղարի ստանալու օրից վեցամսյա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:

## **Հոդված 32**

Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը պետք է տեղեկացնի Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին, սույն Շրջանակային կոնվենցիան ստորագրած մյուս պետություններին և սույն Կոնվենցիային միացած յուրաքանչյուր պետության՝

ա/ ցանկացած ստորագրման մասին,

բ/ վավերացման, ընդունման, հավանության կամ միանալու վերաբերյալ յուրաքանչյուր փաստաթուղթ ի պահ հանձնելու մասին,

գ/ Շրջանակային կոնվենցիայի ուժի մեջ մտնելու ցանկացած օրվա մասին՝ համաձայն Կոնվենցիայի 28-րդ, 29-րդ և 30-րդ հոդվածների,

դ/ սույն Շրջանակային կոնվենցիային վերաբերող ցանկացած այլ ակտի, ծանուցագրի կամ հաղորդագրության մասին:

Ի վկայություն վերոհիշյալի՝ ներքոստորագրյալները, լինելով պատշաճ կերպով լիազորված, ստորագրեցին սույն Շրջանակային կոնվենցիան:

Կատարված է Ստրասբուրգում 1995 թվականի փետրվարի 1-ին, անգլերեն և ֆրանսերեն. երկու տեքստներն էլ հավասարագոր են և մեկական տարրերակով հանձնվում են ի պահ Եվրոպայի խորհրդի արխիվին: Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը հաստատված պատճենները պետք է փոխանցի Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ պետության, ինչպես նաև յուրաքանչյուր պետության, որին կառաջարկվի ստորագրել կամ միանալ սույն Շրջանակային կոնվենցիային:

## **ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ<sup>40</sup>**

### **Նախապատճերյուն**

1. Ավելի քան քառասուն տարիների ընթացքում, Եվրոպայի Խորհուրդը, բազմաթիվ առիթներով, ուսումնասիրել է ազգային փոքրամասնությունների

<sup>40</sup> Ոչ պաշտոնական թարգմանություն, տես՝ [http://www.coe.int/t/dghl/monitoring/minorities/1\\_atglance/PDF\\_Text\\_FCNM\\_hy.pdf](http://www.coe.int/t/dghl/monitoring/minorities/1_atglance/PDF_Text_FCNM_hy.pdf)

իրավիճակը: Խորհրդարանական Վեհաժողովը, իր գոյության առաջին տարվա ընթացքում (1949թ.), Իրավական և Վարչական Հարցերի Կոմիտեի գեկույցով, ճանաչեց «ազգային փոքրամասնությունների իրավունքների ընդլայնված պաշտպանության խնդրի» կարեռությունը: «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայում շրմդարկված ազգային փոքրամասնությունների որոշ իրավունքները երաշխավորելու համար, Վեհաժողովը 1961 թվականին առաջարկեց Կոնվենցիայի երկրորդ լրացուցիչ արձանագրության մեջ նոր հոդված ավելացնել: Կոնվենցիան 14-րդ հոդվածում պարզապես հոդված էր կատարում «ազգային փոքրամասնության պատկերացումներին» խորականությունների չկիրառման տեսանկյունից: 285 Հանձնարարականը (1961թ.) ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին հոդվածի նախազդի համար առաջարկեց հետևյալ ձևակերպումը.

«Ազգային փոքրամասնությանը պատկանող անձինք, իրենց խմբի մյուս անդամների հետ միասին, և հասարակական կարգին համապատասխան, չպետք է գրկվեն իրենց սեփական մշակույթից օգտվելու, իրենց լեզուն գործածելու, իրենց դպրոցները ստեղծելու և իրենց ընտրած լեզվով կրթություն ստանալու կամ իրենց կրոնը դավանելու և կիրառելու իրավունքից»:

2. Այդպիսի արձանագրություն կազմելու հնարավորությունը և նախատակահարմարությունը որոշելու նախատակով լիազորված փորձագետների կոմիտեն հետաձգեց իր աշխատանքները մինչև Բելգիական լեզվաբանական գործերում, (Մարդու իրավունքների Եվրոպական Դատարան. 1968թ. հուլիսի 27-ի դատավճիռը, Սերիա A #6) կրթության բնագավառում կիրառվող լեզուների վերաբերյալ վերջնական վճռի կայացումը: 1973թ. կոմիտեն եզրահանգեց այն կարծիքին, որ իրավական տեսակետից չկա հատուկ անհրաժեշտություն ազգային փոքրամասնությունների իրավունքները «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի լրացուցիչ արձանագրության առարկա դարձնելու համար: Այնուամենայնիվ, փորձագետները գտնում էին, որ իրավական առումով չկան մեծ խոչընդոտներ այդպիսի արձանագրության ընդունման համար, եթե դրա ընդունումը այլ պատճառներով կհամարվի նախատակահարմար:

3. Այնուհետև Խորհրդարանական Վեհաժողովը Նախարարների Կոմիտեին առաջարկեց մի շարք քաղաքական և իրավական միջոցառություններ, մասնավորապես, ազգային փոքրամասնությունների իրավունքների մասին արձանագրություն կամ կոնվենցիա կազմելու համար: 1134 հանձնարարականը (1990թ.) ներառում է այն սկզբունքները, որոնք Վեհաժողովի կողմից համարվել են անհրաժեշտ ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության համար: 1991թ. հոկտեմբերին Մարդու իրավունքների Կոմիտեին հանձնարարվեց, Եվրոպայի Անվտանգության և Համագործակցության Խորհրդաժողովի (ԵԱՀԽ) և

Սիավորված Ազգերի Կազմակերպության կողմից իրականացված աշխատանքները, ինչպես նաև Եվրոպայի Խորհրդում առկա մտորումները հաշվի առնելու պայմանով, իրավական և քաղաքական առումներով, որոշել այն պայմանները, համաձայն որի Եվրոպայի Խորհրդու կարող է գործունեություն ծավալել ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության համար:

4. 1992թ. մայիսին Նախարարների Կոմիտեն լիազորեց Մարդու Իրավունքների Կոմիտեին ուսումնասիրել ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանը Վերաբերող առանձնահատուկ իրավական նորմերի ձևակերպման հնարավորությունները: Այդ նպատակի համար, Մարդու Իրավունքների Կոմիտեն ստեղծեց փորձագետների կոմիտե (DH-MIN), որին 1993թ. մարտին տրված նոր մանդատի ներքո հանձնարարվեց առաջարկել այս բնագավառում հատուկ իրավական նորմեր Եվրոպայի Խորհրդի և ԵԱՀԽ միջև իրականացված աշխատանքը լրացնելու սկզբունքով: Մարդու Իրավունքների Կոմիտեն և DH-MIN-ը հաշվի առան բազմաթիվ տեքստեր, մասնավորապես, ժողովրդավարություն Իրավունքի Սիրոցով Հանձնաժողովի (այսպես կոչված՝ Վեճետիկի հանձնաժողով) կողմից կազմված «Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի մասին առաջարկը, «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի լրացուցիչ արձանագրության մասին ավստրիական առաջարկը, Վեհաժողովի 1201 (1993թ.) հանձնարարականում ընդունված «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի լրացուցիչ արձանագրության նախագիծը և այլ առաջարկներ: Այս ուսումնասիրությունները հանգեցրին 1993թ. սեպտեմբերի 8-ին Նախարարների Կոմիտեին ուղղված Մարդու Իրավունքների Կոմիտեի գեկույցի պատրաստմանը, որն ընդունվում էր բազմաթիվ իրավական նորմեր, որոնք կարող են ընդունվել այդ բնագավառում, ինչպես նաև իրավական փաստաթղթեր, որոնցում այդ նորմերը կարող են շարադրվել: Այդ առիթով, Մարդու Իրավունքների Կոմիտեն նշեց, որ «ազգային փոքրամասնություններ» տերմինի մեջնարանության հարցում չի հաջողվել համաձայնություն ձեռք բերել (հանգել կոնսենսուսի):

5. Որոշիչ քայլը կատարվեց 1993թ. հոկտեմբերի 8-ի և 9-ի Եվրոպայի Խորհրդի անդամ-երկրների Պետությունների և Կառավարությունների Դեկավարների Վիեննայի Գագարաժողովում: Այդտեղ հանձնայնություն ձեռք բերվեց, որ Եվրոպայի պատմության մեջ եղած ցնցումների արդյունքում առաջացած ազգային փոքրամասնությունների իրավունքները պետք է պաշտպանվեն և հարզվեն հօգուտ խաղաղության և կայունության: Մասնավորապես, Պետությունների և Կառավարությունների Դեկավարները որոշեցին ձեռնամուխ լինել ազգային փոքրամասնությունների իրավունքների

պաշտպանության համար իրավական ձեռնարկումների: Վիեննայի հոչակագրի II Հավելվածը Նախարարների Կոմիտեին հաճճարարում էր.

- Առանց հապաղելու մշակել շրջանակային կոնվենցիա, որը պետք է սահմանի այն սկզբունքները, որոնք Պայմանավորվող պետությունները կպարտավորվեն հարգել ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը երաշխավորելու համար: Այս փաստաթութը բաց կլինի նաև անդամ շիանդիսացող պետությունների ստորագրման համար:
- Աշխատանքներ սկսել «Մարդու իրավունքների և իիմնական ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիան մշակույթի բնագավառում լրացնող արձանագրություն մշակելու համար, որը կներառի անհատական իրավունքները, մասնավորապես, ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքները երաշխավորող դրույթներ:

6. 1993թ. նոյեմբերի 4-ին Նախարարների Կոմիտեն ստեղծեց Ազգային Փոքրամասնությունների Իրավունքների Պաշտպանության Հատուկ Կոմիտե: Կոմիտեին տրված մանդատը արտացոլում էր Վիեննայում ընդունված որոշումները: Եվրոպայի Խորհրդի անդամ-երկրներից բաղկացած սույն Կոմիտեն՝ Մարդու Իրավունքների Կոմիտեի, Մշակութային Համագործակցության Խորհրդի, Զանգվածային Լրատվական Միջոցների Կոմիտեի և Ժողովրդավարություն Իրավունքի միջոցով Հանձնաժողովի ներկայացուցիչների մասնակցությամբ, սկսեց իր աշխատանքները 1994թ. հունվարի վերջերին: Դիտորդի կարգավիճակով մասնակցում էին նաև ԵԱՀԽ Ազգային Փոքրամասնությունների Հարցերով Գերազույն Հանձնակատարը և Եվրոպական Համայնքների Հանձնաժողովը:

7. 1994թ. ապրիլի 15-ին Ազգային Փոքրամասնությունների Իրավունքների Պաշտպանության Հատուկ Կոմիտեն Նախարարների Կոմիտեին ներկայացրեց ժամանակավոր գեկույց, որը հետազայում փոխանցվեց Խորհրդարանական Վեհաժողովին /փաստաթութ 7109/: Նախարարների Կոմիտեն 1994թ. մայիսին, 94-րդ նատաշրջանի ընթացքում, իր գոհունակությունը հայտնեց Վիեննայի հոչակագրից բխող մանդատի ներքո ձեռք բերված առաջընթացի վերաբերյալ:

8. Շրջանակային Կոնվենցիայի որոշ դրույթներ, որոնք պահանջում են քաղաքական իրավաբարություն (արքիտրաժ), ինչպես նաև այն դրույթները, որոնք վերաբերում են Կոնվենցիայի իրազործման վերահսկմանը, մշակել են Նախարարների Կոմիտեի կողմից (1994թ. հոկտեմբերի 7-ի Նախարարների Պատվիրակների 517bis հանդիպում):

9. Ազգային Փոքրամասնությունների իրավունքների Պաշտպանության Հատուկ Կոմիտեն 1994թ. հոկտեմբերի 10-ից 14-ը տեղի ունեցած հանդիպման ժամանակ որոշեց Նախարարների Կոմիտեին ներկայացնել շրջանակային կոնվենցիայի նախագիծը: Նախարարների Կոմիտեն ընդունեց ներկայացված նախագիծը 1994թ. նոյեմբերի 10-ին՝ 95-րդ նստաշրջանի ընթացքում:

1995թ. փետրվարի 1-ին Շրջանակային Կոնվենցիան բաց էր Եվրոպայի Խորհրդի անդամ-երկրների ստորագրման համար:

### **Ընդհանուր նկատառումներ**

Շրջանակային Կոնվենցիայի նպատակները

10. Շրջանակային Կոնվենցիան հանդիսանում է առաջին իրավաբանորեն պարտավորեցնող բազմակողմ փաստաթուղթը, որն ընդհանուր առմամբ նվիրված է ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանը: Կոնվենցիայի նպատակն է սահմանել այն իրավական սկզբունքները, որ պետությունները կպարտավորվեն հարգել՝ ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը երաշխավորելու համար: Սույնով Եվրոպայի Խորհրդունքը կյանքի կոչեց «Վիեննայի հոչակագրի կոչը (Հավելված II)՝ Եվրոպայի Անվտանգության և Համագործակցության Խորհրդաժողովի (ԵԱՀԽ) կողմից ընդունված քաղաքական սկզբունքները, առավել հնարավոր չափով իրավական պարտավորությունների վերափոխելու մասին»:

### **Մուտքումներ և հիմնական կոնցեպցիաներ**

11. Լուծում պահանջող տարրեր իրավիճակներն ու խնդիրները դասակարգելու համար որոշվեց, որ Շրջանակային Կոնվենցիան հիմնականում պետք է ներառի ծրագրային բնույթի դրույթներ, որոնք պետք է սահմանեն այն նպատակները, որ պետք է երաշխավորեն Կողմերը: Այս ծրագրային բնույթի դրույթները, որոնք ենթակա չեն ուղղակի կիրառման, համապատասխան պետությունների հայեցողությանն են թողնում իրենց առջև դրված նպատակների իրագործումը, դրանով նրանց հնարավորություն տալով հաշվի առնել իրենց յուրահատուկ հանգամանքները:

12. Պետք է նշել նաև, որ Շրջանակային Կոնվենցիան չի ներառում «ազգային փոքրամասնություն» հասկացության բնորոշումը: Որոշվել էր գործնական (պրազմատիկ) մոտեցում ցուցաբերել, որը հիմնված էր այն համոզման վրա, որ այդ փուլում անհնար է սահմանել Եվրոպայի Խորհրդի բոլոր անդամ-երկրների առաջարկությունները համախմբող բնորոշում:

13. Շրջանակային Կոնվենցիայում շարադրված սկզբունքների կիրառումը պետք է իրականացվի ազգային օրենսդրության և համապատասխան

պետական քաղաքականության միջոցով: Դա չի առնչվում կողեւկտիվ իրավունքների ճանաչմանը: Շեշտլ դրված է ազգային փորրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանության վրա, ովքեր կարող են անհատապես կամ խմբերով իրականացնել իրենց իրավունքները (տես, Հոդված 3, կետ 2): Այդ առումով Շրջանակային Կոնվենցիան հետևում է այլ միջազգային կազմակերպությունների կողմից ընդունված փաստաթղթերի մոտեցմանը:

### Շրջանակային Կոնվենցիայի կառուցվածքը

14. Նախարանից բացի, Շրջանակային Կոնվենցիան բաղկացած է հինգ մասերի բաժանված գործուն մասից:

15. I Բաժինը, ընդիանուր ձևով, ներառում է որոշ իմմանական սկզբունքներ սահմանող դրույթներ, որոնք կարող են նպաստել Շրջանակային Կոնվենցիայի նյուու անկախ դրույթների մեկնարաննանը:

16. II Բաժինը ներառում է առանձնահատուկ սկզբունքներ:

17. III Բաժինը ընդգրկում է Շրջանակային Կոնվենցիայի մեկնարաննան ու իրազործմանն առնչվող մի շարք դրույթներ:

18. IV Բաժինը ներառում է Շրջանակային Կոնվենցիայի իրազործման վերահսկմանը վերաբերող դրույթներ:

19. V Բաժինը ընդգրկում է Եվրոպայի Խորհրդի շրջանակներում ընդունված կոնվենցիաների և համաձայնագրերի տիպային եզրափակիչ դրույթների վրա հիմնված վերջնադրույթներ:

### Շրջանակային Կոնվենցիայի դրույթների մեկնարանությունը Նախարան

20. Նախարանում շարադրված են Շրջանակային Կոնվենցիան կազմելու պատճառները և բացատրված են Կոնվենցիան մշակողների մտահոգությունները: Բացման խոսքերն արդեն մատնանշում են, որ սույն փաստաթուղթը կարող են ստորագրել և վավերացնել Եվրոպայի Խորհրդի անդամ չհանդիսացող պետությունները (տես, 27-րդ և 29-րդ հոդվածները):

21. Նախարանը իրում է կատարում Եվրոպայի Խորհրդի Կանոնադրության նպատակի և այդ նպատակը երաշխավորելու միջոցներից մեկի՝ մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պահպանման և հետազա իրազործման վրա:

22. Հղում է կատարվում նաև Եվրոպայի Խորհրդի անդամ-երկրների Պետությունների և Կառավարությունների Դեկավարների Վիեննայի հոչակագրի վրա, մի փաստարդի, որը հանդիսացել է սույն Շրջանակային Կոնվենցիայի հիմքը (տես նաև, վերևից հինգերորդ պարբերությունը): Փաստորեն, Նախարարն տեքստը մեծապես ոգեշնչված է այդ հոչակագրով, մասնավորապես, հոչակագրի Հավելված II-ով: Նույնը վերաբերում է նաև Շրջանակային Կոնվենցիայի I և II Բաժիններում ընդգրկված ձեռնարկումների ընտրությանը:

23. Նախարամը, ոչ սպառիչ կերպով, նշում է Շրջանակային Կոնվենցիայի բովանդակության ոգեշնչման երեք այլ աղբյուրները. «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիան և ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության վերաբերյալ պարտականություններ ներառող ՍԱԿ-ի և ԵԱՀԿ փաստարդութերը:

24. Նախարամն արտացոլում է Եվրոպայի Խորհրդի և նրա անդամ-երկրների մտահոգությունը՝ ազգային փոքրամասնություններին սպառնացող վտանգի վերաբերյալ: Նախարամն ոգեշնչված է ՍԱԿ-ի «Ազգային կամ էթնիկական, կրոնական և լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների մասին» հոչակագրի 1-ին հոդվածի 1-ին պարբերությամբ (1992թ. դեկտեմբերի 18-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից ընդունված 47/135 Բանաձև):

25. Ելնելով այն հանգամանքից, որ Շրջանակային Կոնվենցիան բաց է նաև Եվրոպայի Խորհրդի անդամ շիանդիսացող պետությունների ստորագրման համար և, առավել սպառիչ մոտեցում ցուցաբերելու նպատակով, որոշվել էր ներառել որոշ սկզբունքներ, որոնցից բխող իրավունքներն ու ազատությունները արդեն իսկ երաշխավորված են «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայում և դրա Արձանագրություններում (այդ կապակցությամբ, տես Շրջանակային Կոնվենցիայի 23-րդ հոդվածը):

26. ՍԱԿ-ի կոնվենցիաներին և հոչակագրերին կատարված հղումը հիշեցնում է համաշխարհային մակարդակով կատարված աշխատանք, ինչպես օրինակ «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային պայմանագրում (հոդված 2) և «Ազգային կամ էթնիկական, կրոնական և լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքները մասին» հոչակագրում: Այնուամենայնիվ, այս հղումը չի տարածվում ազգային փոքրամասնության որևէ բնորոշման վրա, որը կարող է ներառված լինել այդ տեքստերում:

27. ԵԱՀԿ համապատասխան սկզբունքների վրա կատարված հղումը արտացոլում է Վիեննայի Հոչակագրի II Հավելվածում արտահայտված

ձգումն այն մասին, որ Եվրոպայի Խորհուրդը, հնարավորությունների սահմաններում, պետք է ձեռնամուխ լինի այդ քաղաքական սկզբունքները իրավական պարտավորությունների վերափոխմանը:

28. Նախարանի նախավերջին պարբերությունը սահմանում է Շրջանակային Կոնվենցիայի իիմնական նպատակը, այն է՝ երաշխավորել ազգային փոքրամասնությունների և այդ փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանությունը: Միաժամանակ Նախարանում ընդգծվում է, որ այդ արդյունավետ պաշտպանությունը պետք է երաշխավորվի օրենքի գերակայության շրջանակներում և պետությունների տարածքային ամբողջականությունը և ինքնիշխանությունը հարգելու պայմանով:

29. Վերջին տողի նպատակն է նշել, որ Շրջանակային Կոնվենցիայի դրույթները չեն կարող ուղղակիորեն կիրառվել: Խոսքը չի վերաբերվում միջազգային պայմանագրերը ներպետական իրավական համակարգում ընդգրկելու Կողմերի օրենքներին ու պրակտիկային:

## Բաժին I

### Հոդված 1

30. Հոդված 1-ի իիմնական նպատակն է նշել, որ ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը, որը հանդիսանում է մարդու իրավունքների միջազգային պաշտպանության անբաժան մասը, չի ներառվում պետությունների սահմանափակ իշխանության մեջ: Այն փաստը, որ այդ պաշտպանությունը «կազմում է մարդու իրավունքների պաշտպանության անբաժան մասը», «Մարդու իրավունքների և իիմնական ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայով ստեղծված մարմիններին, սույն Շրջանակային Կոնվենցիայի մեկնարանման իրավունք չի վերապահում:

31. Հոդվածը հղում է կատարում ազգային փոքրամասնությունների, որպես այդպիսին, և այդ փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանությանը: Այս տարրերակումը և ձևակերպման տարրերությունը պարզ է դարձնում, որ չեն շոշափվում ազգային փոքրամասնությունների կողեկանիվ իրավունքները (տես նաև 3-րդ հոդվածի մեկնարանությունը): Կողմերն, այնուամենայնիվ, ճանաչում են, որ ազգային փոքրամասնության իրավունքների պաշտպանությունը կարող է ձեռք բերվել այդ փոքրամասնություններին պատկանող անհատների իրավունքների պաշտպանությամբ:

## **Հոդված 2**

32. Սույն հոդվածը ներառում է Շրջանակային Կոնվենցիայի կիրառումը կարգավորող սկզբունքների աճբողջությունը: Այն համաշխատ և ոգեշնչված է ՄԱԿ-ի Կանոնադրության համաձայն ընդունված, ՄԱԿ-ի Պետությունների միջև բարեկամական հարաբերությունների և համագործակցության վերաբերյալ միջազգային իրավունքի սկզբունքների մասին հոչակագրով (Գլխավոր Ասամբլեա, 2625 (XXV) բանաձև, 24 հոկտեմբերի 1970թ.): Սույն դրույթում նշված սկզբունքները ընդհանուր բնույթ ունեն, սակայն հատուկ կարևորություն են ներկայացնում Շրջանակային Կոնվենցիայով կարգավորվող բնագավառի համար:

## **Հոդված 3**

33. Սույն հոդվածը ներառում է երկու տարրեր, սակայն փոխկապակցված սկզբունքներ, որոնք շարադրված են երկու առանձին կետերով:

### **Կետ 1**

34. Կետ 1-ը նախնառաջ երաշխավորում է ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձի՝ այդպիսին համարվելու կամ չհամարվելու ազատ ընտրությունը: Այս դրույթը այդ անձանց հայեցողությանն է բողնում այն հարցի որոշումը, թե տվյալ անձն արդյոք ցանկանում է կամ չի ցանկանում ընդունել Շրջանակային Կոնվենցիայի սկզբունքներից բխող պաշտպանությունը:

35. Սույն կետը չի վերաբերում ազգային փոքրամասնության պատկանելությունը իրավարարությամբ (արքիտրաժով) ընտրելու անհատի իրավունքին: Անհատի սուրյեկտիվ ընտրությունը անբաժան կերպով կապակցված է անձի ինքնությանն առնչվող օրյեկտիվ չափանիշի հետ:

36. Այնուհետև 1-ին կետը սահմանում է, որ իր կողմից երաշխավորվող ազատ ընտրությունը կամ այն իրավունքների իրականացումը, որ կապված են այդ ընտրության հետ, չպետք է տվյալ անձին դնեն անբարենպաստ պայմաններում: Դրույթի այս մասը հաստատում է, որ այդ ընտրության ազատությունից օգտելը, չի դառնա անուղղակի ոտնագումների առարկա:

### **Կետ 2**

37. Կետ 2-ը սահմանում է, որ Շրջանակային Կոնվենցիայի սկզբունքներից բխող իրավունքներն ու ազատությունները կարող են իրականացվել անհատապես և մյուսների հետ խմբերով: Այդպիսով ճանաչվում է այդ իրավունքների և ազատությունների միացյալ իրականացման հնարավորությունը, որը տարբերվում է կոլեկտիվ իրավունքների

հասկացությունից: «Մյուսների հետ» տերմինը պետք է մեկնաբանվի հնարավոր լայն իմաստով և պետք է ներառի միևնույն ազգային փոքրամասնությանը, այլ ազգային փոքրամասնությանը կամ բնակչության մեծամասնությանը պատկանող անձանց:

## Բաժին II

### Հոդված 4

38. Սույն հոդվածի նպատակն է ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց համար հավասարության և խորականության արգելման սկզբունքների կիրառման ապահովումը: Այս հոդվածի դրույթները պետք է մեկնաբանվեն սույն Շրջանակային Կոնվենցիայի կոնտեքստում:

#### 1-ին և 2-րդ կետեր

39. Կետ 1-ը դասական մոտեցում է ցուցաբերում այս սկզբունքների հանդեպ: 2-րդ կետը ընդգծում է, որ ազգային փոքրամասնություններին և բնակչության մեծամասնությանը պատկանող անձանց լիակատար և արդյունավետ հավասարության երաշխավորումը, Կողմերից պահանջում է ընդունել այդ անձանց առանձնահատկությունները հաշվի առնող հատուկ միջոցառումները: Այդպիսի միջոցառումները պետք է «աղեկված» լինեն, այսինքն՝ համապատասխանեն համաշափության սկզբունքին, մյուսների իրավունքների ուժնահարումից, ինչպես նաև մյուսների նկատմամբ խորականությունից խուսափելու համար: Սույն սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է, որպեսզի այդպիսի միջոցառումները, ժամանակի կամ գործունեության շրջանակի առումով, չանցնեն լիակատար և արդյունավետ հավասարության նպատակին հասնելու անհրաժեշտության սահմանները:

40. Շրջանակային Կոնվենցիայում ընդգրկված չէ հավասար հնարավորությունների սկզբունքին հատուկ կերպով առնչվող առանձին դրույթ: Դրա ընդգրկումը համարվել էր ավելորդ, քանի որ այդ սկզբունքն արդեն ընդգրկված էր սույն հոդվածի 2-րդ կետում: 1-ին կետում խորականության արգելման մասին սկզբունքի շարադրման ժամանակ, նույնը որոշվեց նաև տեղաշարժի ազատության վերաբերյալ:

#### Կետ 3

41. 3-րդ կետի նպատակն է պարզաբանել, որ 2-րդ կետում նշված միջոցառումները չպետք է հակասեն հավասարության և խորականության արգելման սկզբունքներին: Դրա նպատակն է ապահովել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց, բնակչության մեծամասնությանը պատկանող անձանց հետ միասին, արդյունավետ հավասարության երաշխավորումը:

## **Հոդված 5**

42. Սույն հոդվածը նպատակառողջված է ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց կողմից իրենց մշակույթի պահպանման և զարգացման, ինչպես նաև իրենց ինքնությունը պահպանելու իրավունքի երաշխավորմանը:

### **Կետ 1**

43. Կետ 1-ը ներառում է սպառտավորություն, այդ առումով անհրաժեշտ պայմանների ստեղծման մասին: Այն բվարկում է ազգային փոքրամասնության ինքնության չորս կարևոր տարրերը: Սույն հոդվածը չի մեկնաբանվում այնպես, որ բոլոր էթնիկական, մշակութային, լեզվական կամ կրոնական տարրերությունները անհրաժեշտարար հանգեցնում են ազգային փոքրամասնությունների ստեղծմանը (այս կապակցությամբ, տես 1991թ. Ժնևում տեղի ունեցած ԵԱՀԽ փորձագետների հանդիպման գեկույցը, Բաժին II, կետ 4):

44. «Ավանդույթներին» կատարված հղումը չի հանդիսանում ազգային օրենքի կամ միջազգային չափանիշներին հակասող պրակտիկաների հաստատում կամ ընդունում: Ավանդույթների պրակտիկան հանդիսանում է հասարակական կարգի պահանջներից բխող սահմանափակումների առարկա:

### **Կետ 2**

45. 2-րդ կետի նպատակն է ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց պաշտպանել, հակառակ նրանց կամքի, միաձուլումից: Դրանով չի արգելվում կանավոր միաձուլումը:

46. 2-րդ կետը չի արգելում Կողմերին ձեռնարկել միջոցառումներ իրենց ընդհանուր ինտեգրացիոն քաղաքականությունը իրականացնելու համար: Դրանով ճանաչվում է սոցիալական համախմբվածության կարևորությունը և արտացոլվում է Նախարանում արտահայտված ձգտումը, համաձայն որի մշակութային բազմազանությունը պետք է լինի յուրաքանչյուր հասարակության հարստացման և ոչ թե պառակտման աղբյուր և գործոն:

## **Հոդված 6**

47. Սույն հոդվածը հանդիսանում է Վիեննայի Հռչակագրի III Հավելվածում շարադրված մտահոգությունների արտահայտությունը («Ուսիզմի, քսենոֆոբիայի, հակասեմիտիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի մասին» հոչակագիր և գործողության ծրագիր):

## **Կետ 1**

48. 1-ին կետը հասունակություն է տալիս հանդուրժողականության և մշակույթների միջև երկխոսության մքնուրութիւն և նշում է Կողմերի տարածքում բնակվող բոլոր անձանց միջև փոխադարձ հարգաճքի, փոխարժեանունան և համագործակցության խրախուսման կարևորությունը: Կրթության, մշակույթի և լրատվական միջոցների բնագավառները նշված են առանձնահատուկ ձևով, որովհետև դրանք համարվում են չափազանց կարևոր այդ նպատակներին հասնելու համար:

49. Սոցիալական համախմբվածությունն ուժեղացնելու համար, սույն կետը խրախուսում է հանդուրժողականության և մշակույթների միջև երկխոսությունը, էթնիկական, մշակութային, լեզվական և կրոնական խմբերին պատկանող անձանց միջև վերացնելով անջրապետները՝ փոխադարձ հարգաճք և փոխարժեանուն խրախուսող, ինչպես նաև այդ անձանց, նրանց ինքնությունը պահպանելով, հասարակությունում ինտեգրացնելու նպատակ հետապնդող միջմշակութային կազմակերպությունների և շարժումների միջոցով:

## **Կետ 2**

50. Սույն դրույթը ոգեշնչված է ԵԱՀԽ Կոպենհագենի փաստաթղթի 40.2 կետով: Սույն պարտավորության նպատակն է բոլոր այն անձանց պաշտպանությունը, ովքեր կարող են դառնալ սպառնալիքների կամ խտրականության գործողությունների, թշնամության կամ բռնի գործողությունների գործ անկախ այդպիսի սպառնալիքների կամ գործողությունների սկզբնապատճառներից:

## **Հոդված 7**

51. Սույն հոդվածի նպատակն է երաշխավորել ազգային փոքրամասնությանը պատկանող յուրաքանչյուր անձի՝ հոդվածում նշված հիմնական ազատությունների և իրավունքների հարգումը: Այդ ազատություններն, իհարկե, ընդհանուր բնույթ ունեն, այդ իսկ պատճառով կիրառվում են բոլորի նկատմամբ, անկախ նրանց ազգային փոքրամասնության պատկանելու կամ չպատկանելու հանգամանքից (օրինակ, տես «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 9, 10 և 11 հոդվածները), և դրանից բացի հասուլապես կարևոր են ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության համար: Նախարանի վերը նշված մեկնարանության մեջ սահմանված նպատակների համար որոշվել էր ընդգրկել «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայում արդեն ընդգրկված որոշ ձեռնարկումներ:

52. Սույն հոդվածը կարող է Կողմերի համար կիրառվել որպես որոշակի պողիտիվ պարտավորություն նշված ազատությունները այն բռնի գործողություններից պաշտպանելու համար, որոնց համար պետությունը պատասխանատվություն չի կրում: «Մարդու իրավունքների և իհմնական ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայով այդպիսի պողիտիվ պարտավորությունների հնարավորությունը ճանաչվել է Մարդու իրավունքների Եվրոպական Դատարանի կողմից:

53. 7-րդ հոդվածում շարադրված որոշ ազատություններ գարգացվել են 8-րդ և 9-րդ հոդվածներում:

## Հոդված 8

54. Սույն հոդվածում շարադրված են կրոնի ազատության պաշտպանության առավել մանրամասն կանոններ, քան 7-րդ հոդվածում: Այն համախմբում է ԵԱՀԽ Կոպենհագենի փաստաթղթի 32.2, 32.3 և 32.6 կետերի մի շարք տարրերը մեկ դրույթի մեջ: Այս ազատությունները, իհարկե, վերաբերում են բոլորին, ինչպես նաև, համաձայն 4-րդ հոդվածի՝ ազգային փոքրամասնությանը պատկանող անձանց: Սույն կոնտեքստում, այս ազատությանը տրված կարևորությունը պայմանավորված է նրանով, որ դրան հատուկ ուշադրություն դարձնելը համարվել է հատկապես կարևոր:

## Հոդված 9

55. Սույն հոդվածում ընդգրկված են կարծիք արտահայտելու ազատությունը պաշտպանելու մասին առավել մանրամասն կանոններ, քան 7-րդ հոդվածում:

## Կետ 1

56. Սույն կետի առաջին նախադասությունը կազմվել է համաձայն «Մարդու իրավունքների և իհմնական ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ նախադասության մոդելի: Թեև նախադասությունը անդրադառնում է հատկապես փոքրամասնության լեզվով տեղեկատվություն և զաղափարներ ստանալու և հաղորդելու ազատությանը, այն նաև վերաբերում է բնակչության մեծամասնության լեզվով կամ այլ լեզուներով տեղեկատվություն և զաղափարներ ստանալու իրավունքին:

57. Սույն կետի երկրորդ նախադասությունը նախատեսում է ձեռնարկումներ, որոնք երաշխավորում են լրատվական միջոցների մատչելիությունը՝ առանց որևէ խսրականության: «Իրենց իրավական համակարգի շրջանակներում» բառերը գետեղված են Կողմերի այն սահմանադրական դրույթները հարգելու նպատակով, որոնք կարող են սահմանափակել լրատվական միջոցների մատչելիության աստիճանը՝ այն կարգավորելու նպատակով:

## **Կետ 2**

58. Սույն կետը կազմվել է «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին կետի օրինակով:

59. Հնչուն ռադիոյի, հեռուստահեռարձակման ու կինեմատոգրաֆի ձեռնարկությունների արտոնագրումը պետք է իրականացվի առանց որևէ խտրականության և օբյեկտիվ չափանիշների հիման վրա: Այս պահանջները, որոնք առանձնահատուկ կերպով չեն նշված «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ նախադասությունում, համարվել են կարևոր ազգային փոքրամասնությանը պատկանող անձանց իրավունքների պաշտպանության համար կազմված փաստաթղթի համար:

60. «Հնչուն ռադիո» բառը, որն ընդգրկված է սույն հոդվածի 3-րդ կետում, ներառված չէ «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի համապատասխան նախադասության մեջ: Այն կիրառվում է ժամանակակից տերմինարանությունն արտացոլելու համար և ինաստային առումով չունի ոչ մի էական տարրերություն «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածից:

## **Կետ 3**

61. Սույն կետի առաջին նախադասությունը, որը վերաբերում է տպագիր մանուլի միջոցների ստեղծմանն ու օգտագործմանը, պարունակում է Էապես նեղատիվ ձեռնարկում, մինչդեռ առավել ճկուն կերպով ճևակերպված երկրորդ նախադասությունը ընդգծում է ռադիոյի և հեռուստահեռարձակման բնագավառում դրական պարտավորություն (օրինակ՝ հաճախականությունների բաշխումը): Այս տարբերակումը արտացոլում է հաճախականությունների սակագությունը և այդ ոլորտում կարգավորումների անհրաժեշտությունը: Ոչ մի հատուկ հղում չի կատարվել ազգային փոքրամասնությանը պատկանող անձանց կողմից լրատվական միջոցների ստեղծման համար ֆոնդեր որոնելու իրավունքին, քանի որ այդ իրավունքն ինքնին համարվել է ակներև:

## **Կետ 4**

62. Սույն կետը շեշտում է ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց համար լրատվական միջոցների մատչելիությունը դյուրացնելու և հանդուրժողականության ու մշակութային բազմակարծությունը խրախուսելու համար երկակի նպատակ հետապնդող միջոցառումների

անհրաժեշտությունը: «Համապատասխան միջոցներ» արտահայտությունը կիրառված է 4-րդ հոդվածի 2-րդ կետի մեկնաբանությունում տրված նայատակների համար (տես 39-րդ կետը), որտեղ օգտագործված են միևնույն բառերը: Սույն կետը լրացնում է 9-րդ Հոդվածի 1-ին կետում շարադրված միջոցառումները: Սույն կետով ճախսառեսված միջոցառումները, օրինակ, կարող են բարկացած լինել ֆոնդերից, որոնք անհրաժեշտ են փոքրամասնության ռադիոհաղորդման կամ փոքրամասնությունների հարցերով ծրագրերի պատրաստման և/կամ խմբերի միջև երկխոսությունն աջակցելու համար, կամ խմբագիրներին և հաղորդավարներին խրախուսելու համար, խմբագրական անկախության առումով՝ բույլատրելու ազգային փոքրամասնություններին իրենց լրատվական միջոցներից օգտվումը:

## Հոդված 10

### Կետ 1

63. Ազգային փոքրամասնությանը պատկանող յուրաքանչյուր անձի կողմից իր փոքրամասնության լեզուն ազատ և անարգել գործածելու իրավունքի ճանաչումը առանձնապես կարևոր է: Փոքրամասնության լեզվի օգտագործումը ներկայանում է այդ անձանց կողմից իրենց ինքնությունը պահպանելու և պաշտպանելու սկզբունքային միջոցներից մեկը: Այն նաև հնարավորություն է ընձեռնում նրանց իրականացնել կարծիք արտահայտելու ազատությունը: «Հասարակական վայր»-ը նշանակում է հասարակական վայրերում, դրանում, այլ մարդկանց ներկայությամբ, սակայն ոչ մի կերպ չի առնչվում հասարակական իշխանությունների հետ հարաբերություններին, ինչը հանդիսանում է սույն հոդվածի 2-րդ կետի առարկան:

### Կետ 2

64. Սույն դրույթը չի անդրադառնում ազգային փոքրամասնություններին պատկանող անհատների և հասարակական իշխանությունների միջև բոլոր հարաբերություններին: Այն առնչվում է միայն վարչական իշխանություններին: Սակայն վերջինս պետք է մեկնաբանվի լայն առումով, որպեսզի, օրինակ, ընդգրկի նաև մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը (Օճրուղանանը): Հաշվի առնելով ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց և վարչական իշխանությունների հարաբերություններում հնարավոր ֆինանսական, վարչական, հատկապես գինվորական և տեխնիկական դժվարությունները՝ կապված փոքրամասնության լեզվի օգտագործման հետ, սույն դրույթը ձևակերպվել է շատ ճկուն ձևով՝ Կողմերին բողնելով գործողությունների ազատության լայն հնարավորություն:

65. 2-րդ կետում նշված երկու պայմանների բավարարման դեպքում, Կողմերը, հնարավորությունների սահմաններում, պետք է ապահովեն վարչական իշխանությունների հետ հարաբերություններում փոքրամասնության լեզվի օգտագործումը: «Իրական կարիքի» գոյությունը պետք է որոշվի Պետության կողմից՝ օբյեկտիվ չափանիշի հիման վրա: Այնուամենայնիվ, Պայմանավորվող Պետությունները պետք է ամեն ջանք գործադրեն տույժ սկզբունքը կիրառելու համար: «Հնարավորությունների սահմաններում» ձևակերպումը նատնանշում է, որ պետք է հաշվի առնվեն բազմարիվ գործոններ, մասնավորապես, տվյալ պետության ֆինանսական ռեսուրսները:

66. Փոքրամասնության լեզվի օգտագործման վերաբերյալ Կողմերի պարտավորությունը ոչ մի կերպ չի առնչվում համապատասխան երկրի պաշտոնական լեզվի կամ լեզուների կարգավիճակին: Դեռ ավելին, Շրջանակային Կոնվենցիան, մտադրված կերպով, ձեռնպահ է մնում «ավանդապես կամ զգալի քանակությամբ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց կողմից բնակեցված վայրերի» սահմանումից: Նախընտրելի է համարվել ընդունել ճկուն ձևակերպում, որը հնարավորություն կրնանենի հաշվի առնել յուրաքանչյուր Կողմի առանձնահատուկ պայմանները: «Ավանդապես բնակեցված» տերմինը չի վերաբերում պատմական փոքրամասնություններին, այլ միայն նրանց, ովքեր դեռևս բնակվում են միևնույն աշխարհագրական շրջաններում (տես նաև 11-րդ հոդվածի 3-րդ կետը և 14-րդ հոդվածի 2-րդ կետը):

### Կետ 3

67. Սույն կետը հիմնվում է «Մարդու իրավունքների և իիմնական ազատությունների պաշտպանության մասին» կողմենցիայի 5-րդ և 6-րդ հոդվածներում ընդգրկված որոշ դրույթների վրա: Դա չի անցնում այլ հոդվածներում ներառված երաշխիքների սահմանները:

### Հոդված 11

#### Կետ 1

68. Սույն պարտավորության գործնական կիրառման առումով, որույրը ձևակերպվել է այնպես, որպեսզի հնարավորություն ընձեռնի Կողմերին կիրառել այն՝ իրենց առանձնահատուկ պայմանների համաձայն: Օրինակ՝ Կողմերը կարող են օգտագործել իրենց պաշտոնական լեզվի այրութենքը, ազգային փոքրամասնությանը պատկանող անձանց անուն/ներ/ը իր/իրենց հնչունարանական ձևով գրելու համար: Անձինք, որոնց հարկադրել են իրաժարվել իրենց խսկական անունից կամ որոնց անուն/ներ/ը փոխարինել են ուժի գործադրմամբ, պետք է իրենց անուն/ներ/ը վերականգնելու իրավունք ունենան, բացառությամբ, խարդախությամբ իրավունքների չարաշահման և անվան/անունների փոխման դեպքերի: Սույնով ենթադրվում է, որ Կողմերի

իրավական համակարգերը, այդ իմաստով, պետք է համապատասխանեցվեն ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության վերաբերյալ միջազգային սկզբունքներին:

## Կետ 2

69. Սույն կետում առկա պարտավորությունները վերաբերում են անհատի «իր փոքրամասնության լեզվով հասարակության համար տեսանելի, մասնավոր բնույթի նշումների, գրությունների և այլ տեղեկատվություն» տեղադրելու իրավունքին: Դրանով, իհարկե, չի բացառվում այն հանգամանքը, որ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանցից, ի լրումն վերոհիշյալի, կարող է պահանջվել օգտագործել պաշտոնական և/կամ այլ փոքրամասնությունների լեզուները: «Մասնավոր բնույթի» արտահայտությունը վերաբերում է այն ամենին, ինչը պաշտոնական չէ:

## Կետ 3

70. Սույն հոդվածը խրախուսում է տեղական անվանումները, փողոցների անվանումները և հասարակության համար նախատեսված այլ տեղագրական նշումները փոքրամասնության լեզվով ունենալու հնարավորությունները: Սույն սկզբունքը կիրառելու համար, պետությունները լիազորված են հաշվի առնելու առանձնահատուկ պայմանները և իրենց իրավական համակարգերի շրջանակը, ներառյալ, որտեղ անհրաժեշտ է, այլ պետությունների հետ համաձայնագրերը: Սույն դրույթի շրջանակներում պետությունները չեն ստանձնում այլ պետությունների հետ համաձայնագրեր կնքելու որևէ պարտավորություն: Սակայն այդպիսի համաձայնագրերի կնքման հնարավորությունը չի բացառվում: Միաժամանակ, սույն դրույթը չի առնչվում գոյություն ունեցող համաձայնագրերի իրավաբանորեն պարտավորեցնող բնույթին: Սույն դրույթից չի հետևում փոքրամասնության լեզվով գրված տեղական անվանումների պաշտոնական ճանաչում:

## Հոդված 12

71. Սույն հոդվածով խրախուսվում են մշակույթի, պատմության, լեզվի և կրոնի վերաբերյալ, ինչպես ազգային փոքրամասնությունների, այնպես էլ բնակչության նեծամասնության գիտելիքները՝ միջմշակութային հեռանկարով (տես Հոդված 6-ի 1-ի կետը): Նպատակը հանդիսանում է Շրջանակային Կոնվենցիայի Նախարանում և Պետությունների և Կառավարությունների Ղեկավարների Վիեննայի հոչակագրի II Հավելվածում նշված հանդուրժողականության և երկխոսության մթնոլորտի ստեղծումը: 2-րդ կետի ցանկը սպառիչ չէ, քանի դեռ «դասագրքերով ապահովման» բառերը չեն մեկնաբանվի այնպես, որպեսզի ներառնեն նաև դասագրքերի իրատարակումը և այլ երկրներից դրանց գնումը: Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց կրթության մատչելիությունը բոլոր մակարդակներով

ապահովելու համար հավասար պայմանները պարտավորությունները արտացղում են Վիեննայի հոչակագրում արտահայտված մտահոգությունը:

## Հոդված 13

### Կետ 1

72. Կողմերի պարտավորությունը ճանաչել, որ ազգային փոքրամասնությանը պատկանող անձինք իրավունք ունեն ստեղծել և ղեկավարել իրենց սեփական մասնավոր կրթական և վերապատրաստման հաստատությունները, ենթակա է պետությունների կրթական համակարգի, մասնավորապես, պարտադիր ուսուցմանը վերաբերող, կարգավորումների պահանջներին: Սույն կետով նախատեսվող հաստատությունները, այլ հաստատությունների օրինակով, կարող են ենթարկվել ղեկավարման միևնույն ձևերին, մասնավորապես, ուսուցման չափանիշների հարցում: Պահանջվող չափանիշներին համապատասխանելու դեպքում, անհրաժեշտ է, որպեսզի ցանկացած շնորհվող որակավորում ճանաչվի պաշտոնապես: Համապատասխան ազգային օրենսդրությունը պետք է հիմնվի օբյեկտիվ չափանիշի վրա և համապատասխանի խտրականության արգելման սկզբունքին:

### Կետ 2

73. Կետ 1-ում նշված իրավունքների իրականացումը, համապատասխան Կողմի վրա չի դնում որևէ ֆինանսական պարտավորություն, բայց և չի բացառում նման օժանդակության հնարավորությունը:

## Հոդված 14

### Կետ 1

74. Ազգային փոքրամասնությանը պատկանող յուրաքանչյուր անձի կողմից, իր փոքրամասնության լեզուն սովորելու իրավունքի ճանաչման պարտավորությունը հանդիսանում է անձի կողմից իր ինքնությունը պահպանելու հիմնական միջոցներից մեկը: Այսուղ չեն կարող լինել որևէ բացառություններ: Զիակասելով 2-րդ կետում նշված սկզբունքին, սույն կետը չի հանգեցնում Պետության կողմից նշանակալից ֆինանսական բնույթի պողիտիվ գործողության:

### Կետ 2

75. Սույն դրույթն առնշվում է փոքրամասնության լեզվի ուսումնասիրման և այդ լեզվով կրթություն ստանալուն: Հաշվի առնելով փոքրամասնության լեզվով կրթություն ստանալու դեպքում հնարավոր ֆինանսական, վարչական

և տեխնիկական դժվարությունները՝ սույն դրույթը ձևակերպվել է շատ ճկուն կերպով՝ Պետություններին տալով գործողությունների լայն հնարավորություններ: Փոքրամասնության լեզվով կրթության ստացումը երաշխավորող պարտավորությունը ենթակա է մի շարք պայմանների, մասնավորապես, համապատասխան ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց կողմից «զգալի կարիքի» առկայության պայմանին: «Հնարավորությունների սահմաններում» ձևակերպումը ընդգծում է, որ կրթության ստացումը կախված է համապատասխան Կողմի առկա ուսուուններից:

76. Տեքստը, մտադրված կերպով, ձեռնպահ է մնում «զգալի կարիք» արտահայտության բնորոշումից, տալով ձևակերպման ճկուն մի ձև, որը հնարավորություն է տալիս Կողմերին հաշվի առնել իրենց պետությունների առանձնահատուկ պայմանները: Կողմերը, կրթության ստացումը երաշխավորելու հարցում, ունեն միջոցների և կարգավորումների ընտրություն՝ իրենց յուրահատուկ կրթական համակարգը հաշվի առնելու պայմանով:

77. Սույն կետում նշված փոքրամասնության լեզուն ուսումնասիրելու և փոքրամասնության լեզվով կրթություն ստանալու երկրնտրանքները միմյանց չեն բացառում, և նոյնիսկ եթե 14-րդ Հոդվածի 2-րդ կետով Պետությունների վրա երկուար կատարելու հարցում ոչ մի պարտավորություն չի դրվում, այդ ձևակերպումը, միևնույն ժամանակ, չի խոչընդոտում Պետության կողմից լեզվի ուսումնասիրման, ինչպես նաև այդ լեզվով կրթության ստացման իրավունքների կիրառումը: Երկեզրու ուսուցումը կարող է հանդիսանալ սույն դրույթի նպատակների ձեռք բերման միջոցներից մեկը: Սույն կետից բխող պարտավորությունը կարող է տարածվել նախադպրոցական կրթության վրա:

### Կետ 3

78. Փոքրամասնության լեզուն ուսումնասիրելու և այդ լեզվով կրթություն ստանալու հնարավորությունները չպետք է վճառ պատճառեն պաշտոնական լեզվի ուսուցմանն ու դասավանդմանը: Պաշտոնական լեզվի իմացությունը իսկապես հանդիսանում է սոցիալական համախմբվածության և ինտեգրացման գործոն:

79. Մեկից ավելի պաշտոնական լեզու ունեցող պետությունները պետք է կարգավորեն առածնահատուկ հարցեր՝ սույն դրույթի կիրառումն ապահովելու համար:

### Հոդված 15

80. Սույն Հոդվածը Կողմերից պահանջում է ստեղծել անհրաժեշտ պայմաններ՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց

արդյունավետ մասնակցությունը մշակութային, սոցիալական և տնտեսական կյանքում, ինչպես նաև պետական գործունեության մեջ, մասնավորապես, նրանց առնչվող հարցերում, ապահովելու համար: Սույն դրույթի նպատակն է ապահովել իրական հավասարություն ազգային փորբանասնությունների և բնակչության մեծամասնությանը պատկանող անձանց միջև: Ազգային փորբանասնություններին պատկանող անձանց համար այդպիսի մասնակցության անհրաժեշտ պայմաններ ստեղծելու համար Կողմերը, իրենց սահմանադրական համակարգերի շրջանակներում, կարող են խրախուսել հետևյալ միջոցառումները.

- Համապատասխան լնթացակարգերի միջոցով այդ անձանց հետ խորհրդատվությունների անցկացում, երբ Կողմերը մտադիր են ձեռնարկել փորբանասնություններին ուղղակիորեն առնչվող օրենսդրական կամ վարչական միջոցառումներ,
- Փորբանասնություններին ուղղակիորեն առնչվող ազգային և ուղղունալ զարգացման ծրագրերի պատրաստման, կիրառման և զնահատման հարցերում այդ անձանց ներգրավում,
- Փորբանասնությունների հետ կապված ուսումնասիրություններ ձեռնարկելիս զնահատել ծրագրավորված զարգացման գործունեությունների հնարավոր ազդեցությունը փորբանասնությունների վրա,
- Ապահովել Ազգային փորբանասնություններին պատկանող անձանց արդյունավետ մասնակցությունը, ազգային կամ տեղական մակարդակներով, օրենսդրական գործընթացներին և ընտրովի մարմիններում,
- Ապակենտրոնացված կամ տեղական կառավարման ձևեր:

## Հոդված 16

81. Սույն հոդվածի նպատակն է ձեռնպահ մնալ այնպիսի միջոցների կիրառումից, որոնք փոխում են բնակչության կառուցվածքային կազմը ազգային փորբանասնություններին պատկանող անձանցով բնակեցված շրջաններում և նպատակ ունեն սահմանափակել սույն Շրջանակային Կոնվենցիայից բխող իրավունքներն ու ազատությունները: Որպես այդպիսի միջոցների օրինակ կարող է ծառայել այդ իրավունքների և ազատությունների սահմանափակման նպատակով իրականացվող սեփականագրկումը, վտարումը և վարչական սահմանների վերացումն ու վերագծումը («խեղաքյուրում»):

82. Սույն Հոդվածը արգելում է միայն Շրջանակային Կոնվենցիայից բխող իրավունքներն ու ազատությունները սահմանափակելու նպատակ հետապնդող միջոցները: Համարվել է ամենայ լրադաշտերին և ազատություններին առնչվող այդպիսի միջոցներն արգելող հասկացությունը, քանզի այդպիսի միջոցները երեմն կարող են ամբողջովին արդարացված և օրինական լինել: Որպես օրինակ կարող է ծառայել զյուրի բնակիչների վերաբնակեցումը՝ ամբարտակ կառուցելու համար:

## Հոդված 17

83. Սույն Հոդվածը ներառում է ազգային փոքրամասնությանը պատկանող անձանց մշակույթի պահպանման ու զարգացման, ինչպես նաև նրանց ինքնության պահպանման համար երկու կարևոր ձեռնարկում (տես նաև Հոդված 5-ի 1-ին կետը): Առաջին կետն առնչվում է ազատ ու խաղաղ միջսահմանային շփումներ հաստատելու և պահպանելու իրավունքին, իսկ երկրորդ կետը՝ ոչ-կառավարական կազմակերպությունների գործունեությանը մասնակցելու իրավունքին (այս կապակցությամբ, տես 7-րդ հոդվածի՝ դրույթները հանրահավաքների և միությունների մեջ ընդգրկվելու ազատության մասին):

84. Սույն Հոդվածի դրույթները մեծապես հիմնված են ԵԱՀԽ Կոպենհագենի փաստաթրի 32.4 և 32.6 կետերի վրա: Համարվել է ավելորդ Պետության տարածքում շփումների հաստատման և պահպանման մասին առանձին դրույթի ընդգրկումը, քանզի դրանք համապատասխանաբար ընդգրկված են Շրջանակային Կոնվենցիայի այլ դրույթներում, անվանապես, 7-րդ Հոդվածում՝ հանրահավաքների և միությունների մեջ ընդգրկվելու ազատության մասին:

## Հոդված 18

85. Սույն հոդվածը խրախուսում է Կողմերին, ի լրումն գոյություն ունեցող միջազգային փաստաթրերի, երբ դա կարդարացվի առանձնահատուկ պայմաններով, կնքել երկկողմ և բազմակողմ համաձայնագրեր ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության համար: Այն նաև խրախուսում է միջսահմանային համագործակցությունը: Ինչպես նշված է Վիեննայի հռչակագրում և դրա II Հավելվածում, այդպիսի համաձայնագրերը և համագործակցությունը կարևոր են հանդուժողականության, քարգավաճման, կայունության և խաղաղության աջակցման համար:

## Կետ 1

86. Սույն կետով նախատեսվող երկկողմ և բազմակողմ համաձայնագրեր, օրինակի համար, կարող են կնքվել մշակութային, կրթության և տեղեկատվության բնագավառներում:

## **Կետ 2**

87. Սույն կետը նշում է միջսահմանային համագործակցության կարևորությունը: Պետությունների միջև տեղեկատվության և փորձի փոխանակումը հանդիսանում է կարևոր միջոց փոխադարձ լրմբռնումը և վստահությունը աջակցելու հարցում: Մասնավորապես, միջսահմանային համագործակցությունը ունի այն առավելությունը, որ հնարավորություն է տալիս համապատասխան անձանց ցանկություններին և կարիքներին հատկապես համապատասխանող կարգավորումների իրականացումը:

## **Հոդված 19**

88. Սույն հոդվածը սահմանում է սահմանափակումների կամ բացառությունների հնարավորություն: Այն դեպքում, եթե Ծրջանակային Կոնվենցիայում ներառված ձեռնարկումները ունեն իրենց համարժեքները այլ միջազգային իրավական փաստաթղթերում, նաև ավագության մասին» եվրոպական կոնվենցիայում, ապա բույլատրվում են այլ փաստաթղթերում նախատեսված սահմանափակումներն ու բացառությունները: Այն դեպքում, եթե սույն Ծրջանակային Կոնվենցիայում շարադրված ձեռնարկումները չունեն իրենց համարժեքները այլ միջազգային փաստաթղթերում, ապա բույլատրվում են այլ իրավական փաստաթղթերում ընդգրկված (ինչպիսին է «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան) սահմանափակումներն ու բացառությունները այնքանով, որքանով դրանք վերաբերում են նշված ձեռնարկումներին:

## **Բաժին III**

## **Հոդված 20**

89. Ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք պետք է հարգեն ազգային սահմանադրությունը և ազգային օրենսդրությունը: Այնուամենայնիվ, ազգային օրենսդրությանը կատարված այս հղումը Կողմերին իրավունք չի տալիս անտեսել Ծրջանակային Կոնվենցիայի դրույթները: Ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք պետք է հարգեն նաև մյուսների իրավունքները: Այդ կապակցությամբ կարելի է հղում կատարել այն իրավիճակին, եթե Ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք, ազգությամբ հանդիսանալով փոքրամասնություն, կազմում են Պետության մեկ շրջանի բնակչության մեծամասնությունը:

## **Հոդված 21**

90. Սույն դրույթը լնդգծում է միջազգային իրավունքի հիմնական սկզբունքների կարևորությունը և նշում է, որ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանությունը պետք է համապատասխանի այդ սկզբունքներին:

## **Հոդված 22**

91. «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 60-րդ հոդվածի վրա հիմնված այս դրույթը սահմանում է հանրաճանաչ մի սկզբունք: Նպատակը հանդիսանում է երաշխավորել, որպեսզի ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք օգտվեն, իրենց համար առավել նպաստավոր, մարդու իրավունքների բնագավառին վերաբերող, ազգային կամ միջազգային, համապատասխան օրենսդրությունից:

## **Հոդված 23**

92. Սույն դրույթն առնչվում է Շրջանակային Կոնվենցիայի և «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի հարաբերակցմանը, որի վրա հղում է կատարվում Նախարանում: Ոչ մի հանգամանքներում, Շրջանակային Կոնվենցիան նպատակ չի հետապնդում ձևափոխել «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայով երաշխավորված իրավունքներն ու ազատությունները: Ընդհակառակը, Շրջանակային Կոնվենցիայում նշված իրավունքներն ու ազատությունները, որոնք հանդիսանում են նաև «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի համապատասխան դրույթների առարկա, պետք է մեկնարանվեն վերջիններիս համաձայն:

## **Բաժին IV**

### **24-ից 26-րդ Հոդվածներ**

93. Շրջանակային Կոնվենցիայի կիրառման վերահսկումն ապահովելու համար Նախարարների Կոմիտեն լիազորվել է հետևել Պայմանագործող Կողմերի՝ Կոնվենցիայի իրազործմանը: Նախարարների Կոմիտեն պետք է սահմանի Եվրոպայի Խորհրդի անդամ չհանդիսացող Կողմերի՝ Կոնվենցիայի կիրառման մեխանիզմին մասնակցելու պայմանները:

94. Ցուրաքանչյուր Կողմ, պարբերաբար և Նախարարների Կոմիտեի պահանջի դեպքում, Գլխավոր քարտուղարին պետք է ներկայացնի սույն

Ծրջանակային Կոնվենցիայի իրագործման մասին տեղեկատվություն: Գլխավոր քարտուղարը պետք է փոխանցի այդ տեղեկատվությունը Նախարարների Կոմիտեին: Այնուամենայնիվ, առաջին գեկույցը, որի նպատակը Կողմի ձեռնարկած օրենսդրական և այլ միջոցառումների մասին տեղեկատվության տրամադրումն է, պետք է ներկայացվի տվյալ Կողմի համար սույն Ծրջանակային Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում: Հետագա գեկույցների նպատակը կիանդիսանա լրացնել առաջին գեկույցում ընդգրկված տեղեկատվությունը:

95. Ծրջանակային Կոնվենցիայի իրագործման վերահսկման արդյունավետությունը ապահովելու համար Կոնվենցիան նախատեսում է Խորհրդակցական Կոմիտեի ստեղծում: Խորհրդակցական Կոմիտեի նպատակը պետք է լինի սույն Ծրջանակային Կոնվենցիայում շարադրված սկզբունքների իրականացման համար Կողմի ընդունած միջոցառումների նույնականության գնահատման ժամանակ Նախարարների Կոմիտեին օժանդակության ցուցաբերումը:

96. Խորհրդակցական Կոմիտեի կազմավորման կարգը և աշխատանքային ընթացակարգը, որի անդամները պետք է ճանաչված իրազեկություն ունենան ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության բնագավառում, պետք է սահմանվի Նախարարների Կոմիտեի կողմից սույն Ծրջանակային Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո, մեկ տարվա ընթացքում:

97. Ծրջանակային Կոնվենցիայի իրագործման վերահսկումը, հենարավորության սահմաններում, պետք է քափանցիկ լինի: Այդ առումով նապատակահարմար կլինի իրապարակել գեկույցները և վերահսկման արդյունքում կազմված այլ փաստաթղթերը:

## Բաժին V

98. 27-ից 32-րդ հոդվածներում ընդգրկված վերջնադրույթները հիմնված են Եվրոպայի Խորհրդի շրջանակներում կնքված համաձայնագրերի և կոնվենցիաների եզրափակիչ դրույթների մողելի վրա: Վերապահումների մասին ոչ մի դրույթ չի ընդգրկված. Վերապահումներ քույլատրվում են այնքանով, որքանով դրանք քույլատրվում են միջազգային իրավունքով: Սույն Բաժնում, 27 և 29 Հոդվածներից բացի, առանձնահատուկ մեկնարարանություն չի պահանջվում:

## 27 և 29 Հոդվածներ

99. Ծրջանակային Կոնվենցիան բաց է Եվրոպայի Խորհրդի անդամների ստորագրման համար, ինչպես նաև Նախարարների Կոմիտեի առաջարկությամբ՝ այլ պետությունների ստորագրման համար: «Այլ

պետություններ» հասկացության տակ նկատի են առնվում ԵԱՀԽ մասնակից պետությունները: Սույն դրույթները հաշվի են առնում Վիեննայի հոչակագիրը, համաձայն որի Շրջանակային Կոնֆենցիան պետք է բաց լինի նաև անդամ չհանդիսացող պետությունների ստորագրման համար (տես Եվրոպայի Խորհրդի Վիեննայի Գագաթողովի Հոչակագրի II Հավելվածը):

#### 4. ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ԵՎՐՈՊԱԿԱՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՄ ԽԱՐՏԻՄ<sup>41</sup> (քաղվածքներ)

##### Մաս 2

###### Հոդված 1 Աշխատանքի իրավունքը

Աշխատանքի իրավունքի արդյունավետ կիրառումը ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են՝...

2. պաշտպանել արդյունավետ կերպով իր ապրուստը վաստակելու աշխատողի իրավունքը նրա կողմից ազատորեն ընտրված ցանկացած աշխատանքով,

###### Հոդված 16 Ընտանիքի սոցիալական, իրավական և տնտեսական պաշտպանվածության իրավունքը

Հասարակության հիմնական միավոր հանդիսացող ընտանիքի ամբողջական զարգացման համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են նպաստել ընտանեկան կյանքի տնտեսական, իրավական և սոցիալական պաշտպանվածությանը այնպիսի միջոցներով, ինչպիսիք են սոցիալական և ընտանեկան նպաստները, ֆիսկալ միջոցառումները, ընտանեկան կացարանի տրամադրումը, նորապասակներին նպաստների հատկացումը և այլ համապատասխան միջոցները:

###### Հոդված 31 Բնակարանի իրավունքը

Բնակարանի իրավունքի արդյունավետ կիրառումը ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են միջոցներ ձեռնարկել, որոնք ուղղված կլինեն՝

1. նպաստելու համապատասխան ստանդարտի բնակարանի մատչելիությանը,
2. կանխելու և կրծատելու անօթևանությունը՝ նպատակ ունենալով դրա աստիճանական վերացումը,

<sup>41</sup> Պաշտոնական քարզմանություն

3. բնակարանի գները մատչելի դարձնել համապատասխան ռեսուրսներ չունեցողների համար:

## Մաս 5 Հոդված Ե Անխտրականություն

Սույն Խարտիայում նշված իրավունքներից օգտվելը պետք է երաշխավորվի առանց խտրականության որևէ հիմքի, ինչպիսիք են ռասան, գույնը, սեռը, լեզուն, կրոնը, քաղաքական կամ այլ կարծիքը, ազգային կամ սոցիալական ծագումը, առողջությունը, ազգային փորբամասնությանը միացումը, ծնունդը կամ այլ կարգավիճակը:

### 5. ԵԽԽՎ 1201 ՀԱՆՁԱՐԱՐԱԿԱՆ (1993)<sup>42</sup>

Սարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի ազգային  
փորբամասնությունների իրավունքների լրացուցիչ արձանագրության  
վերաբերյալ<sup>43</sup>

1. Վեհաժողովը վկայակոչում է փորբամասնությունների իրավունքների վերաբերյալ իր 1134 (1990) և 1177 (1992) հանձնարարականները և թիվ 456 (1990) և 474 (1992) կարգադրությունները: 1992թ. փետրվարի 5-ին ընդունած տեքստերում այն խնդրանքով դիմել է Նախարարների կոմիտեին:
  - i. հնարավորինս արագ ավարտել Տարածաշրջանային կամ փորբամասնությունների լեզուների խարտիայի մշակման աշխատանքները և անել առավելագույնը՝ ապահովելու խարտիայի արագ կիրառումը,
  - ii. մշակել Փորբամասնությունների իրավունքների վերաբերյալ լրացուցիչ արձանագրություն՝ Սարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի համար,
  - iii. ապահովել Եվրոպայի խորհրդին միջնորդական համապատասխան գործիքով:
2. 1992թ. հունիսի 22-ին, ընդունելով Տարածաշրջանային կամ փորբամասնությունների լեզուների եվրոպական խարտիան, որը Եվրոպայի խորհրդի կոնվենցիա է, Նախարարների կոմիտեն առաջին կետով բավարարել է Վեհաժողովին: Խարտիան, որի վրա պետք է հիմնվի մեր անդամ պետությունների օրենսդրությունը, նաև ուղենի՛

<sup>42</sup> Վեհաժողովի քննարկում, 1-ը փետրվարի, 1993թ. (22-րդ նատաշրջան) (տես՝ Doc. 6742, Իրավական հարցերի և մարդու իրավունքների հանձնամտորվի գեկույց, Զեկուցող՝ պրմ. Ուրմս, և Doc. 6749, Քաղաքական հարցերի հանձնամտորվի կարծիքը, Զեկուցող՝ պրմ. որ Պուշ): Տեքստն ընդունված է Վեհաժողովի կողմից, 1993թ. փետրվարի 1-ին (22-րդ նատաշրջան):

<sup>43</sup> ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից իրականացված ոչ պաշտոնական թարգմանություն

կիանոլիսանա շատ այլ պետությունների համար մի դժվարին և զգայուն հարցում:

3. Մնում է Խարտիայի արագ կիրառումը: Խրախուսիչ է այն, որ 1992ք. նոյեմբերի 5-ից ստորագրության համար բաց խարտիան անմիջապես ստորագրեցին Եվրոպայի խորհրդի անդամ տասնմեկ պետություններ: Սակայն պետք է առաջ շարժվել:
4. Վեհաժողովը, հետևաբար, կոչ է անում դեռևս Խարտիան շտորագրած անդամ պետություններին ստորագրել այն, և նրանց բոլորին հորդորում է արագորեն փակերացնել այն՝ ընդունելով հնարավորինս մեծ թվով դրույթներ:
5. Վեհաժողովն իրեն իրավունք է վերապահում, ավելի ուշ փուլում, վերադառնալու Եվրոպայի խորհրդի համար համապատասխան միջնորդական գործիքի հարցին, որի հիմնումն արդեն առաջարկել էր:
6. Վեհաժողովը տեղեկացված է պարտավորությունների այն շրջանակին, որ տրվել է Մարդու իրավունքների գլխադասային կոմիտեին և Ազգային փոքրամասնությունների պաշտպանության փորձագիտական կոմիտեին Նախարարների կոմիտեի կողմից, և ցանկանում է իր լիարժեք օժանդակությունը տրամադրել այդ աշխատանքին և ակտիվորեն խրանել այն:
7. Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայում փոքրամասնություններին պատկանող անձանց և նրանց ներկայացնելու իրավաություն ունեցող կազմակերպությունների իրավունքների ներառմամբ այդ անձինք կարող են օգտվել կոնվենցիայով առաջարկվող պաշտպանության միջոցներից, մասնավորապես՝ ունենալ Եվրոպական հանձնաժողովը և Մարդու իրավունքների դատարան դիմումներ ներկայացնելու իրավունքը:
8. Հետևաբար, Վեհաժողովն առաջարկում է, որպեսզի Նախարարների կոմիտեն ընդունի Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի Ազգային փոքրամասնությունների իրավունքների լրացուցիչ արձանագրություն՝ հիմնվելով ստորև ներկայացված տեքստի վրա, որը սույն հանձնարարականի բաղկացուցիչ մասն է:
9. Քանի որ այս հարցը չափազանց իրատապ է և ներկայումս Եվրոպայի խորհրդի գործունեության ամենակարևոր բաղադրիչներից մեկն է, Վեհաժողովը Նախարարների կոմիտեին նաև առաջարկում է արագացնել իր աշխատանքների ժամանակացույցը, որպեսզի Պետությունների և կառավարությունների դեկազարների գագաթաժողովը (Վիեննա, 8-9-ը հոկտեմբերի, 1993թ.) կարողանա

ազգային փոքրամասնությունների իրավունքների մասին արձանագրություն ընդունել և այդ առիթով բացել այն ստորագրելու համար:

Մարդու իրավունքների և իմանարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի լրացուցիչ արձանագրության առաջարկության տեքստ՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց վերաբերյալ

## Ներածություն

Եվրոպայի խորհրդի՝ սույն փաստաթուղթը ստորագրող կողմ հանդիսացող անդամ պետությունները,

1. համարելով, որ ժողովուրդների և մշակույթների բազմազանությունը, որով վերջինս ներշնչված է, Եվրոպական քաղաքակրության հարստության և կենսունակության իմանական աղբյուրներից է,
2. հաշվի առնելով այն կարևոր ներդրումը, որ ազգային փոքրամասնությունները բերել են Եվրոպայի պետությունների մշակութային բազմազանությանը և դիմամիզմին,
3. համարելով, որ պետության տարածքում ազգային փոքրամասնությանը պատկանող անձանց իրավունքների ճանաչմանը և այդ իրավունքների միջազգային պաշտպանությամբ է միայն հնարավոր տևականորեն վերջ դնել էքնիկ բախումներին ու դրանով նպաստել արդարության, ժողովրդավարության, կայունության և խաղաղության երաշխավորմանը,
4. համարելով, որ շոշափվող հարցերն այն իրավունքներն են, որոնք ցանկացած անձ կարող է իրականացնել ինքնուրույն կամ այլոց հետ համատեղ,
5. համարելով, որ ազգային փոքրամասնությունների իրավունքների միջազգային պաշտպանությունը մարդու իրավունքների միջազգային պաշտպանության էական ասպեկտ է և, որպես այդպիսին, միջազգային համագործակցության ոլորտ,
6. համարելով, որ այն այդ պետության տարածքում և հանդիսանում նրա քաղաքացիները,

## Մաս I — Սահմանում

### Հոդված 1

Սույն Կոնվենցիայի նպատակներից ելնելով<sup>44</sup>, «ազգային փոքրամասնություն» արտահայտությունը վերաբերում է պետության տարածքում այն անձանց խմբին, որոնք

- ա. բնակվում են այդ պետության տարածքում և հանդիսանում նրա քաղաքացիները,

<sup>44</sup> Սույն տեքստում «Կոնվենցիա» եզրը վերաբերում է «Մարդու իրավունքների և իմանարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիային:

- թ. պահպանում են հարատե, ամուր և տեական կապեր այդ պետության հետ,
- գ. դրսելորում են առանձնահատուկ էքնիկ, մշակութային, կրոնական կամ լեզվական հատկանիշներ,
- դ. ունեն բավարար թվով տիպային գծեր, չնայած ավելի փոքրաթիվ են, քան այդ պետության կամ այդ պետության որևէ շրջանի մնացած ազգաբնակչությունը,
- ե. շահագրգուված են համատեղ կերպով պահպանելու այն, ինչը նրանց ընդհանուր ինքնությունն է, այդ թվում՝ իրենց մշակույթը, ավանդույթները, կրոնը կամ իրենց լեզուն:

## **Մաս 2 — Ընդհանուր սկզբունքներ**

### **Հոդված 2**

1. Անդամությունն ազգային փոքրամասնությանը անհատի ազատ ընտրության հարց է;
2. Այդ անդամության ընտրությունը կամ դրանից հրաժարումը չպետք է հանգեցնի որևէ բացասական հետևանքի:

### **Հոդված 3**

1. Ազգային փոքրամասնությանը պատկանող յուրաքանչյուր անձ միանգամայն ազատորեն իրավունք ունի արտահայտելու, պահպանելու և զարգացնելու իր կրոնական, էքնիկ, լեզվական և/կամ մշակութային ինքնությունը՝ առանց ենթարկվելու ուժման որևէ փորձի իր կամքին հակառակ:
2. Ազգային փոքրամասնությանը պատկանող յուրաքանչյուր անձ կարող է իրականացնել իր իրավունքները և օգտվել դրանցից անհատական կարգով կամ այլոց ընկերակցությամբ:

### **Հոդված 4**

Ազգային փոքրամասնությանը պատկանող բոլոր անձինք իրավահավասար են: Ազգային փոքրամասնության անդամության հիմքով խորականությունն արգելվում է:

### **Հոդված 5**

Արգելվում է այն տարածաշրջանի ժողովրդագրական կազմի դիտավորյալ փոփոխությունը, որտեղ բնակվում է ազգային փոքրամասնությունը՝ ի վճառ այդ փոքրամասնության:

## **Մաս 3 – Նյութական իրավունքներ**

## **Հոդված 6**

Ազգային փոքրամասնությանը պատկանող բոլոր անձինք իրավունք ունեն ստեղծելու իրենց սեփական կազմակերպությունները, այդ թվում՝ նաև քաղաքական կուսակցությունները:

## **Հոդված 7**

1. Ազգային փոքրամասնությանը պատկանող յուրաքանչյուր անձ իրավունք ունի ազտարեն օգտագործելու իր մայրենի լեզուն մասնավոր կարգով և իրապարակավ, բանավոր և գրավոր: Այս իրավունքը վերաբերում է նաև իր լեզուն իրապարակումներում և տեսաձայնային հատվածում օգտագործելուն:
2. Ազգային փոքրամասնությանը պատկանող յուրաքանչյուր անձ ունի իր ազգանունը և անունը մայրենի լեզվով օգտագործելու և իր անուն-ազգանվան պաշտոնական ճանաչման իրավունք:
3. Այն շրջաններում, որտեղ բնակվում են զգալի թվով ազգային փոքրամասնություններ, ազգային փոքրամասնությանը պատկանող անձինք իրավունք ունեն օգտագործելու իրենց մայրենի լեզուն կառավարման մարմինների հետ շփումներում, ինչպես նաև դատարաններում և իրավապահ մարմիններում վարույթների ընթացքում:
4. Այն շրջաններում, որտեղ բնակվում են զգալի թվով ազգային փոքրամասնություններ, ազգային փոքրամասնությանը պատկանող անձինք իրավունք ունեն իրենց լեզվով կոչելու տեղանունները, նշանները, ցուցանակները և հանրությանը տեսանելի այլ նմանատիպ տեղեկությունները: Սա չի գրկում իշխանություններին վերոհիշյալ տեղեկությունները պետության պաշտոնական լեզվով կամ լեզուներով կոչելու իրավունքից:

## **Հոդված 8**

1. Ազգային փոքրամասնությանը պատկանող յուրաքանչյուր անձ իրավունք ունի սովորելու իր մայրենի լեզուն և իր մայրենի լեզվով ստանալու կրթություն համապատասխան թվով դպրոցներում և պետական ուսումնական ու վերապատրաստման հաստատություններում, որոնք տեղակայված են տվյալ փոքրամասնության աշխարհագրական տեղաբաշխման համաձայն:
2. Ազգային փոքրամասնությանը պատկանող անձինք իրավունք ունեն հիմնելու և կառավարելու իրենց սեփական դպրոցները և ուսումնական ու վերապատրաստման հաստատությունները տվյալ պետության իրավական համակարգի շրջանակներում:

## **Հոդված 9**

Եթե հարց է բարձրացվում այս արձանագրությամբ պաշտպանվող իրավունքների խսխտման վերաբերյալ, ազգային փոքրամասնությանը պատկանող յուրաքանչյուր անձ կամ ներկայացուցական կազմակերպություն ունի պետական մարմնի առջև արդյունավետ պաշտպանության միջոցի իրավունք:

## **Հոդված 10**

Ազգային փոքրամասնությանը պատկանող յուրաքանչյուր անձ, պետության տարածքային ամբողջականությունը պատշաճորեն հարգելու հետ մեկտեղ, իրավունք ունի ազատորեն և անարգել շփվելու այլ պետության քաղաքացիների հետ, որոնց հետ տվյալ փոքրամասնությունն ունի էքնիկ, կրոնական կամ լեզվական ընդհանրություններ կամ մշակութային ընդհանուր ինքնություն:

## **Հոդված 11**

Այն շրջաններում, որտեղ ազգային փոքրամասնությանը պատկանող անձինք մեծամասնություն են, իրավունք ունեն իրենց տրամադրության տակ ունենալու տեղական կամ ինքնավարության մարմիններ կամ հատուկ կարգավիճակ, որը համապատասխանում է իրենց առանձնահատուկ պատմական ու տարածքային վիճակին, ինչպես նաև տվյալ պետության ներպետական օրենսդրությանը:

## **Մաս 4 - Արձանագրության կիրառումը**

### **Հոդված 12**

1. Սույն արձանագրությամբ ամրագրված որևէ դրույթ չի կարող մեկնաբանվել այնպես, որ սահմանափակի կամ արգելի ազգային փոքրամասնությանը պատկանող անձանց որևէ անհատական կամ ազգային փոքրամասնության որևէ կոլեկտիվ իրավունք, որն արտացոլված է մասնակից պետության օրենսդրության մեջ կամ որևէ միջազգային համաձայնագրում, որի կողմ է հանդիսանում տվյալ պետությունը:
2. Այն միջոցառումները, որոնք ձեռնարկվում են միայն էքնիկ խմբերին պաշտպանելու, նրանց պատշաճ զարգացմանը զարկ տալու, մնացյալ ազգաբնակչության հետ հավասար իրավունքներ և վարչական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային և այլ ոլորտներում հավասար վերաբերմունք ապահովելու նպատակով, չպետք է դիտվեն որպես խստրականություն:

## **Հոդված 13**

Սույն արձանագրությամբ թվարկված իրավունքների և ազատությունների իրականացումը ամբողջությամբ վերաբերում է այն անձանց, որոնք մեծամասնություն են ողջ պետության տարածքում, սակայն փոքրամասնություն են դրա մեկ կամ մի քանի շրջաններում:

## **Հոդված 14**

Սույն արձանագրությամբ թվարկված իրավունքների և ազատությունների իրականացումը պետության քաղաքացիների պարտականությունները և պատասխանատվությունը սահմանափակելու նպատակ չունի: Այդուհանդերձ, դրանց իրականացումը կարող է ենթակա լինել այնպիսի ձևականությունների, պայմանների, սահմանափակումների կամ պատժամիջոցների, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդական հասարակությունում՝ ի շահ ազգային անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակական անվտանգության, անկարգությունների և հանցագործությունների կանխման, առողջության և բարոյականության պահպանման կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության:

## **Մաս 5 — Եզրափակիչ դրույթներ**

### **Հոդված 15**

Այս արձանագրության դրույթներից որևէ շեղում չի թույլատրվում Կոնվենցիայի 15-րդ հոդվածի համաձայն, բացառությամբ արձանագրության 10-րդ հոդվածի պարագայում:

### **Հոդված 16**

Այս արձանագրության դրույթներից որևէ վերապահում թույլ չի տրվում Կոնվենցիայի 64-րդ հոդվածին համապատասխան:

### **Հոդված 17**

Մասնակից պետությունները դիտարկում են սույն արձանագրության 1-ից 11-րդ հոդվածների դրույթները որպես Կոնվենցիայի լրացուցիչ հոդվածներ, և Կոնվենցիայի բոլոր դրույթները կիրառվում են ըստ այդմ:

### **Հոդված 18**

Սույն արձանագրությունը բաց է Եվրոպայի խորհրդի անդամ այն պետությունների ստորագրության համար, որոնք ստորագրել են Կոնվենցիան: Այն ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման:

Եվրոպայի խորհրդի անդամ պետությունը չի կարող վավերացնել, ընդունել կամ հաստատել այս արձանագրությունը, քանի դեռ զուգահեռաբար կամ մինչ այդ չի վավերացրել Կոնվենցիան: Վավերացման, ընդունման կամ հաստատման գործիքներն ի պահ են տրվում Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին:

## Հոդված 19

- Այս արձանագրությունը ուժի մեջ է մտնում այն ամսաթվին հաջորդող ամսվա առաջին օրը, եթե Եվրոպայի խորհրդի հիմք անդամ պետություններ համաձայնեցին արձանագրության՝ իրենց համար պարտադիր ուժ ունենալու առնչությամբ՝ 18-րդ հոդվածի դրույթների համաձայն:
- Ինչ վերաբերում է որևէ այլ պետության, որը հետազայում համաձայն է, որ այն պարտադիր ուժ ունենա իր համար, արձանագրությունն ուժի մեջ է մտնում այն ամսաթվին հաջորդող ամսվա առաջին օրը, եթե վավերացման, ընդունման կամ հաստատման փաստաթուղթն ի պահ է տրվում:

## Հոդված 20

Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը տեղեկացնում է խորհրդի անդամ պետություններին.

- ցանկացած ստորագրության,
- վավերացման, ընդունման կամ հաստատման ցանկացած փաստաթղթի ի պահ տրվելու,
- սույն արձանագրության ուժի մետ մտնելու ամսաթվի,
- սույն արձանագրությանը վերաբերող որևէ գործողության, իրազեկման կամ հաղորդակցության մասին:

Ի վավերացումն վերոգրյալ՝ ներքոստորագրյալներս, ունենալով այդ անելու պատշաճ լիազորագրեր, ստորագրում ենք սույն արձանագրությունը: Կատարված է Ստրավուրգում այս օրը, անգլերեն և ֆրանսերեն, երկու տեքստերն էլ հավասարազոր են, մի օրինակից, որն ի պահ կհանձնվի Եվրոպայի խորհրդի արխիվում: Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը հավաստագրված կրկնօրինակները կփոխանցի Եվրոպայի խորհրդի անդամ յուրաքանչյուր պետության:

**6. ԵԽԽՎ 1353 ՀԱՆՁԱՐԱՐԱԿԱՆ (1998)<sup>45</sup>**  
**Քարձրագույն կրթության մատչելիությունը փոքրամասնությունների  
համար<sup>46</sup>**

1. Վեհաժողովը գտնում է, որ փոքրամասնությունները պետք է հնարավորություն ունենան արտահայտելու իրենց ինքնությունը և զարգացնելու իրենց կրթությունը, մշակույթը, լեզուն և ավանդույթները, և պետություններն այդ նպատակով պետք է ձեռնարկեն անհրաժեշտ բոլոր միջոցները: Ավելին, սա միակ ուղին է, որով Եվրոպան կարող է պահպանել իր մշակութային հարուստ բազմազանությունը:
2. Կրթությունը մարդու հիմնարար իրավունք է, և հետևաբար բոլոր մակարդակների, այդ թվում՝ քարձրագույն կրթության մատչելիությունը պետք է հավասարապես հասու լինի Եվրոպական մշակութային կոնվենցիան ստորագրած պետությունների բոլոր մշտական բնակիչների համար:
3. Ներկա դրությամբ դա դեռևս այդպես չէ, քանի որ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները քարձրագույն կրթության առումով թերի են ներկայացված: Դրան նպաստում են սպասարկման ծախսերը, որակավորումների ճանաշման խնդիրները, համապատասխան սկզբնական ու միջնակարգ կրթության պակասը, իսկ որոշ դեպքերում՝ քաղաքական հակադրությունը:
4. Առանձին ուսումնասիրությունների և, մասնավորապես, Մշակութային համագործակցության խորհրդի Քարձրագույն կրթության և հետազոտությունների հանձնաժողովի (ՄՀ–ՔԿՀ) Եվրոպայում քարձրագույն կրթության մատչելիության վերաբերյալ եռամյա ծրագրի արդյունքների համաձայն, փոքրամասնությունների սոցիալ–տնտեսական դրությունը շատ հաճախ ևս մեկ խոչընդոտ է քարձրագույն կրթության մատչելիության համար: Սա ճիշտ է հատկապես զնշունքի պարագայում:
5. Քարձրագույն կրթության ոլորտում փոքրամասնությունների մասնակցության վիճակագրական տվյալները Եվրոպական շատ երկրներում տարբեր պատճառներով բավականին թերի են:
6. Հաշվի առնելով վերօքրյալը՝ Վեհաժողովը Նախարարների կոմիտեին առաջարկում է դիմել Եվրոպական մշակութային կոնվենցիան ստորագրած պետություններին՝ իրենց ազգային կրթական

<sup>45</sup> Վեհաժողովի 1998թ. հունվարի 27-ի բնարկում (3-րդ նիստ) (տես Փաստ. 7888, Մշակույթի և կրթության կոմիտե, գեներող՝ տկն. Խսահոռկանա Ասունճան: Տեքստն ընդունվել է Վեհաժողովի կողմից 1998թ.ի հունվարի 27-ին 3-րդ (3-րդ նիստ):

<sup>46</sup> ԵԱՀԿ երեանյան գրասենյակի կողմից իրականացված ոչ պաշտոնական քարզմանություն

բաղաքանության վերանայման ընթացքում հետևյալ սկզբունքները հաշվի առնելու խնդրանքով.

- i. կառավարությունները պետք է խուսափեն պաշտոնական լեզվի բացառիկ օգտագործումից և ձեռնպահ մնան մեծամասնության մշակույթում ազգային փորրամասնությունների ուժնան ուղղված բաղաքանություն վարելուց,
- ii. լեզվական փաքրամասնությանը պատկանող անձանց համար համապատասխան տեսակների և մակարդակների հաճրային կրթությունը պետք է մատչելի լինի իրենց մայրենի լեզվով՝ բարձրագույն կրթությանը նախապատրաստվելու համար,
- iii. բոլոր բաղաքացիները պետք է հնարավորություն ունենան սովորելու իրենց մայրենի լեզուն և մշակույթը ընդհանուր, ինչպես նաև համալսարանական մակարդակում. փորրամասնությունների խմբերին պատկանող անձինք պետք է խրախուսվեն իրենց երկրում, ինչպես նաև արտերկրում բարձրագույն կրթությանը մասնակցելու համար, պետք է զարգացվի որակավորումների փոխադարձ ճանաչումը, մասնավորապես՝ հարևան երկրներում,
- iv. կառավարությունները պետք է ճանաչեն բարձրագույն կրթության առնչվող գործունեությանը ներգրավվելու և այդ նպատակով հաստատություններ հիմնելու հիմնարար ազատությունը. նման հաստատությունները, դրանց բավարար որակի հաստատումից և իրական պահանջարկի դրսերումից հետո, պետք է պաշտոնական աջակցություն ստանան ոչ խորական և անաշառ հիմունքներով, լեզուն չի կարող չափանիշ լինել հաստատությունների կամ որակավորումների ճանաչման հարցում,
- v. բարձրագույն ուսումնական հաստատությունները փորրամասնությունների հնարավորություններն ավելացնելու նպատակով պետք է իրազեկման ծրագրեր մշակեն, օրինակ՝ ավելի սերտ համագործակցելով միջնակարգ ուսումնական հաստատությունների հետ,
- vi. փորրամասնությունների խմբերի ուսանողները պետք է հնարավորություն ունենան բարձրագույն կրթության ընդունելության քննություններն իրենց մայրենի լեզվով հանձնելու համար,
- vii. որպես լեզվական փորրամասնություններին պատկանող անձանց խրախուսման միջոց կարելի է ընդունելության քննությունների ընթացքում լեզվի վրա հիմնված արտոնությունների համակարգ նախատեսել,
- viii. փորրամասնությունների խմբերի երիտասարդները, այլ երիտասարդների նման և նրանց համար էլ գործող նույն պայմաններով, հիմնական ընդհանուր կրթությունից հետո պետք է կարողանան մասնագիտական կրթություն ստանալ և հաճախել

- բոլոր մակարդակների կրթական հաստատություններ՝ անկախ այն բանից, թե իրենց մայրենի լեզվով է, թե՝ ոչ, առանց լրացուցիչ ֆինանսական սահմանափակումների,
- ix. փոքրամասնությունների լեզուների և մշակույթների դասընթացները պետք է ընդգրկվեն մանկավարժների համար դասընթացներ անցկացնող ինստիտուտների ուսումնական պլաններում,
  - x. պետք է ավելի լայնորեն օգտագործվեն տեղեկատվական և հաղորդակցության նոր տեխնոլոգիաները, քանի որ դրանք առավել համապատասխան են փոքրամասնությունների խմբերի և աշխարհագրական առումով հեռավոր տարածքների ուսանողների կրթությանը,
  - xi. փոքրամասնությունների համար բարձրագույն կրթության մատչելիությունը, ինչպես նաև նրանց հետագա մասնակցությունը դրանում, պետք է ենթարկվի մոնիթորինգի՝ ուսանողների կամավոր տրամադրած տվյալների հիման վրա և տվյալների պաշտպանության սկզբունքների համապատասխան:
7. Վեհաժողովը առաջարկում է նաև, որպեսզի Նախարարների կոմիտեն.
- i. ապահովի փորձագիտական օգնություն համալսարաններին և կառավարություններին, օրինակ՝ ՄՀ-ՔԿՀ-ի և փորձնական ծրագրերի իրականացման միջոցով, այն երկրներում, որտեղ փոքրամասնությունները բարձրագույն կրթության մատչելիության հարցում դժվարությունների են հանդիպում,
  - ii. աջակցի ինստիտուցիոնալ առանձին ուսումնասիրություններին, որոնք հիմնական ուշադրություն են դարձնում փոքրամասնությունների թեմային՝ Եվրոպայում բարձրագույն կրթության տեսանկյունից,
  - iii. քննարկի Մշակութային համագործակցության խորհրդի կողմից 1998թ.-ի հունվարի 22-ին ընդունված փոքրամասնությունների բարձրագույն կրթության մատչելիության առնչությամբ հանձնարարականի նախագծի ընդունումը:

## 7. ԵԽԽՎ 1383 ՀԱՆՁԱՐԱՐԱԿԱՆ (1998)<sup>47</sup> Լեզվական բազմազանեցումը<sup>48</sup>

1. Եվրոպայի լեզվական բազմազանությունն արժեքավոր մշակութային միջոց է, որ պետք է պահպանվի և պաշտպանվի:
2. Բացի մշակութային և գործնական նշանակություններից, օտար լեզուների իմացությունը որոշչի գործոն է մարդկանց միջև լնկալման, բնիկ կամ օտար այլ համանյեների հանդեպ հանդուժականության և ազգերի միջև խաղաղության հարցում, ինչպես նաև արդյունավետ խոշընդուն է իր տարրեր դրսնորումներով բարբարոսության վերադարձի դեմ:
3. Առկա վիճակագրությունը ցույց է տալիս, որ Եվրոպայում աշակերտների ստվար մեծամասնությունը սովորում է անգլերեն, մինչդեռ Եվրոպական «հիմնական» այլ լեզուները, ինչպիսիք են ֆրանսերենը, գերմաներենը, խապաներենը և իտալերենը, բավականին ետ են մնացել: Այն լեզուները, որոնցով աշխարհում հարյուր միլիոնավոր մարդիկ են խոսում, ինչպիսիք են ռուսերենը, պորտուգալերենը, արաբերենը և չինարենը, դպրոցական ուսումնական պլանում շատ փոքր տեղ ունեն: Ավելին, այդ լեզուներով դասավանդման չափորոշիչը միշտ չէ, որ բավարար է:
4. Քննարկումից դուրս է լինգվա-ֆրանկայի՝ ներկայիս անգլերենի կարևորությունը հեռահաղորդակցության, գրուաշրջության և առևտրի կողմից ստեղծված զլորալացման համատեքստում: Սակայն միայն անգլերենի իմացությունը, որ դիտվում է որպես հաղորդակցման միջազգային լեզու, բավարար չէ, եթե Եվրոպան պետք է ամրապնդի իր դիրքերը՝ առնչվելով միջազգային տնտեսական մրցակցությանը և պահպանի իր մշակութային բազմազանությունը:
5. Հետևաբար, Եվրոպայի խորիրդի անդամ պետություններում ժամանակակից լեզուների դասավանդման հարցում պետք է ավելի մեծ բազմազանություն լինի. դա պետք է հանգեցնի ոչ միայն անգլերենի, այլև Եվրոպական և համաշխարհային այլ լեզուների յուրացմանը Եվրոպայի քաղաքացիների կողմից՝ իրենց սեփական մայրենի և, որտեղ համապատասխանում է, տարածաշրջանային լեզուներին գուգահեռ:

<sup>47</sup> Վեհաժողովի 1998թ.-ի սեպտեմբերի 23-ի քննարկում (29-րդ նիստ) (տես Փաստ. 8173, Մշակույթի և կրթության հարցերի հանձնաժողովի հաշվառվորում, գենուցող՝ սրբ. Լեզնենը): Տեքստն ընդունվել է Վեհաժողովի կողմից 1998թ.-ի մասնաժողովի 23-ին (29-րդ նիստ): ԵԱՀԿ երևանյան գրասենյակի կողմից

<sup>48</sup> ԵԱՀԿ երևանյան գրասենյակի կողմից իրականացված ոչ պաշտոնական բարգմանություն

6. Եվրոպայի կրթական համակարգերում ժամանակակից լեզուների նկատմամբ նոր մոտեցումը պետք է ուշադրություն բնենի հետևյալ նպատակներին.
- լեզուների ավելի լայն ընտրություն՝ միջազգային փոխանակումների զարգացմամբ առաջացած նոր կարիքների բավարարման համար,
  - տեղական փոքրամասնությունների լեզուների դասավանդում դպրոցում՝ բավարար պահանջարկի առկայության դեպքում,
  - դպրոցն ավարտելու պահին բոլոր աշակերտների կողմից առնվազն երկու օտար լեզուներով բավարար հմտությունների ձեռքբերում,
  - ժամանակակից լեզվի ուսումնասիրումը որպես երկարաժամկետ գործունեություն,
  - մասնակի հմտությունների և սովորելու ունակության ճանաչում,
  - այն երկրների սոցիալական, տնտեսական և մշակութային իրողությունների իմացություն, որտեղ խոսում են այդ լեզուներով:
7. Հաշվի առնելով վերոգրյալ՝ Վեհաժողովն առաջարկում է Նախարարների կոմիտեին՝
- գերակայություն դարձնել լեզվական բազմազանեցման քաղաքականությունը: Գործնական առումով, Մշակութային համագործակցության խորհուրդը (ՄՀԽ) պետք է իր անդամ երկրներում կանոնավոր կարգով համեմատական ուսումնասիրություններ անցկացնի լեզվական բազմազանեցման ուղղությամբ՝ այդ հարցում Եվրոպական քաղաքականությունը կազմելու գործում հիմք ընդունելու համար: Կրկնությունից խուսափելու նպատակով այդ ուսումնասիրությունները պետք է լրացնեն Եվրոպական միության «Eurydice» գրասենյակի աշխատանքը: Առաջին ուսումնասիրությունը պետք է իրականացվի լեզվական ուսուցման քաղաքականության վերաբերյալ համաժողովի շրջանակներում, որ նախատեսված է անցկացնել 1999թ.-ին,
  - խթանել ուսանողների կողմից դպրոցն ավարտելու պահին առնվազն երկու օտար լեզվի իմացությունը՝ երկրորդ լեզվի ուսումնասիրությունը սկսելով միջնակարգ մակարդակից,
  - ընդգրկել Խորհրդարանական վեհաժողովը Լեզուների Եվրոպական տարրական նախապատրաստական աշխատանքներում, որը Մշակութային համագործակցության խորհրդի կողմից ծրագրվում է անցկացնել 2001թ.-ին,
  - արագացնել աշխատանքը «Եվակետային մակարդակներում», Ընդհանուր Եվրոպական բազային համակարգի և Եվրոպական լեզվական ծրագրերի փաթեթի վրա և շարունակել

- վաղաքական պատմության մեջ համար, ինչպես և առաջարկությունները կազմելու համար,
- v. երաշխավորել, որ շարունակական կրթության և նոր տեխնոլոգիաների ոլորտներում ՄՀԿ-ի կողմից իրականացվող աշխատանքն ընդգրկի լեզվական ուղղությունը:
8. Վեհաժողովը նաև համձնարարում է Նախարարների կոմիտեին անդամ երկրներին կոչ անել՝
- նպաստել տարածաշրջանային ընտրված ներկայացուցիչների ու տեղական իշխանությունների համագործակցությամբ կազմված տարածաշրջանային լեզվական ծրագրերի ստեղծմանը՝ զոյլություն ունեցող լեզվական ներուժը բացահայտելու և քննարկող լեզուների դասավանդումը զարգացնելու նպատակով, հաշվի առնելով ոչ բնիկ բնակչության խճերը, երկվորյակային համաձայնությունները, արտասահմանյան երկրների փոխանակումներն ու մոտիկությունը,
  - զարգացնել լեզվական համագործակցության համաձայնագրեր սահմանամերձ տարածաշրջանների միջև,
  - նպաստել հեռահար կրթությանը՝ եվրոպական իիմնական լեզուները բոլոր դպրոցների ու քոլեջների համար հասանելի դարձնելու և դասավանդման առումով ավելի փոքր տարածում ունեցող լեզուները զարգացմանն աջակցելու նպատակով,
  - իիմնել դպրոցների և քոլեջների ցանցեր՝ առաջարկող լեզուների շարքում բազմազանություն երաշխավորելու համար (ներառյալ փոքրամասնությունների և դասավանդման առումով փոքր տարածում ունեցող լեզուները),
  - նպաստել ու զարգացնել երկլեզու կրթությունը և հնարավորությունները աշակերտների համար՝ դպրոցի ավարտական քննությունները ամբողջությամբ կամ մասնակի ձևով իրենց նախընտրած լեզվով հանձնելու հարցում,
  - ընդլայնել հնարավորությունները լեզվական ուսումնական այցելությունների համար.
- ա. դարձնելով դրանք դպրոցական կրթության պարտադիր առանձնահատկություն,
- բ. նորմ դարձնելով բացառապես պետական ֆինանսավորումը,
- գ. հնարավորություն ընձեռելով ամբողջ դասարանների մասնակցելու փոխանակումներում,
- դ. դարձնելով դրանք ուսուցիչների պատրաստման բաղկացուցիչ մաս,

- vii. խրախուսել անդամ պետություններին ավելի լայնորեն օգտագործելու օտարերկրացի ուսուցիչներին, պետությունների միջև ուսուցիչների փոխանակման այնպիսի ընդարձակ սխեմաներ մշակելով, որոնք ապահոված են ուսուցիչների աշխատանքի և գրադարձության պայմանների երաշխիքներով,
- viii. երաշխավորել փոքրանասնությունների լեզուների ուսուցիչների առաջարկը՝ յուրաքանչյուր երկրի համար աշխատանքի հավաքագրման ծրագրերի միջոցով, որոնք կազմվում են միջնաժամկետ և երկարաժամկետ պահանջարկների ուսումնաժիրության արդյունքում,
- ix. գերակայություն տալ դասավանդման այն մեթոդներին, որոնք ուղղված են բանավոր արտահայտման զարգացմանը՝ տեսալսողական նյութերի և ինտերակտիվ միջոցների օգտագործման միջոցով, համագործակցության համաձայնություններ հաստատելով հեռուստատեսության կրթական ալիքների հետ և հեռուստատեսությամբ ու կինոթատրոններում ներկայացնելով ֆիլմեր իրենց բնագիր լեզուներով,
- x. նպաստել յուրաքանչյուր երկրում տարածաշրջանային տարրեր լեզուներով տեսալսողական նյութերի ստեղծմանը, ինչպես նաև տարածաշրջանային լեզուներով թերթերի և գրքերի հրապարակմանը՝ ամրող բնակչության օգտագործման համար,
- xi. նպաստել կրթության այն տեսակին, որն ավելի մեծ շեշտադրում է անում քննարկվող երկրների մշակույթի և հասարակության վրա,
- xii. վերահսկել մասնավոր լեզվական դպրոցների համար լիցենզավորման համակարգի ստեղծումն ու կիրառումը՝ լեզվական ստացված հնտությունների պաշտոնական չափորոշիչներին համապատասխանությունը ապահովելու նպատակով:

## 8. ԵԽԽՎ 1492 ՀԱՆՁԱՐԱԲԱԿԱՆ (2001)<sup>49</sup> Ազգային փոքրանասնությունների իրավունքները<sup>50</sup>

1. Վեհաժողովը կրկին շեշտում է Եվրոպայում փոքրանասնությունների իրավունքներն արդյունավետ պաշտպանելու կարևորությունը: Այն գտնում է, որ ազգային փոքրանասնություններին պատկանող

<sup>49</sup> Վեհաժողովի 2001թ.-ի հունվարի 23-ի քննարկում (3-րդ նիստ) (տես Փաստ. 8920, Իրավական հարցերի և մարդու իրավունքների հանձնաժողովի հաշվետվորյում, գեկուցող՝ պրն. Քինդիկ, Փաստ. 8939, Քաղաքական հարցերով հանձնաժողովի կարծիք, գեկուցող՝ պրն. Գեկերոյ, Փաստ. 8943, Սիգրացիայի, փախստականների և ժողովրդագրության հանձնաժողովի կարծիք, գեկուցող՝ պրն. Տարածի և Փաստ. 8941, Մշակույթի և կրթության հանձնաժողովի կարծիք, գեկուցող՝ պրն Պուշ: Տեքստը ընդունվել է Վեհաժողովի կողմից, 2001թ.-ի հունվարի 23-ին (3-րդ նիստ):

<sup>50</sup> ԵԱՀԿ երևանյան գրասենյակի կողմից իրականացված ոչ պաշտոնական քարգմանություն

անձանց և նրանց համայնքների պաշտպանությունը մարդու իրավունքների պաշտպանության բաղկացուցիչ մաս է և միակ ուղին, որով պետությունները կարող են կրծատել ավելի ընդգրկուն բախումների վերածելու հավանականություն ունեցող ազգային լարվածությունները:

2. Վեհաժողովը դատապարտում է փոքրամասնությունների և փոքրամասնությունների իրավունքների առկայության ժխտումը Եվրոպայի խորհրդի անդամ մի քանի երկրներում և այն փաստը, որ մի շարք փոքրամասնություններ Եվրոպայում պատշաճ պաշտպանության չեն արժանանում:
3. Վեհաժողովը ճանաչում է, որ մեծամասնությունն ունի փոքրամասնությունների հետ կապված պարտավորություններ, և, մյուս կողմից, փոքրամասնությունն ունի պատասխանատվություն մասնակցելու իր բնակության երկրի քաղաքական և հանրային կյանքում՝ մեծամասնության հետ մեկտեղ նպաստելով այն պետությունների ժողովրդավարական համախմբվածությանը և քաղմակարծությանը, որոնց նրանք արտահայտել են իրենց հավատարմությունը:
4. Վեհաժողովը նշում է, որ ազգային փոքրամասնությունների լեզուներին և մշակույթներին մեծամասնության քաջատելյակ դառնալն և իշխանությունների՝ ոչ կառավարական կազմակերպությունների օգնությամբ փոքրամասնությունների մշակույթները հայտնի դարձնելուն ուղղված ջանքերն ունեն կարևոր նշանակություն:
5. Վեհաժողովը իր բոլոր անդամ պետություններին կրկին անգամ կոչ է անում երաշխավորելու այն, ինչը կարող է համարվել Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայով սահմանված ազգային փոքրամասնությունների նվազագույն իրավունքների պաշտպանություն: Այն գտնում է, որ փոքրամասնությունների պաշտպանությունն էական նշանակություն ունի Եվրոպական մայրցամաքում մարդու իշխանարար իրավունքների, կայունության, ժողովրդավարական անվտանգության ու խաղաղության իրագործման համար: Այն նաև նշում է, որ ազգային փոքրամասնությունների կարիքներին որպես արձագանքի ծախողման դեպքում վճարելիք զինը կարող է լինել սոցիալական լարվածության աճը, ապաստան հայցողների քանակի մեծացումը, Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների միասնությունն ամրապնդելու դժկամությունը և անապահովության մթնոլորտը, որ վնասակար կիմեն առևտի և ներդրումների համար:

6. Անդորրան, Բելգիան, Ֆրանսիան և Թուրքիան առ այսօր ո՞չ ստորագրել և ո՞չ վավերացրել են Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիան, ինչը նշանակում է, որ այն մայրցամաքի տարածքում ուժի մեջ մտնել չի կարող: Այդ երկրները զգալի բվով փոքրամասնություններ ունեն, որոնք պետք է պաշտպանվեն, և որոնց իրավունքները պաշտոնապես ճանաչված չեն: Այլ երկրներ՝ Վրաստանը, Հունաստանը, Իսլանդիան, Լատվիան, Լյուքսեմբուրգը, Նիդեռլանդները և Պորտուգալիան ստորագրել, բայց դեռ չեն վավերացրել շրջանակային կոնվենցիան:
7. Վեհաժողովը հիշեցնում է իր Համարարական 1201-ը (1993), որում այն Նախարարների կոմիտեին խնդրում էր Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի լրացուցիչ արձանագրություն կազմել փոքրամասնությունների իրավունքների մասին, ցանկություն հայտնելով, որպեսզի Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները փոքրամասնություններին առնչվող իրենց օրենսդրությունը և քաղաքականությունը հիմնեն այդ համարարարականին կից հավելվածում սահմանված արձանագրության նախագծի վրա, որը պարունակում էր «ազգային փոքրամասնության» Եվրոպայի մակարդակով ամենաշնորհնելի սահմանումը:
8. Վեհաժողովը նաև նշում է, որ վերը նշված համարարարականին կից ընդունված լրացուցիչ արձանագրության նախագծում սահմանված քաղաքական ձեռնարկումները և շափորչիչները բարձրացվել են իրավական պարտավորությունների կարգավիճակին Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների միջև կնքված բարեկամության պայմանագրերում: Արդյունքում այդ պայմանագրային պարտավորությունները կարող են ձեռք բերել տարածաշրջանի մակարդակով սովորույթի կարգավիճակ:
9. Առ այսօր Ալբանիան, Անդորրան, Բելգիան, Բուլղարիան, Էստոնիան, Վրաստանը, Հունաստանը, Իռլանդիան, Լատվիան, Լիտվան, Սովորված, Լեհաստանը, Պորտուգալիան, Ռուսաստանի Դաշնությունը, Սան Մարինոն, Սլովակիան և Թուրքիան ո՞չ ստորագրել են և ո՞չ էլ վավերացրել Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիան:
10. Վեհաժողովը նշում է, որ Եվրոպական միության Հիմնարար իրավունքների մասին խարտիան, որ ընդունվել է 2000թ.-ի դեկտեմբերին Նիցայում կայացած զագարաժողովում, չի շոշափում փոքրամասնությունների իրավունքների հարցը և սահմանափակվում է իր հոդված 22-ում հոչակելով, որ «Սիությունը հարգում է մշակութային, կրոնական և լեզվական բազմազանությունը»:

11. Վեհաժողովը ճանաչում է, որ ներգաղթյալ բնակչությունները, որոնց անդամներն իրենց բնակության երկրի քաղաքացիներ են, փոքրամասնությունների հատուկ խմբեր են կազմում, և առաջարկում է, որպեսզի նրանց նկատմամբ Եվրոպայի խորհրդի հատուկ գործիք կիրառվի:
12. Ելնելով վերոգրյալից՝ Վեհաժողովն առաջարկում է Նախարարների կոմիտեին՝
  - i. կոչ անել անդամ պետություններին ավելի մեծահոգի վերաբերմունք ցուցաբերել՝ փոքրամասնություններին առնչվող իրենց քաղաքականության կիրառմանը և Եվրոպայի խորհրդի գործիքների իրականացմանը փոքրամասնությունների ոլորտում,
  - ii. կոչ անել անդամ պետություններին բարելավել և, որտեղ անհրաժեշտ է, զարգացնել միջազգային համագործակցությունը փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության ոլորտում՝ ինչպես նրանց երկկողմանի հարաբերություններում, այնպես էլ Եվրոպական միջազգային կազմակերպությունների մակարդակով,
  - iii. խնդրանքով դիմել Ազգային փոքրամասնությունների մասին շրջանակային կոնվենցիան դեռևս չստորագրած չորս պետություններին՝ ներդաշնակեցնելու իրենց սահմանադրությունն ու օրենսդրությունը գործող Եվրոպական շափորշչների հետ՝ կոնվենցիայի ստորագրման և վավերացման ցանկացած խոչնդութ վերացնելու նպատակով,
  - iv. խնդրանքով դիմել պարբերություն 6-ում նշված պետություններին՝ հնարավորինս սեղմ ժամկետներում և առանց վերապահումների ու հայտարարությունների ստորագրել և/կամ վավերացնել Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիան, նաև դիմել արդեն խակ ստորագրած երկրներին՝ այն իրականացնելու և իրենց վերապահումները և հայտարարությունները ետ վերցնելու խնդրանքով,
  - v. խրախուսել դեռևս դա չարած պետություններին, որպեսզի նրանք վավերացնեն Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների մասին Եվրոպական խարտիան, խրախուսել նաև կողմ պետություններին և ապագա կողմ պետություններին՝ այն իրականացնելու համապատասխանաբար կիրառելու հարցում,
  - vi. ավելացնել Եվրոպայի խորհրդի ընդիանությունների մարդկային և ֆինանսական ռեսուրսները, որոնք գրաղփում են վերը նշված երկու գործիքների կիրառմամբ,
  - vii. խնդրանքով դիմել անդամ պետություններին հնարավորինս սեղմ ժամկետներում ստորագրել Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի թիվ 12 արձանագրությունը, իուս ունենալով, որ

- ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք իրենց իրավունքները Մարդու իրավունքների եվրոպական դատարանում հաստատելու հնարավորություն կունենան,
- viii. կոչ անել Նախարարների կոմիտեին բարձր գերակայություն տալ Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի խորհրդատվական կոմիտեի և Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի Փորձագետների կոմիտեի քննարկմանը և կարծիքների ու գեկույցների ընդունմանը՝ հարմար ընթացակարգ ստեղծելով դրանց արագ իրապարակման և ընդհանուր տարածման համար,
- ix. ուժեղացնել Եվրոպայի խորհրդի ներսում գործող մոնիթորինգի մեխանիզմները և նույն սկզբունքներն ու չափորոշիչները կիրառել բոլոր անդամ երկրների նկատմամբ,
- x. սկսել Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի լրացուցիչ արձանագրության նախագծում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանին կամ Եվրոպայի խորհրդի ընդհանուր դատական մարմնին լիազորություն տալով շրջանակային կոնվենցիայի մեկնարանության վերաբերյալ տրամադրել խորհրդատվական կարծիքներ,
- xi. սկսել Մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական կոնվենցիայի արձանագրության նախագծումը՝ ազգային փոքրամասնությունների իրավունքների մասով, մոտենալով Հանձնարարական 1201 (1993)–ում պարունակվող սկզբունքներին և փորձելով այնտեղ ներառել նույն հանձնարարականում ընդունված ազգային փոքրամասնության սահմանումը,
- xii. կցել Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հարցերով հանձնակատարին փոքրամասնությունների իրավունքները պաշտպանելու հատուկ պատասխանատվությամբ մի անձ՝ այդ նպատակով համապատասխան ֆինանսական ապահովում կատարելով,
- xiii. տալ Եվրոպայում օգտագործվող տարրեր լեզուներին այնպիսի պաշտպանություն, որը նման է տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի կողմից տրամադրվող պաշտպանությանը, հնարավոր է՝ անդամ պետությունների կողմից հանձնարարականի ընդունման միջոցով, հրապարակել հաշվետվություններ, որոնք ներկայացվում են Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի Փորձագետների կոմիտեի կողմից:
- xiv.

## 9. ԵԽԽՎ 1623 ՀԱՆՁԱՐԱՐԱԿԱՆ (2003)<sup>51</sup> Ազգային փոքրամասնությունների իրավունքները<sup>52</sup>

1. Խորհրդարանական վեհաժողովը վկայակոչում է ազգային փոքրամասնությունների մասին իր նախորդ Հանձնարարական 1492 (2001)-ը և հաշվի առնում այդ հանձնարարականի առնչությամբ Նախարարների կոմիտեի պատասխանը (Doc 9492), ինչպես նաև միջկառավարական հանձնաժողովների, Մարդու իրավունքների եվրոպական հանձնակատարի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կարծիքները:
2. Վեհաժողովը ողջունում է ազգային փոքրամասնությունների պաշտպանության ոլորտում կարևորագույն մի փաստարդի՝ Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի հաջողությունը, որն այս տարի նշեց իր ուժի մեջ մտնելու հնգամյակը: Շրջանակային կոնվենցիայի ուժի մեջ մտնելը նոր փուլ էր Եվրոպայի խորհրդում փոքրամասնությունների պաշտպանության համակարգի զարգացման առումով: Փոքրամասնությունների պաշտպանության հիմնական չափորոշիչներ մշակելու փոխարեն կազմակերպությունը կենտրոնացել է մոնիթորինգի մեխանիզմների և Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունների կողմից հիմնական այդ սկզբունքների պահպանումն ապահովող ինստիտուտների և ընթացակարգերի արդյունավետությունը բարձրացնելու վրա:
3. Վեհաժողովը ողջունում է Տարածաշրջանային և փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի կարևոր դերը՝ հաստատված Գլխավոր քարտուղարի կողմից Փաստաթուղթ 9540-ում ներառված խարտիայի կիրառության մասին հաղորդագրությունում, ինչպես նաև վերջին գեկույցից ի վեր ստորագրությունների ու վավերացումների աճող թիվը և ընդգծում է ավելի շատ ստորագրությունների ու վավերացումների հասնելու կարևորությունը: Վեհաժողովը նաև ողջունում է խարտիայի փորձագիտական հանձնաժողովի կատարած արժեքավոր աշխատանքը:
4. Առ այսօր Հանձնարարական 1492 (2001)-ում նշված չորս պետություններից երեքը՝ Անդրբան, Ֆրանսիան և Թուրքիան, դեռևս չեն ստորագրել շրջանակային կոնվենցիան: Վեհաժողովը, վկայակոչելով իր Բանաձև 1301 (2002)-ը, վերստին ափսոսանք է

<sup>51</sup> 2003թ. սեպտեմբերի 29-ի՝ Վեհաժողովի քննարկումը (27-րդ նստաշրջան) (տես Doc. 9862, Իրավական հարցերի և մարդու իրավունքների հանձնաժողովի գեկույցը, գեկուցող՝ պրն Սիլեվիկս): *Տերսող ընդունված է Վեհաժողովի կողմից 2003թ. սեպտեմբերի 29-ին* (27-րդ նստաշրջան):

<sup>52</sup> ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից իրականացված ոչ պաշտոնական բարգմանություն

հայտնում Բելգիայի կողմից փաստաթղթի ստորագրման ժամանակ արված վերապահման առնչությամբ:

5. Վեհաժողովը վերստին կրկնում է այն դիրքորոշումը, որ ընդունել էր շրջանակային կոնվենցիայի կապակցությամբ Հանձնարարական 1492 (2001)-ում, այն է՝ անդամ պետությունների կողմից առանց վերապահումների կամ հայտարարությունների արագ ստորագրման ու վավերացնելու, ինչպես նաև նրանում արտահայտված շափորոշիչները կիրառելու հետևողական մերժումը պետք է, հարկ եղած դեպքում, դառնա Նախարարների կոմիտեի, Խորհրդարանական վեհաժողովի և Եվրոպայի տեղական ու տարածաշրջանային իշխանությունների կոնզերնի (CLRAE) ուշադրության առարկան:
6. Իր մի քանի կարծիքներում խորհրդատվական հաճանաժողովը նշել է, որ շնայած շրջանակային կոնվենցիայի կիրառության հարցում մասնակից պետություններն ունեն հայեցողության որոշակի սահման, այն պետք է համահունչ լինի Կոնվենցիայի 3-րդ հոդվածում ներառված հիմնարար սկզբունքներին. մասնակից պետությունների կողմից տրվող մեկնաբանությունները ոչ մի դեպքում չեն կարող լինել կամայական կամ չարդարացված տարրերակումների աղյօտը: Իր հերթին, Նախարարների կոմիտեն խնդրել է մասնակից պետություններին զգուշորեն վերաբերվել վերապահումների և հայտարարությունների ներկայացման հարցին: Համաձայն այս դիրքորոշումների՝ Վեհաժողովը գտնում է, որ մասնակից պետությունները չունեն անսահման իրավունք որոշելու, թե իրենց տարածքներում շրջանակային կոնվենցիայի իմաստով որ խճբերը կարող են որակվել որպես ազգային փոքրամասնություններ: Այս կարգի որևէ որոշում պետք է հարգի խտրականության բացառման սկզբունքը և համապատասխանի շրջանակային կոնվենցիայի տառին ուղղություն:
7. Վեհաժողովը վերստին կրկնում է իր Հանձնարարական 1589 (2003)-ում արտահայտված հայացքները Եվրոպայում լրատվամիջոցների արտահայտվելու ազատության վերաբերյալ, որ բոլոր Եվրոպական պետությունները պետք է վերացնեն փոքրամասնությունների լեզուներով մասնավոր լրատվամիջոցների հեռարձակման ատեղծման և գործունեության սահմանափակումները: Այսօրինակ սահմանափակումները հակասում են Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածին այնպես, ինչպես այն զարգացվել է Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով:

8. Վեհաժողովը համարում է, որ շրջանակային կոնվենցիայի և խարտիայի մասնակից պետությունները պետք է առավել աշալցորեն պահպանն զեկույցների ներկայացման վերջնաժամկետները:
9. Պետք է հմարավորինս շատ օժանդակել շրջանակային կոնվենցիայի խորհրդակցական հանձնաժողովի և խարտիայի փորձագիտական հանձնաժողովի աշխատանքին, հատկապես հեռանկարում ունենալով մոնիուրինգի երկրորդ փուլը:
10. Վեհաժողովը գտնում է, որ Եվրոպայի խորհրդի՝ ազգային փորբամասնությունների իրավունքների պաշտպանության և խորականության, ռասականի, այլատյացության և անհանդուրժողականության լեմ պայքարում ներգրավված մարմինները պետք է բարելավեն իրենց աշխատանքների համակարգումը առավել մեծ համագործակցության հասնելու նպատակով: Զուգահեռաբար, պետք է բարձրացնել Եվրոպայի խորհրդի և այլ համապատասխան Եվրոպական կազմակերպությունների (այդ թվում՝ Եվրոպական միության և ԵԱՀԿ-ի), ինչպես նաև Ենթատարածաշրջանային կազմակերպությունների (այդ թվում Բարիկ ծովի պետությունների խորհրդի, Կենտրոնական Եվրոպայի նախաձեռնության և այլ կազմակերպությունների) համագործակցության մակարդակը:
11. Վեհաժողովը կոչ է անում.
  - i. այն անդամ պետություններին, որոնք դեռևս չեն արել դա (այն է՝ Անդրբային, Ֆրանսիային և Թուրքիային) անհապաղ ստորագրել և վավերացնել շրջանակային կոնվենցիան՝ առանց վերապահումների կամ հայտարարությունների,
  - ii. այն անդամ պետություններին, որոնք ստորագրել, սակայն չեն վավերացրել (Բելգիա, Վրաստան, Հունաստան, Իսլանդիա, Լատվիա, Լյուքսեմբուրգ և Նիդեռլանդներ) անհապաղ վավերացնել շրջանակային կոնվենցիան՝ առանց վերապահումների կամ հայտարարությունների,
  - iii. այն մասնակից պետություններին, որոնք վավերացրել են շրջանակային կոնվենցիան, սակայն նաև արել են հայտարարություններ կամ վերապահումներ, չեղյալ հայտարարել դրանք՝ բացառելու կամայական և չարդարացված տարբերակումները, ինչպես նաև որոշ փորբամասնությունների չճանաչումը,
  - iv. մասնակից պետություններին՝ հատուկ ուշադրություն դարձնել շրջանակային կոնվենցիայի 9-րդ հոդվածի (արտահայտվելու ազատություն) բարեխմեջ կատարման վրա՝ չեղյալ հայտարարելով այն անտեղի սահմանափակումները, որոնք պարտադրված են փորբամասնությունների լեզուներով

մասնավոր հեռարձակման ու գրավոր լուրերի հրապարակման վրա:

- v. մասնակից պետություններին՝ հատուկ ուշադրություն դարձնել փոքրամասնությունների լեզուների ազատ օգտագործման վրա այն աշխարհագրական տարածքներում, որոնցում նրանք զգալի թիվ են կազմում, և ապահովել փոքրամասնությունների ներկայացվածությունը խորհրդարանում,
- vi. մասնակից պետություններին՝ հատուկ ուշադրություն դարձնել ամենախոցելի ոռմա փոքրամասնությունների համար շրջանակային կոնվենցիայով նախատեսված պաշտպանությունից լիարժեքորեն օգտվելու հնարավորության վրա:

## 12. Վեհաժողովը նաև հանձնարարում է Նախարարների կոմիտեին.

- i. մշակել շրջանակային կոնվենցիայի լրացուցիչ արձանագրություն, որով Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իրավասու կիմի խորհրդատվական կարծիք հայտնել շրջանակային կոնվենցիայի իր մեկնաբանությունների վերաբերյալ,
- ii. ձեռնարկել անհրաժեշտ քայլեր հավաստիանալու, որ Ազգային փոքրամասնությունների պաշտպանության առնչվող հարցերի փորձագիտական հանձնաժողովը (DH-MIN) հանդես է գալիս որպես ազգային փոքրամասնություններին վերաբերող հարցերի քաղաքական քննարկման պատշաճ միջկառավարական ֆորում, այդ թվում՝ Եվրոպական միության և այս ոլորտում միջազգային այլ կազմակերպությունների հետ համագործակցության հարցում,
- iii. բարելավել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 12-րդ արձանագրության անհապաղ վավերացման ուղղությամբ գործադրվող ջանքերը,
- iv. քննության առնել շրջանակային կոնվենցիայի ստորագրման և վավերացման վերաբերյալ հարցում անցկացնելու հնարավորությունը,
- v. ավելացնել առաջնահերթ կարգով, շրջանակային կոնվենցիայի քարտուղարության խորհրդատվական հանձնաժողովի տրամադրության տակ եղած ֆինանսական ու մարդկային ռեսուրսները՝ հաշվի առնելով մոնիթորինգի երկրորդ փուլի մոտալուս սկիզբը և հաջորդական գործողությունների արդյունավետության կարևորությունը, ինչպես նաև խարտիայի փորձագիտական հանձնաժողովի քարտուղարության տրամադրության տակ եղած ֆինանսական և մարդկային ռեսուրսները,

- vi. քննության առնել մանդատի՝ տարրեր աղբյուրներից, ինչպես նաև ՀԿ-ների հետ հանդիպումներից տեղեկություններ փնտրելու պահանջի վերացման հարցը,
- vii. փոփոխել շրջանակային կոնվենցիայի մոնիթորինգի ընթացակարգի կանոնները, որպեսզի խորհրդատվական հանձնաժողովն, անհրաժեշտության դեպքում, կարողանա այցելել քննության տակ գտնվող ցանկացած մասնակից պետություն,
- viii. վերատին քննության առնել Նախարարների կոմիտեի Բանաձև (97) 10-ում սահմանված խորհրդապահության պահանջները՝ թույլ տալու խորհրդատվական հանձնաժողովին, անհրաժեշտության դեպքում, անցկացնել հաճատեղ հանդիպումներ կառավարությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ,
- ix. խրախուսել խորհրդատվական հանձնաժողովին քննարկելու թեմատիկ հարցեր և մեկնարաններու դրանք՝ լավագույն գործելակարգեր մշակելու հարցում պետություններին և փոքրանասնություններին օժանդակության տրամադրման առումով,
- x. ապահովել շրջանակային կոնվենցիայի և խարտիայի, ինչպես նաև դրանց առնչվող տեքստերի հասանելիությունը տարրեր, այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների լեզուներով,
- xi. խրախուսել մասնակից պետությունների կողմից խորհրդատվական հանձնաժողովի կարծիքների անհապաղ հրապարակումը, որպեսզի իշխանությունների և քաղաքացիական հասարակության միջև ծավալվի բաց երկխոսություն շրջանակային կոնվենցիայի և հանձնաժողովի եզրակացությունների կատարման վերաբերյալ:

13. Վերջապես, Վեհաժողովը Նախարարների կոմիտեին հանձնարարում է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել շարունակելու համագործակցությունը Եվրոպական միության հետ՝ ազգային փոքրամասնությունների պաշտպանության ոլորտում ընդհանուր քաղաքականության իրազործման, ներառյալ՝ Եվրոպական հանձնաժողովի կողմից թեկնածու պետությունների ձեռնարկած միջոցառումների ընդլայնման և գնահատման շարունակական գործընթացը, և բոլոր անդամ պետությունների կողմից ազգային փոքրամասնությունների նկատմամբ հարզանքի ու նրանց պաշտպանության մասով Կոպենհանգենի չափորչիչների ապահովման նպատակով:

## 10. ԵԽԽՎ 1735 ՀԱՆՁԱՐԱՐԱԿԱՆ (2006)<sup>53</sup> «Ազգ» հասկացությունը<sup>54</sup>

1. 2003թ.-ին Խորհրդարանական վեհաժողովը քննարկեց ազգակից պետության կողմից ազգային փոքրամասնությունների համար նախընտրելի վերաբերմունքը՝ հարևան երկրներում քնակվող հունգարացիների վերաբերյալ («Մալյարներ») Հունգարիայի 2001թ.-ի հունիսի 19-ի օրենքի լույսի ներքո: Բանաձև 1335 (2003)-ում Վեհաժողովը Հունգարիայի օրենքի նախարանում «ազգ» հասկացության սահմանման առնչությամբ նշեց, որ մինչ այդ պահը չկար «ազգ» հասկացության ընդհանուր եվրոպական իրավական սահմանում:
2. Իրազեկ լինելով գործող սահմանադրություններում և օրենսդրություններում տարբեր երկրների քաղաքացիների խմբերի միջև էթնիկական, լեզվական և մշակութային կապերի զգայուն հարցերին առնչվող տերմինաբանության հստակեցման անհրաժեշտությանը, մասնավորապես «ազգ» բառի օգտագործման, նաև որոշակի պատմական կամ քաղաքական համատեքստում հարաբերակցության առումով՝ Վեհաժողովը քննարկեց, թե արդյոք, նաև ինչպես կարող է «ազգ» հասկացությունը (ըստ կիրառելիության՝ վերամտածված և արդիականացված հասկացություն) օգնել ազգային փոքրամասնությունների և նրանց իրավունքների հարցի լուծմանը 21-րդ դարի Եվրոպայում:
3. Իրավական հարցերի և մարդու իրավունքների հանձնաժողովը «ազգ» հասկացության և Եվրոպայում դրա կիրառման ուսումնասիրությունում, որ կատարվել էր 35 երկրների ազգային խորհրդարանական պատմվարակություններից ստացված հարցաթերթիկային պատասխանների և 2004թ.-ի հունիսի 7-ին Բեռլինում կազմակերպված լսումներին իրավագիտության և քաղաքականության քնազավարի փորձագետների արած հայտատարությունների հիման վրա, եզրակացրեց, որ «ազգ» հասկացության ընդհանուր սահմանման հանգելը դժվար է, եթե չասել՝ անհնար:
4. «Ազգ» եզրույթը խորհ արմատավորված է մարդկանց մշակույթում և պատմության մեջ և ներառում է նրանց իրավության հիմնարար տարրերը: Այս նաև սերտորեն կապված է քաղաքական

<sup>53</sup> Վեհաժողովի 2006թ.-ի հունգարի 26-ի քննարկում (7-րդ նիստ) (տես Փաստ. 10762, Իրավական հարցերի և մարդու իրավունքների հանձնաժողով, գեկուցող՝ պրմ. Ֆրունժա): Տեքստն ընդունվել է Վեհաժողովին 2006թ.-ի հունգարի 26-ին (7-րդ նիստ):

<sup>54</sup> ԵՎՀԿ երևանյան գրասենյակի կողմից իրականացված ոչ պաշտոնական քարգմանություն

գաղափարախոսությունների հետ, որոնք շահագործել են այն՝ խեղաքյուրելով դրա սկզբանական իմաստը: Այնուհետև, հաշվի առնելով Եվրոպական երկրներում գործածվող լեզուների բազմազանությունը, այնպիսի մի հասկացություն, ինչպիսին «ազգ»—ն է, պարզապես բարգմանելի չէ շատ երկրներում, որտեղ, լավագույն դեպքում, ազգային լեզուներով կարելի է գտնել միայն մոտավոր բարգմանություններ: Եվ հակառակը, ազգային լեզուներում օգտագործվող բառերը չունեն համարժեք բարգմանություններ Եվրոպայի խորհրդի պաշտոնական լեզուներում՝ անզերենում կամ ֆրանսերենում:

5. Վեհաժողովը հաստատեց, որ Եվրոպայի խորհրդի անդամ որոշ պետություններում «ազգ» հասկացությունն օգտագործվում է բաղաքացիությունը նշելու համար, որը պետության և անհատի իրավական կապ (հարաբերություն) է՝ անկախ վերջինի էքնո-մշակութային ծագումից, մինչդեռ որոշ անդամ պետություններում է նույն նկատմամբ օգտագործվում է նման մշակութային և պատմական ավանդություններով, սեփական անցյալի նմանատիպ ընկալումներով, սեփական ներկայի նմանատիպ ձգումներով և ապագայի նմանատիպ տեսլականներով, որոշակի լեզվով խոսող օրգանական համայնքը նշելու համար: Որոշ անդամ պետություններում երկու ընկալումներն օգտագործվում են միաժամանակ՝ համապատասխանաբար բաղաքացիությունը և ազգային (էքնո-մշակութային) ծագումը նշելու համար: Այդ նպատակով «ազգ» եզրույթը երբեմն օգտագործվում է երկակի իմաստով, իսկ այլ դեպքերում այդ իմաստներից յուրաքանչյուրն արտահայտելու նպատակով օգտագործվում են երկու տարբեր բառեր:
6. Վեհաժողովը հաստատում է նաև, որ երբ «ազգ» հասկացությունը նշանակում է բաղաքացիություն, այն սահմանում է ֆիզիկական անձի և պետության պայմանագրային որոշակի հարաբերություն: Իսկ երբ «ազգ» հասկացությունը նշանակում է էքնո-մշակութային համայնք, այն մշակութային իրողություն է (մշակութային փաստ կամ մշակութային կարգավիճակ), որը իմմնվում է տվյալ համայնքին ֆիզիկական անձի ազատ և միակողմանի միավորման վրա՝ ներառյալ միայն այդ համայնքի անդամներին: Ազգն իր մշակութային ընկալմամբ դառնում է օրենքի առարկա (տես՝ միջազգային օրենքը) միայն այն դեպքում, եթե այն ինքնակազմակերպվում է որպես պետություն, որը միջազգայնորեն ճանաչված է:
7. Վեհաժողովը նշում է, որ ազգերի ստեղծման և ազգային պետությունների ծննդի բավականին բարդ գործնթացում Եվրոպական ժամանակակից պետությունները հիմնել են իրենց

լեզիսիմությունը՝ «ազգ» հասկացության քաղաքացիական կամ այդ հասկացության մշակութային իմաստով: Այդուհանդերձ, մինչ այդ երկու իմաստները դեռևս պետք է սահմանվեն Եվրոպայի խորհրդի որոշ պետությունների սահմանադրություններում, ազգ-պետության էվոլյուցիայի ընդհանուր միտումը ուղղված է փոխակերպության առանձին դեպքերի՝ ամբողջովին էթնիկ կամ էթնոլենտրոն պետությունից դեպի քաղաքացիական պետություն և ամբողջովին քաղաքացիական պետությունից՝ դեպի քազմանշակութային պետություն, որտեղ որոշակի իրավունքներ ճանաչվում են ոչ միայն ֆիզիկական անձի, այլև մշակութային կամ ազգային համայնքների առնչությամբ:

8. Վեհաժողովը նշում է նաև, որ 19-րդ դարի և 20-րդ դարի առաջին կեսի ազգ-պետությունների ձևավորման ուղու, ինչպես նաև Երկրորդ համաշխարհային պատերազմից և Սառը պատերազմից հետո սահմանների փոփոխման պատճառով Եվրոպայի խորհրդի անդամ գրեթե բոլոր պետությունների տարածքում ապրում են նարդկանց տարրեր խմբեր, որոնք, միևնույն ժամանակ, նույն այդ պետության կամ քաղաքացիական ազգի քաղաքացիներ են, բայց պատկանում և մաս են կազմում տարրեր մշակութային ազգերի: Այդ խմբերը, որ միևնույն էրնո-մշակութային հենքն ունեցող քաղաքացիների ամենախոշոր խմբի համեմատությամբ ավելի փոքր են, ձևավորում են և կոչվում ազգային փոքրամասնություններ:
9. Ազգային այդ փոքրամասնությունները կամ համայքները, որ հաճախ ստեղծվում են որպես պետական սահմանների փոփոխության արդյունք, ազգային այն պետության մաս են կամ հանահիմնադիր, որում դրանց անդամները քաղաքացիներ են, օգտվում են ազգային ինքնուրյան պահպանման, արտահայտման և խրախուսման իրենց իրավունքներից՝ Վեհաժողովի հանձնարարականներ 1201 (1993)-ի և 1623 (2003)-ի, Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի և Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի դրույթների համաձայն:
10. Վեհաժողովը նաև նշում է, որ ազգային փոքրամասնությունները, որպես այդպիսիք, չունենալով իրավական անհատականություն, չեն կարող լինել իրավական սուբյեկտներ, այդ պատճառով էլ չեն կարող լինել նաև պայմանագրերի կամ համաձայնությունների կողմ: Այդուհանդերձ, նրանք պետք է լինեն կողեկտիվ պաշտպանության առարկա, և նրանց անդամները պետք է օգտվեն գրութերու կարողությունից կամ որպես անհատական իրավական սուբյեկտներ, կամ իրավական անհատականություն հանդիսացող տարրեր միավորների շրջանակներում՝ ի պաշտպանություն տվյալ ազգային

փոքրամասնությունների ինքնության և մշակութային իրավունքների: Այդ իրավունքները տարածքային չեն կամ կապված տարածքի հետ, և նրանց ճանաչումն ու պաշտպանությունը պետք է կազմակերպվի օրենքով թե՝ քննարկվող յուրաքանչյուր ազգ-պետության մակարդակով, թե՝ անդրազգային (միջազգային) մակարդակով:

11. Վեհաժողովը հաստատում է, որ ազգային փոքրամասնությունների ինքնությունը պահպանելու կարևորագույն դերը բաժին է ընկնում այն պետությանը, որի քաղաքացիներ են նրանք: Հետևաբար, այն անդամ պետություններին առաջարկում է ընդունել ավանդական ազգային փոքրամասնություններին ճանաչող օրենսդրություն և կարգավորող ակտեր, և պարտաճանաչ կերպով կիրառել դրանք: Եթե խոսքը քաղաքական կառույցներում ներկայացվածության մասին է, ապա այն առաջարկում է, որպեսզի պետությունները դրական խորականության սկզբունք կիրառեն ազգային փոքրամասնությունների անդամների նկատմամբ, մասնավորապես, կենտրոնական և ապակենտրոնացված կառույցներում (ներառյալ՝ գործադիր մարմինները) համաշափ ներկայացվածության ձևով, հատկապես այն տարածաշրջաններում, որտեղ այդ փոքրամասնություններն ապրում են:
12. Վեհաժողովը անհրաժեշտ է համարում ուժեղացնել Եվրոպայի յուրաքանչյուր քաղաքացու կապերի ճանաչումն իր ինքնության, մշակույթի, ավանդույթների ու պատմության հետ, թույլ տալ յուրաքանչյուր անհատի նույնացնել իրեն որպես մշակութային «ազգի» անդամ անկախ իր քաղաքացիության երկրից կամ քաղաքացիական այն ազգից, որին նա պատկանում է որպես քաղաքացի և, ավելի կոնկրետ, քավարարել որոշակի մշակութային ազգի պատկանելու ընդգծված զգացում ունեցող փոքրամասնությունների աճող ձգտումները: Թե՝ քաղաքական, թե՝ իրավական տեսակետից կարևոր է, որպեսզի պետության և ազգային փոքրամասնությունների հարաբերություններում խրախուսվի ավելի հանդուժողական մոտեցումը, որի գագաթնակետը բոլոր անհատների իրավունքն իրապես ընդունելու և՝ պատկանելու այն ազգին, որին, նրանց կարծիքով, նրանք պատկանում են՝ թե՝ քաղաքացիության, և թե՝ լեզվի, մշակույթի ու ավանդույթների առումով:
13. Վեհաժողովն իիշեցնում է, որ իր Բանաձև 1335 (2003)-ում նշել է, որ «փոքրամասնությունների պաշտպանության նոր և յուրահատուկ ձևերի առաջացումը, մասնավորապես իրենց ազգակից պետությունների կողմից, դրական միտում է»: Այն համարել է, որ արտերկրում ազգակից փոքրամասնությունների պաշտպանության համար միակողմանի միջոցներ ընդունելու պետությունների հնարավորությունը՝ անկախ հարևան, թե այլ երկրներում նրանց

բնակությունից, պայմանական էր հետևյալ սկզբունքների պահպանության առումով։ Մարածքային ինքնիշխանություն, որտեղ  
sunt servanda, պետությունների բարեկամական հարաբերություններ և հարգանք մարդու իրավունքների ու իմանարար պատությունների նկատմամբ, մասնավորապես՝ խորականության արգելում։ Չնայած ազգակից պետությունները կարող են օրինաչափորեն կարևոր դերակատարություն ունենալ փոքրամասնությունների իրավունքները պաշտպանելու գործում, հետաքրքրություն դրսեորելով այլ երկրներում ապրող իրենց ազգակից ժողովորդի հետ տեղի ունեցածի նկատմամբ, դրա հետ մեկտեղ, մեծապես կարևոր է, որպեսզի այդ աջակցությունը հարզի այն պետությունների օրենսդրությունը, որտեղ ապրում են դիտարկվող փոքրամասնությունները, և ցանկացած կարգավորող ակտ նախօրոք պետք է բանակցվի այդ պետությունների կառավարությունների հետ։ Նոյն իրավունքներն ու պարտավորությունները պետք է ճանաչվեն կամ պահպանվեն բոլոր այն պետությունների կողմից, որոնք նտադիր են միակողմանի միջոցներ ձեռնարկել տարբեր երկրներում բնակվող և այդ պետությունների քաղաքացիների կողմից ձևավորված մշակութային և ազգային փոքրամասնությունների ինքնության պաշտպանության ուղղությամբ։

14. Վեհաժողովը կարծում է, որ երբ խոսքը ազգային փոքրամասնությունների իրավունքներին աջակցելու մասին է, ապա Տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսը կարևոր դեր ունի՝ Եվրոպական համապատասխան կանոնների կիրառումն երաշխավորելու գործին աջակցելու տեսակետից։ Այն համոզված է, որ Տարածքային ինքնավարության և ազգային փոքրամասնությունների մասին հանձնարարական 43 (1998)-ը և հանձնարարական 70 (1999)-ը՝ տեղական օրենքի/հատուկ կարգավիճակի մասին պետք է կրկին քննության առնվեն՝ հետագա կոնկրետ քայլերը սահմանելու նպատակով։
15. Հաշվի առնելով Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների դեկավարների և կառավարությունների կողմից 2005թ.-ի մայիսի 16-ին և 17-ին ընդունված Վարչակայի հոչակագիրը և Գործողությունների պլանը, Վեհաժողովը Նախարարների կոմիտեին կոչ է անում անհապաղ քննարկում նախաձեռնել՝ կայացված որոշումն արագորեն իրականացնելու նպատակով։ Մասնավորապես, Գործողությունների պլանում նշվում է, որ «Եվրոպայի խայտարդես պատմությունը ցույց է տվել, որ ազգային փոքրամասնությունների պաշտպանությունն ունի կարևորագույն նշանակություն խաղաղության և ժողովրդավարական կայունության պահպանման համար։ Իրեն քազմակարծիք համարող հասարակությունը պետք է թույլ տա, որպեսզի մեր հասարակությունների հարստացման աղբյուր

հանդիսացող փոքրամասնությունների ինքնությունները պահպանվեն և բարգավաճեն...»:

16. Ելնելով վերոգրյալից՝ Վեհաժողովն առաջարկում է Նախարարների կոմիտեին.

16.1. առաջարկել բոլոր երկրներին, որոնք դեռ դա չեն արել ստորագրել և վավերացնել Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիան, Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիան և Տեղական ինքնակառավարման մասին եվրոպական խարտիան, որոնք ազգային փոքրամասնությունների կամ համայնքների ինքնությունը պահպանելու հիմնարար փաստաթղթերն են, նաև ակտիվացնել ջանքերն այս ուղղությամբ,

16.2. առաջարկել անդամ երկրներին իրենց ազգային օրենսդրությունում գարգացնել ազգային փոքրամասնությունների մշակութային իրավունքների ճանաչումը, ի թիվս այլոց, Եվրոպայի խորհրդի տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսի Տարածքային ինքնակառության ու ազգային փոքրամասնությունների մասին հանձնարարական 43 (1998)–ի և Տեղական իրավունքի/հատուկ կարգավիճակի մասին հանձնարարական 70 (1999)–ի հիման վրա,

16.3. ձեռնարկել համապատասխան միջոցներ երաշխափորելու, որ անդամ պետությունները մերժեն երնիկական մաքրությունը խրախուսելու կամ էրնիկ հիմքի վրա պետության տարածքն ու վարչական համակարգը կազմակերպելու յուրաքանչյուր փորձ՝ բացառությամբ դրական միջոցների, որոնք ուղղված են կենտրոնական կամ տեղական մակարդակով իրենց երկրի կառավարման գործում ազգային փոքրամասնությունների անաշառ ներկայացվածության հասնելուն,

16.4. առաջարկել անդամ պետություններին իրենց սահմանադրությունները համապատասխանեցնել Եվրոպական ժողովրդավարական ժամանակակից չափորոշիչներին, որոնք յուրաքանչյուր պետությանը կոչ են անում քաղաքացիական ու քազմամշակութային միասնության մեջ ինտեգրել իր բոլոր քաղաքացիներին՝ անկախ նրանց էրնո–մշակութային ծագումից, դադարեցնելով նրանց ինքնասահմանումը կամ ինքնակազմակերպումը որպես քացառապես էրնիկ կամ քացառապես քաղաքացիական պետություններ,

- 16.5. կազմել ընթացակարգային ուղենիշներ պետության և այլ (հիմնականում՝ հարևանությամբ գտնվող) պետությունում բնակվող ազգային փոքրամասնության հարաբերությունները զարգացնելու վերաբերյալ՝ հաշվի առնելով Վենետիկի հանձնաժողովի 2001թ.-ի հաշվետվության մեջ սահմանված չափանիշները՝ առկա օրենսդրությունների վերլուծության, ինչպես նաև Վեհաժողովի համապատասխան բանաձների և հանձնարարականների լույսի ներք:
17. Վեհաժողովը իիշեցնում է փոքրամասնությունների իրավունքների մասին հանձնարարական 1623 (2003)-ը, որում նա կոչ է արել Նախարարների կոմիտեին «ձեռնարկել Եվրոպական միության հետ համագործակցությունը շարունակելու անհրաժեշտ միջոցներ՝ ազգային փոքրամասնությունների պաշտպանության ոլորտում ընդհանուր քաղաքականության հասնելու նպատակով»: Այն նկատում է, որ Նախարարների կոմիտեի պատասխանն այդ հանձնարարականին, մեղմ ասած, սեղմ էր: Հետևաբար, այն դիմում է Նախարարների կոմիտեին խնդրել այն. Ժամ-Կլոդ Ժունկեին՝ Եվրոպայի խորիրոյի և Եվրոպական միության հարաբերությունների մասին առաջիկա հաշվետվության մեջ մեծ ուշադրություն հատկացնել ազգային փոքրամասնությունների պաշտպանության քաղաքականության և նրանց իրավունքների ճանաչման փոխլրացման հարցի վրա:





Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:  
Ք. Երևան, Սայաթ-Նովա 24, (զրասենյակ)  
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)  
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63  
Էլ. փոստ՝ [info@asoghik.am](mailto:info@asoghik.am)